"ELECTRIC... STACCATO BURSTS FILLED WITH WHIMSICAL HUMOR AND TRAGEDY."
—JODI PICOULT

WISTFUL ET MELANCHOLIC

#1 NEW YORK TIMES BESTSELLER

JOLI GRIS

1915.info

NEW YORK TIMES BEST SELLING LOOKING AUTHOR OF FOR ALASKA

«Ցնցող ...
Հումորի և ողբերգության
հանկարծակի պոռթկումներով լի»:
Ջոդի Փիքոլթ

Ասողներն են մեղավոր

«Նյու Յորք թայմզի»
#1 բեսթսելլեր

Ջոն Գրին

«Նյու Յորք թայմզի կողմից բեսթսելլեր
ճանաչված՝ «Փնպրելով Ալյասկան»
գրքի հեղինակ

bookinist

https://1915.info

ՀՏԴ 821.111(73)-31 Գրին
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44
Գ 910

Գրին Ջոն
Գ 910 Աստղերն են մեղավոր: Վեպ/ Ջ. Գրին.- Եր.: Էդիթ Պրինտ, 2015.- 304 էջ:

Չնայած ուռուցքները փոքրացնող բժշկական հրաշքին, որը Հեյզելին ապրելու ևս մի քանի տարի է պարգևել, նա, միևնույն է, անբուժելի հիվանդ է՝ քաղցկեղի վերջին փուլում, ում կյանքի վերջին գլուխը գրվել է հենց ախտորոշման պահից: Սակայն, երբ Օգոստոս Ուոթերս անունով շրջադարձային պայծառ կերպարը հանկարծակի հայտնվում է «Քաղցկեղով հիվանդ երեխաների աջակցության խմբակում», Հեյզելի համար կյանքի նոր էջ է բացվում:

Խորաթափանց, համարձակ, հանդուգն և սուր

«Աստղերն են մեղավոր» գիրքը մրցանակակիր գրող Ջոն Գրինի դեռևս ամենահավակնոտ և սրտաճմլիկ ստեղծագործությունն է, որ փառահեղ կերպով ուսումնասիրում է ողջ և սիրահարված լինելու զվարճալի, հուզիչ և ողբերգական գործընթացը:

Շապիկի ձևավորումը՝ Ռոդրիգո Քորալի

ՀՏԴ 821.111(73)-31 Գրին
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44

ISBN 978-9939-52-973-8

© Ջ. Գրին, 2015
© Էդիթ Պրինտ, 2015
© Պինգվին Գրուպ, 2015

https://1915.info

Գովասանական խոսքեր «Ասողերն են մեղավոր» գրքի մասին

«Ջոն Գրինը ճարպկորեն միահյուսում է խորիմաստն ու հաստակը մարդկային հոգուն ուղղված այս ծանր և հուզիչ սիրային բացիկում»:

«Վաշինգթոն փոսթ»

«Ասողերն են մեղավոր» գիրքը պարզապես մի ինչ-որ հերթական գիրք չէ: Այն կարևոր գիրք է»:

«Կանզաս Սիթի սթար»

«Հիասքանչ ստեղծագործություն»:

«Մոնրեալ գազետ»

«Երանի՜ այս գիրքն անվերջ լիներ»:

«Վանկուվեր սան»

«Գրինը մեզ ցույց է տալիս իրական սերը. երկու դեռահասներ օգնում և ընդունում են իրար՝ անցնելով ֆիզիկական և հուզական ամենանվաստացուցիչ, ծանր փորձությունների միջով: Եվ սա շատ ավելի ռոմանտիկ է, քան ցանկացած արևամուտ լողափում»:

«Նյու Յորք թայմզ», գրախոսական

«Սուր, խորաթափանց սիրային պատմություն համացանցային սերնդի համար»:

«Ֆեմըլի սըրքլ»

«Սրամիտ կատակերգություն, կրքոտ սիրավեպ և թեթև ներկայացված, լայնածավալ մտորումներ կյանքի ու մահվան կարևոր հարցերի շուրջ»:

«Հորն բուք», լավագույն կարծիքներից

«Անչափ գեղեցիկ, ցավալի պատմություն կյանքի և կորստի մասին»:

«Սքոլ լայբրարի» ամսագիր, լավագույն կարծիքներից

«Սիրավեպի վարպետորեն կազմակերպված «մտքի պայթյուն» ... Գրեթե ամեն էջն անասելի հիացմունք կպատճառի ընթերցողներին: Գրինի խնամքով կառուցված երկխոսություններից և ածելու սայրի պես սուր հերոսներից անկեղծ ու պարզ խելք, հումոր և ցանկություն է հորդում»:

«Քրրքլս», լավագույն կարծիքներից

«Կյանքի, մահվան և դրանց մեջտեղում սիրո «դառը և քաղցր» պատմության»:

«Դեզերեթ նյուզ»

«Իր հերոսների միջոցով Գրինն ապացուցում է, որ մնայուն սեր ունենալու համար այն կորցնելու վտանգ է անհրաժեշտ: Սա հիվանդության ու մահվան մասին մռայլ գիրք չէ: Հեյզելն ու Գասը մեզ կոչ են անում ծիծաղել և լիարժեք վայելել կյանքը, քանի կարող ենք»:

«Շելֆ ըվեյրնեա»

«Ուրախ, զվարթ, կատաղի և սաստիկ տխուր»:

«Սկրիպս Հովարդ» լրատվական ծառայություն

«Ջոն Գրինը ժամանակակից լավագույն գրողներից է»:

Ազգային գրքերի մրցանակաբաշխության եզրափակիչ փուլ անցած և «Փրինց» մրցանակի արժանացած «Ֆրենքի Լանդաու-Բենքսի տիրահոչակ պատմությունը» և «Մենք խաբեբաներ էինք» գրքերի հեղինակ Է. Լոքհարթ

https://1915.info

Ջոն Գրինի գրչին են պատկանում նաև՝
Փնտրելով Ալյասկան

.....

Բազում Քեթրիններ

.....

Թղթե քաղաքներ

.....

Վիլ Գրեյսոն, Վիլ Գրեյսոն
Դեյվիդ Լևիթանի հետ

Գրքի անգլերեն տարբերակը հրատարակել է «Պինգվին Գրուպ» ՍՊԸ-ն
«Պինգվին Գրուպ» (ԱՄՆ) ՍՊԸ, Հադսոն փողոց, 375 շ., Նյու Յորք, Նյու Յորք
10014
ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Ավստրալիա, Նոր Զելանդիա,
Հնդկաստան, Հարավային Աֆրիկա, Չինաստան
penguin.com
«Պինգվին ռենդոմ հաուզ» ընկերություն

Հեղինակային իրավունքը պատկանում է Զոն Գրինին, 2012թ
Արտոնագրով սահմանված պայմաններով գրքի հայերեն թարգմանությունը
հրատարակել է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը, 2015թ

«Պինգվին» և «Էդիթ Պրինտ» հրատարակչությունները պաշտպանում են
հեղինակային իրավունքը:
Հեղինակային իրավունքը խթանում է ստեղծագործականությունը,
բազմակարծությունը, խոսքի ազատությունը և վառ, կենսունակ մշակույթ
ստեղծում: Շնորհակալություն այս գրքի հեղինակազրկված թարգմանությունը
գնելու և հեղինակային իրավունքի մասին օրենքի համաձայն՝ այն
չկրկնօրինակելու և առանց թույլտվության որևէ հատված չտարածելու համար:
Այդպես դուք աջակցում եք գրողներին և թույլ տալիս հրատարակչությանը
շարունակել գրքեր հրատարակել յուրաքանչյուր ընթերցողի համար:

ԱՄՆ-ի կոնգրեսի գրադարանական դասակարգում
Գրին, Զոն, ծննդյան ամսաթիվ
Ապրողներն են մեղավոր/ Զոն Գրին – 1-ին հրատարակություն
էջերի քանակը, չափը
Համառոտ նկարագիր. Չորրորդ փուլում գտնվող վահանագեղձի քաղցկեղով
հիվանդ տասնվեցամյա Հեյզելը համակերպվել է իր հիվանդության
անբուժելիության հետ, բայց քաղցկեղով հիվանդների աջակցության խմբակում
մի տղայի հետ պատահական հանդիպումը ստիպում է նրան վերանայել սիրո,
կորստի և կյանքի նկատմամբ ունեցած հայացքները:
ISBN (Կազմը՝ կոշտ, թղթը՝)
[1. Քաղցկեղը՝ հնարովի, 2. Անբուժելի հիվանդությունը՝ հնարովի, 3.Սիրո
պատմությունը՝ հնարովի] I Վերնագիր
PZ7. G8233Fau 2012
Դ.կոդ [Fic] – թվ. սերտ. 23 2011045783
Ձևավորումը՝ Իռեն Վանդերվորթի

Հրատարակիչը վերահսկողություն չունի հեղինակի կամ որևէ երրորդ կողմի
վեբկայքերի կամ դրանց պարունակության վրա և որևէ պատասխանատվություն
չի կրում դրանց համար:

https://1915.info

Նվիրվում է Էսթեր Ըլլին

Երբ ալիքները նահանջեցին ափից, Հոլանդացի Վարդակակաչ Մարդը կանգնեց օվկիանոսի առջև:

– Միավորող, բաժանող, թունավորող, թաքցնող ու բացահայտող: Տե՛ս, վեր ու վար անելով, կանում է իր հեգր ամեն ինչ:

– Իսկ ինչն է դա, – հարցրի ես:

– Ջուրը, – ասաց հոլանդացին, – ու, դե, նաև ժամանակը:

Փիթեր վան Հաութեն, «Արքայական վիշտ»

Հեղինակի խոսքը

Սա ոչ այնքան հեղինակի խոսք է, որքան հեղինակի հիշեցումը, որը փոքր տառերով նշված էր մի քանի էջ առաջ. այս գիրքը գեղարվեստական գործ է՝ հնարովի պատմություն:

Ոչ վեպերը, ոչ էլ ընթերցողները երբևէ օգուտ չեն քաղել գուշակելու փորձերից, թե արդյո՞ք պատմության հիմքում իրական փաստեր են ընկած, թե՞ ոչ: Այդպիսի ջանքերն ուղղակի գրոհներ են նույնիսկ գաղափարին, թե հնարած պատմությունները կարող են որևէ նշանակություն ունենալ, բայց սա մեր դեռևս հատուկ կարծրատիպերի շարքից է:

Հեղինակը շատ բարձր է գնահատում ընթերցողի համագործակցությունը այս հարցում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Կյանքիս տասնյոթերորդ ձմռան վերջերում մայրս որոշեց, որ ես դեպրեսիայի մեջ եմ, հավանաբար, որովհետև հազվադեպ էի տնից դուրս գալիս, բավականին շատ ժամանակ էի անցկացնում անկողնում, նորից ու նորից նույն գիրքն էի կարդում, քիչ էի ուտում և իմ անսահման ազատ ժամանակից մի քիչ տրամադրում էի մահվան մասին մտորումներին:

Քաղցկեղի մասին յուրաքանչյուր գրքույկում, կայքում կամ նման այլ տեղերում դեպրեսիան միշտ ընդգրկվում է քաղցկեղի կողմնակի ազդեցությունների մեջ: Թեև, իրականում, այն քաղցկեղի կողմնակի ազդեցություն չէ: Դեպրեսիան մահանալու կողմնակի ազդեցությունն է, քաղցկեղը՝ նույնպես: (Իրականում, համարյա ամեն ինչ մահանալու կողմնակի ազդեցությունն է): Բայց մայրս համոզված էր, որ ինձ բուժում է անհրաժեշտ, և տարավ իմ բուժող բժիշկ Ջիմի մոտ, ով համաձայնեց, որ ես, իրոք, ընկղմվում եմ կաթվածահար անող կլինիկական դեպրեսիայի մեջ, և այդ պատճառով հարկավոր է որոշակի ճշտումներ մտցնել իմ ընդունած դեղերի մեջ, ինչպես նաև պետք է ամեն շաբաթ հոգեբանական աջակցության խմբակ այցելեմ:

Տվյալ խմբակի առանձնահատկություններից էր ուռուցքային հիվանդություններից տառապող անդամների կազմի հաճախակի փոփոխվելը: Իսկ ինչո՞ւ էր կազմն անընդհատ փոխվում. մահանալու ևս մի կողմնակի ազդեցություն:

https://1915.info

Հոգեբանական աջակցության խումբը, իհարկե, սաստիկ ճնշող էր: Հանդիպումները տեղի էին ունենում ամեն չորեքշաբթի, եպիսկոպոսյան քարաշեն եկեղեցու խաչաձև նկուղում: Բոլորս շրջանաձև նստում էինք խաչի ուղիղ կենտրոնում՝ հենց այնտեղ, որտեղ իրար կխաչվեին երկու տախտակներն ու որտեղ կլիներ Հիսուսի սիրտը:

Դա նկատեցի, քանի որ Փաթրիքը՝ աջակցության խմբակի առաջնորդը և միակ տասնութ տարեկանից բարձր անձնավորությունը, այս հիմար, անիծյալ հանդիպումներից յուրաքանչյուրի ժամանակ գլուխ էր տանում Հիսուսի սրտի մասին իր բարբաջանքով, թե մենք՝ քաղցկեղի դեմ երիտասարդ պայքարողներս, նստած ենք Քրիստոսի սրբասուրբ սրտում և այլն, և այլն:

Մի խոսքով, ահա թե ինչ էր տեղի ունենում Աստծու սրտում. մենք՝ վեց, յոթ կամ էլ տասը հոգով ներս էինք մտնում, ոմանք՝ ոտքով, ոմանք՝ անվասայլակներով: Հին ու չոր թխվածքաբլիթներ ծամելով, վրայից էլ լիմոնադ խմելով՝ նստում էինք «վստահության շրջանում» և արդեն քանիերորդ անգամ լսում Փաթրիքի դժբախտ ու խղճուկ կյանքի տաղտկալի պատմությունը, թե ինչպես էին նրա մոտ ամորձիների քաղցկեղ հայտնաբերել և կարծում էին, թե նա ուր որ է կմահանա, բայց չմահացավ: Ու հիմա՝ արդեն չափահաս, նստած է այստեղ՝ եկեղեցու նկուղում՝ Ամերիկայի 137-րդ լավագույն քաղաքում, ամուսնալուծված է, կախվածություն ունի համակարգչային խաղերից, ընկերներ հիմնականում չունի, իր քաղցկեղային անցյալի հաշվին խղճուկ գոյություն է քարշ տալիս, դանդաղ ընթանում է դեպի մագիստրոսի կոչումը, որը, սակայն, որևէ կերպ չի բարելավելու իր աշխատանքային հեռանկարները, և, ինչպես բոլորս, սպասում է, թե երբ դամոկլյան սուրը կբերի նրան այն թեթևությունը, որից խուսափել էր տարիներ առաջ, երբ քաղցկեղը խլել էր նրա ամորձիները, բայց խնայել էր կյանքը, թեև միայն ամենաշռայլ հոգին կարող էր դա կյանք անվանել:

ՁԵՐ ԲԱԽՏՆ ԷԼ ԿԱՐՈՂ Է ԱՅԴՊԵՍ ԲԵՐԵԼ

Հետո մենք ներկայանում էինք՝ անուն, տարիք, ախտորոշում, ու թե ինչպես ենք մեզ զգում այսօր: «Ես Հեյզելն եմ, – ասում էի ես, երբ հերթն ինձ էր հասնում, – տասնվեց տարեկան: Առաջնային օջախը՝ վահանաձև գեղձ՝ թոքերումս վաղուց հիմնված ուռուցքային բջիջների տպավորիչ քանակությամբ գաղութներով: Ինքնազգացողությունս՝ նորմալ»:

Երբ բոլորս ներկայանում էինք, Փաթրիքը միշտ հարցնում էր, թե որևէ մեկն ուզո՞ւմ է կիսվել իր մտքերով կամ ապրումներով: Ու հետո սկսվում էր աջակցության խմբակային մաստուրբացիան: Բոլորն սկսում էին խոսել իրենց պայքարի, կռվի, հաղթանակների, նիհարելու և ուլտրաձայնային հետազոտությունների մասին: Բայց արդարացի լինելու համար ասեմ, որ Փաթրիքը թույլ էր տալիս խոսել նաև մահվան մասին: Թեև շատերը դեռ չէին պատրաստվում մահանալ՝ նրանք դեռ հասնելու էին չափահասության, ինչպես Փաթրիքը:

(Իսկ սա նշանակում էր, որ այս ամենի մեջ որոշակի մրցակցություն կար. բոլորը ուզում էին հաղթել ոչ միայն քաղցկեղին, այլև սենյակում գտնվող մյուս բոլոր հիվանդներին: Հասկանում եմ, որ գուցե սա անտրամաբանական է, բայց երբ քեզ ասում են, որ նման հիվանդների, օրինակ՝ քսան տոկոսը, ապրում է հինգ տարի, իսկույն հաշվարկելով հասկանում ես, որ դա պատահում է հինգից մեկի մոտ... Ու շուրջդ նայելով՝ մտածում ես, ինչպես յուրաքանչյուր առողջ մարդ կմտածեր. «Ես էս չորս տականքներից հաստատ երկար եմ ապրելու»):

Աջակցության խմբակի միակ լուսավոր կետը Այզեք անունով տղան էր: Երկար դեմքով, նիհար երիտասարդ էր՝ ուղիղ, շեկ մազերը միշտ մի աչքի վրա բերված:

Ու հենց աչքերն էին նրա խնդիրը. տառապում էր աչքի մի շատ հազվագյուտ քաղցկեղից: Նրա մի աչքը հեռացրել էին, երբ դեռ երեխա էր: Հիմա հաստ ապակիներով ակնոց էր կրում, որ նրա և՛ իսկական, և՛ ապակե աչքերն անբնա-

https://1915.info
կանորեն խոշորացնում էր, ու գլուխն ասես ամբողջովին արհեստական աչք լիներ, և իսկական աչքն էլ սևեռված նայում էր քեզ: Ինչքան հասկացա Այզեքի հազվադեպ այցերից՝ հիվանդության կրկնությունը վտանգել էր նաև մյուս՝ առողջ աչքը:

Ես ու Այզեքը գրեթե բացառապես հոգոցներով էինք հաղորդակցվում: Ամեն անգամ, երբ ինչ-որ մեկը խոսում էր հակաքաղցկեղային սննդակարգերի կամ շնաձկան աղացած լողակ ներշնչելու և նման այլ բաների մասին, նա լուռ նայում էր ինձ ու հազիվ լսելի հոգոց հանում: Ես էլ, ի պատասխան, թեթևակի տարուբերում էի գլուխս ու նույնպես հոգոց հանում:

Այսպիսով, աջակցության խմբակը կատարյալ հիմարություն էր, ու մի քանի շաբաթ հետո ես գոռում-ճչում էի, ոտքերս դոփում հատակին՝ իմ դժգոհությունն արտահայտելով մայրիկիս այդ նախաձեռնությանը: Եվ, փաստորեն, հենց այն չորեքշաբթի օրը, երբ ծանոթանալու էի Օգոստոս Ուոթերսի հետ, հնարավոր ամեն ինչ անում էի աջակցության խմբակից գլուխս ազատելու համար, երբ ես ու մայրիկս, բազմոցին նստած, «Ամերիկայի հաջորդ թոփ մոդելը» հեռուստաշոուի նախորդ սեզոնի տասներկուժամյա մարաթոնի երրորդ մասն էինք դիտում, որը, անկեղծ ասած, ես արդեն տեսել էի. ինչևէ:

Ես. – Էլ չեմ ուզում աջակցության խմբակ գնալ:

Մայրիկ. – Տարբեր զբաղմունքների նկատմամբ հետաքրքրության կորուստը նույնպես դեպրեսիայի ախտանշաններից է:

Ես. – Ուրեմն թող «Ամերիկայի հաջորդ թոփ մոդելը» հեռուստաշոուն նայեմ, ի՞նչ պակաս զբաղմունք է:

Մայրիկ. – Հեռուստացույց դիտելը պասիվ զբաղմունք է:

Ես. – Ըրրի, խնդրում եմ, մա՛:

Մայրիկ. – Հեյզել, դու դեռահաս ես ու պետք է քեզ դեռահասի պես պահես. նոր ընկերներ ձեռք բերես, տնից դուրս գաս և կյանքդ կառուցես:

Ես. – Դե, եթե ուզում ես ինձ դեռահասի պես պահեմ,

աջակցության խմբակ ուղարկել պետք չէ: Ուղղակի ինձ համար ինքնության կեղծ հավաստագիր գնիր, որով կկարողանամ գիշերային ակումբներ գնալ, օղի խմել ու մարիխուանա քաշել:

Մայրիկ. – Նախ, մարիխուանան չեն քաշում, ծխում են:

Ես. – Տեսնո՞ւմ ես, ա՛յ, որ կեղծ հավաստագիր ունենայի, դա կիմանայի:

Մայրիկ. – Դու գնալո՛ւ ես աջակցության խմբակ ու վերջ:

Ես. – Մաաաաաաաաաաաաաաաաաաաա՜:

Մայրիկ. – Հեյզել, դու արժանի ես նորմալ կյանքի:

Սրանով մայրիկս բերանս փակեց, չնայած ինձ համար այդքան էլ պարզ չէր, թե աջակցության խմբակի հաճախումն ընդհանրապես ինչ կապ ուներ նորմալ կյանք հասկացության հետ: Ինչևէ, ես, ի վերջո, համաձայնեցի գնալ՝ միայն բաց թողած «Ամերիկայի հաջորդ թոփ մոդելը» հեռուստաշոուի 1.5 էպիզոդները տեսագրելու իրավունք ստանալու պայմանով:

Համաձայնեցի հաճախել աջակցության խմբակ այն նույն պատճառով, որով թույլ էի տվել նորավարտ բուժքույրերին թունավորել ինձ էկզոտիկ անուններ ունեցող քիմիական նյութերով. պարզապես ուզում էի ծնողներիս ուրախացնել: Աշխարհում տասնվեց տարեկանում քաղցկեղով հիվանդ լինելուց անտանելի միայն մեկ բան կա՝ քաղցկեղով հիվանդ երեխա ունենալը:

Ժամը չորսն անց հիսունվեցին մայրիկը մեքենան արգելակեց եկեղեցու շրջանաձև ետնաբակում: Ժամանակ ձգելու համար սկսեցի թթվածնի բալոնս բզբզել:

– Օգնե՞մ տանել բալոնդ:

– Չէ, ես կտանեմ, շնորհակալություն, – ասացի:

Իմ կանաչ, գլանաձև բալոնը շատ թեթև է, բացի այդ՝ այն հետևիցս քարշ տալու համար փոքրիկ երկաթե սայլակ ունեմ: Ծոծրակիս մոտ երկու մասի բաժանվող ու ականջներիս հետևով անցնող, քթանցքերումս նորից իրար միացող թափանցիկ կանյուլայի՝ հատուկ խողովակի միջոցով, ես

https://1915.info

յուրաքանչյուր որպե երկու լիտր թթվածին եմ ստանում բալոնից: Այս սարքն ինձ անհրաժեշտ է, քանի որ թոքերս իրենց գործը կարգին չեն անում:

– Սիրում եմ քեզ, – ասաց մայրս, երբ ես դուրս եկա մեքենայից:

– Ես էլ քեզ, մա: Դե, մինչև ժամը վեցը:

– Նոր ընկերներ ձեռք կբերես, – ավտոմեքենայի բաց պատուհանից բղավեց հետևիցս:

Չուզեցի վերելակով իջնել, քանի որ աջակցության խմբակում վերելակից միայն իրենց կյանքի վերջին օրերն ապրողներն էին օգտվում, աստիճաններով իջա: Թխվածքաբլիթ վերցրի, միանգամյա օգտագործման բաժակում լիմոնադ լցրեցի ու շրջվեցի. մի տղա ինձ էր նայում: Համոզված էի, որ նախկինում նրան այստեղ չեմ տեսել: Երկարահասակ ու նիհար, բայց մկանուտ երիտասարդ էր, որ հազիվ էր տեղավորվում տարրական դասարանների համար նախատեսված պլաստմասե աթոռի վրա: Մազերը կարմրադարչնագույն էին, ուղիղ և կարճ կտրած: Իմ տարիքի էր կամ գուցե մեկ տարով մեծ, մի ձեռքը կիսով չափ մուգ ջինսի գրպանում բավականին անհարմար դիրքով նստել էր աթոռի եզրին:

Հայացքս փախցրի՝ հանկարծ գիտակցելով, թե ինչ սարսափելի տեսք ունեի այդ պահին: Հագիս իմ հին, ժամանակին կիպ, բայց հիմա արդեն մի քանի տեղից կախ ընկած ջինսն էր, դեղին վերնաշապիկ՝ վրան պատկերված մի երաժշտական խումբ, որին այլևս չէի սիրում: Ու նաև մազերս. հիմա ես պաժ սանրվածքով էի ու տնից դուրս գալուց առաջ նույնիսկ չէի էլ սանրվել: Բացի այդ՝ այտերս էլ բուժման հետևանքով սկյուռիկի այտերի պես ծիծաղելի փքված էին: Ու գլուխս մարմնիցս անհամաչափորեն մեծ էր երևում. ասես գլխիս փոխարեն մի մեծ փուչիկ լիներ: Այնուամենայնիվ, երբ նորից նայեցի նրա կողմը, տեսա, որ հայացքը դեռ չի հեռացրել ինձանից:

Եվ միայն այդ պահին հասկացա, թե իրականում ինչ է

նշանակում «տեսողական շփում» արտահայտությունը:

Շրջան մտա, նստեցի Այզեքի կողքին՝ երիտասարդից երկու աթոռ այն կողմ: Եվս մի հայացք գցեցի նրա ուղղությամբ, նա դեռ ինձ էր նայում:

Խոստովանում եմ՝ շատ հմայիչ էր: Երբ մի անհամակրելի մեկն է աչքերը վրադ չռում, լավագույն դեպքում քեզ անհարմար ես զգում, վատագույն դեպքում՝ վիրավորված, բայց երբ նա հմայիչ է...դե, դա արդեն լրիվ ուրիշ է:

Հանեցի բջջայինս, նայեցի ժամին՝ չորսն անց հիսունինը: Շրջանը լցվեց տասներկուսից տասնութ տարեկան դժբախտ պատանիներով, և Փաթրիքը հավաքն սկսեց հոգու անխռովության աղոթքով. «Տեր Աստված, պարգևիր մեզ ուժ, որպեսզի կարողանանք անխռովությամբ ընդունել այն ամենը, ինչը փոխել չենք կարող, քաջություն, որպեսզի փոխենք ինչը կարող ենք, և իմաստնություն, որ կարողանանք տարբերել այդ երկուսը»:

Երիտասարդը շարունակում էր ինձ նայել, ես արդեն սկսում էի կարմրել:

Վերջապես եկա այն մտքին, որ լավագույն մարտավարությունը նույն հանդգնությամբ նրան նայելը կլինի: Ի վերջո հանդուգն սևեռուն հայացքով նայելը տղաների մենաշնորհը չէ: Այսպիսով, ես էլ սկսեցի ուշադիր նայել նրան, մինչ Փաթրիքն արդեն հազարերորդ անգամ իր ամորձիների պատմությունն էր անում, ու շուտով մեր միջև հայացքը պահելու մրցույթ սկսվեց: Որոշ ժամանակ անց տղան ժպտաց և վերջապես մի կողմ թեքեց կապույտ աչքերը: Երբ նորից նայեց ինձ, հոնքերս վեր ու վար արեցի՝ ցանկանալով ցույց տալ, թե ես հաղթեցի:

Նա թոթվեց ուսերը: Փաթրիքը դեռ շարունակում էր խոսել: Հետո վերջապես եկավ խմբակի անդամների ներկայանալու ժամանակը:

– Այզեք, ուզո՞ւմ ես այսօր առաջինը դու սկսիր: Գիտեմ, որ հիմա քեզ մոտ դժվար ժամանակներ են:

– Լավ, – համաձայնեց Այզեքը: – Ես Այզեքն եմ: Տասնյոթ տարեկան եմ: Կարծում եմ, մի քանի շաբաթից ինձ կվիրահատեն, ինչից հետո կկուրանամ: Չէ, չեմ բողոքում, գիտեմ, որ մեզնից շատերն ավելի վատ վիճակում են, բայց դե, կույր լինելն էլ մի բան չէ: Չնայած ընկերուհիս ինձ շատ է օգնում, ինչպես նաև Օգոստոսի նման լավ ընկերներս, – նա գլխով ցույց տվեց նորեկին, որը հիմա արդեն անուն ուներ: – Էհ, ինչ արած, – հայացքը կոնաձև ագուցած ձեռքերին շարունակեց Այզեքը, – մեկ է, ոչինչ չես կարող փոխել:

– Մենք քո կողքին ենք, Այզեք, – ասաց Փաթրիքը, – եկեք աջակցենք Այզեքին, ընկերներ:

Ու մենք խմբով միալար կրկնեցինք.

– Մենք քո կողքին ենք, Այզե՛ք:

Հաջորդը Մայքլն էր: Նա տասներկու տարեկան էր: Հիվանդ էր լեյկիմիայով: Միշտ էլ ունեցել էր այդ հիվանդությունը: Իրեն լավ էր զգում (դե, ինքն էր այդպես ասում, բայց վերելակով էր իջել նկուղ):

Լիդան տասնվեց տարեկան էր ու բավականին գեղեցիկ՝ հմայիչ տղայի ուշադրության առարկան լինելու համար: Նա մշտական հաճախորդ էր, կույր աղիքի որդանման ելուստի քաղցկեղի երկարատև ռեմիսիայում[1] էր գտնվում: Քաղցկեղի մի տեսակ, որ նախկինում չգիտեի, թե գոյություն ունի: Նա ասաց նույնը, ինչը միշտ կրկնում էր խմբակի բոլոր հանդիպումների ժամանակ: Ասաց, որ իրեն ուժեղ է զգում, ինչը, սակայն ինձ, ում քթանցքերը տվյալ պահին խուտուտ էր տալիս կանյուլայով հոսող թթվածինը, ավելի շատ պարծենկոտություն էր թվում:

Մինչև նոր տղային հասնելը դեռ հինգ հոգի էլ խոսեցին: Երբ նրա հերթը եկավ, թեթևակի ժպտաց ու սկսեց: Նա թավ, խռպոտ և մահու չափ սեքսուալ ձայն ուներ.

– Անունս Օգոստոս Ուոթերս է, – սկսեց նա, – տասնյոթ տարեկան եմ: Մեկ ու կես տարի առաջ ոսկրի թեթև սար-

1 Ախտանիշների նվազման փուլ

կոմա[1] ունեի: Բայց էսօր Այզեքի խնդրանքով եմ էստեղ եկել:

– Իսկ ինչպե՞ս ես քեզ զգում, – հարցրեց Փաթրիքը:

– Օ՜, հիանալի, – կեսբերան ժպտաց Օգոստոս Ուոթերսը, – հիմա միայն վեր ընթացող կարուսելի վրա եմ, ընկերս:

Երբ հերթն ինձ հասավ, ասացի.

– Անունս Հեյզել է: Տասնվեց տարեկան եմ: Վահանաձև գեղձի քաղցկեղ՝ թոքերում մետաստազներով: Ինձ նորմալ եմ զգում:

Մի ժամն արագ անցավ. պատմություններ հիվանդության դեմ մղվող պայքարի մասին, հաղթած մարտեր՝ պարտության դատապարտված պատերազմների արանքում, հույսից կառչած, գովեստներ ու մեղադրանքներ ընտանիքների հասցեին, չհասկացվածություն ընկերների կողմից, հեղվող արցունքներ, աջակցության խմբակի մխիթարություն: Ոչ ես, ոչ էլ Օգոստոսը չխոսեցինք, մինչև Փաթրիքը չասաց.

– Օգոստոս, ուզո՞ւմ ես մեզ հետ քո վախերով կիսվել:

– Իմ վախերո՞վ:

– Այո, քո վախերով:

– Ես մոռացությունից եմ վախենում, – առանց վայրկյան իսկ հապաղելու ասաց Օգոստոսը, – վախենում եմ, ինչպես այն ասացվածքի կույրն է վախենում մթությունից:

– Մի քիչ շուտ չի՞, – ժպտալով ասաց Այզեքը:

– Այ, կներես, երևի, մի քիչ անհարգալից գտնվեցի, չէ՞, – ասաց Օգոստոսը,– էնքան կույր եմ մյուսների զգացմունքների նկատմամբ:

Այզեքն սկսեց ծիծաղել, բայց Փաթրիքը սաստող կերպով մատը բարձրացրեց ու ասաց.

– Վերջ տուր, Օգոստոս: Արի վերադառնանք քեզ և քո պայքարներին: Ասացիր՝ վախենում ես մոռացությունից, այնպես չէ՞:

– Այո, – ընդամենը սա էր Օգոստոսի պատասխանը:

Թվում էր Փաթրիքը մի պահ շփոթվեց:

---

1 Չարորակ ուռուցքի տեսակ:

– Ըը, ինչ-որ մեկն ուզո՞ւմ է խոսել սրա վերաբերյալ:

Երեք տարի իսկական դպրոց չէի գնացել: Իմ միակ ամենամտերիմ ընկերները ծնողներս էին ու նաև մի գրող, որը գաղափար անգամ չուներ իմ գոյության մասին: Ու ես բավականին ամաչկոտ էի, ոչ նրանցից, որ անընդհատ ձեռք են բարձրացնում՝ խոսելու համար:

Այնուամենայնիվ, այս անգամ որոշեցի խոսել: Կիսով չափ բարձրացրի ձեռքս, և Փաթրիքը, բացահայտ հրճվանքով, անմիջապես բացականչեց.

– Հեյզե՛լ, խնդրեմ:

Համոզված եմ, որ նրա կարծիքով ես սկսում էի բացվել, դուրս գալ կաշկանդվածությունից՝ դառնալով խմբակի մասնիկը:

Մի հայացք գցեցի Օգոստոսի վրա, նա էլ իր հերթին ինձ նայեց: Նրա աչքերն այնքան թափանցիկ կապույտ էին, որ թվում էր՝ կարող ես դրանց միջով նրա ներքինը տեսնել:

–Կգա ժամանակ, – ասացի, – երբ բոլորս մահացած կլի-նենք: Բոլոր-բոլորը: Կգա ժամանակ, երբ այլևս մարդկային արարածներ չեն լինի, որ հիշեն, թե ինչ-որ մեկը գոյություն է ունեցել կամ էլ մեր տեսակը երբևէ ինչ-որ բան է արել: Ոչ մեկը չի մնա, որ հիշի Արիստոտելին կամ Կլեոպատրային, ուր մնաց՝ քեզ: Մեր բոլոր գործերը, կառուցած շենքերը, ստեղծա-գործությունները, մտքերը, հայտնագործությունները մոռաց-վելու են, ու էս ամեն ինչը, – ասացի՝ ձեռքով շուրջս ցույց տալով, – հավասարվելու է գրոյի, ասես երբեք էլ չի եղել: Հնարավոր է՝ դա լինի շատ շուտով կամ գուցե միլիոնավոր տարիներ հետո, բայց նույնիսկ, եթե արևի անկումից հետո էլ ողջ մնանք, միևնույն է՝ հավերժ չենք ապրելու էս երկրի վրա: Եղել է ժամանակաշրջան՝ մինչև բանական կյանքի առա-ջացումը, ու վերջինիս էլ մեկ ուրիշն է հաջորդելու: Եվ եթե քեզ անհանգստացնում է մարդկանց կողմից մոռացվելու անխուսափելիությունը, խորհուրդ եմ տալիս պարզապես անտեսել դա: Վստահ եմ՝ բոլորն էլ էդպես են անում:

Ես սա սովորել էի վերը նշված իմ երրորդ լավագույն ընկեր Փիթեր վան Հաութենից՝ «Արքայական վիշտ» գրքի մեկուսի կյանք վարող հեղինակից: Այդ գիրքն ինձ համար Աստվածաշնչի պես մի բան էր դարձել: Փիթեր վան Հաութենը իմ ճանաչած միակ մարդն էր, որ թվում էր, թե՝

ա) հասկանում է, թե իրականում ինչ է մահը,

բ) բայց, ինքը դեռ չի մահացել:

Երբ խոսքս ավարտեցի, բավականին երկար ժամանակ լռություն տիրեց, որի ընթացքում նկատեցի Օգոստոսի դեմքի վրա տարածվող լայն ժպիտը. ոչ թե սեքսուալ երևալ փորձող տղայի թեթևակի, ծուռ ժպիտը, որով քիչ առաջ նայում էր ինձ, այլ նրա իսկական, դեմքի համար չափից մեծ ժպիտը:

«Գրողը տանի, – շշնջաց, – այ քեզ աղջիկ»:

Դրանից հետո ոչ ես, ոչ էլ նա մինչև հանդիպման ավարտը ոչինչ չասացինք: Վերջում բոլորս իրար ձեռք բռնեցինք, ու Փաթրիքն սկսեց աղոթքը. «Տեր Հիսուս Քրիստոս, մենք՝ քաղցկեղին դիմակայողներս, հավաքվել ենք այստեղ՝ բառիս բուն իմաստով քո սրտում, որպեսզի միասին պայքարենք քաղցկեղի դեմ: Դու և միայն դու ես ճանաչում մեզ այնպես, ինչպես մենք՝ ինքներս մեզ: Այս փորձությունների ծանր ժամանակաշրջանի միջով ուղեկցիր մեզ դեպի կյանք և Լույս: Աղոթում ենք Այզեքի աչքերի, Մայքլի և Ջեմմիի արյան, Օգոստոսի ոսկրերի, Հեյզելի թոքերի, Ջեյմսի կոկորդի համար: Խնդրում ենք, բուժիր մեզ և թող, որ զգանք Քո սերն ու խաղաղությունը, որ վեր է, քան ամենայն միտք: Եվ մեր սրտերում միշտ վառ ենք պահում բոլոր մեր ճանաչած ու սիրված մարդկանց հիշատակը, որ վերադարձել են տուն՝ Քեզ մոտ. Մարիայի, Քեյդի, Ջոզեֆի, Հեյլիի, Աբիգայիլի, Անգելինայի, Թեյլորի, Գաբրիելի ...»:

Այս ցուցակը շատ երկար էր. աշխարհում մահացած շատ մարդիկ կան: Ու մինչ Փաթրիքը միալար կարդում էր անունները թղթի պատառիկից, քանի որ ցուցակը շատ երկար էր անգիր հիշելու համար, ես աչքերս փակել ու փորձում

https://1915.info

https://1915.info

էի մտքերս կենտրոնացնել աղոթքի վրա: Բայց ավելի շատ պատկերացնում էի այն օրը, երբ իմ անունն էլ կներառվեր այդ ցուցակի ամենավերջերում, երբ արդեն էլ ոչ ոք չէր լսում:

Երբ Փաթրիքն ավարտեց, մենք միաձայն կրկնեցինք մեր հիմար մանտրան՝ «Ապրենք այսօրվա օրով»:

Եվ հանդիպումը վերջացավ:

Օգոստոս Ուոթերսը հրվելով վեր կացավ տեղից ու քայլեց դեպի ինձ: Նրա քայլվածքն էլ ժպիտի նման ծուռ էր: Նա ինձնից բարձրահասակ էր, բայց պատշաճ հեռավորություն էր պահպանում, որպեսզի իր աչքերի մեջ նայելու համար ստիպված չլինեի վիզս երկարացնել:

– Անունդ ի՞նչ է, – հարցրեց:

– Հեյզել:

– Չէ, լրիվ անունդ:

– Ըմ, Հեյզել Գրեյս Լանքասթեր:

Նա ուզում էր էլի ինչ-որ բան ասել, երբ Այզեքը մոտեցավ մեզ:

– Մի րոպե սպասիր, – ցուցամատը տնկելով՝ խնդրեց Օգոստոսը, ու դիմեց Այզեքին, – իրականում սա քո ներկայացրածից էլ վատն է:

– Ասում էի, որ գորշ տեղ է:

– Բա էլ ինչո՞ւ ես գալիս էստեղ:

– Չգիտեմ, մի տեսակ օգնում է:

Օգոստոսը շուրթերը Այզեքի ականջին մոտեցնելով, իր կարծիքով՝ այնպես, որ ես չլսեմ, հարցրեց. «Մշտականների՞ց է»: Այզեքի պատասխանը չլսեցի, բայց Օգոստոսն ասաց. – «Էն էլ ինչպես»: Ապա ձեռքերը դնելով Այզեքի ուսերին, ամուր գրկեց ընկերոջը: Հետո մի քայլ նրանից հեռանալով, ասաց.

– Հեյզելին պատմիր կլինիկայի մասին:

Այզեքը ձեռքը հենեց թխվածքաբլիթների սեղանիկին և խոշոր աչքը հառեց ինձ վրա:

– Առավոտյան գնացի կլինիկա ու վիրաբույժիս ասացի, թե ավելի լավ կլիներ խլանայի, քան կուրանայի: Նա էլ ասաց.

«Էդպես հնարավոր չէ»: Ես էլ ասացի. «Դե, հա, հասկանում եմ, որ էդպես հնարավոր չէ, ուղղակի ասում եմ, որ կնախընտրեի խուլ լինել, քան կույր, եթե ընտրելու հնարավորություն ունենայի: Բայց դե, իհարկե, հասկանում եմ, որ էդպիսի հնարավորություն չունեմ»: Ու նա էլ պատասխանեց. «Դե, բարեբախտաբար, դու գոնե չես խլանա», ես էլ ասացի. «Շատ շնորհակալ եմ մեծ բացահայտության համար, որ աչքիս քաղցկեղից չեմ խլանա: Բախտս բերել է, որ ձեզ նման ինտելեկտուալ հսկան բարեհաճել է վիրահատել ինձ»:

– Վիրաբույժդ իսկական հաղթողի պես է խոսում, – ասացի ես, – երևի ես էլ աչքի քաղցկեղ ձեռք բերեմ՝ էդ մարդու հետ ծանոթանալու համար:

– Դե, քեզ հաջողություն դրանում: Լավ, ես արդեն պիտի գնամ, Մոնիկան ինձ է սպասում: Քանի կարող եմ, պետք է մի կուշտ նայեմ նրան:

– Վաղը «Հակաապստամբություն» խաղո՞ւմ ենք:

– Իհարկե:

Այզեքը շրջվեց ու միանգամից երկու աստիճանի վրայով ցատկելով՝ վազելով վեր բարձրացավ:

Օգոստոս Ուոթերսը թեքվեց իմ կողմն ու ասաց.

– Բառիս բուն իմաստով:

– Բառիս բուն իմաստո՞վ, – չհասկացա:

– Մենք բառիս բուն իմաստով Հիսուսի սրտում ենք, – պարզաբանեց: – Կարծում էի, թե եկեղեցու նկուղում ենք, բայց պարզվում է՝ բառիս բուն իմաստով Հիսուսի սրտում ենք:

– Ինչ-որ մեկը պետք է զգուշացնի Հիսուսին դրա մասին, – կատակեցի, – կարծում եմ, վտանգավոր է էսքան քաղցկեղով հիվանդ երեխա սրտումդ հավաքելը:

– Ինքս էլ հաճույքով դրա մասին կասեի Նրան, բայց, ցավոք, բառիս բուն իմաստով խրված եմ Նրա սրտի մեջ, ու դժվար թե լսի ինձ, – ծիծաղելով ասաց Օգոստոսը:

Հետո, նայելով ինձ, տարուբերեց գլուխը:

–Ի՞նչ, – հարցրի:

– Հեչ, ոչ մի բան, – ասաց:

– Ինչո՞ւ ես էդպես նայում վրաս:

Կիսաբերան ժպտաց ու ասաց.

– Որովհետև դու սիրուն ես: Ինձ դուր է գալիս սիրուն մարդկանց նայելը: Վերջերս որոշել եմ ինձ չզրկել կյանքի պարզ հաճույքներից: – Սրան կարճ, անհարմար լռություն հետևեց, որը հաղթահարելով՝ Օգոստոսը շարունակեց, – հատկապես հաշվի առնելով, որ, ինչպես դու հենց նոր շատ գեղեցիկ նշեցիր, էս ամեն ինչը և ընդհանրապես ամեն ինչ ի վերջո մոռացության է մատնվելու:

Ես քմծիծաղի կամ հոգոցի կամ էլ թեթև հազ հիշեցնող ձայնի միջով արտաբերեցի.

– Ես սիրու...

– Դու երկու հազարականների Նատալի Պորտմանին ես նման՝ «Վ նշանակում է վենդետա» ֆիլմի Նատալի Պորտ-մանին:

– Չեմ տեսել էդ ֆիլմը:

– Լո՞ւրջ, – զարմացած հարցրեց, – տղայի նման կարճ կտրած մազերով մի շատ սիրուն աղջիկ է, որ զզվում է իշ-խանություններից: Սիրահարվում է մի տղայի, չնայած լավ գիտի, որ նա մի մեծ գլխացավանք է: Ինչքան հասկանում եմ, դա քո ինքնակենսագրությունն է, – նրա արտասանած յուրաքանչյուր վանկում սիրախաղի ելևէջներ կային:

Անկեղծ ասած, նա իմ մեջ կիրք էր առաջացնում: Մինչ դա նույնիսկ չգիտեի էլ, որ տղաները կարող են իմ մեջ կիրք արթնացնել, համենայն դեպս, ոչ իրական կյանքում:

Մի փոքրիկ աղջնակ անցավ կողքներովս:

– Գործերդ ինչպե՞ս են, Ալիսա:

Աղջնակը ժպտաց ու թոթովեց.

– Լավ, Օգոստոս:

– Մեմորիալից է, – Օգոստոսը տեղեկացրեց ինձ: (Մեմո-րիալը մեծ հետազոտական հիվանդանոց է): – Իսկ դու ո՞ր հիվանդանոցն ես գնում:

https://1915.info

– Մանկական, – ասացի ինձ համար անսպասելի հուզված, բարակ ձայնով:

Նա գլխով արեց: Մեր խոսակցությունը, կարծես թե, արդեն մոտեցել էր ավարտին:

– Դե լավ, – ասացի, գլխի թեթևակի շարժումով ցույց տալով «բառիս բուն իմաստով Հիսուսի սրտից» դուրս տանող աստիճանները:

Սայլակս կանգնեցրի անիվների վրա ու սկսեցի քայլել: Նա կաղալով քայլում էր իմ կողքից:

– Դե ինչ, մինչ մյուս հանդիպումը, – ասացի:

– Անպայման պետք է տեսնես էդ ֆիլմը, «Վ նշանակում է վենդետա»:

– Լավ, ինտերնետում կփնտրեմ:

– Չէ, ինձ հետ, իմ տանը ու հենց հիմա:

Զարմացած կանգ առա:

– Ես քեզ համարյա չեմ ճանաչում, Օգոստոս Ուոթերս: Ինչ իմանամ, միգուցե դու կացնով մարդասպան ես:

Նա գլխով արեց:

– Շատ ճիշտ եք, Հեյզել Գրեյս:

Նա ինձնից առաջ անցավ: Կանաչ տրիկոտաժե վերնաշապկի տակից ուրվագծվում էին կլորավուն, մկանուտ ուսերը, մեջքն ուղիղ էր, ոտքերն ամուր ու վստահ դնում էր գետնին՝ թեթևակի թեքվելով աջ ոտքի վրա, որը, ինչքան հասկացա, պրոթեզ էր: Ոսկրի սարկոման երբեմն փորձնական վերցնում է վերջույթներից մեկը ու եթե հավանում է քեզ, մնացածն էլ է տանում:

Ես դանդաղ բարձրանում էի նրա հետևից՝ անընդհատ ետ մնալով, քանի որ աստիճաններ բարձրանալը թոքերիս հմտությունների շարքին չի դասվում:

Ու այսպիսով Հիսուսի սրտից դուրս եկանք ավտոկանգառ: Գարնանային օդը սքանչելիորեն աչք ծակող իրիկնալույսի ներքո հաճելիորեն սառն էր:

Մայրիկը դեռ չէր եկել: Դա նրանից չէր. սովորաբար, երբ

դուրս էի գալիս խմբակից, արդեն ինձ սպասելիս էր լինում ավտոկանգառում: Նայեցի շուրջս: Մի բարձրահասակ, կլորիկ կազմվածքով սևահեր աղջիկ Այզեքին սեղմել էր եկեղեցու քարե պատին ու կատաղի համբուրում էր: Նրանք բավականին մոտ էին կանգնած ինձ, և ես լսում էի նրանց՝ իրար հպվող բերանների տարօրինակ ձայներն ու անընդհատ կրկնվող «ընդմիշտ» բառը:

Հանկարծ կողքիս հայտնվելով՝ Օգոստոսը շշնջաց.

– Նրանք զգացմունքների հրապարակային արտահայտման եռանդուն կողմնակիցներ են:

– Իսկ ինչո՞ւ են անընդհատ «ընդմիշտ» բառը կրկնում:

Բերանների չփչփոցն ավելի ուժեղացավ:

– Դա նրանց բառն է: Նրանք «ընդմիշտ» սիրելու են իրար և այլն, և այլն: Ըստ իմ համեստ հաշվարկների՝ անցած տարի էդ բառը չորս միլիոն անգամ հաղորդագրությամբ իրար ուղարկած կլինեն:

Մայքլի ու Ալիսայի հետևից էլ եկան: Մնացինք միայն ես և Օգոստոսը՝ հայացքներս Այզեքի ու Մոնիկայի վրա, որ շարունակում էին նույն տեմպով, ասես երկրպագության կառույցի չէին հենված: Այզեքը ձեռքը տարավ աղջկա կրծքին ու, ափի մեջ առնելով, սկսեց վերնաշապիկի վրայից մատներով շոշափել այն: Ինձ հետաքրքրեց, թե արդյո՞ք դա հաճելի է: Չնայած չէր թվում, որ հաճելի կլինի, բայց, կարծում եմ, կարելի էր Այզեքին ներել՝ հաշվի առնելով, որ շուտով կուրանալու է: Զգայարանները պետք է քեֆ անեն, քանի դեռ ուժեղ ցանկություն կա, մի խոսքով ...

– Պատկերացնո՞ւմ ես, թե ինչ է մարդ զգում վերջին անգամ դեպի հիվանդանոց վարելիս, ընդհանրապես, վերջին անգամ մեքենա վարելիս:

Առանց ինձ վրա նայելու՝ Օգոստոսն ասաց.

– Էս հուզիչ պահը մի փչացրու, Հեյզել Գրեյս: Հիմա ես ուսումնասիրում եմ ջահել սերը՝ իր հոյակապ անվարժ ու անշնորհք շարժումներով:

– Ինձ թվում է՝ ցավեցնում է նրա կուրծքը:

– Այո, դժվար է որոշել՝ փորձում է գրգռել նրան, թե կրծքի հետազոտություն է անցկացնում:

Հետո Օգոստոս Ուոթերսը ձեռքը տարավ գրպանն ու, այ քեզ բան, ծխախոտի տուփ հանեց: Բացեց տուփը և ծխախոտը դրեց շուրթերի արանքում:

– Չէ, լռուրջ, – պոռթկացի, – ուղղակի ընտիր է, Աստված իմ, դու հենց նոր ամեն ինչ փչացրիր:

– Ինչը փչացրի, – հարցրեց՝ իմ կողմը շրջվելով:

Դեռ չվառած ծխախոտը կախվել էր նրա անժպիտ բերանի անկյունում:

– Ամեն-ամեն ինչ: Երբ տղան, որ էնքան էլ անհամակրելի չէ, ոչ էլ հիմար, ու ամեն տեսանկյունից հաճելի երիտասարդ է թվում, աչքն ինձնից չի կտրում, ուշադրություն է հրավիրում բառացիության սխալ կիրառման վրա, ինձ համեմատում դերասանուհիների հետ ու հրավիրում իր տանը ֆիլմ դիտելու: Դե իհարկե, համարթիան անխուսափելի է: Քո դեպքում էլ դա ծխելն է ու չնայած, օ Աստված իմ, ունեցել ես էդ անիծյալ քաղցկեղը, հիմա մեծացնում ես ***ՄԻ ՈՒՐԻՇ ՏԵՍԱԿԻ ՔԱՂՑԿԵՂ*** ձեռք բերելու հավանականությունը ու դեռ մի բան էլ վճարում ես դրա համար: Ասեմ, որ շնչել չկարողանալն անտանելի բան է: Օ՜, լրիվ հիասթափեցրիր: Լրիվ:

– Համարթիան ինչ է, – հարցրեց՝ ծխախոտը դեռ բերանին, ինչից ծնոտը սեղմվել էր:

Բայց ինչ հմայիչ ծնոտ ուներ:

– Ճակատագրական թերություն, – բացատրեցի՝ մեջքով շրջվելով նրան:

Օգոստոս Ուոթերսին թողնելով ետևում՝ սկսեցի քայլել դեպի մայթեզրը, ու այդ պահին մեքենայի ձայն լսեցի: Մայրս էր, սպասում էր, որ նոր ընկերներ ձեռք բերեմ:

Տարօրինակ հիասթափության ու զայրույթի միախառնված զգացողություն էր համակել ինձ: Չգիտեմ էլ, թե իրականում ինչ էր դա, բայց սիրտս լի էր դրանով: Ես ուզում էի

ապտակել Օգոստոս Ուոթերսին ու նաև թոքերս փոխարինել նորմալ թոքերով, որոնք կարգին կկատարեին իրենց գործը: Կեղերովս կանգնել էի մայթեզրին, իմ կյանքի անտանելի լուծը՝ թթվածնի բալոնով սայլակը կողքիս, ու մինչ մայրիկս մեքենայով մոտենում էր ինձ, ինչ-որ մեկը ձեռքս բռնեց:

Ձեռքս կտրուկ դուրս քաշեցի նրա ափից ու շրջվեցի:

– Մինչև չվառես, սրանք քեզ չեն սպանի, – ասաց, երբ մայրիկիս մեքենան արդեն մայթեզրի մոտ էր: – Դրանցից ոչ մեկը երբեք չեմ վառել: Հասկանո՞ւմ ես, սա փոխաբերություն է: Նայիր, սպանող բանը դնում ես ատամներիդ արանքում, բայց նրան ուժ չես տալիս՝ իր կործանիչ գործունեությունն անելու համար:

– Փոխաբերությո՞ւն, – կասկածանքով հարցրի:

Մայրս, մեքենան պարապ ընթացքի վրա դրած, սպասում էր:

– Փոխաբերություն է, – վստահեցրեց:

– Ու մի՞շտ են գործողություններդ փոխաբերական ռեզոնանսներով պայմանավորված, – հարցրի:

– Օ՜, այո, – ժպտաց իր իսկական լայնաբերան, հիմարավուն ժպիտով: – Ես փոխաբերության մեծ ջատագով եմ, Հեյզել Գրեյս:

Մոտեցա մեքենային: Թխկթխկացրի պատուհանին, ու երբ մայրս այն իջեցրեց, ասացի.

– Օգոստոս Ուոթերսի հետ կինո եմ գնում: Խնդրում եմ, տեսագրիր «Ամերիկայի հաջորդ թոփ մոդելը» մարաթոնի էսօրվա էպիզոդները:

Հարգելի ընթերցող, այս գիրքը թվայնացրել է 1915.info կայքը իր սեփական միջոցներով: Այս և բազմաթիվ այլ գրքեր կարող եք անվճար ներբեռնել մեր կայքից:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Օգոստոս Ուոթերսն ահավոր էր վարում: Մեքենայի թե կանգնեցնելը, թե տեղից շարժելը նրա մոտ միշտ սարսափելի ցնցումով էր ուղեկցվում: Ու ամեն արգելակելիս՝ ես, նրա Տոյոտայում նստած, ամրագոտու հետ միասին առաջ էի թռչում, իսկ երբ ոտքը գազին էր սեղմում, վիզս կտրուկ հետ էր ծռվում՝ գամվելով նստարանի գլխակալին: Ես, հնարավոր է, լինեի չափից դուրս հուզված՝ լրիվ անծանոթ տղայի մեքենայում նստած լինելով ու քաջ գիտակցելով, որ խախուտ թոքերս կխանգարեն անցանկալի հարձակումները ետ մղելուն, բայց նա այնքան զարմանալի վատ էր վարում մեքենան, որ դրանից բացի ուրիշ ոչ մի բանի մասին մտածել չէի կարող:

Երևի արդեն մեկ մղոն անցած կլինեինք նյարդային լռության մեջ, երբ Օգոստոսն ասաց.

– Երեք անգամ կտրվել եմ վարորդական իրավունքի քննությունից:

– Ինչ ես ասում, չի կարող պատահել:

Նա, գլխով անելով, ծիծաղեց:

– Պրոթեզով չեմ զգում, թե ինչքան ուժեղ եմ սեղմում ոտնակին, ձախ ոտքով վարելուն էլ չեմ կարողանում վարժվել: Բժիշկներս ասում են, թե անդամալույծների մեծամասնությունը վարելու հետ կապված խնդիրներ չի ունենում, բայց դե դա իմ դեպքը չէ: Մի խոսքով, գնացի չորրորդ անգամ հանձնելու, ու մոտավորապես էսպես էի վարում:

Մեզնից կես մղոն հեռավորության վրա կարմիր լույս վառվեց: Օգոստոսը կտրուկ արգելակեց՝ ինձ նետելով առաջ՝ ամրագոտու եռանկյունաձև գիրկը:

– Ներիր, ազնիվ խոսք, փորձում եմ հնարավորինս նուրբ վարել: Ինչ էի ասում, հա, ուրեմն քննության վերջում լրիվ համոզված էի, որ նորից կտրվել եմ, բայց քննությունն ընդունողն ասաց՝ շատ տհաճ եք վարում, բայց տեխնիկապես անվտանգ:

– Ես համաձայն չեմ, – ասացի, – կարծում եմ, դա ուղղակի «քաղցկեղի բոնուսներից» է:

«Քաղցկեղի բոնուսները» քաղցկեղով հիվանդ երեխաներին արվող փոքրիկ լավություններն են կամ ներողամիտ վերաբերմունքը, որ հասարակ երեխաները սովորաբար չեն ստանում. սպորտային հերոսների ստորագրությամբ բասկետբոլի գնդակներ, տնային աշխատանքի անպատիժ ուշացումներ, չվաստակած վարորդական իրավունքներ և այլն:

– Երևի, – համաձայնեց Օգոստոսը:

Կարմիր լույսը փոխվեց կանաչի, ես փորձեցի տրամադրվել հերթական ցնցմանը: Օգոստոսը ոտքն ուժգին սեղմեց գազին:

– Գիտե՞ս, ոտքերով վարելու անընդունակների համար հատուկ ձեռքով կառավարվող մեքենաներ են պատրաստվում, – նկատեցի:

– Ըհը, երևի օրերից մի օր ..., – ասաց՝ հառաչելով այնպես, որ ինձ թվաց, թե նա այնքան էլ վստահ չէր, թե ապրելու է մինչև այդ «օրերից մի օրը»:

Գիտեի, որ ոսկրի սարկոման հիմնականում բուժելի է, բայց ...

Մի քանի տարբերակ կա, առանց դրա մասին ուղիղ հարցնելու, հասկանալու, թե տվյալ անձնավորությունը մոտավոր դեռ քանի տարի է ակնկալում ապրել... ես ընտրեցի դասական տարբերակը.

– Դպրոց գնո՞ւմ ես:

Ընդհանրապես ծնողներդ քեզ հանում են դպրոցից, երբ

https://1915.info

https://1915.info

մահդ արդեն շատ մոտ է լինում:

– Այո, Նորթ Սենթրալ եմ գնում: Չնայած մի տարով հետ եմ, տասներորդ դասարանում եմ: Իսկ դո՞ւ:

Մի պահ ուզում էի ստել. ի վերջո, ոչ ոք դիակների չի սիրում: Բայց հետո որոշեցի ճիշտն ասել.

– Չէ, չեմ գնում, ծնողներս երեք տարի առաջ ինձ հանել են դպրոցից:

– Երեք տարի առա՞ջ, – զարմացավ:

Օգոստոսին համառոտ պատմեցի ինձ հետ կատարված հրաշքի մասին.

Տասներեք տարեկանում ինձ մոտ չորրորդ փուլում գտնվող վահանագեղձի քաղցկեղ ախտորոշեցին (դե, իհարկե, չասացի, որ այդ ախտորոշումը տեղի ունեցավ իմ առաջին դաշտանից երեք ամիս հետո: Մոտավորապես այսպես՝ շնորհավոր, դու արդեն հասուն աղջիկ ես, իսկ հիմա մեռիր): Ու մեզ ասացին, որ իմ հիվանդությունն անբուժելի է:

Ես «պարանոցի ավշային հանգույցների արմատական հեռացում» կոչվող վիրահատություն տարա, որն իր անվան նման «հաճելի» էր: Դրան հաջորդեց ճառագայթահարումը: Հետո թոքերիս ուռուցքների դեմ քիմիոթերապիա փորձեցի: Ուռուցքները փոքրացան, բայց հետո նորից աճեցին: Այդ ժամանակ ես արդեն տասնչորս տարեկան էի: Թոքերումս սկսեց ջուր հավաքվել: Արդեն լրիվ դիակի տեսք ունեի. ձեռքերս ու ոտքերս ուռել էին, մաշկս՝ ճաքճքել, շուրթերս՝ կապտել: Հետո մի դեղամիջոց ի հայտ եկավ, որ փոքր-ինչ նվազեցնում է շնչել չկարողանալու փաստից առաջ եկած սարսափը, և սկսեցին դրանից ու զուգահեռաբար նաև մեծ քանակությամբ շատ ու շատ այլ դեղեր ներարկել՝ կենտրոնական երակային կատետրի (ԿԵԿ) միջով: Բայց նույնիսկ այդ դեպքում ջրում խեղդվելու նման տհաճ զգացողություն կար, հատկապես որ դա տևում էր ամիսներ շարունակ: Եվ, ի վերջո, թոքաբորբով հայտնվեցի վերակենդանացման բաժանմունքում: Մայրիկս ծնկի իջավ մահճակալիս մոտ ու հարցրեց. «Պատրաստ ես,

փոքրիկս»: Ես ասացի, որ պատրաստ եմ, իսկ հայրս իր՝ արդեն սովորական թվացող հուզմունքից վաղուց խզված ձայնով, անընդհատ կրկնում էր, թե ինձ շատ է սիրում: Ես էլ անընդհատ պատասխանում էի, որ նրան եմ շատ սիրում, ու մենք բոլորս իրար ձեռք էինք բռնում: Եվ ես չէի կարողանում շունչս տեղը բերել, ու թոքերս հուսահատ փորձեր էին անում՝ ինձ շնչասպառ վեր հանելով անկողնուց, փորձելով գտնել մի դիրք, որով կկարողանային օդ ստանալ: Ինձ շփոթեցնում ու նյարդայնացնում էր նրանց հուսահատ պայքարը, ու որ ոչ մի կերպ չէին ուզում հանձնվել: Եվ հիշում եմ, որ մայրս ասում էր, թե ամեն ինչ կարգին է, որ ես լավ եմ ու շուտով լրիվ կառողջանամ, իսկ հայրս այնքան էր ջանում զսպել արցունքները, որ երբ այլևս չէր դիմանում ու փղձկում էր, ինչը տեղի էր ունենում պարբերաբար, մի մեծ երկրաշարժ էր առաջացնում հիվանդասենյակում: Նաև հիշում եմ, որ ուզում էի քնել ու այլևս չարթնանալ:

Բոլորը համոզված էին, որ վերջս եկել է, բայց իմ ուռուցքաբան բժիշկ Մարիային հաջողվեց որոշ չափով հեռացնել թոքերումս հավաքված հեղուկը, ինչի արդյունքում թոքաբորբի դեմ ինձ տրված անտիբիոտիկներն ազդեցին, և, ուշքի գալով, ես հայտնվեցի գիտական փորձարկումների շրջանում, որոնք Քաղցկեղի հանրապետությունում հայտնի են որպես անարդյունավետ: Փորձարկվող դեղամիջոցը ֆալանքսիֆորն էր: Ըստ նախատեսվածի՝ այս մոլեկուլը պետք է կառչեր քաղցկեղային բջիջներից ու դանդաղեցներ նրանց աճը: Հիվանդներից 70 տոկոսի վրա այս դեղամիջոցը չէր ազդում: Բայց իմ վրա ազդեց: Ուռուցքները փոքրացան ու այդպես փոքրացած էլ մնացին:

Կեցցե՛ ֆալանքսիֆորը:

Վերջին տասնութ ամիսների ընթացքում մետաստազներս համարյա թե չեն տարածվել՝ թողնելով ինձ թոքեր, որ չնայած իրենց գործը լավ չեն անում, բայց, համենայն դեպս, թթվածնի ու ամեն օր ընդունվող ֆալանքսիֆորի օգնությամբ

https://1915.info

կարողանում են գործը մի կերպ գլուխ բերել:

Հասկանալի է, որ քաղցկեղի այս հրաշքն ընդամենը մի քիչ ժամանակ էր շահել ինձ համար (բայց, դե, իհարկե, չես կարող իմանալ, թե կոնկրետ որքան է «*այդ մի քիչը*»), բայց Օգոստոս Ուոթերսին դրա մասին պատմելիս փորձեցի հնարավորինս վառ, լավատեսական գույներով ներկայացնել ամեն ինչ՝ չափազանցելով հրաշքի հրաշալիությունը:

– Այսինքն, հիմա կարող ես դպրոց վերադառնալ, – ենթադրեց Օգոստոսը:

– Իրականում արդեն ստացել եմ միջնակարգ կրթության վկայականս, – բացատրեցի, – ու հիմա քոլեջում եմ սովորում:

– Քոլեջի ուսանող ե՞ս, հա՞: Հիմա պարզ է, թե որտեղից են քո էդ խելացի մտքերը, – ասաց՝ քթի տակ ծիծաղելով:

Կատակով հրեցի ուսը և զգացի նրա ամուր, ձիգ ու հրաշալի մկանները:

Անիվների ճռնչոցով թեքվեցինք ու մոտ երկու մետր բարձրության սվաղած պարսպով բակ մտանք: Նրա տունը ձախ կողմից առաջին շենքն էր: Երկհարկանի գաղութային ճարտարապետական ոճի շենք էր: Ցնցումով արգելակեցինք նրա տան մոտ:

Նրա հետևից քայլեցի դեպի դուռը: Շքամուտքի վերևում փայտե տախտակ էր փակցված, որի վրա շեղատառերով փորագրված էր. «Քո տունն այնտեղ է, որտեղ սիրտդ է», և ներս մտնելով, տեսա, որ ամբողջ տունն էր զարդարված նման աֆորիզմներով: «Լավ ընկերներ գտնելը դժվար է, և անհնար է նրանց մոռանալը»՝ գրված էր վերարկուների կախիչների վերևում: «Իրական սերը ծնվում է ծանր ժամանակներում»՝ հավատացնում էր նրանց հնաոճ կահավորված հյուրասենյակում դրված ասեղնագործ բարձը: Օգոստոսը, նկատելով, որ ուշադիր կարդում եմ գրությունները, ասաց.

– Ծնողներս սրանք «քաջալերանքներ» են անվանում: Դրանք ամենուր են:

Ծնողները նրան Գաս էին ասում: Նրանք խոհանոցում

էնչիլադա[1] էին պատրաստում: Լվացարանի մոտի ապակե-նախշի վրա ուռուցիկ տառերով գրված էր՝ «Ընտանիքը հավերժ է»: Նրա մայրը հավի միսը դնում էր լոշիկների վրա, որոնք հայրը փաթաթում ու տեղավորում էր ջեռոցի ապակե տարայում: Կարծես թե նրանք, ինձ իրենց տանը տեսնելով, այնքան էլ չզարմացան, ինչը երևի նորմալ էր. թեկուզ և Օգոստոսն ստիպում էր ինձ առանձնահատուկ զգալ, բայց դա ամենևին չէր նշանակում, թե ես իրոք առանձնահատուկ եմ: Միգուցե ամեն գիշեր տարբեր աղջիկներ էր բերում տուն՝ ֆիլմեր դիտելու և նրանց շոշափելու, ձեռք գցելու նպատակով:

– Սա Հեյզել Գրեյսն է, – Օգոստոսը ներկայացրեց ինձ ծնողներին:

– Ուղղակի Հեյզել, – ասացի:

– Ինչպե՞ս ես, Հեյզել, – հարցրեց Գասի հայրիկը:

Նա բարձրահասակ էր, համարյա Գասի հասակին ու նիհար, ինչն այնքան էլ բնորոշ չէ ծնողական տարիքի մարդկանց:

– Նորմալ, – պատասխանեցի:

– Եվ ինչպիսի՞ն էր Այզեքի աջակցության խմբակը:

– Հիասքանչ, – հեգնանքով ասաց Գասը:

– Քեզ ոչնչով չես գոհացնի, Գաս, – ասաց նրա մայրը ու դիմեց ինձ, – իսկ քեզ էդ խմբակը դո՞ւր է գալիս, Հեյզել:

Մի պահ վարանեցի՝ գցել-բռնելով, թե ինչ պատասխան տամ, պատասխան, որ կգոհացներ Գասի՞ն, թե՞ նրա ծնողներին:

– Խմբակի անդամներից շատերը հաճելի մարդիկ են, -ի վերջո ասացի:

– Հենց էդպիսին էին Մեմորիալ հիվանդանոցի մարդիկ, երբ էնտեղ էինք Գասի հիվանդության ամենաթեժ պահերին, – հիշեց Գասի հայրիկը, – բոլորն էնքան բարի էին ու էնքան ուժեղ: Ամենածանր օրերին Աստված մեր ճանապարհին

1 Մեքսիկական ուտեստ: Տարբեր բաղադրիչներով լցոնված լոշիկ՝ կտրտած կամ աղացած հավի, տավարի մսով, պանրով, տարբեր բանջարեղենով, ծովամթերքով և այլն:

միայն լավ մարդկանց է հանդիպեցնում:

– Արագ, ինձ մի դեկորատիվ բարձ ու թել տվեք, էս խոսքերն անպայման պետք է գրանցենք. իսկական «քաջալերանք» են, – ասաց Օգոստոսը:

Նրա խոսքերից հայրը մի քիչ նեղսրտեց, բայց Գասն իր երկար թևով գրկեց հոր վիզն ու ասաց.

– Կատակ եմ անում, հայրիկ: Ինձ դուր են գալիս ձեր այդ տարօրինակ «քաջալերանքները»: Իսկապես, դուր են գալիս: Ուղղակի չեմ կարող ընդունել դրանք, դե, գիտես, որովհետև դեռահաս եմ:

Հայրը ոլորեց աչքերը:

– Մեզ հետ կընթրե՞ս, Հեյզել, – հարցրեց Գասի մայրը:

Նա փոքրամարմին սևահեր կին էր ու մի քիչ մկնիկի էր նման:

– Երևի այո, բայց ժամը տասին պետք է տանը լինեմ: Հա ու... ես միս չեմ ուտում:

– Խնդիր չկա, մի քանիսը բանջարեղենով կսարքենք, – ասաց Գասի մայրիկը:

– Կենդանիները շատ մեղք են, չէ՞, – ասաց Գասը:

– Ուղղակի ուզում եմ նվազագույնի հասցնել իմ պատճառով առաջացած մահերի քանակը:

Գասն ուզում էր մի բան ասել, բայց զսպեց իրեն:

Անհարմար լռությունից խուսափելու համար նրա մայրն ասաց.

– Կարծում եմ՝ դա հրաշալի է:

Հետո մի քիչ խոսեցինք էնչիլադաների մասին, որ դրանք սովորական էնչիլադներ չեն, այլ Ուոթերսների հայտնի էնչիլադաները, որոնցից չի կարելի հրաժարվել: Հետո նրա ծնողներն ասացին, թե Գասին նույնպես չեն թույլատրում ժամը տասից ուշ գալ տուն, և, իրենց կարծիքով, երեխաներին դրանից ավելի երկար դրսում մնալ թույլ տվող ծնողներն անվստահելի են: Հետո հարցրին, թե դպրոց գնո՞ւմ եմ, ու Օգոստոսը բացականչեց. «Նա քոլեջի ուսանող է»:

https://1915.info

https://1915.info

Անդրադարձանք նաև եղանակին, թե իսկապես որքան արտասովոր եղանակ էր մարտ ամսվա համար, ու որ ամեն ինչ ներկայանում էր նորովի, նոր շունչ էր ստանում: Եվ նրանք նույնիսկ մեկ անգամ չհարցրին թթվածնի բալոնիս կամ իմ հիվանդության մասին, ինչը տարօրինակ էր, բայց հրաշալի: Ի վերջո Օգոստոսն ասաց.

– Ես ու Հեյզելը «Վ նշանակում է վենդետտա» ֆիլմն ենք նայելու, որ Հեյզելը տեսնի ֆիլմի իր կրկնօրինակին՝ երկուհազարականների կեսերի Նատալի Պորտմանին:

– Հյուրասենյակի հեռուստացույցը ձեր տրամադրության տակ է, – ուրախությամբ ասաց հայրը:

–Բայց ուզում եմ ներքնահարկում նայենք:

Հայրը ծիծաղեց.

– Լավ փորձ էր, բայց չի ստացվի, ասացի հյուրասենյակում:

– Բայց ուզում եմ Հեյզել Գրեյսին ներքնահարկը ցույց տալ, – ասաց Օգոստոսը:

– Ուղղակի Հեյզել, – նորից ուղղեցի ես:

– Դե ուրեմն Ուղղակի Հեյզելին ցույց տուր ներքնահարկը, – ասաց հայրը, – բայց հետո կբարձրանաք վերև ու ձեր ֆիլմը կդիտեք հյուրասենյակում:

Օգոստոսը թշերն ուռցրեց, կանգնեց մի ոտքի վրա, կոնքերը պտտեցնելով՝ առաջ բերեց պրոթեզը ու գոռոաց.

– Լավ:

Գորգով ծածկված աստիճաններով իջանք մի հսկայական նկուղային ննջարան: Աչքի բարձրության վրա գտնվող մի երկար, մեծ դարակ տարածվում էր ամբողջ սենյակով մեկ և լիուլի լցված էր բասկետբոլային հուշանվերներով. մի դյուժին մրցանակներ՝ մարդկանց ոսկեձույլ քանդակներ՝ ցատկով գնդակ նետելիս կամ գնդակը խաղացնելիս կամ էլ անտեսանելի զամբյուղին ձգվելիս: Կային նաև շատ ստորագրված գնդակներ ու մարզակոշիկներ:

– Ժամանակին բասկետբոլ էի խաղում, – բացատրեց:

– Երևում է լավ խաղացող ես եղել:

– Այո, վատը չէի, բայց այս բոլոր մարզակոշիկներն ու գնդակները «քաղցկեղի բոնուսներ» են:

Նա մոտեցավ հեռուստացույցին, որի վրա ֆիլմերի ու համակարգչային խաղերի սկավառակների աղոտ բուրգ հիշեցնող մի մեծ կույտ կար: Մի քիչ կռանալով՝ դուրս հանեց «Վ նշանակում է վենդետտան»:

– Ես տիպիկ սպիտակամորթ ինդիանացի երեխա էի, որ փորձում էր վերակենդանացնել միջին տարածությունից նետում կատարելու մեռած արվեստը: Մի օր ուղիղ գծով ազատ նետումներ էի կատարում Նորթ Սենթրալի մարզադահլիճում և հանկարծ ինքս ինձ հարցրի՝ ինչո՞ւ եմ գնդաձև առարկան սիստեմատիկորեն նետում օղակաձև առարկայի մեջ: Ու էդ պահին դա ինձ աշխարհի ամենահիմար զբաղմունքը թվաց: Հետո սկսեցի մտածել փոքրիկ երեխաների մասին, որ նորից ու նորից փորձում են գլանաձև ձողն անցկացնել շրջանաձև անցքի միջով, մինչև նրանց մոտ դա հաջողվում է, ու բասկետբոլն էլ, ըստ էության, էդ խաղի մի փոքր ավելի աերոբիկ տարբերակն է: Ինչևէ, երկար ժամանակ շարունակում էի նետել գնդակները: Իրար հետևից ութսուն հատ նետեցի զամբյուղը՝ մինչ օրս իմ գրանցած լավագույն արդյունքը, բայց քանի գնում, ինձ ավելի ու ավելի շատ էի երկու տարեկան երեխայի պես զգում: Ու հետո, չգիտեմ ինչու, սկսեցի մտածել արգելավազորդների մասին:

Քեզ լավ չե՞ս զգում:

Ես նստել էի նրա չհավաքած անկողնու եզրին, ոչ մի անվայել բան չէի ակնարկում: Պարզապես մի փոքր հոգնել էի, քանի որ չափից շատ էի կանգնած վիճակում մնացել: Կանգնած էի եղել հյուրասենյակում, հետո իջել էի աստիճաններով և այստեղ էլ նորից կանգնած էի, ինչն արդեն ինձ համար չափից շատ էր, և ուշաթափվելու ցանկություն բնավ չունեի: Վիկտորիանական ժամանակաշրջանի լեդիների նման հաճախակի ուշաթափվելու սովորություն ունեի:

https://1915.info

– Ես լավ եմ: Լսում եմ, շարունակիր: Ասում ես արգելավազորդների մասի՞ն էիր մտածում:

– Ըհը, արգելավազորդների: Չգիտեմ էլ, թե ինչու սկսեցի մտածել նրանց մասին: Միցավազքերի ժամանակ վազում են՝ ցատկելով իրենց ճանապարհին լրիվ կամայականորեն շարված առարկաների վրայով, ու ինձ հետաքրքրեց, թե նրանց մտքով երբևէ անցել է, որ *ամեն ինչ ավելի արագ կստացվեր, եթե պարզապես մի կողմ նետեին էդ արգելապատնեշները*:

– Դա մինչև քո հիվանդության ախտորոշումն էր, – հարցրի:

– Անկեղծ ասած՝ դա էլ իր դերն ուներ, – կեսբերան ժպտաց: – Էքզիստենցիալիզմով[1] լի ազատ նետումների օրը համընկել էր իմ երկոտանիության վերջին օրվա հետ: Անդամահատման օրվա նշանակման և վիրահատության բուն օրվա միջև շաբաթ-կիրակի էր ընկել: Ու հիմա մի քիչ հասկանում եմ, թե ինչի միջով է անցնում Այզեքը:

Ես գլխով արեցի: Օգոստոս Ուոթերսն ինձ դուր էր գալիս, շատ-շատ էր դուր գալիս: Ինձ դուր եկավ, որ նա իր պատմությունն ավարտեց ուրիշ մեկի մասին խոսելով: Ինձ դուր էր գալիս նրա ձայնը: Ինձ դուր էր գալիս, որ նա էքզիստենցիալիզմով լի ազատ նետումներ էր անում: Ինձ դուր էր գալիս, որ նա «Թեթևակի ծուռ ժպիտների ֆակուլտետի» հաստիքային պրոֆեսոր էր՝ «Զայն, որից մաշկս դառնում է ավելին, քան ուղղակի մաշկ» ֆակուլտետում համատեղությամբ: Եվ ինձ դուր էր գալիս, որ նա երկու անուն ուներ: Ինձ միշտ դուր են եկել երկու անուններով մարդիկ, որովհետև կարող ես ընտրել, թե ո՞ր անունով կոչես նրանց՝ Գա՛ս, թե՞ Օգոստոս: Իսկ ես միշտ ուղղակի Հեյզել եմ եղել, միօրինակ Հեյզել:

– Քույր կամ եղբայր ունե՞ս, – հարցրի:

– Ի՞նչ, – մտքերով էր ընկել:

– Դե, որ խոսում էիր երեխաների խաղերի մասին:

– Ախ, դա՞ նկատի ունես: Չէ, չունեմ: Զարմիկներ ունեմ՝ խորթ

---

1 Գոյության փիլիսոփայություն (լատ.exsistentia – գոյություն):

https://1915.info

քույրերիս երեխաները: Բայց քույրերս ինձանից մեծ են: Նրանք, ըրը... Պա՛պ, Ջուլին ու Մարթան քանի՞ տարեկան են:

– Քսանութ:

– Քսանութ տարեկան են: Չիկագոյում են ապրում: Երկուսն էլ ամուսնացել են շատ հաջողակ փաստաբանների կամ բանկիրների հետ. լավ չեմ հիշում: Իսկ դու քույր կամ եղբայր ունե՞ս:

Գլուխս բացասաբար տարուբերեցի:

– Դե հիմա քո պատմությունը պատմիր, – ասաց ու պատշաճ հեռավորություն պահպանելով նստեց կողքիս:

– Արդեն պատմել եմ իմ պատմությունը: Ինձ մոտ քաղցկեղ հայտնաբերեցին, երբ ...

– Հիվանդությանդ պատմությունը չէ, քո մասին պատմիր, քո հետաքրքրությունների, հոբբիների, մոլությունների, տարօրինակ կուռքերի և այլ սովորությունների մասին:

– Հը՛մ, – տատանվեցի ես:

– Միայն թե չասես, թե դու էլ ես սեփական հիվանդությանը վերածվող հիվանդներից: Էդպիսի էնքան շատ մարդ եմ ճանաչում: Դա էնքան հուսահատեցնող է: Քաղցկեղը կարծես աճող բիզնես դարձած լինի, մարդկանց հափշտակող բիզնես: Բայց, վստահ եմ, որ դու դա թույլ չես տվել: Ժամանակից շուտ չես հանձնվել հիվանդությանդ, չէ՞:

Այդ պահին հասկացա, որ հենց այդպես էլ արել էի: Սկսեցի ուղեղումս պրպտել, թե ինչ հետաքրքիր զբաղմունքներ ու նախասիրություններ ունեմ, ու թե ինչով կարող եմ գրավել Օգոստոս Ուոթերսին, բայց տիրող լռությունն ինձ հուշեց, որ ես այնքան էլ հետաքրքիր մարդ չեմ:

– Ես մի շատ սովորական աղջիկ եմ, – վերջապես ասացի:

– Էդ պատասխանդ չընդունվեց: Դե, նորից փորձիր, հիշիր, թե ինչ ես սիրում: Առաջին բանը, որ գալիս է միտքդ:

– Հը՛մ, կարդալ եմ սիրում:

– Իսկ ի՞նչ ես կարդում:

– Ամեն ինչ՝ սկսած սարսափելի սիրավեպերից մինչև

https://1915.info

ձոռում արձակ ու պոեզիա: Ինչ ասես:

– Իսկ բանաստեղծություններ ինքդ գրո՞ւմ ես:

– Չէ, չեմ գրում:

– Տեսնո՞ւմ ես, – գրեթե գոռաց, – Հեյզել Գրեյս, դու Ամերիկայի միակ դեռահասն ես, որ բանաստեղծություններ կարդալը նախընտրում է դրանք գրելուց: Դա էնքան բան է ինձ ասում: Դու հաստատ մեծատառ Ը-ով ընտիր գրքեր ես կարդում, չէ՞:

– Երևի:

– Ո՞րն է քո սիրած գիրքը:

– Հը՛մ:

Իմ ամենասիրած գիրքը՝ մյուս գրքերից մի քանի գլուխ բարձր «Արքայական վիշտն» էր, բայց ես չէի սիրում մարդկանց հետ խոսել դրա մասին:

Երբեմն կարդում ես գիրքը ու լցվում մի տարօրինակ քարոզչական եռանդով ու համոզմունքով, որ փշրված աշխարհի բեկորները էլ երբեք չեն միացվի իրար, մինչև աշխարհի բոլոր մարդիկ չկարդան այդ գիրքը: Բայց կան նաև «Արքայական վիշտ»-ի նման գրքեր, որոնց մասին չես ուզում ասել մարդկանց: Դրանք այնքան յուրահատուկ ու եզակի գրքեր են և այնքան քոնը, որ դրանց մասին կիսվելը, դրանք գովազդելն ասես դավաճանություն լինի:

Ու ոչ թե նրա համար, որ այդ գիրքը չափից լավն էր կամ նման մի բան, ուղղակի դրա հեղինակը՝ Փիթեր Վան Հաութենը, թվում էր, թե մի անհավատալի, արտասովոր կերպով հասկանում է ինձ: «Արքայական վիշտը» իմ գիրքն էր, այնպես, ինչպես մարմինս ու մտքերս էին իմը:

Այնուամենայնիվ, Օգոստոսին ասացի դրա մասին.

– Իմ սիրած գիրքը «Արքայական վիշտն» է:

– Դրա մեջ զոմբիներ կա՞ն:

– Չէ, չկան:

– Իսկ գրոհայիննե՞ր:

Բացասաբար տարուբերեցի գլուխս:

https://1915.info

– Դա էդպիսի գիրք չէ:

Նա ժպտաց:

– Լավ, անպայման կկարդամ էդ ձանձրալի վերնագրով սոսկալի գիրքը, որտեղ ոչ գրոհայիններ, ոչ էլ զոմբիներ կան, – խոստացավ, ու ես անմիջապես զղջացի, որ ասել եմ նրան այդ գրքի մասին:

Օգոստոսը պտտվեց մահճակալի կողքին դրված սեղանի տակ դարսված գրքերի շուրջը և մի գիրք ու գրիչ հանեց: Տիտղոսաթերթի վրա ինչ-որ մի բան գրելով՝ ասաց.

– Փոխարենը խնդրում եմ քեզ կարդալ իմ ամենասիրելի համակարգչային խաղի հիման վրա գրված էս հանճարեղ ու կլանող վեպը:

Նա, վեր պահելով, ցույց տվեց գիրքը, որը կոչվում էր «Լուսաբացի գինը», և մեկնեց ինձ: Ես ծիծաղելով վերցրի գիրքը: Գրքի փոխանցման ժամանակ մեր ձեռքերը մի տեսակ խճճվեցին իրար: Նա բռնեց ձեռքս ու, գունատ դաստակս սեղմելով, ասաց.

– Ինչ սառն է:

– Ավելի ճիշտ՝ թերօքսիգենացված, – ուղղեցի:

– Սիրում եմ, երբ սկսում ես բժշկական տերմիններով խոսել, – կանգնեց՝ ինձ էլ իր հետ վեր քաշելով, ու մինչև աստիճաններին հասնելը, ձեռքս բաց չթողեց:

...

Ֆիլմը դիտեցինք բազմոցի վրա, իրարից մի քանի սանտիմետր հեռու նստած: Ես դպրոցականներին հատուկ մի հնարք փորձեցի. ձեռքս դնելով ուղիղ մեր մեջտեղում՝ հասկացրի, որ կարող է բռնել այն, բայց նա նույնիսկ փորձ չարեց: Ֆիլմի կեսին Օգոստոսի ծնողները ներս մտան՝ բերելով էնչիլադաներ, որոնք կերանք բազմոցի վրա: Դրանք իսկապես շատ համեղ էին:

Ֆիլմը դիմակով մի քաջ մարդու մասին էր, որ հերոսա-

https://1915.info

բար մահացավ Նատալի Պորտմանի համար, ով համառ ու անվախ աղջիկ էր, նաև շատ սեքսուալ էր և ոչ մի ընդհանրություն չուներ իմ ուռած-փքված դեմքի հետ:

Երբ էկրանին արդեն սկսեցին հայտնվել ֆիլմի տիտրերը, Օգոստոսը հարցրեց.

– Լավն էր, չէ՞:

– Լավն էր, – պատասխանեցի, չնայած իրականում այդքան էլ դուրս չէր եկել:

Մի տեսակ տղայական ֆիլմ էր: Չգիտես ինչու, տղաներին միշտ թվում է, թե մենք պետք է հավանենք տղայական ֆիլմերը: Բայց չէ՞ որ մենք նրանցից չենք ակնկալում, որ աղջկական ֆիլմերը հավանեն:

– Լավ, ես արդեն պետք է տուն գնամ: Առավոտյան դասի եմ:

Որոշ ժամանակ բազմոցին նստած սպասում էի, մինչ Օգոստոսը կգտներ մեքենայի բանալիները: Նրա մայրը, կողքիս նստելով, ասաց.

– Էս մեկը շատ եմ սիրում: Լավն է, չէ՞:

Երևի ակամա նայելիս էի եղել հեռուստացույցի վերևում գտնվող «քաջալերանքին»: Դա մի հրեշտակի պատկեր էր, որի գլխավերևում գրված էր. «Եթե չլիներ ցավը, մենք չէինք իմանա, թե ինչ է իսկական ուրախությունը»:

Սա մի ծեծված արտահայտություն էր տառապանքի մասին մտորումների ոլորտից: Կարելի է ժամերով դրա հիմարությունն ու անիմաստությունն ապացուցող փաստարկներ բերել, բայց ընդամենը բավական է դա համեմատել հետևյալ արտահայտության հետ. «բրոկոլիի առկայությունը ոչ մի կերպ չի ազդում շոկոլադի համի վրա»:

– Այո, – ասացի, – հիանալի խոսքեր են:

Տուն գնալիս Օգոստոսի մեքենան ես էի վարում, իսկ նա նստել էր կողքիս: Նա ինձ համար իր սիրած «The Hectic Glow» կոչվող խմբի երգերից միացրեց: Լավ երգեր էին, բայց քանի որ դրանք առաջին անգամ էի լսում, ինձ համար

https://1915.info

այնքան հիանալի չէին, որքան Օգոստոսի: Անընդհատ աչքս նրա ոտքին էր ընկնում կամ ավելի ճիշտ այնտեղ, որտեղ մի ժամանակ եղել էր այն, ու փորձում էի պատկերացնել, թե ինչ տեսք ունի նրա արհեստական ոտքը: Կուզենայի կարևորություն չտալ դրան, բայց միևնույն է, ինչ-որ չափով դա խանգարում էր: Ու երևի նրան էլ իմ թթվածնի բալոնն էր խանգարում: Հիվանդությունը վանում է: Դա ես վաղուց էի զգացել, հավանաբար, Օգոստոսը՝ նույնպես:

Երբ մեքենան կանգնեցրի մեր տան մոտ, Օգոստոսն անջատեց նվագարկիչը: Օդում լարվածություն տիրեց: Երևի նա մտածում էր ինձ համբուրելու մասին, ես էլ, անշուշտ, նույն բանի մասին էի մտածում: Ինքս ինձ հարցնելով՝ արդյո՞ք ուզում եմ դա: Նախկինում համբուրվել էի տղաների հետ, բայց դա վաղուց էր, մինչև «հրաշքը»:

Կայանեցի մեքենան ու նայեցի Օգոստոսին: Նա գեղեցիկ էր: Գուցե այնքան էլ ընդունված չէ տղաներին գեղեցիկ անվանել, բայց նա իսկապես գեղեցիկ էր:

– Հեյզել Գրեյս, – անունս նորովի ու ավելի լավ էր հնչում նրա շուրթերով, – իսկական հաճույք էր քեզ հետ ծանոթանալը:

– Նմանապես, պարոն Ուոթերս, – ասացի:

Ամաչում էի նրա աչքերի մեջ նայել, չէի կարողանում դիմանալ նրա՝ ջրի պես կապույտ հայացքին:

– Նորից կտեսնեմ քեզ, – հարցրեց: Ձայնի մեջ հաճելի, զինաթափող հուզմունք կար:

Ժպտալով ասացի.

– Իհարկե:

– Վա՞ղը, – հարցրեց:

– Համբերություն ունեցիր, այ սնդիկ, – խորհուրդ տվեցի, – չես ուզում, չէ՞, թեթևսոլիկի տպավորություն թողնել:

– Դե, դրա համար էլ ասացի վաղը: Ինձ մնար, կուզեի քեզ հենց էս գիշեր նորից տեսնել: Բայց պատրաստ եմ մի ամբողջ գիշեր ու վաղվա մեծ մասը մի կերպ դիմանալ:

https://1915.info

Թերահավատորեն աչքերս ոլորեցի:

– Լուրջ եմ ասում, – վստահեցրեց:

– Բայց դու ինձ չես ճանաչում, – ասացի՝ կենտրոնական վահանակի վրայից վերցնելով գիրքը: – Լավ, հենց սա կարդամ վերջացնեմ, կզանգեմ քեզ: Պայմանավորվեցինք:

– Բայց դու իմ հեռախոսի համարը չունես:

– Համարյա վստահ եմ, որ գրքի տիտղոսաթերթին համարդ ես գրել:

Դեմքին նորից հայտնվեց հիմարավուն ժպիտը:

– Իսկ դու ասում ես՝ իրար չենք ճանաչում:

https://1915.info

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Այդ գիշեր բավականին երկար արթուն մնացի՝ «Լուսաբացի գինը» կարդալով: Գաղտնիքը բացեմ. լուսաբացի գինն արյունն է: Ինչևէ, սա «Արքայական վիշտ» չէր, բայց գլխավոր հերոսը՝ ավագ սերժանտ Մաքս Մեյհեմը, բավականին համակրելի տիպ էր, չնայած, ըստ իմ հաշվարկների, 284 էջում 118-ից ոչ պակաս մարդ սպանած կլիներ:

Այսպիսով, հաջորդ առավոտ ուշ արթնացա: Հինգշաբթի էր: Մայրիկը սովորաբար ինձ չի արթնացնում, որովհետև պրոֆեսիոնալ հիվանդի աշխատանքային պարտականություններից մեկը շատ քնելն է: Այդ պատճառով մի քիչ շփոթվեցի ու զարմացա, երբ ուսերս թափահարելով՝ ինձ վեր հանեց քնից.

– Ժամը համարյա տասն է:

– Քունը լավագույն միջոցն է քաղցկեղի դեմ, – արդարացա, – ու, հետո, երեկ շատ ուշ եմ քնել:

– Հաստատ գիրք էիր կարդում, – ասաց՝ չոքելով մահճակալիս մոտ ու արձակելով իմ մեծ, ուղղանկյունաձև թթվածնի կոնցենտրատորը, որին ես «Ֆիլիպ» եմ անվանում, որովհետև մի տեսակ նման է Ֆիլիպի:

Մայրս ամրացրեց շարժական բալոնս, հետո հիշեցրեց, որ դասի եմ:

– Էդ տղայից ես ստացել դա, – հանկարծ հարցրեց:

– Ինչը, հերպեսը[1]:

– Չափդ մի՛ անցիր, Հեյզել: Գիրքը նկատի ունեմ:

– Այո, նա է տվել ինձ էդ գիրքը:

– Հավանում ես էդ տղային, չէ՞, – ասաց՝ վեր բարձրացնելով հոնքերը, ասես միայն բացառիկ մայրական բնազդով էր հնարավոր նկատել դա:

Ես ուսերս թոթվեցի:

– Ասում էի, չէ՞, որ արժի գնալ աջակցության խմբակ:

– Դու այդ ամբողջ ժամանակ դրսում սպասո՞ւմ էիր ինձ:

– Այո, հետս մի քանի փաստաթուղթ էի վերցրել, դրանց վրա էի աշխատում: Լավ, իսկ հիմա դիմավորիր բացվող նոր օրը, օրիորդ:

– Մա, քունն օգտակար է քաղցկեղով հիվանդների համար:

– Գիտեմ, սիրելիս, բայց դու դասի ես: Ու նաև էսօր ..., – ձայնը լի էր հրճվանքով:

– Հինգշաբթի է, և ի՞նչ:

– Իրո՞ք, մոռացել ես:

– Երևի:

– Էսօր հինգշաբթի է, մարտի քսանինը, – խելառ ժպիտը դեմքին նա համարյա ճչում էր:

– Ինչ ուրախ ես, որ գիտես էսօրվա ամսաթիվը, – ես էլ բղավեցի:

– Հեյզե՛լ, էսօր քո երեսուներեքերորդ կիսաածնունդն է, – բացականչեց:

– Ooooooooo՛:

Մայրս տոնակատարություններն առավելագույնի հասցնելու մեծ վարպետ էր: «Էսօր ծառերի օրն է: Եկե՛ք գրկախառնվենք բոլոր ծառերի հետ ու տորթ ուտենք», «էս օրը Կոլումբոսը ծաղիկ հիվանդություն բերեց տեղաբնիկներին: Եկե՛ք հիշենք էդ օրը պիկնիկով» և շատ այլ նման տոներ:

– Դե, ուրեմն, շնորհավոր իմ երեսուներեքերորդ կիսաածնունդը, – ասացի:

1 Վիրուսային հիվանդություն: Արտահայտվում է մաշկի ցանով և խմբավորված պղպջակներով:

– Իսկ ինչ ծրագրեր ունես էս յուրահատուկ օրվա համար:

– Դասից տուն գալ ու համաշխարհային ռեկորդ սահմանել իրար հետևից դիտած «Թոփ խոհարարի» էպիզոդների քանակով:

Մայրիկը ձգվելով՝ մահճակալիս վերևում գտնվող դարակից վերցրեց Կապուտակին՝ կապույտ փափուկ արջուկը, որն ինձ հետ էր մեկ տարեկանից, երբ դեռ ընդունված է խաղալիք-ընկերներին անվանել ըստ իրենց գույների:

– Չեմ ուզում Քեյթլինի կամ Մեթի կամ ուրիշ մեկի հետ կինո գնալ:

Նրանք իմ ընկերներն էին:

Միտքն ինձ դուր եկավ:

– Իհարկե, հիմա Քեյթլինին հաղորդագրություն կուղարկեմ, տեսնեմ՝ էսօր դասերից հետո ինձ հետ առևտրի կենտրոն կամ մի ուրիշ տեղ կգա՞:

Մայրիկը, արջուկին փորին սեղմելով, ժպտաց.

– Առևտրի կենտրոն գնալը դեռ նորաձև է համարվում:

– Գիտես, ես շատ հպարտանում եմ նրանով, որ տեղյակ չեմ, թե հիմա ինչն է նորաձև, ինչը՝ ոչ, – պատասխանեցի:

...

Քեյթլինին հաղորդագրություն ուղարկեցի, ցնցուղ ընդունեցի, հագնվեցի, հետո մայրս ինձ դասի տարավ: Ամերիկյան գրականության դաս էր, դասախոսության թեման՝ Ֆրեդերիկ Դուգլաս: Լսարանը գրեթե դատարկ էր, և արթուն մնալը չափազանց բարդ գործ էր: Իննսուն րոպեանոց դասի քառասուներորդ րոպեին Քեյթլինը գրեց.

«Հիանալի միտք է: Շնորհավոր կիսաածնունդդ: Քասլթոնի մոտ, ժամը 3:32, հարմար է»:

Քեյթլինի կյանքն այնքան գերխիտ ու հագեցած էր, որ նա ստիպված էր պլանավորել օրվա յուրաքանչյուր րոպեն:

Պատասխանեցի.

https://1915.info

«Հարմար է: Սրճարանների սրահի մոտ կսպասեմ»:

Դասերից հետո մայրիկս ինձ տարավ առևտրի կենտրոնի մոտ գտնվող մի գրախանութ, որտեղից գնեցի «Կեսգիշերային լուսաբացներ» և «Մեյհեմի ռեքվիեմը» գրքերը՝ «Լուսաբացի գինը» գրքի շարունակությունները: Հետո գնացի առևտրի կետրոնի սրճարանների հսկայական սրահ ու դիետիկ կոլա գնեցի: Ժամը 3:22-ն էր:

Գիրքս կարդալով՝ հետևում էի ծովահենների նավի տեսքով խաղահրապարակում խաղացող երեխաներին: Մի թունել կար, որի միջով երկու երեխա սողալով անցնում էին նորից ու նորից, և թվում էր, թե երբեք չեն հոգնի դրանից: Դա ինձ հիշեցրեց Օգոստոս Ուոթերսի ու նրա՝ էքզիստենցիալիզմով լի ազատ նետումների մասին:

Մայրիկը նույնպես սրճարանների սրահում էր: Միայնակ նստած մի անկյունում, որտեղ, իր կարծիքով, իրեն չէի տեսնի, պանրով ու մսով սենդվիչ ուտելով ինչ-որ թղթեր էր աչքի անցկացնում: Երևի բժշկական նյութեր էին: Նրա թղթային աշխատանքը երբեք չէր վերջանում:

Ուղիղ ժամը 3:32-ին տեսա Քեյթլինին՝ վստահ քայլերով Վոքհաուզ ռեստորանի կողքով անցնելիս: Բարձրացրած ձեռքս նկատելով՝ ժպտաց իր շատ սպիտակ ու նոր ուղղված ատամներով և մոտեցավ ինձ:

Հագին մինչև ծնկները հասնող ածխագույն վերարկու էր, որ շատ էր սազում նրան, իսկ աչքերին՝ մեծ, գրեթե ամբողջ դեմքը ծածկող արևային ակնոց էր: Նա վեր բարձրացրեց ակնոցը՝ գլխի վրա և կռացավ՝ ինձ գրկելու:

– Թանկագինս, – ասաց մի քիչ բրիտանական ակցենտով, – ինչպե՞ս ես:

Մարդիկ նրա ակցենտը տարօրինակ կամ վանող չէին համարում: Քեյթլինն ուղղակի ծայրաստիճան զարգացած քսանհինգամյա բրիտանացի աշխարհիկ տիկին էր՝ տասնվեց տարեկան ինդիանապոլիսցի աղջնակի մարմնում: Ու բոլորն ընդունում էին դա:

– Լավ եմ: Դու ինչպես ես:

– Արդեն ինքս էլ չգիտեմ: Դիետիկ է, – հարցրեց՝ ցույց տալով կոլայի շիշը:

Գլխով անելով՝ նրան մեկնեցի շիշը: Զողիկով կում արեց ու շարունակեց.

– Այնքան կուզեի, որ հիմա դու էլ մեզ հետ դպրոց գայիր: Տղաներից մի քանիսը լրիվ ուտելու բան են դարձել:

– Իսկապե՞ս, օրինակ ո՞վ:

Նա հինգ տղայի անուն տվեց, որոնց հետ տարրական ու միջին դասարաններում էինք սովորել, բայց ոչ մեկին կարգին չպատկերացրի:

– Հիմա Դերեք Վելինգթոնի հետ եմ հանդիպում, – ասաց Քեյթլինը, – բայց չեմ կարծում՝ դա երկար կտևի: Նրան միայն տղայական բաներ են հետաքրքրում: Լավ, հերիք է իմ մասին խոսենք: Ի՞նչ նորություն կա Հեյզելի աշխարհում:

– Դե, ոչ մի նոր բան:

– Առողջությունդ լա՞վ է:

– Նույն վիճակն է երևի:

– Ֆալանքսիֆո՞ր, – ժպիտը դեմքին ոգևորված բացականչեց նա, – հավերժ ապրելու ես, չէ՞:

– Դե, երևի ոչ հավերժ, բայց...

– Լավ, իսկ ընդհանրապես ուրիշ ի՞նչ նոր բան կա:

Մի պահ մտածեցի ասել, որ ես էլ եմ հանդիպում մի տղայի հետ կամ գոնե, որ միասին ֆիլմ ենք դիտել, միայն նրա ապշած դեմքը տեսնելու համար, երբ իմանար, թե ինձ նման անխնամ, անճարակ, կաշկանդված ու հիվանդոտ մեկն էլ կարող էր, թեկուզ կարճ ժամանակով, տղայի ուշադրությանն ու համակրանքին արժանանալ: Բայց պարծենալու շատ բան չունեի, այդ պատճառով պարզապես թոթվեցի ուսերս:

– Օ՜, Աստված իմ, սա ի՞նչ է, – մատնացույց անելով գիրքը՝ բացականչեց Քեյթլինը:

– Գիտաֆանտաստիկա: Չգիտեմ, մի տեսակ կլանել է ինձ: Գրքերի շարք է:

https://1915.info

– Դու ինձ արդեն անհանգստացնում ես: Գնանք գնումների:

Կոշիկի մի խանութ մտանք: Ամբողջ ընթացքում Քեյթլինը վեր էր բարձրացնում բաց քթով սանդալները՝ ասելով, թե որքան լավ կնայվեն դրանք իմ ոտքերին: Ու ես հիշեցի, որ նա երբեք բաց քթով կոշիկներ չէր հագնում, քանի որ ատում էր իր ոտնաթաթերը՝ կարծելով, թե իր ոտնաթաթերի երկրորդ մատները չափից երկար են, կարծես թե այդ մատները հոգու հայելին են կամ նման մի բան: Ու երբ ես մի սանդալ ցույց տվեցի՝ ասելով, թե շատ ներդաշնակ կլինի նրա մաշկի գույնի հետ, ասաց.

– Այո, բայց..., – որտեղ բայցը նշանակում էր՝ «դրանցով ոտքերիս սարսափելի երկրորդ մատներն ի ցույց կդրվեն հանրությանը»:

Եվ ես ասացի.

– Քեյթլին, դու ոտնամատների հետ կապված դիսմորֆոֆոբիա ունեցող իմ իմացած միակ մարդն ես:

– Իսկ ինչ է դիսմորֆոֆոբիան, – հարցրեց:

– Օրինակ, երբ նայում ես հայելու մեջ ու իրականությանը չհամապատասխանող պատկեր տեսնում:

– Պահ-պահ-պահ: Սրանք լավն են, չէ՞ – նա ցույց տվեց գեղեցիկ, բայց համեստ, մեջտեղում գոտիով կոշիկների մի զույգ:

Ես գլխով արեցի: Նա գտավ իր չափը, փորձեց, միջանցքում հետուառաջ արեց՝ մինչև ծունկը հասնող անկյունային հայելիներում դիտելով ոտքերը: Հետո բարձր պլատֆորմով բարձրակրունկ կոշիկներ վերցնելով՝ ասաց.

– Միթե հնարավոր է սրանցով քայլել: Ես ուղղակի կմեռնեի..., – ու իսկույն լռեց՝ ներողություն խնդրող հայացքով նայելով ինձ, կարծես հանցանք էր մահացող մարդու ներկայությամբ «մահ» բառը հիշատակելը: – Կուզեմ փորձել, – շարունակեց՝ փորձելով հարթել ստեղծված անհարմար իրավիճակը:

– Ավելի լավ է մեռնեմ, – վստահեցրի:

Ուղղակի ինչ-որ բան գնելու համար մատով հողաթափեր

https://1915.info

վերցրի ու նստեցի կոշիկների տուփերի դիմաց գտնվող նստարաններից մեկի վրա՝ հետևելով Քեյթլինին տուփերի արանքով, պրոֆեսիոնալ շախմատիստներին հատուկ կենտրոնացածությամբ ու լարվածությամբ այս ու այն կողմ գնալիս: Մինչ նա պտտվում էր կոշիկների շուրջը, ուզում էի հանել ու սկսել կարդալ «Կեսգիշերային լուսաբացները», բայց հասկանում էի, որ դա անհարգալից կլիներ Քեյթլինի նկատմամբ: Այդպիսով, ինձ մնում էր ուղղակի նստել ու հետևել նրա գործողություններին: Երբեմն-երբեմն ինչ-որ փակ քթով ավար ձեռքին մոտենում էր ինձ ու հարցնում իմ կարծիքը: Ես էլ փորձում էի մի խելոք մեկնաբանություն անել կոշիկի վերաբերյալ:

Վերջապես նա երեք զույգ ընտրեց, ես էլ գնեցի իմ ընտրած հողաթափերը: Խանութից դուրս գալիս հարցրեց.

– Անթրոփոլոջի[1]:

– Չէ, ես երևի տուն գնամ: Մի տեսակ հոգնեցի:

– Հա, իհարկե: Մենք ավելի հաճախ պետք է հանդիպենք, թանկագինս, – ասաց՝ երկու ձեռքերը դնելով ուսերիս ու երկու այտս համբուրելով, իսկ հետո նեղ կոնքերը թափահարելով հեռացավ:

Բայց ես տուն չգնացի: Մայրիկիս ասել էի, որ ժամը վեցին գա հետևիցս, ու թեև գիտեի, որ հիմա նա կամ առևտրի կենտրոնում, կամ ավտոկանգառում կլինի, ուզում էի մնացած երկու ժամը մենակ մնալ:

Ես սիրում եմ մայրիկիս, բայց նրա մշտական ներկայությունը երբեմն նյարդայնացնում է: Քեյթլինին էլ եմ սիրում: Չէ, իսկապես սիրում եմ: Բայց երեք տարի հասակակիցներիս հետ ամեն օր դպրոց հաճախելու, նրանց տեսնելու ու նրանց հետ շփվելու հնարավորությունից զրկված լինելով՝ զգում էի, որ մի մեծ, անհաղթահարելի տարածություն էր առաջացել մեր միջև: Կարծում եմ՝ ընկերներս փորձում էին օգնել ինձ հաղթահարել քաղցկեղը, բայց ի վերջո հաս-

1 Կանանց հագուստի և զարդեղենի խանութ:

կացան, որ ի վիճակի չեն դա անելու: Նախևառաջ քաղցկեղը հաղթահարելի չէ:

Այսպիսով, Քեյթլինին կամ մյուս ընկերներիս հանդիպելիս, հաճախ ցավերս կամ հոգնածությունը պատրվակ էի բռնում շուտ հեռանալու համար, ինչպես վարվեցի այս անգամ: Թեև, մյուս կողմից, ցավը միշտ էլ ինձ հետ էր: Ցավ էի զգում, որ չեմ կարող շնչել նորմալ մարդու պես, որ ստիպված եմ թոքերիս անընդհատ հիշեցնել, թե իրենք թոքեր են, և ինքս ինձ համոզել, ստիպել ընդունել, որ թերօքսիգենացման ներսդ քրքրող, ճանկռտող ցավին ոչ մի հնար չկա: Ու կարելի է ասել, որ նրան չէի էլ խաբում, ուղղակի բազմաթիվ ճշմարտություններից ընտրում էի մեկը:

«Իռլանդական նվերներ», «Ինքնահոս գրիչներ» խանութների և բեյսբոլի գլխարկների վաճառակետի (առևտրի կենտրոնի միակ վաճառակետը, որտեղից նույնիսկ Քեյթլինը գնումներ չէր անի) մեջտեղում մի ազատ նստարան գտա ու սկսեցի կարդալ «Կեսգիշերային լուսաբացները»:

Գրքի նախադասություն-դիակ հարաբերակցությունը մոտ 1:1 էր, և ես կարդում էի գրեթե առանց աչքս գրքից կտրելու: Ինձ դուր էր գալիս ավագ սերժանտ Մաքս Մեյհեմը: Չնայած նա տեխնիկապես որոշակի անհատականություն չուներ, բայց ինձ գլխավորապես դուր էր գալիս, որ նրա արկածները երբեք չէին ավարտվում: Միշտ կային վատ մարդիկ, որոնց պետք էր սպանել, ու լավ մարդիկ, որոնց պետք էր փրկել: Նոր պատերազմներ էին սկսվում, երբ նույնիսկ հները դեռ չէին վերջացել: Վերջին անգամ այսպիսի գիրք երեխա ժամանակ էի կարդացել, ու շատ հետաքրքիր էր երևակայական աշխարհում նորից հայտնվելը:

«Կեսգիշերային լուսաբացներ» գրքի վերջին քսան էջերին Մեյհեմի գործերը սաստիկ վատացան, երբ տասնյոթ անգամ վիրավորվեց թշնամուց մի գերու՝ շիկահեր ամերիկացու փրկելիս: Բայց, որպես ընթերցող, չհուսահատվեցի: Պատերազմական գործողություններն առանց նրա էլ կարող

էին շարունակվել: Կարող էին ու կլինեին նոր գրքեր, գլխավոր դերերում իր զինակիցների՝ կրտսեր սերժանտ Մանի Լոկոյի, շարքային զինվոր Ջասպեր Ջեքսի և մյուսների մասնակցությամբ:

Համարյա հասել էի գրքի վերջին, երբ բանտերով կապված հյուսքերով մի աղջնակ հայտնվեց իմ առջև ու հարցրեց.

– Էդ ինչ է քթիդ մեջ:

– Կանյուլա է, որն ինձ թթվածին է տալիս ու օգնում շնչել:

Նրա մայրը մոտ վազեց ու կշտամբանքով կանչեց.

– Ջեքի:

Բայց ես ասացի.

– Ոչինչ, ոչինչ. ամեն ինչ կարգին է:

Եվ, իրոք, դրանում ոչ մի վատ բան չկար: Ու հետո Ջեքին հարցրեց.

– Իսկ դա ինձ էլ կօգնի շնչել:

– Չգիտեմ: Արի փորձենք:

Կանյուլան հանելով՝ թույլ տվեցի Ջեքիին, որ մտցնի քիթն ու շնչի դրանով:

– Խուտուտ է տալիս, – ասաց:

– Հա, էդպես է:

– Ինձ թվում է՝ հիմա ավելի լավ եմ շնչում:

– Ճիշտ:

– Ըհը:

– Հաճույքով քեզ կնվիրեի, բայց իրոք դրա կարիքը շատ ունեմ:

Ես արդեն զգում էի դրա պակասը: Շունչս համարյա կտրվում էր, երբ նա հետ տվեց կանյուլան: Վերնաշապիկիս ծայրով արագ մաքրեցի, անցկացրի ականջներիս հետևն ու ծայրերը նորից մտցրի քթանցքերիս մեջ:

– Շնորհակալություն, որ թույլ տվեցիր փորձեմ:

– Խնդրեմ:

– Ջեքի՛, – մայրը նորից կանչեց ու այս անգամ թույլ տվեցի, որ գնա:

Ես էլ վերադարձա իմ գրքին, որտեղ ավագ սերժանտ Մաքս Մեյհեմն ափսոսում էր, որ միայն մեկ կյանք ունի իր հայրենիքի համար զոհաբերելու, բայց մտքիս անընդհատ այդ փոքրիկ աղջնակն էր. նրան շատ էի հավանել:

Քեյթլինի հետ կապված մյուս խնդիրն էլ երևի այն էր, որ մեր զրույցն այլևս բնական չէր ստացվում: Նորմալ սոցիալական հաղորդակցություն ձևացնելու բոլոր փորձերը շատ ճնշող էին, որովհետև լրիվ ակնհայտ էր, որ մնացած ամբողջ կյանքիս ընթացքում ում հետ էլ խոսեի, իրենց մի փոքր անհարմար ու շփոթված էին զգալու, բացառությամբ երևի Զեքիի նման երեխաների, որոնք շատ բան դեռ չեն հասկանում:

Ինչևէ, ինձ իսկապես դուր էր գալիս մենակ լինելը: Ինձ դուր էր գալիս մենակ մնալ խեղճ ավագ սերժանտ Մաքս Մեյհեմի հետ, որը, օ ո՜չ, չեմ հավատում, մարդը չի կարող ողջ մնալ տասնյոթ անգամ վիրավորվելուց հետո: Մի՞թե դա հնարավոր է:

(Դե իհարկե, նա ի վերջո ողջ է մնում):

https://1915.info

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Այդ գիշեր ես մի փոքր շուտ պառկեցի քնելու: Տղամարդու երկար կիսավարտիքս ու վերնաշապիկս հագնելով՝ սողոսկեցի հսկայական, թագավորական, օրթոպեդիկ մահճակալիս ծածկոցի տակ, որն աշխարհի իմ ամենասիրելի վայրերից մեկն էր: Ու սկսեցի արդեն միլիոներորդ անգամ կարդալ «Արքայական վիշտը»:

ԱՎ-ն մի աղջկա (հենց այդ աղջիկն է պատմում պատմությունը) ու նրա միաչքանի մոր մասին է: Վերջինս պրոֆեսիոնալ պարտիզպան է և տարված է վարդակակաչներով: Մինչև Աննայի արյան հազվագյուտ քաղցկեղով հիվանդանալը, նրանք միջին խավի ստորին շերտի նորմալ կյանք էին վարում Կալիֆորնիայի մի փոքրիկ կենտրոնական քաղաքում:

Բայց այս գիրքը քաղցկեղի մասին չէ, որովհետև քաղցկեղի մասին գրքերը հիմար գրքեր են: Այդպիսի գրքերում, օրինակ, քաղցկեղով հիվանդը մեկ էլ բարեգործական ընկերություն է հիմնում՝ քաղցկեղի դեմ պայքարելու փող հավաքելու համար: Այդպես է, չէ՞: Եվ այդ բարեգործական նախաձեռնությունը քաղցկեղով հիվանդին հիշեցնում է, թե իրականում որքան բարի են մարդիկ, և նա իրեն սիրված ու ոգևորված է զգում, որովհետև իր հետևից քաղցկեղ բուժող ժառանգություն է թողնում: Բայց ԱՎ-ում Աննան մտածում է, որ քաղցկեղով հիվանդ լինելով՝ քաղցկեղային բարեգործական ընկերություն հիմնելը մի քիչ եսասիրական քայլ է ու հիմնում է բարեգործական ընկերություն, որը կոչվում է «Աննայի

https://1915.info

հիմնադրամ քաղցկեղով հիվանդ մարդկանց համար, ովքեր ուզում են բուժել խոլերան»:

Աննան, ինչպես ուրիշ ոչ ոք, այս ամենի հարցում նաև շատ ազնիվ է: Պատմության ողջ ընթացքում նա իրեն ներկայացնում է որպես կողմնակի ազդեցություն, ինչը միանգամայն ճիշտ է: Քաղցկեղով հիվանդ երեխաները, իսկապես, կողմնակի ազդեցություններն են այն անխիղճ մուտացիայի, որն ապահովում է երկրի վրա կյանքի բազմազանությունը: Այսպիսով, մինչ Աննան օրեցօր ավելի ու ավելի վատ է զգում իրեն, բուժումներն ու հիվանդությունը շտապում են սպանել նրան, նրա մայրը սիրահարվում է վարդակակաչներ վաճառող մի հոլանդացի առևտրականի, որին Աննան Հոլանդացի Վարդակակաչ Մարդ է անվանում: Հոլանդացի Վարդակակաչ Մարդը շատ փող ու նաև բազմաթիվ էքսցենտրիկ գաղափարներ ունի քաղցկեղը բուժելու վերաբերյալ, բայց Աննան կարծում է, որ այդ մարդը, երևի, խաբեբայի մեկն է ու նույնիսկ ոչ էլ հոլանդացի է: Եվ հետո, հենց այն ժամանակ, երբ հավանական հոլանդացին ու նրա մայրը պատրաստվում են ամուսնանալ, իսկ Աննան էլ պատրաստվում է սկսել ցորենի ծիլերով ու մկնդեղի փոքր չափաբաժիններով բուժման այդ նոր խելահեղ ծրագիրը, գիրքն ավարտվում է կես խոսքի վրա:

Գիտեմ, որ սա գրական հնարք է ու, մասամբ, երևի պատճառներից մեկը, թե ինչու եմ այդքան սիրում այս գիրքը, այնուամենայնիվ նախընտրելի է, որ պատմությունը վերջանա: Իսկ եթե չի վերջանում, ուրեմն գոնե պետք է հավերժ շարունակվի, ինչպես, օրինակ, ավագ սերժանտ Մաքս Մեյհեմի ջոկատի արկածները:

Հասկանում եմ, պատմությունը երևի կիսատ է մնում, որովհետև Աննան մահանում կամ չափից շատ վատառողջ է լինում շարունակելու համար: Եվ նախադասության կեսին ավարտվող պատմությունը միտված է ցույց տալու, թե իրականում ինչպես է կյանքը վերջանում կամ նման մի բան: Բայց չէ՞ որ գրքում Աննայից բացի ուրիշ հերոսներ էլ կան,

https://1915.info

https://1915.info
ու կարծում եմ անարդար է, որ երբեք չեմ իմանա, թե ինչ եղավ նրանց հետ: Գրքի հրատարակչի հասցեով Փիթեր Վան Հաութենին հազարավոր նամակներ եմ գրել՝ խնդրելով որոշ պարզաբանումներ տալ, թե ինչ է լինում պատմության ավարտից հետո. Հոլանդացի Վարդակակաչ Մարդը խաբեբա՞ է, թե՞ ոչ, Աննայի մայրը վերջիվերջո ամուսնանո՞ւմ է նրա հետ, թե՞ ոչ, ի՞նչ է լինում Աննայի հիմար գերմանամկան հետ, որին Աննայի մայրն ատում էր, Աննայի ընկերներն ավարտո՞ւմ են ավագ դպրոցը և նման այլ հարցեր: Բայց նա երբեք ոչ մի նամակիս չի պատասխանել:

ԱՎ-ն Փիթեր Վան Հաութենի գրած միակ գիրքն է: Նրա մասին միայն հայտնի է, որ գրքի լույս տեսնելուց հետո Միացյալ Նահանգներից մեկնել է Նիդերլանդներ և, այսպես կոչված, մեկուսի կյանք է վարում այնտեղ: Որոշ ժամանակ կարծում էի, թե նա գրքի շարունակության վրա է աշխատում: Միգուցե Աննայի մայրն ու Հոլանդացի Վարդակակաչ Մարդը տեղափոխվել են Նիդերլանդներ ու փորձում են նոր կյանք սկսել այնտեղ: Բայց «Արքայական վշտի» լույս տեսնելուց հետո արդեն տասը տարի է անցել, ու Վան Հաութենը նույնիսկ բլոգում որևէ գրառում չի արել: Դե, ես էլ անվերջ սպասել չեմ կարող:

Այդ գիշեր գիրքը վերընթերցելիս միտքս անընդհատ շեղվում էր Օգոստոս Ուոթերսի ուղղությամբ՝ նրան պատկերացնելով նույն տողերը կարդալիս: Շատ հետաքրքիր էր՝ կհավանե՞ր գիրքը, թե՞ շատ ճոռոմ կհամարեր: Հետո հիշեցի, որ խոստացել էի զանգել նրան «Լուսաբացի գինը» կարդալուց հետո, և տիտղոսաթերթին գրված հեռախոսահամարով հաղորդագրություն գրեցի.

«Կարծիք «Լուսաբացի գինը» գրքի մասին. չափից շատ դիակներ, չափից քիչ ածականներ: Իսկ դու ի՞նչ կարծիքի ես «Արքայական վշտի» մասին»:

Մեկ րոպե անց պատասխանեց.

«Ինչքան հիշում եմ, գիրքը վերջացնելուց հետո խոստա-

ցել էիր **զանգել,** ոչ թե հաղորդագրություն գրել»:

Ու ես զանգեցի:

– Հեյզել Գրեյս, – ասաց՝ խոսափողը վերցնելով:

– Դե ինչ, կարդացել ես գիրքը:

– Դեռ չեմ վերջացրել: Վեց հարյուր հիսունմեկ էջանոց գիրք է, իսկ ես ընդամենը քսանչորս ժամ եմ ունեցել:

– Որտեղ ես հասել:

– Չորս հարյուր հիսուներեքերորդ էջի վրա եմ:

– Եվ:

– Մինչև գիրքը չկարդամ վերջացնեմ, զերծ կմնամ ինչ-որ կարծիք արտահայտելուց: Բայց ասեմ, որ արդեն մի քիչ ամաչում եմ «Լուսաբացի գինը» քեզ տալու համար:

– Մի ամաչիր: Ես արդեն «Մեյհեմի ռեքվիեմն» եմ սկսել:

– Գրքերի շարքի փայլուն լրացումը: Լավ, իսկ հիմա ասա՝ այդ վարդակակաչ մարդը խաբեբա՞ է, թե՞ չէ: Նրանից մի տեսակ վատ էներգիա է գալիս:

– Ոչ մի բան չեմ ասի, որ տպավորությունդ չփչացնեմ:

– Եթե պարզվեց, որ իսկական ջենթլմեն չէ, աչքերը հանելու եմ:

– Տեսնում եմ՝ լավ էլ տարվել ես, հա՞:

– Ո՛չ մի նախնական կարծիք: Երբ ենք հանդիպելու:

– Մինչև «Արքայական վիշտը» չկարդաս վերջացնես, ոչ մի հանդիպում, – որոշեցի մի քիչ կոտրատվել:

– Դե, ուրեմն, ավելի լավ է հեռախոսն անջատեմ ու սկսեմ կարդալ:

– Ըհը, ճիշտ ես, – համաձայնեցի:

Առանց որևէ այլ բառի հեռախոսակապը կտտոցով անջատվեց:

Սիրախաղն ինձ համար նորություն էր, բայց արդեն դուրս գալիս էր:

Հաջորդ առավոտ քոլեջում «Քսաներորդ դարի ամերիկյան պոեզիայի» դասի էի: Դասախոսը մի ծեր կին էր, որ հաջողացրեց շուրջ իննսուն րոպե խոսել Սիլվիա Փլաթի մասին՝

առանց նույնիսկ մեկ անգամ Սիլվիա Փլաթից գոնե մի բառ մեջբերելու:

Երբ դուրս եկա, մայրս քոլեջի շենքի մայթեզրին մեքենայում սպասում էր ինձ:

– Էս ամբողջ ժամանակ էստեղ նստած սպասո՞ւմ էիր ինձ, – հարցրի, երբ մեքենայից դուրս վազեց, որ օգնի սայլակս ու բալոնս մեքենայի մեջ դնել:

– Չէ, գնացի քիմմաքրման կետից շորերը վերցնելու ու նաև փոստատուն մտա:

– Իսկ հետո՞:

– Գիրք էի կարդում:

– Եվ մեզնից ո՞վ սեփական կյանքը կառուցելու կարիք ունի, – ժպտացի:

Նա էլ իր հերթին փորձեց ժպտալ ինձ, բայց անհամոզիչ ստացվեց:

Մի քիչ հետո առաջարկեցի.

– Կուզե՞ս կինո գնանք:

– Իհարկե: Ո՞ր ֆիլմն ես ուզում տեսնել:

– Արի ուղղակի գնանք, ու ինչ ֆիլմ ցույց են տալիս, էդ էլ նայենք:

Մայրս փակեց դուռս, ինքն էլ, մեքենան շրջանցելով, նստեց ղեկին:

Գնացինք «Քասլթոն» կինոթատրոն, խոսող ավազամկների մասին 3D ֆիլմ նայեցինք: Բավականին զվարճալի ֆիլմ էր:

Երբ կինոթատրոնից դուրս եկա, տեսա, որ Օգոստոսից չորս հաղորդագրություն է եկել հեռախոսիս.

«Կարո՞ղ է գրքի իմ օրինակում վերջին քսան էջը պակասում է»:

«Հեյզել Գրեյս, ասա, որ գիրքն էսպես չի վերջանում»:

«Օ՛ ԱՍՏՎԱԾ ԻՄ, ՆՐԱՆՔ Ի ՎԵՐՋՈ ԱՄՈՒՄՆԱՆՈ՞ՒՄ ԵՆ, ԹԵ՞ ՉԷ: ԱՍՏՎԱԾ ԻՄ, ԷՍՊԵՍ ԷԼ ԲԱՆ ԿԼԻՆԻ՞»:

«Ինչքան հասկացա, Աննան մահացավ ու դրանով էլ ամեն ինչ ավարտվեց: Դաժան է: Հենց կարողանաս, զանգիր:

Հուսով եմ, քեզ մոտ ամեն ինչ կարգին է»:

Հենց տուն հասա, դուրս եկա ետնաբակ, նստեցի բակի ժանգոտած ցանցավոր աթոռին ու զանգեցի նրան: Ինդիանային բնորոշ ամպամած օր էր. եղանակի մի տեսակ, որն ասես պարուրում, պարփակում է քեզ իր մեջ: Մեր փոքրիկ ետնաբակում մեծ տեղ էր զբաղեցնում իմ մանկության ճոճանակը, որն այժմ ամբողջովին ջրի մեջ կորած էր ու շատ սրտաճմլիկ տեսք ուներ:

Օգոստոս Ուոթերսը պատասխանեց երրորդ զանգից.

– Հեյզել Գրեյս:

– Բարի գալուստ «Արքայական վշտի» ընթերցանության քաղցր չարչարանքների..., – հանկարծ գծի մյուս կողմում ուժգին հեկեկոց լսելով, լռեցի, – լա՞վ ես:

– Ես լավ եմ, – պատասխանեց Օգոստոսը, – ուղղակի հիմա Այզեքի հետ եմ, ով կարծես թե հոգեկան շատ անհավասարակշիռ վիճակում է:

Նորից աղիողորմ լացի ձայն լսվեց. ասես վիրավոր կենդանու մահվան ճիչեր լինեին: Գասն ուշադրությունը թեքեց Այզեքի կողմը.

– Հեյ, ընկեր, ընկերս: Աջակցության խմբակի Հեյզելի ներկայությունից ավելի լավ կզգա՞ս, թե՞ վատ: Այզե՛ք, կենտրոնացի՛ր ինձ վրա:

Մեկ րոպե անց Գասն ասաց ինձ.

– Մի քսան րոպեից մեր տանը կլինե՞ս:

– Իհարկե, – ասացի ու հեռախոսը դրեցի:

Ուղիղ ճանապարհով վարելու դեպքում ընդամենը հինգ րոպեում մեր տնից Օգոստոսի տուն կհասնեիր, բայց ուղիղ ճանապարհով չէիր կարող գնալ, որովհետև մեր տների միջև Հոլիդեյ զբոսայգին էր:

Ու թեկուզ դա աշխարհագրական անհարմարություն էր, բայց ես շատ էի սիրում այդ զբոսայգին: Երբ փոքր երեխա էի, ես ու հայրիկս մտնում էինք Ուայթ գետը: Այստեղ մի հիանալի պահ կար: Երբ նա ինձ վեր էր նետում, ուղղակի

https://1915.info

շպրտում էր ինձ իրենից հեռու, ու ես թռիչքի ժամանակ նրան էի մեկնում ձեռքերս, նա էլ ինձ էր պարզում իր ձեռքերը: Բայց հանկարծ երկուսս էլ տեսնում էինք, որ մեր ձեռքերը չեն դիպչելու իրար, ու նա ինձ չի կարողանալու բռնել, դա երկուսիս էլ մի լավ վախեցնում էր: Հետո ես, ոտքերս այս ու այն կողմ թափահարելով, շրմփում էի ջուրը և անվնաս դուրս գալիս՝ շունչ քաշելու: Իսկ ջրի հոսանքը կրկին տանում էր ինձ հայրիկիս մոտ, և այդ ընթացքում շարունակ գոչում էի. «Նորից, նորից, հայրիկ»:

Մեքենան կանգնեցրի Օգոստոսի տան մոտ՝ մի հին, սև Տոյոտա սեդանի կողքին, որը, երևի, Այզեքի մեքենան էր: Հետևից քարշ տալով բալոնս՝ մոտեցա դռանը: Թակեցի: Գասի հայրը բացեց դուռը.

– Ուղղակի Հեյզել, բարի օր:

– Բարև, Օգոստոսն էր ինձ խնդրել, որ գամ:

– Այո, նա ու Այզեքը ներքնահարկում են, – այդ պահին ներքևից ուժեղ լացի ձայն լսվեց: – Երևի Այզեքն է, – ասաց Գասի հայրը՝ դանդաղ տարուբերելով գլուխը, – Սինդին գնաց մի քիչ մեքենայով պտտվի: Էս լացի ձայնը..., – ասաց՝ փակելով աչքերը: – Ինչևէ, կարծես թե դու պետք ես ներքևում: Օգնեմ տանել, ըրը, բալոնդ:

– Չէ, ես կտանեմ, շնորհակալություն, պարոն Ուոթերս:

– Ուղղակի Մարկ, – ասաց:

Մի տեսակ վախենում էի ներքև իջնել: Իրենց դժբախտությունը ողբացող մարդկանց լսելը ժամանցի իմ սիրելի տեսակներից չէ: Բայց դե, իջա:

– Հեյզե՛լ Գրեյս, – լսելով ոտնաձայներս՝ բացականչեց Օգոստոսը: – Այզե՛ք, աջակցության խմբակի Հեյզելն է գալիս: Հեյզե՛լ, փոքրիկ զգուշացում. Այզեքը հիմա պսիխոզի մեջ է:

Օգոստոսն ու Այզեքը նստած էին հատակին՝ ծուլորեն փռված L տառի տեսք ունեցող խաղաթոռների վրա, աչքերը չռած հսկայական հեռուստացույցին: Էկրանը մեջտեղից բաժանված էր երկու մասի՝ Այզեքինը ձախ կողմն էր, Օգոս-

տոսինը՝ աջ: Նրանք մի ռմբակոծված ժամանակակից քաղաքում կռվող զինվորներ էին: Ես այդ վայրը ճանաչեցի «Լուսաբացի գինը» գրքից: Ներս մտնելով՝ ոչ մի արտասովոր բան չտեսա. վիթխարի հեռուստացույցի լույսով ողողված երկու սովորական տղա ձևացնում էին, թե մարդ են սպանում:

Բայց երբ մոտեցա նրանց, տեսա Այզեքի դեմքը: Արցունքները գետի պես անընդհատ հոսում էին կարմրած այտերի վրայով, իսկ դեմքն էլ ձգվել, ծամածռվել էր ցավից: Աչքերը հառել էր հեռուստացույցին ու նույնիսկ իմ կողմ էլ չնայեց, շարունակ հեկեկում էր՝ չդադարելով ուժգին թփթփացնել ջոյստիկին:

– Ինչպե՞ս ես, Հեյզել, – հարցրեց Օգոստոսը:

– Լավ եմ: Բարև, Այզեք:

Պատասխան չկար: Անգամ թեթևակի ուշադրություն չդարձրեց ինձ վրա: Միայն դեմքի վրայով սև վերնաշապիկի վրա անդադար հոսող արցունքներ ու արցունքներ:

Օգոստոսը մեկ վայրկյանով հայացքը կտրեց էկրանից ու ասաց.

– Շատ սիրուն տեսք ունես:

Ես հագել էի ծնկներիցս մի փոքր ներքև իջնող զգեստը, որն ունեի արդեն մի ամբողջ հավերժություն:

– Աղջիկներից շատերը կարծում են, թե զգեստը միայն հատուկ առիթների համար է, ու ինձ շատ է դուր գալիս, երբ աղջիկն ասում է. «Ես գնում եմ տեսնելու մի տղայի, ում մոտ հիմա նյարդային խանգարում է, և որի կապը տեսողության զգայարանի հետ շատ թույլ է, բայց, թքած ամեն ինչի վրա, ես զգեստ եմ հագնելու նրա համար»:

– Բայց և էնպես, Այզեքն իսկի վրաս էլ չի նայում: Երևի չափից շատ է սիրահարված Մոնիկային, – ու սրան հետևեց Այզեքի աղեկտուր հեկեկոցը:

– Ցավոտ թեմա է, – բացատրեց Օգոստոսը: – Այզեք, չգիտեմ քեզ մոտ ինչ վիճակ է, բայց ինձ թվում է մեզ թևից շրջանցում են: – Ու հետո նորից դարձավ ինձ, – Այզեքն ու Մո-

նիկան այլևս գործող ձեռնարկություն չեն, բայց նա չի ուզում խոսել դրա մասին: Ուղղակի ուզում է լացել ու խաղալ Հակաապստամբություն 2-ը: Լուսաբացի գինը:

– Տրամաբանական է:

– Այզեք, ես արդեն լուրջ անհանգստանում եմ մեր դիրքերի վերաբերյալ: Արի դու գնա էն էլեկտրականի մոտ, իսկ ես թիկունքդ կպահեմ:

Այզեքը վազեց դեպի մի անորոշ շենք, իսկ այդ ընթացքում Օգոստոսը, նրա հետևից վազելով, իրար հետևից արագ-արագ, կատաղի կրակահերթեր էր արձակում գնդացրով:

– Բայց դե, – Օգոստոսը նորից դիմեց ինձ, – նրա հետ խոսելուց վնաս չկա: Ու եթե դու իմաստուն կանացի խորհուրդ ունես տալու...

– Դե, կարծում եմ, որ նրա արձագանքը բավականին բնական է, – ասացի, երբ Այզեքը գնդացրով սպանեց թշնամուն, որը գլուխը դուրս էր հանել այրված փոքրիկ բեռնատարի հետևից:

Օգոստոսը նայելով էկրանին՝ գլխով արեց.

– Ցավը պահանջում է, որ իրեն զգան, – մեջբերում արեց «Արքայական վշտից» ու հետո դիմեց Այզեքին, – մեր հետևում հաստատ ոչ մեկը չկա:

Ռոպեներ անց լուսածիր գնդակներ սկսեցին սուրալ նրանց գլխավերևով:

– Գրո՛ղը տանի, Այզեք, – գոչեց Օգոստոսը, – չեմ ուզում քննադատել քեզ մեծագույն թուլությանդ պահին, բայց թույլ տվեցիր, որ թշնամին շրջանցի մեզ: Հիմա ահաբեկիչներին ոչ մի բան չի խանգարում դպրոցին հասնել:

Այզեքի խաղացողը ոլոր-մոլոր նեղ նրբանցքներով վազեց դեպի կրակը:

– Գնացեք կամրջի մոտ ու, պտույտ կատարելով, հետ դարձեք, – առաջարկեցի:

Այդ մարտավարության մասին «Լուսաբացի գինը» գրքից էի իմացել:

Օգոստոսը հառաչեց.

– Ցավոք սրտի, իմ որբացած զինակցի կասկածելի ռազմավարության շնորհիվ կամուրջն արդեն ապստամբների վերահսկողության տակ է:

– Հմ, – խզված ձայնով բացականչեց Այզեքը, – իմ շնորհիվ: Դռ՛ւ չէիր, որ առաջարկեցիր գնամ՝ թուխս նստեմ էն գրողի տարած էլեկտրականում:

Օգոստոսը մեկ վայրկյանով աչքը կտրեց էկրանից և ծուռ ժպտաց Այզեքին:

– Գիտեի, որ կխոսես, ընկերս, – ասաց, – իսկ հիմա արի գնանք ու փրկենք հորինված դպրոցականներին:

Կրակելով ու ճիշտ պահին թաքնվելով՝ միասին վազեցին նեղ նրբանցքներով, մինչև հասան մեկհարկանի, մեկսենյականոց դպրոցի շենքին: Նրանք պպզեցին դեպի փողոց նայող պատի մոտ ու սկսեցին հատ-հատ սպանել թշնամիներին:

– Իսկ ինչո՞ւ են ուզում դպրոց մտնել, – հարցրի:

– Ուզում են երեխաներին գերի վերցնել, – պատասխանեց Օգոստոսը:

Ուսերը կորացրած կախվել էր ջոյստիկի վրա՝ ուժգին շխկշխկացնելով կոճակները, ձեռքերը լարված էին, երակները՝ տեսանելի: Այզեքն առաջ թեքվեց դեպի էկրանը՝ ջոյստիկը պարեցնելով նիհար մատներում:

– Ա՛ռ քեզ, ա՛ռ քեզ, ա՛ռ քեզ, – անընդհատ ասում էր Օգոստոսը:

Ահաբեկիչների գրոհը շարունակվում էր, բայց նրանք բոլորին հնձեցին: Զարմանալիորեն դիպուկ էին կրակում, որ հանկարծ դպրոցին չդիպչեն:

– Նռնա՛կ, նռնակ, – բղավեց Օգոստոսը, երբ ինչ-որ բան, էկրանի երկայնքով կամար կապելով, ցատկոտելով գլորվեց դպրոցի դռան մոտ:

Այզեքը վրդովված ցած գցեց ջոյստիկը:

– Եթե էս սրիկաները չեն կարողանում գերի վերցնել, ուղղակի սպանում են դրանց ու հետո մեղքը մեզ վրա բարդում:

– Թիկունքս պահիր, – պատի հետևից դուրս թռչելով ու դեպի դպրոցը վազելով՝ ասաց Օգոստոսը:

Այզեքը շոշափելով գտավ իր ջոյստիկը և սկսեց կրակել, իսկ այդ ընթացքում Օգոստոսի գլխին կարկուտի պես գնդակներ էին թափվում: Օգոստոսը մեկ անգամ վիրավորվեց, հետո երկրորդ անգամ էլ վիրավորեցին, բայց նա շարունակում էր վազել և բղավում էր.

– Դուք չեք կարող սպանել Մաքս Մեյհեմին, – ու կոճակների վերջնական խառնիճաղանջ կոմբինացիայով թռավ նռնակի վրա, որը պայթեց նրա տակ:

Նրա մասնատված մարմինը գեյզերի նման ժայթքեց և էկրանը ներկեց կարմիր գույնով:

Մի կոկորդային ձայն ասաց.

«Առաքելությունը տապալված է», բայց կարծես թե Օգոստոսն այլ կարծիքի էր՝ ժպիտով նայելով էկրանի վրա ցաքուցրիվ եղած իր մնացորդներին: Ձեռքը տարավ գրպանը, ծխախոտ հանեց ու դրեց ատամների արանքը:

– Երեխաները փրկված են:

– Բայց ժամանակավորապես, – նկատեցի:

– Բոլոր փրկություններն էլ ժամանակավոր են, – հակադարձեց Օգոստոսը, – ես նրանց համար մեկ րոպե ժամանակ շահեցի: Ու միգուցե էդ մի րոպեով նրանք կարողանան մեկ ժամ շահել, իսկ էդ մեկ ժամն էլ նրանց մեկ տարի տա: Ոչ մեկը չի կարող հավերժ ժամանակ տալ, Հեյզել Գրեյս, բայց իմ կյանքը նրանց մեկ րոպե պարգևեց: Ու դա էնքան էլ չնչին բան չէ:

– Լավ, լավ, վրա մի տուր: Դրանք ընդամենը պիքսելներ չեն:

Նա թոթվեց ուսերը: Կարծես, իրոք, հավատացել էր, թե դա իրականություն է և ոչ թե պարզապես խաղ: Այզեքը նորից սկսել էր ողբալ: Օգոստոսը գլուխը կտրուկ թեքեց նրա կողմն ու առաջարկեց.

– Մի հատ էլ խաղանք, կապրալ:

https://1915.info

Այզեքը բացասաբար տարուբերեց գլուխը: Նա Օգոստոսի ուսի վրայով նայեց ինձ ու գերլարված ձայնալարերով արտաբերեց.

– Նա չէր ուզում հետո անել դա:

– Երևի չէր ուզում կույր տղայի լքել, հա՞ – ասացի:

Նա գլխով արեց, արցունքները՝ մետրոնոմի պես անվերջ և անդադար:

– Ասաց, որ դրան չի դիմանա, – շարունակեց Այզեքը, – ես ուր որ է կորցնելու եմ տեսողությունս, ու նա դրան չի՛ դիմանա:

Ես սկսեցի մտածել «դիմանալ» բառի մասին, ու թե ինչքան անտանելի բաների են մարդիկ դիմանում:

– Ցավում եմ, – ասացի:

Թևքով մաքրեց թաց դեմքը: Ակնոցի հետևում Այզեքի աչքերն այնքան մեծ էին թվում, որ դեմքի մնացած ամեն ինչ մի տեսակ անհետանում, աննկատելի էր դառնում: Եվ հիմա այդ մարմնից անջատ, օդում լողացող աչքերը՝ մեկն իսկական, մյուսը՝ ապակե, չռված էին ինձ վրա:

– Դա անընդունելի է, – ասաց, – լրիվ անընդունելի:

– Դե, հանուն արդարության ասեմ, որ նա, երևի իսկապես, չի կարող դիմանալ դրան, – ասացի, – իհարկե, քեզ համար էլ է դժվար, բայց բանն այն է, որ նա պարտավոր չէ, իսկ դու ստիպված ես դիմանալ:

– Էսօր անընդհատ նրան ասում էի «ընդմիշտ», «ընդմիշտ», իսկ նա հետս զուգահեռ խոսում էր ու չէր կրկնում՝ «ընդմիշտ», «ընդմիշտ»: Էնպիսի տպավորություն էր, ասես ես արդեն չկամ, հասկանո՞ւմ ես: «Ընդմիշտ»-ը խոստում էր: Իսկ խոստումը դրժել չի կարելի:

– Երբեմն մարդիկ առանց հասկանալու, առանց երկար մտածելու են խոստումներ տալիս:

Այզեքն արագ մի հայացք գցեց վրաս ու ասաց.

– Դե, հա, իհարկե: Բայց մեկ է՝ տված խոստումդ պետք է պահես: Դա է սերը: Սիրող մարդը պահում է տված խոս-

տումը, ինչ էլ որ լինի. դա է սերը: Իսկական սիրուն չե՞ս հավատում:

Ես չպատասխանեցի, որովհետև պատասխան չունեի: Բայց մտածեցի, որ եթե իրոք իսկական սեր գոյություն ունի, ապա Այզեքը բավականին լավ սահմանում տվեց դրան:

– Իսկ ես հավատում եմ, – շարունակեց Այզեքը, – ու սիրում եմ նրան: Նա ինձ խոստում է տվել, խոստացել է «ընդմիշտ» սիրել ինձ, – նա վեր կացավ ու քայլ արեց դեպի ինձ:

Ես էլ վեր կացա՝ մտածելով, որ ուզում է գրկախառնվել կամ նման մի բան, բայց նա ուղղակի պտտվեց, կարծես մոռացավ, թե ինչի համար էր կանգնել, իսկ հետո ես ու Օգոստոսը նկատեցինք, որ նրա դեմքին մի անսպասելի կատաղություն իջավ:

– Այզեք, – ասաց Գասը:

– Ինչ:

– Դու մի տեսակ... կներես, երկիմաստ արտահայտության համար, բայց աչքերիդ մեջ ինչ-որ անհանգստացնող բան կա:

Հանկարծ Այզեքն սկսեց ոտքով ուժեղ խփել խաղաթոռին, որը, գլուխկոնծի տալով, գլորվեց Գասի մահճակալի մոտ:

– Ահա, խնդրեմ, – ասաց Գասը:

Այզեքը վազեց աթոռի հետևից ու սկսեց անընդհատ հարվածել դրան:

– Ա՜յ էդպես, դրան մի լավ ջարդ տուր: Շանսատակ արա:

Այզեքը նորից ու նորից էր հարվածում, մինչև աթոռը, մահճակալին դիպչելով, մի կողմ թռավ: Հետո նա մի բարձ վերցրեց, սկսեց շրմփացնել մահճակալի ու դրա վերևի մրցանակների դարակի միջև գտնվող պատին:

Օգոստոսը, ծխախոտը դեռ բերանին, ուշադիր նայեց ինձ ու կիսաբերան ժպտաց.

– Ուշք ու միտքս անընդհատ էն քո տված գիրքն է:

– Շատ լավ եմ քեզ հասկանում:

– Ոչ մի բառ չի ասում, թե ինչ է լինում գրքի մյուս հերոսների հետ:

– Ըհը՛, – համաձայնեցի:

Այզեքը դեռ շարունակում էր բարձով խեղդել պատը:

– Նա տեղափոխվել է Ամստերդամ, ու ես մտածում էի, թե շարունակությունը կգրի Հոլանդացի Վարդակակաչ Մարդու մասին, բայց մինչև հիմա ոչ մի բան չի հրատարակել, ոչ էլ հարցազրույց է տվել: Կարծես թե երբեք օնլայն չի լինում: Ես նրան մի կույտ նամակ եմ գրել՝ հարցնելով, թե ինչ է լինում մյուսների հետ, բայց ոչ մի անգամ չի պատասխանել: Մի խոսքով ...

Լռեցի, քանի որ Օգոստոսն արդեն ինձ չէր լսում: Նա խեթ-խեթ Այզեքին էր նայում:

– Մի որպե սպասիր, – մրթմրթաց՝ ինձ նայելով:

Հետո մոտեցավ Այզեքին, բռնեց ուսերից:

– Ընկերս, բարձերը չեն ջարդվում: Ջարդվող բան փորձիր:

Այզեքը, դեպի մահճակալի վրայի դարակը ձգվելով, մի մրցանակ վերցրեց ու իր գլխավերևում պահելով՝ սպասեց թույլտվության:

– Այո, – ասաց Գասը, – այո՛:

Մրցանակը, գետնին ընկնելով, ջարդուփշուր եղավ, պլաստմասե բասկետբոլիստի թևը, գնդակը ձեռքին, պոկվեց, ընկավ մի կողմ:

Այզեքն սկսեց ոտքերով կոխկրտել հատակին ընկած մրցանակը:

– Այո՛, դրա վերջը տո՛ւր, – բացականչեց Օգոստոսը:

Իսկ հետո շրջվեց դեպի ինձ.

– Ես էլ չգիտեի՝ ինչպես ասեմ հայրիկիս, որ, իրականում, զզվում եմ բասկետբոլից, բայց կարծես թե ձևը գտանք:

Մրցանակները մեկը մյուսի հետևից շրխկում էին հատակին, և Այզեքը կատաղի ոտնատակ էր տալիս դրանք ու գոռում: Իսկ ես ու Օգոստոսը, մի քանի քայլ այն կողմ կանգնած, հետևում էինք նրա խելագարությանը: Խեղճ պլաստմասե բասկետբոլիստների հաշմված մարմինների կտորները դեսուդեն ընկած էին հատակին. մի տեղ անդա-

https://1915.info

մահատված ձեռք էր՝ գնդակն ափի մեջ, մի ուրիշ տեղ՝ միջին տարածությունից ցատկի պատրաստվող ոտքեր: Այզեքը շարունակում էր մրցանակների վրա հարձակումը՝ երկու ոտքով ցատկոտելով դրանց վրա, ճչալով, շնչակտուր, քրտնած, մինչև վերջիվերջո փռվեց մրցանակների մնացորդների քառթ-քառթ, անհարթ մակերեսի վրա:

Օգոստոսը մոտեցավ նրան ու ցած նայելով՝ հարցրեց.

– Դե ինչ, հիմա ավելի լա՞վ ես քեզ զգում:

– Չէ, – հևալով փնթփնթաց Այզեքը:

– Հա, ցավն էդպիսին է, – ասաց Օգոստոսն ու ինձ նայելով՝ շարունակեց. – Ցավը պահանջում է, որ իրեն զգան:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այդ օրվանից հետո ես ու Օգոստոսը համարյա մեկ շաբաթ չէինք խոսել: Ես զանգել էի նրան «Կոտրված մրցանակների գիշերը», ու, ըստ օրենքի, զանգելու հերթը նրանն էր: Բայց նա չէր զանգում: Այնպես չէր, որ ամբողջ օրը հեռախոսը քրտնած ձեռքիս, ամեն վայրկյան հույսով լի նայում էի դրան և հատուկ դեղին զգեստը հագիս՝ համբերատար սպասում իմ ջենթլմեն զանգահարողին՝ արդարացնելու իր այդ մականունը: Չէ, ես շարունակում էի ապրել իմ կյանքով: Մի օր գնացի սուրճ խմելու Քեյթլինի ու նրա սիրունատես, բայց, դե իհարկե, ոչ «օգոստոսափառ», ընկերոջ հետ: Ամեն օր ընդունում էի ֆալանքսիֆորի իմ օրական չափաբաժինը: Այդ շաբաթ երեք առավոտ քոլեջ գնացի, իսկ երեկոներն ընթրում էի մայրիկիս ու հայրիկիս հետ:

Շաբաթ երեկոյան ընթրիքին կանաչ պղպեղով ու բրոկոլիով պիցցա էր: Մենք նստած էինք խոհանոցում՝ մեր շրջանաձև սեղանի շուրջը, երբ հեռախոսս սկսեց զնգալ, բայց չէի կարող պատասխանել, քանի որ մեզ մոտ «ընթրիքի ժամանակ ոչ մի հեռախոս» խիստ կանոն է դրված:

Այսպիսով, մի քիչ կերա՝ մինչ մայրիկն ու հայրիկը զրուցում էին Պապուա Նոր Գվինեայում վերջերս տեղի ունեցած երկրաշարժի մասին: Նրանք ծանոթացել էին Խաղաղության կորպուսի միջոցով՝ Պապուա Նոր Գվինեայում: Եվ հենց այնտեղ ինչ-որ բան էր տեղի ունենում, նույնիսկ ինչ-որ սարսափելի բան, նրանք նստակյաց մեծահասակներից հանկարծ

https://1915.info

https://1915.info

վերածվում էին երիտասարդ, իդեալիստ, ինքնավստահ, ուժեղ ու եռանդուն մարդկանց, ինչպիսին եղել էին ժամանակին: Ու այդ օրը նրանց ոգևորությունն այնքան մեծ էր, որ չէին էլ նկատում, որ ես չափից արագ էի ուտում՝ սննդի պատառիկները ափսեիցս բերան այնքան մեծ արագությամբ ու գազանաբար տեղափոխելով, որ գրեթե շնչահեղձ էի լինում, ինչն էլ, իհարկե, ստիպում էր անհանգստանալ, թե թոքերս նորից լող են տալիս ավելացող հեղուկի լճակում: Բայց ես ամեն կերպ աշխատում էի վանել անցանկալի միտքը: Մի քանի շաբաթից պոզիտրոնային ճառագայթման տոմոգրաֆիա[1] պետք է անցնեի, ու եթե ինչ-որ բան այն չէր, շուտով դա պարզելու էի, և դրա մասին նախօրոք անհանգստանալը, միևնույն է, ինձ ոչինչ չէր տալու:

Բայց և այնպես, անհանգստանում էի: Ինձ դուր էր գալիս մարդ լինել և ուզում էի շարունակել գոյությունս: Ի դեպ, անհանգստությունը նույնպես մահանալու կողմնակի ազդեցություններից է:

Վերջապես կերա-վերջացրի ու ասացի.

– Վերջացրեցի, կարո՞ղ եմ գնալ:

Բայց նրանք այնքան էին տարված գվինեական ենթակառույցների ուժեղ և թույլ կողմերի մասին իրենց զրույցով, որ չլսեցին էլ ինձ: Ես խոհանոցի սեղանիկին դրված պայուսակիցս արագ հանեցի հեռախոսս ու նայեցի վերջին զանգերը. Օգոստոս Ուոթերսն էր զանգել:

Հետևի դռնից դուրս եկա կիսախավար բակ: Ճոճանակը տեսնելով՝ մի պահ մտածեցի մոտենալ ու ճոճվել նրա հետ խոսելու ընթացքում, բայց այն բավականին հեռու թվաց՝ հաշվի առնելով, որ արագ ուտելն արդեն մի լավ հոգնեցրել էր ինձ:

Փոխարենը պառկեցի խոտի վրա՝ բակի եզրին և նայելով վեր՝ Օրիոնին (միակ համաստեղությունը, որ կարողանում էի

1 Համակարգչային տոմոգրաֆիայի միջոցով մարդու մարմնի պատկերը վերարտադրող սարք: Օգտագործվում է քաղցկեղային գոյացությունների հայտնաբերման համար, ինչպես նաև՝ սրտային հիվանդությունների վերահսկման ժամանակ:

https://1915.info
տարբերակել)՝ զանգեցի Օգոստոսին:

– Հեյզել Գրեյս, – պատասխանեց:

– Բարև, ինչպե՞ս ես:

– Հիանալի: Համարյա ամեն րոպե ուզում էի քեզ զանգել, բայց սպասում էի, մինչև մի կարգին, կապակցված միտք կկարողանամ արտահայտել *վասն* «Արքայական վշտի»:

Ինչ, ասաց *վասն:* Հա, հենց էդպես էլ ասաց: Վա՛յ, Օգոստոս:

– Եվ...

– Կարծում եմ, դա ... դա կարդալով էնպիսի զգացում ունեի, թե... կարծես...

– Կարծես ի՞նչ, – սկսեցի հոգու հետ խաղալ:

– Կարծես՝ նվե՛ր լինի, – հարցական տոնով ասաց, – կարծես ինձ մի շատ կարևոր բան տված լինես:

– Օ՜, այո՛, – շշնջացի:

– Կներես, երևի մի քիչ անհամ բան ասացի:

– Չէ, չէ, ներողություն խնդրելու կարիք չկա:

– Ու չի վերջանում:

– Ըհը:

– Ուղղակի անտանելի տանջանք է: Դե, հա, հասկանում եմ, որ աղջիկը մահանում է կամ նման մի բան:

– Ըհը, ես էլ եմ էդպես կարծում:

– Լավ, էդ հասկացանք, բայց չէ՞ որ գրողի ու ընթերցողի միջև չգրված պայմանավորվածություն կա, կարծում եմ՝ գիրքը չվերջացնելը պայմանավորվածության խախտում է:

– Դե, չգիտեմ, – ասացի՝ ցանկանալով պաշտպանել Փիթեր Վան Հաութենին, – ինչ-որ չափով, երևի, հենց դրա համար էլ սիրում եմ էդ գիրքը. էնքան իրական, ճշգրիտ է պատկերում մահը: Մահանում ես կես խոսքի վրա, կյանքիդ կեսին, նախադասության ուղիղ մեջտեղում: Բայց, իհարկե, ուզում եմ, շատ եմ ուզում իմանալ, թե ինչ է լինում մյուս բոլորի հետ: Ու հենց դա էլ հարցրել եմ նրան իմ նամակներում: Բայց, դե... նա երբեք չի պատասխանում:

– Ճիշտ է, դու ասացիր, որ մեկուսացել է աշխարհից, չէ՞:

– Ըհը:

– Անհետ կորել է:

– Ըհը:

– Ու բացարձակ անհասանելի է, չէ՞:

– Ցավոք, այո:

– Հարգելի պրն Ուոթերս. Շնորհակալություն եմ հայտնում ապրիլի վեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներից (եթե, իհարկե, կարելի է համարել, որ աշխարհագրություն գոյություն ունի մեր՝ հաղթականորեն թվայնացված այժմեականությունում), օրիորդ Վլիգենթարթի միջոցով ստացած էլեկտրոնային նամակի համար:

– Գրո՛ղը տանի, դա ի՞նչ է, Օգոստո՛ս:

– Նա օգնական ունի, – պատասխանեց Օգոստոսը, – Լիդևիջ Վլիգենթարթը: Ես գտա նրան ու էլեկտրոնային նամակ ուղարկեցի: Նա էլ Վան Հաութենին է փոխանցել նամակս: Վերջինս պատասխանել է իր օգնականի էլ. փոստով:

– Լավ, լավ, շարունակիր կարդալ:

– «Պատասխանս ավանդական ձևով, թանաքով եմ հանձնում թղթին, որը, օրիորդ Վլիգենթարթի թվայնացնելուց հետո, ճանապարհ կընկնի վերջին ժամանակներս մեր տեսակը ամբողջովին կլանած անկենդան սարդոստայնի միջով: Այդպիսով նախապես ներողություն եմ խնդրում դրա հետևանքով առաջացած հնարավոր սխալների կամ բացթողումների համար:

Երախտապարտ եմ բոլոր այն երիտասարդ աղջիկներին ու տղաներին, որ ձեր սերնդի տրամադրության տակ գտնվող բաքոսյան խրախճանքների արանքում իմ փոքրիկ գիրքը կարդալու համար ժամանակ են գտնում: Բայց առանձնապես շնորհակալ եմ Ձեզ, պարոն, «Արքայական վիշտ» գրքի մասին բարի խոսքերի համար, և որ ժամանակ եք գտել ինձ հաղորդելու, թե, ցիտում եմ Ձեր իսկ բառերը, «գիրքը շատ մեծ նշանակություն ունի» Ձեզ համար:

Այնուհանդերձ, այդ խոսքերը մտածմունքների տեղիք են

տալիս: Ինչ նկատի ունեք «նշանակություն» ասելով: Հաշվի առնելով մեր պայքարի վերջնական ապարդյունավետությունը՝ արվեստի պարգևած վաղանցիկ ցնցումն արդյո՞ք արժեքավոր է, թե՞ միակ արժեքը հնարավորինս լավ ժամանակ անցկացնելն է: Ինչի՞ն պետք է ձգտի, ինչի՞ նման պետք է լինի պատմությունը, Օգոստոս. տագնապի ազդանշա՞ն, կոչ ի զե՞ն, թե՞ մորֆինի կաթիլային: Անշուշտ, ինչպես աշխարհի բոլոր հարցադրումները, հարցերի այս շարանն անխուսափելիորեն հանգեցնում է մեկ հարցի. ի՞նչ է նշանակում մարդ լինել և, փոխառնելով վախերով ու տագնապներով լի տասնվեցամյա դեռահասների արտահայտությունը, որոնց, անկասկած, դուք հանդիմանում եք, «արդյո՞ք էս ամեն ինչը իմաստ ունի»:

Վախենամ, որ ոչ, բարեկամս, և սակավաթիվ քաջալերանքների կհանդիպեիք իմ հետագա գրվածքներում: Ինչևէ, պատասխանեմ քո հարցին: Ոչ, ես այլևս ոչ մի բան չեմ գրել ու չեմ էլ գրելու: Չեմ կարծում, թե որևէ օգուտ կբերեի ընթերցողիս կամ ինձ՝ շարունակելով մտքերս կիսել նրանց հետ:

Նորից շնորհակալություն մեծահոգի նամակի համար:

Հարգանքներով՝ Փիթեր Վան Հաութեն, Լիդևիջ Վլիգենթարթի միջնորդությամբ»:

– Վա՛յ, – բացականչեցի, – էս ամեն ինչը հորինել ես, չէ՞:

– Հեյզել Գրեյս, մի՞թե ես իմ խղճուկ մտավոր ունակություններով կարող էի նամակ հորինել Փիթեր վան Հաութենից էսպիսի արտահայտություններով՝ «մեր հաղթականորեն թվայնացված այժմեականություն» և այլն, և այլն:

– Չէ, չէիր կարող, – համաձայնեցի, – էլ. փոստի հասցեն կտա՞ս ինձ:

– Իհարկե, – ասաց Օգոստոսը այնպիսի ձայնով, կարծես թե դա աշխարհի ամենալավ նվերը չէր:

Հաջորդ երկու ժամն անցկացրի Փիթեր վան Հաութենին էլ. նամակ գրելով: Ու ամեն անգամ, երբ նորից էի գրում, թվում էր, թե դա նախորդից ավելի վատ է ստացվել, բայց

կանգ առնել պարզապես չէի կարող:

«Հարգելի պարոն Փիթեր վան Հաութեն
(Լիդևիջ Վլիգենթարթի հասցեով)

Իմ անունը Հեյզել Գրեյս Լանքասթեր է: Իմ ընկերը՝ Օգոստոս Ուոթերսը, որ իմ խորհրդով կարդացել է «Արքայական վիշտը», վերջերս Ձեզնից նամակ է ստացել այս էլ. հասցեից: Հուսով եմ՝ դեմ չեք, որ Օգոստոսն ինձ է փոխանցել այս հասցեն:

Պարոն վան Հաութեն, Օգոստոսին ուղարկած Ձեր նամակից հասկացա, որ Դուք այլևս մտադիր չեք որևէ գիրք հրատարակելու: Մի կողմից դա ինձ տխրեցնում է, բայց մյուս կողմից էլ թեթևություն եմ զգում, որ ստիպված չեմ լինելու անհանգստանալ, թե արդյոք Ձեր հաջորդ գիրքը նույնքան հոյակապորեն կատարյալ կլինի, որքան առաջինը: Ես երեք տարի է տառապում եմ չորրորդ աստիճանի քաղցկեղից և կարող եմ ասել, որ «Արքայական վիշտ»-ում ամեն ինչ շատ ճիշտ եք նկարագրում կամ գոնե *իմ* դեպքում այդպես է: Ձեր գիրքն ինձ հուշում է, թե ինչ եմ զգում, հաճախ նույնիսկ մինչև իմ զգալը, ու արդեն երևի մի հազար անգամ կարդացել եմ այդ գիրքը:

Բայց շատ եմ խնդրում Ձեզ պատասխանել գրքի հետ կապված մի քանի հարցերի. ինձ շատ է հետաքրքրում, թե ինչ է լինում վեպի ավարտից հետո: Հասկանում եմ, գիրքը վերջանում է, որովհետև Աննան մահանում է կամ չափից շատ վատառողջ է լինում գրելը շարունակելու համար, բայց շատ կուզենայի իմանալ, թե ինչ է լինում Աննայի մոր հետ: Նա ամուսնանո՞ւմ է Հոլանդացի Վարդակակաչ Մարդու հետ, թե՞ ոչ, հետագայում մեկ ուրիշ երեխա ունենո՞ւմ է, թե՞ ոչ, արդյո՞ք շարունակում է ապրել Թեմփլ 917 փողոցում և այլն, և այլն: Իսկ Հոլանդացի Վարդակակաչ Մարդը խաբեբա՞ է, թե՞ իրոք սիրում է նրանց: Ի՞նչ է լինում Աննայի ընկերների՝ հատկապես Քլերի և Ջեյքի հետ: Նրանք միասի՞ն են մնում: Եվ վերջինը, որը, կարծում եմ, ամենակարևոր ու խորիմաստ

https://1915.info

հարցն է, որ ակնկալում եք Ձեր ընթերցողներից. ինչ է տեղի ունենում Սիզիփոս գերմանական հետ: Այս հարցերը տարիներով հետապնդել են ինձ, ու չգիտեմ էլ, թե ինձ դեռ ինչքան է մնացել ապրելու՝ դրանց պատասխաններն ստանալու համար:

Գիտեմ, սրանք լուրջ գրական հարցեր չեն, իսկ Ձեր գիրքը լի է լուրջ գրական հարցադրումներով, բայց ես ուղղակի ուզում եմ իմանալ:

Եվ, իհարկե, եթե հանկարծ օրերից մի օր որոշեք ևս մի բան գրել ու նույնիսկ չհրատարակեք էլ, ես շատ կցանկանայի կարդալ դա: Անկեղծ ասած, նույնիսկ Ձեր առևտրի ցուցակները հաճույքով կկարդայի:

Մեծագույն հիացմունքով՝
Հեյզել Գրեյս Լանքասթեր
(16 տարեկան)»:

Նամակն ուղարկելուց հետո զանգեցի Օգոստոսին, ու մենք մինչև ուշ գիշեր խոսեցինք «Արքայական վշտի» մասին: Հետո ես նրա համար կարդացի Էմիլի Դիքինսոնի բանաստեղծությունը, որտեղից վան Հաութենը վերցրել էր գրքի վերնագիրը: Օգոստոսն ասաց, որ շատ լավ առոգանություն ունեմ ու տողերի միջև չափից երկար դադար չեմ տալիս, իսկ հետո ասաց, թե «Լուսաբացի գինը» գրքերի շարքի վեցերորդ հատորը՝ «Վավերացված է արյամբ», սկսվում է բանաստեղծությունից արված մեջբերումով: Մոտ մեկ րոպե փնտրելով՝ վերջապես գտավ գիրքն ու կարդաց մեջբերումը.

«Կյանքդ լրիվ ես խորտակել,
Քանզի վերջին համբույրդ
Տարիներ առաջ ես ունեցել»:

– Վատը չէ, – ասացի, – բայց մի քիչ պաթետիկ է: Մաքս Մեյհեմը սա հաստատ «ղզիկություն» կանվաներ:

– Ու անպայման ատամները կրճտացնելով: Զգացել ես, Մեյհեմն ինչքան է ատամները կրճտացնում էս գրքերում: Եթե էս ամբողջ կռիվներից հետո ողջ մնաց, հաստատ

ատամնաբույժի մոտ գնալու կարիք կունենա: – Մի վայրկյան լռելուց հետո հարցրեց, – իսկ դու վերջին համբույրդ ե՞րբ ես ունեցել:

Մի պահ մտածմունքների մեջ ընկա: Իմ համբույրները բոլորն էլ, նախքան քաղցկեղի ախտորոշումը, կաշկանդված ու փսլնքոտ համբույրներ են եղել, իրենց մեծահասակների տեղ դրած երեխաների համբույրներ: Բայց, դե, ամեն դեպքում, դա շատ վաղուց էր:

– Տարիներ առաջ, – վերջապես ասացի, –իսկ քո՞նը:

– Մի քանի լավ համբույր եմ ստացել իմ նախկին ընկերուհի Քերոլայն Մեթերսից:

– Տարիներ առա՞ջ:

– Մոտ մեկ տարի առաջ:

– Ու ի՞նչ պատահեց:

– Համբո՞ւյրի ժամանակ:

– Չէ, քո ու Քերոլայնի միջև:

– Ըըհ, – մի պահ լռելուց հետո ասաց, – Քերոլայնն այլևս մահկանացուների շարքում չէ:

– Օ՛հ, – հանկարծակիի եկա:

– Էհ, – հառաչեց Օգոստոսը:

– Ներիր, – ասացի:

Իհարկե, մահացած շատ մարդ էի ճանաչում: Բայց ոչ մի անգամ նման մեկի հետ սիրային կապի մեջ չէի եղել: Եվ, անկեղծ ասած, դրա մասին ոչ մի պատկերացում չունեի:

– Դա քո մեղքը չէ, Հեյզել Գրեյս: Մենք բոլորս ուղղակի կողմնակի ազդեցություններ ենք, չէ՞:

– Գիտակցության բեռնանավի վրա հավաքված բեղոտանիներ, – մեջբերեցի ԱՎ-ից:

– Լավ, երևի գնամ քնելու. արդեն ժամը մեկն է:

– Լավ, – ասացի:

– Լավ, – կրկնեց:

Ծիծաղելով նորից ասացի.

– Լավ:

Իսկ հետո հեռախոսագիծը լուռ էր, բայց ոչ անջատված: Ու ինձ մոտ այնպիսի զգացողություն էր, ասես նա այստեղ էր՝ իմ սենյակում, ինձ հետ կամ նույնիսկ ավելի ճիշտ՝ ոչ ես էի իմ սենյակում, ոչ էլ նա՝ իրենում, այլ երկուսս անտեսանելի և աննյութական մի երրորդ տարածության մեջ էինք, որտեղ կարելի էր հայտնվել միայն հեռախոսով:

– Լավ, – ասաց մի ամբողջ հավերժություն հետո, – միգուցե «լավ» բառը դառնա մեր «ընդմիշտը», ինչ կասես:

– Լավ, – ասացի:

Ու վերջապես Օգոստոսը կախեց հեռախոսը:

Փիթեր վան Հաութենը Օգոստոսի նամակին պատասխանել էր չորս ժամ հետո, բայց իմ նամակն ուղարկելուց արդեն երկու օր էր անցել, իսկ նա դեռ չէր պատասխանել: Օգոստոսը վստահեցնում էր, որ իմ նամակն ավելի լավն էր և ավելի խոր ու բովանդակալից պատասխան էր պահանջում, և որ հիմա վան Հաութենն զբաղված էր իմ հարցերի պատասխանները գրելով, իսկ արվեստի գոհարները միշտ երկար ժամանակ են խլում: Բայց, մեկ է, անհանգստանում էի:

Չորեքշաբթի, «Ամերիկյան պոեզիա՝ սկսնակների համար 101» դասի ժամանակ, Օգոստոսից հաղորդագրություն ստացա.

«Այզեքին վիրահատել են: Ամեն ինչ լավ է անցել: Հիմա նա պաշտոնապես ԱՔՆ է»:

ԱՔՆ-ն նշանակում էր «առանց քաղցկեղի նշանների»: Մի քանի վայրկյան հետո երկրորդ հաղորդագրությունը եկավ.

«Այսինքն՝ ցավոք նա կույր է»:

Կեսօրից հետո մայրս համաձայնեց Մեմորիալում Այզեքին տեսակցելու համար մեքենան ինձ տրամադրել:

Հինգերորդ հարկում, նրա հիվանդասենյակը գտնելով, թակեցի դուռը՝ թեև բաց էր: Մի կնոջ ձայն ասաց.

– Մտեք:

Բուժքույրն էր, որն զբաղված էր Այզեքի աչքերի վիրակապերով:

– Բարև, Այզեք, – ասացի:

https://1915.info

Իսկ նա հարցրեց.

– Մոն, դո՞ւ ես:

– Ըը, ոչ: Ներիր, ըմ, ես եմ, Հեյզելը: Աջակցության խմբակից: Հիշո՞ւմ ես «Կոտրված մրցանակների գիշերը»:

– Ա՜հ, այո, – ասաց, – մարդիկ ասում են, թե որպես փոխհատուցում կկատարելագործվեն իմ մյուս զգայարանները, բայց ՊԱՐԶ Է՝ ԴԵՌ ՈՉ: Բարև, աջակցության խմբակի Հեյզել: Մոտ արի, որ ձեռքերովս շոշափեմ դեմքդ, նայեմ հոգուդ մեջ, տեսնեմ ավելին, քան տեսողություն ունեցող մարդիկ կարող են տեսնել:

– Կատակ է անում, – բացատրեց բուժքույրը:

– Հա, հասկացա, – ասացի:

Մոտեցա նրա մահճակալին, մի աթոռ վերցրի, նստեցի ու նրա ձեռքը բռնելով՝ ասացի.

– Բարև:

– Բարև, – պատասխանեց:

Հետո որոշ ժամանակ լռություն էր:

– Ինչպե՞ս ես, – հարցրի:

– Նորմալ, – ասաց, – չգիտեմ:

– Ի՞նչ չգիտես:

Աչքերս հառել էի նրա ձեռքին ու չէի համարձակվում նայել վիրակապերով փաթաթված դեմքին:

Այզեքը կրծում էր եղունգները, որոշների շուրջն արդեն արյան հետքեր կային:

– Նա նույնիսկ չեկավ ինձ տեսնելու, – ասաց, – մենք միասին ենք եղել տասնչորս ամիս: Տասնչորս ամիսը երկար ժամանակ է: Օհ, Աստված իմ, ցավում է: – Այզեքը բաց թողեց ձեռքս՝ շոշափելով գտնելու ցավազրկող պոմպի կոճակը, որ սեղմելիս թմրեցնող դեղ է ներարկվում հիվանդին:

Բուժքույրը, վիրակապը փոխելով, հետ քաշվեց ու թեթևակի ցավակցական ձայնով ասաց.

– Սա դեռ առաջին օրն է, Այզեք: Ամբողջովին ապաքինվելու համար ժամանակ է պետք: Իսկ տասնչորս ամիսը,

https://1915.info

ավելի լայն տեսանկյունից դիտարկելով, ամբողջ կյանքի համեմատ էնքան էլ երկար ժամանակ չէ: Քեզ համար կյանքը նոր է սկսվում, երիտասարդ: Դեռ կտեսնես:

Սա ասելով՝ բուժքույրը դուրս եկավ սենյակից:

– Գնա՞ց, – հարցրեց Այզեքը:

Ես գլխով արեցի ու հանկարծ գիտակցելով, որ Այզեքը դա չի տեսնում, պատասխանեցի.

– Հա, գնաց:

– Դեռ կտեսնեմ: Չէ, լո՛ւրջ, էդպես էլ ասա՞ց:

– Որո՞նք են լավ բուժքրոջ հատկանիշները: Հը՞:

– Առաջինը՝ հաշմանդամության հետ կապված բառախաղ չի անում, – ասաց Այզեքը:

– Երկրորդ՝ արյունը վերցնում է առաջին իսկ փորձից, – շարունակեցի:

– Ըհը, դա իրոք, որ ընտիր բան է: Գրողը տանի, սա իմ ձեռքն է, ոչ թե նետաձգության տախտակ: Երրորդ՝ ցավակցական տոնով չի խոսում:

– Ինչպե՞ս ես քեզ զգում, հոգյակս, – հարցրի՝ կրկնօրինակելով բուժքույրերի քաղցր-մեղցր ձայնը, – հիմա քեզ պետք է սրսկեմ: Մի փոքր կծակի, լա՞վ:

– Վո՛ւյ-վո՛ւյ, իմ խեղճ փոքրիկ բալիկը հիվանդ-միվանդ է, – տնազեց Այզեքը:

Քիչ հետո ասաց.

– Իրականում նրանց մեծ մասը լավն է: Ուղղակի ուզում եմ շուտ դուրս պրծնել էստեղից:

– Էստեղից, այսինքն՝ հիվանդանոցի՞ց:

– Դե, դա էլ, – ասաց՝ շուրթերն իրար սեղմելով: Ես տեսնում-զգում էի նրա ցավը: – Անկեղծ ասած, ավելի շատ Մոնիկայի մասին եմ մտածում, քան աչքիս: Դա աննորմա՞լ է: Հա, երևի աննորմալ է:

– Ըհը, մի քիչ աննորմալ է, – ընդունեցի:

– Բայց գիտե՞ս, ես հավատում եմ իսկական սիրուն: Չեմ ասում, թե ոչ մեկը չպետք է կորցնի աչքը, հիվանդանա ու,

Աստված գիտի ուրիշ ինչ: Բայց իմ կարծիքով բոլորը պետք է իսկական սեր ունենան, որը պետք է գոնե մինչև կյանքի վերջը տևի:

– Այո, – համաձայնեցի:

– Մեկ-մեկ ուղղակի երազում եմ, որ էս ամեն ինչն ընդհանրապես եղած չլիներ: Նկատի ունեմ քաղցկեղի էս ամբողջ պատմությունը, – նրա խոսքը դանդաղում էր. դեղն արդեն սկսել էր ազդել:

– Հա, շատ ցավալի է:

– Մի քիչ ավելի շուտ Գասն էր էստեղ: Նա էստեղ էր, երբ զարթնեցի: Էսօր դպրոց չէր գնացել, որ կողքիս լինի: Նա...– մի թեթև կողքի թեքեց գլուխը, – կարծես մի քիչ անցավ:

– Ցանվը, – հարցրի:

Նա թեթևակի գլխով արեց:

– Դե, լավ է, – ասացի: Իսկ հետո իսկական փչացածի պես իսկույն վրա տվի, – Ինչ-որ բան էիր ասում Գասի մասին:

Բայց Այզեքն արդեն չէր լսում:

Իջա ներքև, առանց ցուցափեղկերի մի փոքրիկ նվերների խանութ մտա ու հարցրի դրամարկղի հետևում, աթոռին նստած զառամյալ կամավոր աշխատողին, թե ո՞ր ծաղիկների բույրն է ամենաուժեղը:

– Բոլորն էլ նույն հոտն ունեն: Դրանք հատուկ Սուպեր բույրով են ցողում:

– Իսկապե՞ս:

– Հա, բոլորի վրա էդ նյութն են ցանում:

Բացեցի նրա ձախ կողմում գտնվող սառնարանն ու մի քանի վարդերից հոտ քաշեցի, հետո կռացա մեխակների վրա. նույն հոտն էր ու շատ ուժեղ: Մեխակներն ավելի էժան էին, ես մի դյուժին դեղին մեխակ վերցրի: Տասնչորս դոլար վճարեցի դրանց համար ու հետ գնացի Այզեքի հիվանդասենյակ: Նրա մայրն այնտեղ էր, ձեռքը բռնած նստել էր: Երիտասարդ ու շատ գեղեցիկ կին էր:

– Նրա ընկերների՞ց ես, – հարցրեց՝ իր այդ անսպասելի,

ընդհանրական ու պատասխան չունեցող հարցով շփոթության մեջ գցելով ինձ:

– Ըըմ, այո, – ասացի, – աջակցության խմբակից եմ: Սրանք նրա համար եմ բերել:

Նա վերցրեց ծաղիկները, դրեց ծնկներին:

– Դու Մոնիկային ճանաչո՞ւմ ես, – հանկարծ հարցրեց:

Բացասաբար տարուբերեցի գլուխս:

– Քնած է, – ասաց նա:

– Հա, մինչև քնելը նրա մոտ էի, մի քիչ զրուցեցինք, երբ նրա վիրակապերն էին փոխում, թե՝ մշակում, չգիտեմ:

– Չէի ուզում մենակ թողնել նրան էդ պահին, բայց պետք է Գրեհեմին վերցնեի դպրոցից:

– Իրեն շատ ուժեղ էր պահում, – վստահեցրի:

Նա գլխով արեց:

– Լավ, չխանգարեմ, թող քնի:

Կինը նորից գլխով արեց, և ես գնացի:

Հաջորդ առավոտ շուտ արթնացա ու առաջին հերթին ստուգեցի էլ. փոստս:

Վերջապես lidewij.vliegenthart@gmail.com հասցեից պատասխան էր եկել:

Հարգելի օրիորդ Լանքասթեր

Վախենամ, թե Դուք սխալ մարդու եք ընտրել վստահելու համար, թեև վստահության հարցում միշտ էլ այդպես է: Ես չեմ կարող պատասխանել Ձեր հարցերին, առնվազն՝ ոչ գրավոր, քանզի գրված պատասխաններն «Արքայական վիշտ» գրքի շարունակությունը կկազմեին, որը, հնարավոր է, հրատարակեիք կամ տարածեիք համացանցում, ինչն արդեն փոխարինել է ձեր սերնդի ուղեղներին:

Կա նաև հեռախոսի տարբերակը, բայց այդ դեպքում էլ կարող եք ձայնագրել մեր զրույցը: Ոչ թե, որ ես Ձեզ չեմ վստահում, անշուշտ, ես Ձեզ չեմ վստահում: Ավա՜ղ, սիրելի Հեյզել, այդ հարցերին կարող եմ պատասխանել միայն անձամբ, բայց Դուք այդտեղ եք, իսկ ես՝ այստեղ:

https://1915.info

Այնուահանդերձ, պետք է խոստովանեմ, որ օրիորդ Վլիգենթարթի միջոցով ստացած Ձեր անսպասելի նամակները մեծ բերկրանք պատճառեցին ինձ: Հրաշալի է իմանալը, որ Ձեզ համար ինչ-որ օգտակար բան եմ արել. թեև այդ գիրքը հիմա ինձնից այնքան հեռու է թվում, ասես թե միանգամայն ուրիշ մարդ գրած լինի (այդ վեպի հեղինակն այնքան անհամոզիչ, սահմանափակ, ունայն և անհամեմատ լավատես էր):

Ինչևէ, եթե երբևիցե լինեք Ամստերդամում, կարող եք այցելել ինձ, երբ ցանկանաք: Սովորաբար ես տանն եմ լինում: Հնարավոր է, որ նույնիսկ թույլ տամ Ձեզ մի հայացք գցեք իմ առևտրի ցուցակներին:

Հարգանքներով՝ Փիթեր վան Հաութեն

Լիդևիջ Վլիգենթարթի միջնորդությամբ»:

– Ինչ, – բարձր ճչացի, – էս ինչ բան է կյանքը:

Մայրս վախեցած ներս վազեց՝ հարցնելով.

– Ինչ է պատահել:

– Ոչինչ, – հանգստացրի նրան:

Դեռ անհանգստացած՝ մայրս կռացավ «Ֆիլիպին» ստուգելու, որ համոզվի՝ նա նորմալ է կոնդենսացնում թթվածինը: Իսկ ես ինձ պատկերացնում էի Փիթեր վան Հաութենի հետ նստած արևի լույսով ողողված սրճարանում, ու նա, արմունկները սեղանին հենած, ցածրաձայն խոսում էր, որպեսզի ուրիշ ոչ ոք հանկարծ չլսի, թե ինչ եղավ գրքի հերոսների հետ, որոնց մասին օր ու գիշեր մտածում էի այսքան տարի: Նա ասաց, որ միայն անձամբ կարող է պատմել ինձ նրանց մասին ու հրավիրեց Ամստերդամ: Ես դրա մասին պատմեցի մայրիկիս ու ասացի.

– Ես անպայման պետք է գնամ:

– Հեյզել, ես շատ եմ սիրում քեզ, ու դու գիտես, որ ամեն ինչ կանեմ քեզ համար, բայց, ախր, մենք բավականաչափ գումար չունենք միջմայրցամաքային ճամփորդության և քո բոլոր սարքավորումներն այնտեղ փոխադրելու ծախսերը հո-

գալու համար: Սիրելիս, դա ուղղակի ... ուղղակի...

– Լավ, – ընդհատեցի նրան՝ հասկանալով, որ դրա մասին մտածելն անգամ հիմարություն էր իմ կողմից, – հասկանում եմ, մի անհանգստացիր:

Բայց նա անհանգստանում էր:

– Քեզ համար դա շատ կարևոր է, հա՞, – հարցրեց՝ նստելով և ձեռքը ոտքիս դնելով:

– Դա ուղղակի հիանալի կլիներ, – ասացի, – լինել միակ մարդը՝ բացի հեղինակից, որ կիմանա, թե ինչ է լինում հետո:

– Հա, ուղղակի հիանալի կլիներ, – կրկնեց, – լավ, հայրիկիդ հետ կխոսեմ. տեսնենք ինչ կարող ենք անել:

– Ոչ, ոչ, – ասացի, – լուրջ եմ ասում, դրա վրա փող մի ծախսեք: Ես ինքս մի բան կմտածեմ:

Այդ պահին մտքովս անցավ, որ ծնողներս իմ պատճառով փող չունեին: Մեր ընտանիքի բոլոր խնայողությունները վատնվել էին իմ ֆալանքսիֆորի վրա, իսկ մայրիկն էլ չէր կարող աշխատել, քանի որ ստանձնել էր «ամբողջ օրն իմ շուրջը պտտվելու» լրիվ դրույքով աշխատանքը: Ու ես չէի ուզում էլ ավելի շատ նրանց պարտքի տակ գցել:

Մայրիկիս սենյակիցս դուրս հանելու համար ասացի, որ ուզում եմ Օգոստոսին զանգել, քանի որ էլ չէի կարող տանել նրա «ես չեմ կարող իրականացնել աղջկաս երազանքը» տխուր դեմքը:

Բարև ասելու փոխարեն՝ Օգոստոս ուոթերսյան ոճով կարդացի վան Հաութենից ստացած նամակս:

– Վա՜յ, – բացականչեց նա:

– Դու «երազանք» ունե՞ս, – հարցրեց՝ նկատի ունենալով կազմակերպությունը՝ «Հրաշագործ Ջին» հիմնադրամը, որն իրականացնում է բոլոր մահացու հիվանդ երեխաների մեկ երազանքը:

– Չէ, չունեմ, – ասացի, – ես «երազանքս» օգտագործել եմ մինչև Հրաշքը:

– Եվ ո՞րն էր «երազանքդ»:

https://1915.info

Բարձր հոգոց հանելով ասացի.

– Ես տասներեք տարեկան էի ու...

– Միայն ոչ Դիսնեյ Լենդ, – բացականչեց:

Ես ոչինչ չասացի:

– Ասա, որ դրանով Դիսնեյի աշխարհ չես գնացել:

Նորից ոչինչ չպատասխանեցի:

– Հեյզել Գրեյս, – գոչեց, – դու քո մահվան միակ «երազանքը» չես ծախսել ծնողներիդ հետ Դիսնեյ Լենդ գնալու վրա, չէ՞:

– Ու նաև «Էփքոտ կենտրոն», – մրթմրթացի:

– Աստվա՛ծ իմ, – բացականչեց Օգոստոսը, – չեմ հավատում, որ սիրահարվել եմ էդպիսի շաբլոն երազանքներով աղջկա:

– Ես ընդամենը տասներեք տարեկան էի, – կրկնեցի, չնայած այդ պահին մտքումս միայն մի բան էր՝ սիրահարվել է, սիրահարվել, սիրահարվել ... Շատ շոյված էի, բայց միանգամից փոխեցի թեման, – իսկ դու հիմա դպրոցո՞ւմ չպետք է լինես:

– Դասերս բաց եմ թողնում, որ Այզեքի մոտ լինեմ, բայց հիմա նա քնած է, ու ես հիվանդանոցի բակում աշխարհագրություն եմ սովորում:

– Այզեքն ինչպե՞ս է:

– Կամ նա դեռ պատրաստ չէ գիտակցելու իր հաշմանդամության ամբողջ լրջությունը, կամ էլ, իրոք, նրան ավելի շատ մտահոգում է, որ Մոնիկան իրեն լքել է: Չգիտեմ: Ամբողջ օրը նրա մասին է խոսում:

– Հասկանալի է, – ասացի, – իսկ ինչքա՞ն է մնալու հիվանդանոցում:

– Մի քանի օր: Հետո նրան վերականգնողական կենտրոն կտեղափոխեն, մի քիչ էլ էնտեղ կմնա, բայց երևի գիշերները տուն կգնա քնելու:

– Հա, անդուր բան է:

– Լավ, նրա մայրը եկավ, պետք է գնամ:

– Լավ, – ասացի:

– Լավ, – ասաց նա ու ես «լսեցի» նրա ծուռ ժպիտը:

Շաբաթ օրը ծնողներիս հետ գնացի Բրոադ Ռիփլի գյուղմթերքների շուկա: Արևոտ օր էր, ինչը հազվադեպ երևույթ է Ինդիանայի ապրիլ ամսվա համար: Շուկայում բոլորը կարճաթև հագուստ էին կրում, չնայած դա այնքան էլ արդարացված չէր ջերմաստիճանով: Մենք՝ ինդիանացիներս, ամռան գալու հարցում չափից դուրս լավատես ենք: Ես ու մայրս նստել էինք մի նստարանի՝ այծի կաթից օճառ վաճառող կոմբինիզոնով մարդու դիմաց, որ ստիպված էր յուրաքանչյուր մոտեցողի բացատրել, թե, այո, դրանք իր այծերն են, և ոչ թե՝ այծի կաթից պատրաստված օճառներից այծի հոտ չի գալիս:

Հեռախոսս զանգեց:

– Ո՞վ է, – դեռ չէի էլ հասցրել նայել հեռախոսահամարը, երբ մայրս հարցրեց:

– Չգիտեմ, – պատասխանեցի:

Զանգողը Գասն էր:

– Դու հիմա տա՞ն ես, – հարցրեց:

– Ըմ, չէ, – պատասխանեցի:

– Իրականում ձևական հարցրի, որովհետև պատասխանն արդեն գիտեի, քանի որ հիմա ես ձեր տան մոտ եմ:

– Ըըը, դեեե, կարծում եմ, մենք արդեն պատրաստվում ենք տուն գալ:

– Հիանալի է: Ուրեմն շուտով կհանդիպենք:

Օգոստոսը նստած էր շքամուտքի աստիճանին, երբ մենք տուն հասանք: Նրա ձեռքին նորաբողբոջ նարնջագույն վարդակակաչների փունջ էր, ֆլիսե բաճկոնի տակից Ինդիանա Փեյսերսի մարզաշապիկ էր հագել ու, թեև հագուստի այդպիսի համադրությունը լրիվ աններդաշնակ էր, նրան սազում էր: Մեզ տեսնելով՝ վեր կացավ նստած տեղից ու վարդակակաչներն ինձ տալով՝ հարցրեց.

– Ինձ հետ պիկնիկի կգա՞ս:

Ծաղիկները վերցնելով՝ գլխով արեցի:

https://1915.info

Հայրս մոտեցավ, կանգնեց իմ թիկունքում և ձեռքով բարևեց Գասին.

– Ռիք Սմիթսի մարզաշապիկն է:

– Հենց էդ է, որ կա:

– Էդ տղան դուրս շատ էր գալիս, – ասաց հայրս, և անմիջապես նրանք խորասուզվեցին բասկետբոլային զրույցի մեջ, որին չէի կարող ու չէի էլ ուզում միանալ, և ես ներս տարա իմ վարդակակաչները:

– Տուր դրանք ծաղկամանի մեջ դնեմ, – լայն ժպիտը դեմքին առաջարկեց մայրս:

– Չէ, շնորհակալ եմ, – ասացի: Եթե ծաղիկները դնեինք հյուրասենյակի ծաղկամանի մեջ, դրանք բոլորինը կդառնային, իսկ ես ուզում էի, որ այդ վարդակակաչները միայն իմը լինեին:

Գնացի իմ սենյակ, բայց շորերս չփոխեցի: Սանրեցի մազերս, շուրթերիս մի քիչ փայլ քսեցի և օծանելիքի մի փոքր կաթիլ ցանեցի: Աչքս չէի կտրում ծաղիկներից: Դրանք «ագրեսիվ» նարնջագույն էին, չափից դուրս նարնջագույն՝ գեղեցիկ լինելու համար: Իմ սենյակում ծաղկման կամ նման մի բան չունեի, այդ պատճառով խոզանակի տարայից դուրս հանեցի խոզանակս, տարան կիսով չափ լցրեցի ջրով և ծաղիկները թողեցի հենց այնտեղ՝ լոգարանում:

Երբ իմ սենյակ վերադարձա, հյուրասենյակից ականջիս ձայներ հասան: Անկողնուս եզրին նստելով՝ ննջարանիս դռան անցքից սկսեցի լսել, թե ինչ են խոսում այնտեղ:

– Ուրեմն դու և Հեյզելը աջակցության խմբակո՞ւմ եք ծանոթացել, – հորս ձայնն էր:

– Այո, պարոն: Շատ գեղեցիկ տուն ունեք: Շատ լավ նկարներ են, – ասաց Օգոստոսը:

– Շնորհակալություն, Օգոստոս, – ասաց մայրս:

– Ուրեմն, դո՞ւ էլ ես քաղցկեղի զոհերից, – հարցրեց հայրս:

– Հա, էս իմ ընկերոջը հո հաճույքիս համար չեմ կտրել, չնայած քաշ գցելու հիանալի մեթոդ է: Ոտքերը լավ ծանր են:

– Իսկ հիմա առողջությունդ ինչ վիճակում է, – շարունակեց հայրս:

– Տասնչորս ամիս՝ ԱՔՆ, – պատասխանեց Օգոստոսը:

– Հրաշալի է, – բացականչեց մայրս, – այսօրվա բուժման տարբերակների բազմազանությունն իսկապես արտակարգ բան է:

– Ըհը, բախտս բերել է, – ասաց Օգոստոսը:

Բայց հայրս շարունակեց.

– Օգոստոս, դու պետք է հասկանաս, որ Հեյզելը դեռ հիվանդ է ու մինչև կյանքի վերջը էդպես էլ կմնա: Իհարկե, նա անընդհատ փորձելու է հետ չմնալ քեզնից, բայց նրա թոքերը...

Այդ պահին ես մտա սենյակ, ու նա ստիպված էր լռել:

– Եվ ո՞ւր եք գնում, – հարցրեց մայրս:

Օգոստոսը վեր կացավ, մոտեցավ նրան, պատասխանը փսփսաց նրա ականջին, հետո մատը տանելով շուրթերին՝ ասաց.

– Շ222, դա գաղտնիք է:

Մայրս ժպտաց:

– Հեռախոսդ քեզ մո՞տ է, – հարցրեց:

Նրան ցույց տվեցի հեռախոսս, որ համոզվի՝ մոտս է, թթվածնի սայլակս թեքեցի առջևի անիվների վրա ու սկսեցի քայլել: Օգոստոսը մոտ վազեց՝ առաջարկելով իր թևը մտնել, ինչը ես ընդունեցի՝ մատներիս մեջ առնելով նրա բիցեպսները:

Դժբախտաբար, նա պնդեց, թե ինքն է վարելու մեքենան, որպեսզի անակնկալը, իրոք, անակնկալ լինի: Մինչ ահուդողով ընթանում էինք դեպի մեր նպատակակետ, ասացի.

– Մայրիկիս ուղղակի խելքահան արեցիր:

– Հա, իսկ հայրդ էլ Սմիթսի մեծ երկրպագու է, ինչը նույնպես շատ օգնեց: Կարծում ես նրանք հավանեցի՞ն ինձ:

– Իհարկե, այո: Բայց դրան ո՞վ է բանի տեղ դնում: Ուղղակի ծնողներ են, էլի:

– Նրանք քո՛ ծնողներն են, – ասաց՝ ինձ նայելով: – Ու հետո,

ես սիրում եմ, որ ինձ հավանում են: Դա նորմալ չէ՞:

– Դե, իմ համակրանքը շահելու համար առաջ վազելով իմ առջև դռներ բացելու կամ գովասանքներով ինձ ողողելու կարիք չկա:

Նա աղմուկով սեղմեց արգելակները: Ես այնքան կտրուկ և ուժեղ առաջ թռա, որ շնչառությունս արտասովոր ծանրացավ: Մտածելով առաջիկա տոմոգրաֆիայի մասին՝ սկսեցի ինքս ինձ համոզել. «Մի անհանգստացիր: Դա անօգուտ է»:

Բայց, դե, մեկ է՝ անհանգստանում էի:

Տեղից կտրուկ պոկվելով, դղրդյունով հեռացանք լուսաֆորից, հետո թեքվեցինք ձախ՝ անհամապատասխանորեն անվանված «Գրենդվյու», ինչը նշանակում է հիանալի տեսարան, թեև այդտեղից բացվում է գոլֆի խաղադաշտի տեսարանը, բայց դրանում ոչ մի հրաշալի բան չկա: Այս ուղղությամբ գնալիս միայն մի բան էր մտքիս գալիս՝ գերեզմանատուն: Օգոստոսը, ձգվելով, կենտրոնական վահանակից ծխախոտի լիքը տուփ վերցրեց, բացեց ու մի ծխախոտ հանեց:

– Դրանք երբևէ դեն նետո՞ւմ ես, – հարցրի:

– Չծխելու բազմաթիվ առավելություններից մեկն էլ էն է, որ ծխախոտները համարյա երբեք չեն վերջանում, – ասաց, – օրինակ էս մեկը մոտ մեկ տարի է մոտս է: Դրանցից մի քանիսը կոտրվում են ֆիլտրերի մոտ, բայց կարծում եմ էս մի տուփը հեշտությամբ մինչև ութսուն տարեկանս կձգի, – ծխախոտը մատների արանքում մի քիչ պահելուց հետո դրեց բերանը և ասաց, – լավ, իսկ հիմա ասա, թե Ինդիանապոլիսում ի՞նչ ոչ մի անգամ չես տեսել:

– Ըմ, վտիտ մեծահասակների:

Նա ծիծաղեց:

– Լավ, շարունակիր:

– Հըմ, լողափեր: Ընտանեկան ռեստորաններ: Տեղագրություն:

– Մեզ պակասող բաների հիանալի օրինակներ: Ու նաև՝ մշակույթ:

– Ըհը, մշակույթից մի քիչ կաղում ենք, – ասացի՝ վերջապես կռահելով, թե ուր է ինձ տանում, – թանգարանն ենք գնում:

– Կարելի է էդպես ասել:

– Օ՜, ուրեմն էն զբոսայգի է, ինչ է, էնտեղ ենք գնում:

Գասի տրամադրությունը մի փոքր ընկավ:

– Այո, էն զբոսայգի է, ինչ է, էնտեղ ենք գնում, – ասաց, – կռահեցիր, էնպես չէ՞:

– Ըմ, ի՞նչը կռահեցի:

– Հեչ, ոչ մի բան:

Թանգարանի հետևում մի այգի կար, որտեղ մի խումբ արվեստագետներ մեծ քանդակներ էին պատրաստել: Ես լսել էի այս այգու մասին, բայց երբեք այստեղ չէի եղել: Մենք անցանք թանգարանի մոտով և կայանեցինք ցատկոտող գնդակի հետագիծը պատկերող հսկայական կապույտ ու կարմիր պողպատե կամարներով բասկետբոլի դաշտի մոտ:

Մի հողաթմբի վրայով, որն Ինդիանապոլիսում բլրի տեղ է անցնում, իջանք մի բացատ, որտեղ երեխաները մագլցում էին վիթխարի կմախքի քանդակի վրայով: Ոսկորներից ամեն մեկը հասնում էր մինչև գոտկատեղս, իսկ ազդրոսկրն ինձանից երկար էր: Քանդակը նման էր երեխայի ձեռքով նկարած՝ գետնի տակից վեր խոյացող կմախքի նկարի:

Ուսս սկսեց ցավել: Ես անհանգստացա, թե քաղցկեղը տարածվել է թոքերիցս: Պատկերացրի, որ ուռուցքիս մետաստազները, սողացող չարակամ օձաձկան պես անցքեր փորելով կմախքիս մեջ, տարածվում են ոսկորներիս վրա:

– Յուփ վան Լիսհաութի «Գետնատարած ոսկորները» – ներկայացրեց Օգոստոսը:

– Կարծես թե հոլանդական անուն է:

– Նա հոլանդացի է, – ասաց Գասը, – Ռիք Սմիթսն էլ է հոլանդացի: Վարդակակաչներն էլ են հոլանդական: – Գասը կանգնեց բացատի մեջտեղում՝ ուղիղ ոսկորների դիմաց, և մեջքի պայուսակը, սկզբից մեկ ուսի, հետո էլ մյուսի

https://1915.info

վրայից իջեցնելով՝ բացեց շղթան, մեջից նարնջագույն ծածկոց հանեց, հետո՝ նարնջի հյութի շիշ և պոլիէթիլենով փաթաթված սենդվիչներ:

– Իսկ ինչո՞ւ է ամեն ինչ նարնջագույն, – հարցրի՝ չցանկանալով ժամանակից շուտ երևակայել, թե այդ ամենը տանում էր դեպի Ամստերդամ:

– Նիդերլանդների ազգային գույնն է: Դե, իհարկե, հիշում ես Օրանժի Ուիլիամին և մնացած ամեն ինչ, չէ՞:

– Նա միջնակարգ կրթության ատեստատի քննության մեջ ընդգրկված չէր, – ժպտացի՝ փորձելով զսպել հուզմունքս:

– Սենդվիչ կուզե՞ս, – հարցրեց:

– Սպասիր գուշակեմ:

– Հոլանդական պանիր և լոլիկ: Ներիր, բայց լոլիկները Մեքսիկայից են:

– Օգոստոս, դու միշտ հիասթափեցնում ես: Չէի՞ր կարող գոնե նարնջագույն լոլիկներ գտնել:

Նա ծիծաղեց, հետո քանդակի վրա խաղացող երեխաներին նայելով՝ սկսեցինք լուռ ուտել մեր սենդվիչները: Չէի կարող բռնել և ուղիղ հարցնել նրան, ու այդպես, ուղղակի նստել էի այնտեղ՝ շրջապատված հոլանդականությամբ, մի փոքր անհարմար դրության մեջ, բայց՝ հույսերով լի:

Հեռվում, ներծծված արևի անբասիր լույսով, որ այնքան հազվադեպ ու թանկարժեք երևույթ է մեր հայրենի քաղաքի համար, արհեստական ոսկորների միջով այս ու այն կողմ ցատկոտող երեխաների հռհռոցը կմախքը վերածել էր խաղահրապարակի:

– Էս քանդակի մեջ ինձ երկու բան է դուր գալիս, – ասաց Օգոստոսը՝ չվառած ծխախոտը պահելով մատների արանքում ու թփթփացնելով, ասես մոխիրն է թափում: Ապա ծխախոտը դրեց բերանն ու շարունակեց,– նախ, էս ոսկորներն իրարից հեռու են հենց էնքան, որ, երեխա լինելով, չես կարող դիմանալ դրանց վրայով ցատկելու գայթակղությանը: Այսինքն, դու պարզապես պարտավո՛ր ես

https://1915.info

կրծքավանդակի ոսկրերի վրա ցատկոտելով հասնել գանգին: Սրանից էլ հետևում է երկրորդը, որ քանդակը, ըստ էության, ստիպում է երեխաներին խաղալ ոսկորների վրա: Սիմվոլիկ ռեզոնանսներն անվերջանալի են, Հեյզել Գրեյս:

– Դու իսկապես սիմվոլիկ ռեզոնանսների սիրահար ես, – ասացի՝ հուսալով խոսակցությունը տանել հետ՝ մեր պիկնիկին առկա Նիդերլանդների խորհրդանիշների ուղղությամբ:

– Ճիշտ ես: Ու երևի հիմա դու փորձում ես հասկանալ, թե ինչու ես պանրով մի շատ վատ սենդվիչ ուտում, նարնջի հյութ խմում, ինչու եմ ես հագել մի հոլանդացու մարզաշապիկ, որ զբաղվում էր էն սպորտով, որից սկսել եմ զզվել:

– Ըհը, մտքովս անցել է նման բան:

– Հեյզել Գրեյս, շատ երեխաների նման, ու ես սա ասում եմ մեծագույն հարգանքով, դու էլ ես շտապել «երազանքիդ» հարցում՝ չմտածելով հետևանքների մասին: Մահը՝ գերանդին ձեռքին, նայում էր աչքերիդ ու «երազանքդ, ինչպես ասացվածքում է ասվում՝ դեռ գրպանդ, այսինքն՝ չիրականացրած, մահանալու վախը ստիպել է քեզ վազել դեպի մտքիդ եկած առաջին ցանկությունը: Եվ դու, շատ ու շատ մարդկանց նման, ընտրել ես թեմատիկ զբոսայգու սառն ու արհեստական հաճույքները:

– Իրականում շատ էլ լավ ժամանակ եմ անցկացրել էնտեղ: Հանդիպել եմ Գուֆիին, Միննի...

– Խնդրում եմ մենախոսությանս կեսին ինձ մի ընդհատիր: Ես սա գրի եմ առել ու անգիր արել, ու եթե ինձ ընդհատես, լրիվ կփչացնեմ,– չթողնելով խոսքս վերջացնեմ՝ ասաց Օգոստոսը:– Ուրեմն, խնդրում եմ, կերեք ձեր սենդվիչն ու լսեք ինձ:

Սենդվիչը չափից դուրս չոր էր, բայց ես ժպտացի ու հաջողացրի մի փոքր կտոր կծել:

– Լավ, որտեղ էի կանգնել:

– Արհեստական հաճույքների վրա:

Նա ծխախոտը հետ դրեց տուփի մեջ:

– Ճիշտ է, թեմատիկ զբոսայգու սառն ու արհեստական հաճույքների: Բայց թույլ տուր նշել, որ «Երազանքների գործարանի» իսկական հերոսներն էն տղաներն ու աղջիկներն են, որոնք սպասում են, ինչպես Վլադիմիրն ու Էստրագոնն են սպասում Գոդոյին, իսկ բարեպաշտ քրիստոնյա աղջիկները՝ իրենց ամուսնությանը: Էս երիտասարդ հերոսները համառորեն և առանց բողոքելու սպասում են իրենց միակ իսկական «երազանքի» ի հայտ գալուն: Իհարկե, հնարավոր է դրան երբեք չհասնեն էլ, բայց գոնե հանգիստ կհանգչեն գերեզմանում՝ իմանալով, որ իրենց համեստ ներդրումն են ունեցել «երազանք» գաղափարն անաղարտ պահելու մեջ:

Միևնույն ժամանակ, միգուցե օրերից մի օր, իրոք, ի հայտ կգա դա: Եվ միգուցե, դու հասկանաս, որ քո միակ իսկական երազանքը հանձարեղ Փիթեր վան Հաութենին իր ամստերդամյան աքսորում այցելելն է, և շատ ուրախ կլինես, որ խնայել ես «երազանքդ»:

Օգոստոսը բավականին երկար ժամանակով դադար տվեց, և ես ենթադրեցի, թե նա արդեն ավարտել է իր մոնոլոգը, ու ասացի.

– Բայց ես չեմ պահել երազանքս:

– Էհ, – հոգոց հանեց ու որոշ ժամանակ հետո, որը մի քանի անգամ փորձած դադարի տպավորություն թողեց, ավելացրեց, – իսկ ես իմը պահել եմ:

– Իսկապե՞ս, – զարմացա՝ իմանալով, որ Օգոստոսը, դեռ դպրոց հաճախելով և մի տարի ռեմիսիոն շրջանում գտնվելով հանդերձ, նույնպես «երազանքի» իրավունք էր ստացել: Ջինները միայն շատ ծանր հիվանդներին են երազանքի իրականացման հնարավորություն ընձեռում:

– Ոտքիս համար եմ ստացել, – բացատրեց:

Նրա դեմքին լույս էր ընկել, ստիպված էր ինձ նայելիս աչքերը կկոցել, ինչից քիթը հաճելի կնճռոտվում էր:

– Դե, ես, իհարկե, չեմ պատրաստվում իմ «երազանքը» քեզ նվիրել: Բայց ինձ նույնպես հետաքրքիր է հանդիպել Փի-

https://1915.info

թեր վան Հաութենին, ու կարծում եմ անիմաստ կլիներ հանդիպել նրան առանց աղջկա, որ ինձ ծանոթացրել է նրա գրքի հետ:

– Ըհը, լրիվ անիմաստ կլիներ, – ասացի:

– Էսպիսով, խոսեցի Ջինների հետ: Նրանք համաձայնեցին: Ինձ ասացին, որ Ամստերդամը շատ գեղեցիկ է մայիսի սկզբին, և առաջարկեցին մեկնել էնտեղ մայիսի երեքին ու վերադառնալ յոթին:

– Լո՞ւրջ ես ասում, Օգոստո՛ս:

Առաջ հակվելով՝ ձեռքը հպեց այտիս, ու մի պահ ինձ թվաց, թե համբուրելու է: Ամբողջ մարմնով լարվեցի: Նա, զգալով դա, հետ քաշեց ձեռքը:

– Պետք չէ ինձ համար նման բան անել, Օգոստո՛ս: Իրոք, դրա կարիքը չկա:

– Իհարկե կա, – ասաց, – ես վերջապես գտել եմ իմ «երազանքը»:

– Աստվա՛ծ իմ, դու հրաշք ես, – բացականչեցի:

– Գրազ կգամ, քո միջմայրցամաքային ճանապարհորդությունները ֆինանսավորող բոլոր տղաներին էս նույն բանն ես ասում:

https://1915.info

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Երբ տուն եկա, մայրս, լվացած հագուստեղենս ծալելով, հեռուստացույցով «Հայացք» կոչվող հեռուստաշոուն էր դիտում: Ես նրան ասացի, որ վարդակակաչները, հոլանդացի քանդակագործը և մնացած ամեն ինչը նշանակում էր, որ Օգոստոսն օգտագործում է իր «երազանքը»՝ ինձ Ամստերդամ տանելու համար:

– Բայց դա շատ մեծ բան է, – տարուբերելով գլուխը՝ ասաց մայրս, – մենք չենք կարող էդպիսի նվեր ընդունել փաստացի անծանոթից:

– Նա անծանոթ չէ, մա: Նա, անկասկած, իմ երկրորդ ամենալավ ընկերն է:

– Քեյթլինից հետո:

– Քեզնից հետո: – Ու դա ճիշտ էր, թեև ավելի շատ այդպես ասացի, քանի որ շատ էի ուզում գնալ Ամստերդամ:

– Լավ, բայց պետք է բժիշկ Մարիային հարցնենք, – մի պահ մտածելուց հետո ասաց մայրս:

...

Բժիշկ Մարիան ասաց, որ չեմ կարող Ամստերդամ գնալ առանց իմ հիվանդությանը լավ, մոտիկից ծանոթ մեծահասակի ուղեկցության, ինչը նշանակում էր՝ կամ մայրս, կամ բժիշկ Մարիան ինքը պետք է ուղեկցեր ինձ: Հայրս իմ քաղցկեղից հասկանում էր նույնքան, որքան ես՝ աղոտ ու թերի, ինչպիսիք են սովորական մարդկանց գիտելիքները

էլեկտրական շղթաների կամ օվկիանոսի մակընթացության ու տեղատվության վերաբերյալ: Իսկ մայրս դեռահասների մոտ հաղիպող վահանաձև գեղձի տարբերակված կարցինոմայի[1] մասին ավելի շատ բան գիտեր, քան շատ ուռուցքաբաններ:

– Ուրեմն դու ինձ հետ կգաս, – ասացի մայրիկիս, – Ջիները կվճարեն: Ջիները շատ փող ունեն:

– Բայց հայրդ, – առարկեց, – կկարոտի մեզ: Դա արդար չի լինի նրա նկատմամբ, հիմա նա չի կարող աշխատանքից արձակուրդ վերցնել:

– Լռիր ես ասում: Չե՞ս կարծում, որ հայրիկը շատ ուրախ կլինի մի քանի օր անցկացնել՝ նայելով փառասեր մոդելներին չվերաբերող հեռուստաշոուներ, ամեն գիշեր պիցցա պատվիրելով և ափսեների փոխարեն թղթե սրբիչներ օգտագործելով, որ հետո ստիպված չլինի դրանք լվանալ:

Մայրիկը ծիծաղեց: Վերջապես նա էլ ոգևորվեց ճամփորդությամբ ու սկսեց հեռախոսի մեջ գրանցել իր անելիքները: Պետք է զանգեր Գասի ծնողներին, հետո խոսեր Ջիների հետ իմ բժշկական կարիքների մասին, հարցներ, թե արդյոք արդեն պատվիրե՞լ են հյուրանոցը, որո՞նք են ամենալավ տուրիստական ուղեցույցները, և քանի որ ընդամենը երեք օր ունեինք, պետք էր նախօրոք մի լավ հետազոտություն անել: Իմ գլուխը թեթևակի ցավում էր, ցավազրկող խմեցի և որոշեցի մի քիչ քնել:

Բայց երբ անկողին մտա, քնելու փոխարեն սկսեցի մտքումս անընդհատ վերարտադրել Օգոստոսի հետ անցկացրած պիկնիկը: Շարունակ մտածում էի այն կարճ պահի մասին, երբ լարվեցի Օգոստոսի հպումից: Չգիտես ինչու, թվում էր, թե այդ քնքուշ մտերմության մեջ ինչ-որ բան այն չէ, ինչ-որ բան սխալ է: Մտածեցի, որ միգուցե դա նրանից է, որ պիկնիկի ամեն մի մանրուք նախօրոք ծրագրավորված էր: Օգոստոսը հիանալի էր իրեն պահում, բայց ամեն ինչ շատ էր չափազանցրել. սենդվիչները, որ փոխաբերական երանգ ունեին, բայց ահավոր համ, ու նաև անգիր արած մոնոլոգը,

1 Չարորակ ուռուցք

որ խանգարում էր բնական զրույցին: Այդ ամենը ռոմանտիկ էր թվում, բայց ռոմանտիկ չէր:

Ճիշտն ասած, երբեք չէի ուզել, որ նա համբուրի ինձ, ոչ այնպես, ինչպես սովորաբար ուզում են նման բաները: Նկատի ունեմ, որ նա հիասքանչ տղա էր, և ես նրանով հրապուրված էի: Ու, ինչպես ասում են դպրոցականները, հենց *էն ձևով* էի համակրում նրան: Բայց իրական, գիտակցված հպումը... չգիտեմ, այս ամենը շատ սխալ էր թվում:

Իսկ հետո ինձ բռնացրի այն մտքի վրա, որ Ամստերդամ գնալու համար ստիպված եմ լինելու համբուրվել նրա հետ, ինչը բոլորովին հաճելի միտք չէր, որովհետև.

ա) Անգամ այնպիսի հարց, թե արդյո՞ք ուզում եմ նրան համբուրել, չպետք է ծագեր ինձ մոտ:

բ) Անվճար ճանապարհորդության համար ինչ-որ մեկին համբուրելը վտանգավոր կերպով մոտ է իսկական մարմնավաճառությանը, ու պետք է խոստովանեմ, որ թեև ինձ առանձնապես լավ մարդ չեմ համարում, բայց երբեք մտքովս չի անցել, թե իմ առաջին իսկական սեռական գործողությունը մարմնավաճառական բնույթի կարող է լինել:

Բայց միևնույն ժամանակ նա չէր էլ փորձել համբուրել ինձ, ուղղակի դիպել էր դեմքիս, ինչը նույնիսկ սեռական գործողություն էլ չէ: Դա ինձ մոտ ցանկություն առաջացնելու նպատակով արված շարժում չէր, այլ հատուկ ծրագրված գործողություն, քանի որ Օգոստոսն իմպրովիզատոր չէր: Բայց ի՞նչ էր ցանկանում հաղորդել ինձ դրանով: Եվ ինչո՞ւ ես չցանկացա ընդունել դա:

Մի պահ ինձ թվաց, թե Քեյթլինի պես եմ վերլուծում մեր հանդիպումը ու որոշեցի հաղորդագրությամբ խորհուրդ հարցնել Քեյթլինից: Հաղորդագրությունն ստանալով՝ նա անմիջապես զանգեց ինձ:

– Մի տղայի հետ կապված հարցեր ունեմ, – ասացի:

– Սքանչելի է, լսում եմ – պատասխանեց Քեյթլինը:

Ես ամեն ինչ պատմեցի նրան, նույնիսկ նրա ձեռքը դեմքիս հպելու անհարմար պահը՝ չասելով միայն Ամստերդամի մա-

սին և Օգոստոսի անունը:

– Նա իսկապես հմայիչ է, – հարցրեց Քեյթլինը, երբ ավարտեցի պատմությունս:

– Շատ, – պատասխանեցի:

– Աթլետիկ է:

– Ըհը, ժամանակին բասկետբոլ է խաղացել Նորթ Սենթրալում:

– Օ՜, իսկ որտեղ եք հանդիպել:

– Էն ահավոր աջակցության խմբակում:

– Հըմ, իսկ ... ուղղակի հետաքրքիր է, էդ տղան քանի՞ ոտք ունի:

– Մեկ ամբողջ չորս տասնորդական, – ասացի՝ ժպտալով:

Բասկետբոլիստները շատ հայտնի են Ինդիանայում, և չնայած Քեյթլինը երբեք չէր գնացել Նորթ Սենթրալ, բայց նրա հասարակական կապերն անթիվ, անսահման էին:

– Օգոստոս Ուոթերսն է, – հարցրեց:

– Ըը՞, երևի ...

– Օ, Աստված իմ, նրան տեսել եմ խնջույքների ժամանակ: Ինչեր կանեի էդ տղայի հետ: Դե, իհարկե, ոչ հիմա, երբ գիտեմ, որ դու հետաքրքրված ես նրանով: Բայց, ազնիվ խոսք, էդ մի ոտանի ձիուկին մեծ հաճույքով կհեծնեի:

– Քեյթլի՛ն, – սաստեցի:

– Կներես, երևի վերևինը դու պետք է լինես, ոչ թե ես:

– Քեյթլի՛ն:

– Լավ, ինչի՞ մասին էինք խոսում: Հա, դու և Օգոստոս Ուոթերսը: Միգուցե քեզ տղաները չեն հետաքրքրում:

– Չէ, չեմ կարծում: Նկատի ունեմ՝ նա ինձ հաստատ դուր է գալիս:

– Նրա ձեռքերը տգեղ են: Երբեմն գեղեցիկ մարդիկ տգեղ ձեռքեր են ունենում:

– Չէ, հիանալի ձեռքեր ունի:

–Հը՞մմ, – ասաց:

–Հը՞մմ, – կրկնեցի ես:

Մի վայրկյան հետո Քեյթլինն ասաց.

– Հիշո՞ւմ ես Դերեքին: Անցած շաբաթ նա լքեց ինձ, որովհետև որոշել էր, թե հոգու խորքում մենք իրար լրիվ անհամապատասխան ենք ու եթե շարունակենք մեր հարաբերությունները՝ էլ ավելի կցավեցնենք իրար: Նա դա «կանխարգելիչ բաժանում» է անվանում: Ու միգուցե քեզ մոտ էլ կա էդպիսի նախազգացում, որ դուք իրար անհամապատասխան եք և դու փորձում ես կանխել կանխագուշակությունդ:

– Եսիմ, – ասացի:

– Ես ուղղակի բարձրաձայն մտածում եմ:

– Ցավում եմ Դերեքի համար:

– Օ՛հ, ես արդեն հաղթահարել եմ դա, թանկագինս: «Աղջիկ սկաուտների» անանուխով թխվածքաբլիթներն օգնեցին ինձ քառասուն րոպեում մոռանալ էդ տղային:

– Լավ, շնորհակալություն, Քեյթլին, – ասացի ծիծաղելով:

– Բայց եթե հանկարծ կապվես հետը, պետք է անպայման իմանամ անպարկեշտ մանրամասները:

– Անպայմա՛ն, – խոստացա, հետո Քեյթլինը հեռախոսի մեջ համբույրի ձայն հանեց:

Ես ցտեսություն ասացի, ու նա անջատեց հեռախոսը:

...

Քեյթլինին լսելով հասկացա՝ ոչ թե նախազգացում, այլ «հետզգացում» ունեի, որ ցավ եմ պատճառելու Օգոստոսին:

Միացրի լեփթոփս ու սկսեցի փնտրել Քերոլայն Մեթերսին: Արտաքին նմանություններն ապշեցուցիչ էին. նույն փքված դեմքը, նույն քիթը ու մարմնի մոտավորապես նույն կառուցվածքը: Բայց նրա աչքերը մուգ շագանակագույն էին, իմը կանաչ են, իսկ մաշկի գույնն ավելի մուգ էր՝ իտալացու կամ նման մի ազգի ներկայացուցչի պես:

Հազարավոր մարդիկ, բառացիորեն հազարավոր մարդիկ, ցավակցական հաղորդագրություններ էին թողել: Մարդկանց մի անվերջանալի ցուցակ կարոտում էր նրան: Նրանք այնքան շատ էին, որ մի ժամ տևեց մինչև առաջ

https://1915.info
անցա նրա էջի պատին տեղադրած «Քո մահն ինձ համար մեծ ցավ է» ու «Ես աղոթում եմ քեզ համար» գրառումներից: Նա մահացել էր մեկ տարի առաջ, գլխուղեղի քաղցկեղից: Ես մի քանի նկար գտա... Օգոստոսն ավելի վաղ տեղադրված նկարներում էր՝ բթամատերով մատնացույց անելիս աղջկա սափրած գլխի վրայի անհարթ սպին, իրար թևանցուկ արած Մեմորիալի խաղահրապարակում՝ մեջքով դեպի տեսախցիկը, համբուրվելիս, որի ժամանակ տեսախցիկն այնպես էին պահել, որ միայն նրանց քթերն ու փակ աչքերն էին երևում:

Ավելի թարմ նկարները մահից հետո ընկերների տեղադրած նրա նախկին՝ դեռ առողջ ժամանակների նկարներն էին: Լայն կոնքերով, կլորավուն կազմվածքով, երեսի վրա թափվող երկար, ուղիղ ու սև մազերով գեղեցիկ աղջիկ էր: Իմ առողջ «ես»ն այնքան էլ նման չէր նրա առողջ «ես»ին: Բայց մեր քաղցկեղով հիվանդ «ես»երը» կարծես քույրեր լինեին: Ու հիմա հասկանալի է, թե ինչու էր այդքան ուշադիր նայում, երբ առաջին անգամ տեսավ ինձ:

Ես անընդհատ վերադառնում էի մի ընկերոջ կողմից երկու ամիս առաջ, Քերոլայնի մահից ինը ամիս հետո, նրա պատին արված գրառմանը.

«Մենք՝ բոլորս, քեզ շատ ենք կարոտում: Ու սա կարծես վերջ չունենա: Կարծես բոլորս վիրավորվել ենք քաղցկեղի դեմ մղած քո մարտում, Քերոլայն: Կարոտում եմ քեզ: Սիրում եմ քեզ»:

Քիչ հետո, մայրիկն ու հայրիկը հայտարարեցին, որ ընթրիքի ժամն է: Անջատեցի համակարգիչը, վեր կացա տեղիցս, բայց այդ գրառումը մտքիցս դուրս չէր գալիս, և, չգիտես ինչու, դա կարդալով՝ նյարդային լարված վիճակում էի հայտնվել, ախորժակ էլ չունեի:

Անընդհատ մտածում էի ցավող ուսիս մասին, գլուխս էլ էր դեռ ցավում, բայց միգուցե դա նրանից էր, որ քիչ առաջ գլխուղեղի քաղցկեղից մահացած աղջկա մասին էի մտածում: Շարունակ ինքս ինձ համոզում էի տարանջատել

մտքերս, մտքերով լինել այստեղ՝ մեր կլոր, թերևս երեք, ու առավել ևս՝ երկու հոգու համար չափից մեծ տրամագծով սեղանի շուրջ՝ վրան բրոկոլիով ջրալի ուտեստ ու սև լոբով բուրգեր, որն աշխարհի ոչ մի կետչուպ չի կարող բավականաչափ թրջել: Ինքս ինձ ասացի, որ ուղեղումս կամ ուսիս մեջ մետաստազ պատկերացնելը ոչ մի կերպ չէր ազդելու ներսումս կատարվող երևույթների վրա: Հետևաբար բոլոր այդ մտքերը, ըստ սահմանման, սահմանափակ ու սպառվելիք պահերից բաղկացած կյանքի անիմաստ վատնած պահեր են: Ու ես նույնիսկ փորձեցի ինքս ինձ համոզել՝ *ապրել այսօրվա օրով:*

Երկար ժամանակ չէի կարողանում հասկանալ, թե ինչու էր համացանցով մի ինչ-որ անծանոթի գրառումը մի ուրիշին՝ մահացած մի անծանոթի, այդքան անհանգստացնում ինձ ու ստիպում մտածել, թե իմ ուղեղում ինչ-որ բան կա, որը, սակայն, իսկապես ցավում էր, թեև տարիների փորձից գիտեի, որ ցավն աղոտ և անստույգ ախտորոշման գործիք է:

Քանի որ այդ օրը Պապուա Նոր Գվինեայում երկրաշարժ տեղի չէր ունեցել, ծնողներս հիպերկենտրոնացած էին ինձ վրա, ու ես չէի կարող թաքցնել հանկարծակի վրաս թափված անհանգստության հեղեղը:

– Ամեն ինչ կարգի՞ն է, – հարցրեց մայրս:

– Ըհը, – ասացի՝ բուրգերիցս կծելով: Կուլ տվեցի, հետո փորձեցի ասել մի բան, որ կասեր նորմալ մարդը, ում ուղեղը տվյալ պահին հեղեղված չէր տագնապով, – բուրգերի մեջ բրոկոլի կա՞:

– Մի քիչ կա, – ասաց հայրս: – Ուրախ ես, չէ՞, որ Ամստերդամ ես գնալու:

– Ըհը, – ասացի՝ փորձելով չմտածել «վիրավորված» բառի մասին, որն, ըստ էության, նույնպես դրա մասին մտածել է:

– Հեյզե՛լ, – ասաց մայրս, – մտքերով ո՞ւր ես գնացել:

– Հեչ, ուղղակի մտածում էի:

– Մեր փոքրիկ նապաստակը սիրահարվել է, – ժպտալով ասաց հայրս:

https://1915.info

https://1915.info

– Ես նապաստակ չեմ ու ոչ էլ սիրահարված եմ Օգոստոս Ուոթերսին կամ ինչ-որ մեկին, – ագրեսիվ պատասխանեցի:

«Վիրավորված». ասես Քերոլայն Մեթերսը ռումբ էր եղել ու երբ պայթել էր, նրա շուրջը եղած բոլոր մարդիկ խոցվել էին շրապնելով:

Հայրս հարցրեց, թե քոլեջի վաղվա դասի համար ինչ-որ բան ունեի անելու:

– Շատ բարդ տնային աշխատանք ունեմ բարձրագույն հանրահաշվից: Շատ բարդ է, ամեն մեկի խելքի բանը չէ, – ասացի:

– Իսկ էն ընկերդ՝ Այզեքը, ինչպես է:

– Կույր, – պատասխանեցի:

– Էսօր քեզ իսկական դեռահասի պես ես պահում, – վրդովված ասաց մայրս:

– Իսկ միթե դու դա չէիր ուզում, մա: Դու չէիր ասում, որ ինձ դեռահասի պես պահեմ:

– Բայց ոչ պարտադիր էսպիսի դեռահասի պես, և, իհարկե, ինձ ու հորդ շատ է ուրախացնում, որ դու արդեն մեծ աղջիկ ես դարձել, նոր ընկերներ ես ձեռք բերում, ժամադրությունների ես գնում:

– Ես ժամադրությունների չեմ գնում ու չեմ էլ ուզում գնալ: Դա սարսափելի միտք է և ժամանակի անիմաստ կորուստ և ...

– Ի՞նչ է պատահել, սիրելիս, – անհանգստացավ մայրս:

– Ես կարծես... կարծես նռնակ լինեմ, մա՛: Ես նռնակ եմ ու մի օր պայթելու եմ: Եվ ուզում եմ նվազագույնի հասցնել պատահական զոհերի թիվը, հասկանալի՞ է:

Հայրս, նկատողություն ստացող շնիկի պես, գլուխը թեթևակի մի կողմի վրա թեքեց:

– Ես նռնակ եմ, – կրկնեցի, – և ուղղակի ուզում եմ հեռու մնալ մարդկանցից, գրքեր կարդալ, մտածել ու լինել ձեզ հետ, քանի որ ձեր դեպքում ցավն անխուսափելի է, և ես ոչինչ չեմ կարող անել դա կանխելու համար: Դուք չափից շատ եք ներգրավված էս ամեն ինչում: Ուրեմն խնդրում եմ՝ թույլ տվեք անեմ, ինչ ուզում եմ, լա՛վ: Ես դեպրեսիայի մեջ

չեմ: Ու էլ չեմ ուզում տնից դուրս գալ, շփվել մարդկանց հետ: Ես չեմ կարող սովորական դեռահաս լինել, քանի որ նոնակ եմ:

– Հեյզել, – ասաց հայրս, բայց արցունքները խեղդեցին կոկորդը, ու նա չկարողացավ շարունակել:

Հայրս շատ էր լալիս:

– Գնում եմ իմ սենյակ, մի քիչ կարդամ, լավ: Ես ինձ լավ եմ զգում, իսկապես, լավ եմ: Ուղղակի ուզում եմ մի քիչ կարդալ:

Եվ այսպես, սենյակումս նստած փորձում էի կարդալ ինձ հանձնարարված վեպը, բայց մեր տան պատերը ցավալիորեն շատ բարակ էին, ու թեև ծնողներս շշուկով էին խոսում, նրանց խոսակցության մեծ մասը հասնում էր ականջիս:

Հայրս ասում էր.

«Դա ուղղակի սպանում է ինձ»:

«Ա՛յ դա նա ոչ մի դեպքում չպետք է լսի», – ասում էր մայրս:

Հայրս էլ պատասխանում էր.

«Ներիր, բայց...»:

«Դու պետք է շնորհակալ լինես», – ասում էր մայրս:

«Ստված իմ, իհարկե շնորհակալ եմ», – ասում էր հայրս:

Անընդհատ փորձում էի կենտրոնանալ վեպի վրա, բայց չէի կարողանում չլսելու տալ նրանց շշուկները:

Ու ես որոշեցի միացնել համակարգիչս ու երաժշտություն լսել: Եվ Օգոստոսի սիրելի «The Hectic Glow» խմբի երաժշտության ուղեկցությամբ սկսեցի նորից նայել Քերոլայն Մեթերսին նվիրված էջերը՝ կարդալով, թե որքան հերոսաբար էր նա պայքարել, թե ինչքան էին նրան կարոտում, և որ հիմա նա ավելի լավ վայրում էր ու միշտ ապրելու էր նրանց սրտերում, և որ նրա կորուստն ուղղակի տապալել, ոչնչացրել էր բոլորին, ովքեր նրան ճանաչում էին:

Միգուցե ենթադրվում էր, որ պետք է ատեի Քերոլայնին՝ Օգոստոսի հետ լինելու համար, բայց ոչ մի նման բան չէի զգում նրա հանդեպ: Նրա հասցեին ասված խոսքերից հստակ պատկերացում չէի կարող կազմել, թե ինչպիսին էր եղել, բայց կարծես թե ատելու ոչ մի մեծ պատճառ չկար: Նա էլ

https://1915.info

ինձ նման պրոֆեսիոնալ հիվանդ էր եղել, ինչը ինձ ստիպեց անհանգստանալ, որ երբ մահանամ, իմ մասին բացի նրանից, որ հերոսաբար պայքարել եմ քաղցկեղի դեմ, ասելու ուրիշ ոչինչ չեն ունենալու. ասես այս կյանքում ընդամենը մեկ բան եմ արել՝ հիվանդացել եմ քաղցկեղով:

Ինչևէ, վերջապես հասա Քերոլայն Մեթերսի փոքրիկ գրառումներին, որոնք իրականում մեծ մասամբ նրա ծնողներն էին գրել, քանի որ, ենթադրում եմ, նրա մոտ գլխուղեղի քաղցկեղի այնպիսի տեսակներից էր, որի ընթացքում դու այլևս դու չես լինում, մինչև վերջիվերջո զրկվում ես կյանքից:

Գրառումները հիմնականում հետևյալ բնույթի էին.

«Քերոլայնի մոտ դեռ շարունակվում են վարքագծի խանգարումները: Խոսել չկարողանալու արդյունքում շատ բարկացկոտ ու նյարդային է դարձել (մեզ էլ է դա նյարդայնացնում, բայց, բնականաբար, մենք ավելի հասարակայնորեն ընդունված ձևերով ենք հաղթահարում մեր բարկությունը): Գասը նրան «Կործանիչ Հալկ» է անվանում, ինչը մեծ արձագանք է ստացել բժիշկների շրջանում: Ոչ մեկիս համար էլ բնավ հեշտ չէ, բայց կատակելուց բացի մեզ ուրիշ բան չի մնում: Հուսով ենք, հինգշաբթի տուն կգնանք: Ամեն դեպքում տեղյակ կպահենք...»:

Կարծում եմ, հարկ չկա ասելու, որ նա տուն չգնաց հինգշաբթի օրը:

Ահա թե ինչու լարվեցի, երբ Օգոստոսը դիպավ ինձ: Նրա հետ լինել նշանակում էր անխուսափելիորեն ցավ պատճառել նրան: Հենց սա էի զգացել, երբ նա դիպավ ինձ, ասես բռնություն գործադրեի նրա նկատմամբ, և իրականում այդպես էլ կար:

Որոշեցի հաղորդագրություն գրել նրան՝ խուսափելով դեմառդեմ խոսակցությունից:

«Բարև: Ուրեմն էսպես: Հնարավոր է՝ չհասկանաս սա, բայց ես չեմ կարող համբուրել քեզ: Դե, չեմ ասում, որ դու ուզում ես դա անել, միգուցե նման բան մտքովդ էլ չի անցել, ինչևէ, ես չեմ կարող:

Երբ փորձում եմ էդ ձևով նայել քեզ, միանգամից պատկերացնում եմ, թե ինչերի միջով ես ստիպված լինելու անցնել իմ պատճառով: Միգուցե սա քո կարծիքով անմտություն է, ինչևէ, կներես»:

Մի քանի րոպե հետո պատասխանեց.

«Լավ»:

«Լավ», – ես էլ գրեցի:

Ու նա պատասխանեց.

«Աստված իմ, վերջ տուր սիրախաղիդ»:

Նորից գրեցի.

«Լավ»:

Մի քանի րոպե հետո հեռախոսս դզզաց.

«Կատակ էի անում, Հեյզել Գրեյս: Հասկանում եմ քեզ: (Բայց դե երկուսս էլ գիտենք, որ «լավը» սիրախաղային բառ է: «Լավ» բառը լի է կրքով)»:

Մի պահ ուզում էի տրվել գայթակղությանը և նորից գրել «լավ», բայց նրան իմ թաղմանը պատկերացնելն օգնեց ինձ, որ ճիշտ պատասխան գրեմ:

«Կներես»:

...

Փորձեցի ականջակալներն ականջներիս քնել, բայց քիչ հետո հայրս ու մայրս մտան ներս: Մայրս գիրկն առավ Կապուտակին, իսկ հայրս նստեց գրասեղանի մոտ ու առանց լացելու ասաց.

– Դու նռնակ չես, համենայն դեպս ոչ մեզ համար: Քո մահվան մասին մտքերը տխրեցնում են մեզ, բայց դու նռնակ չես: Դու հիանալի մարդ ես: Դու դա չգիտես, քանի որ չես ունեցել երեխա, որը դարձել է խելացի երիտասարդ ընթերցասեր աղջիկ՝ ահավոր հեռուստաշոուների նկատմամբ կողմնակի հետաքրքրությամբ: Եվ ուրախությունը, որ պարգևում ես մեզ, շատ ավելին է, քան հիվանդությանդ պատճառած տխրությունը:

– Լավ, – ասացի:

– Ճիշտ եմ ասում, Հեյզել, – շարունակեց հայրս, – ես չէի համարձակվի խաբել քեզ էս հարցում: Եթե մեզ համար դու միայն հոգս լինեիր և ոչ մի արժեք չունենայիր, քեզ ուղղակի դուրս կշպրտեինք ու հանգիստ կապրեինք:

– Մենք սենտիմենտալ մարդիկ չենք, – դեմքի սառը արտահայտությամբ ասաց մայրս, – գիշերազգեստիդ վրա գրություն կամրացնեինք ու կթողնեինք որբանոցի դռների մոտ:

Ես ծիծաղեցի:

– Մենք քեզ չենք ստիպի աջակցության խմբակ գնալ, – շարունակեց մայրս, – կարող ես, բացի դպրոց գնալուց, ընդհանրապես ոչ մի բան չանել:

Նա ինձ մեկնեց արջուկը:

– Կարծում եմ, Կապուտակը կարող է իր համար հանգիստ քնել դարակում, – ասացի, – հիշեցնեմ, որ ես արդեն ավելի քան «երեսուներեք ու կես» տարեկան եմ:

– Էս գիշեր թող քեզ մոտ մնա, – ասաց մայրս:

– Մա՛մ, – փորձեցի առարկել:

– Նա շա՛տ միայնակ է:

– Օ՛հ, Աստված իմ, մա՛մ, – ասացի, բայց ի վերջո վերցրի հիմար Կապուտակին ու նրան փաթաթվելով՝ քնեցի:

Փաստորեն, մի ձեռքով դեռ գրկած էի Կապուտակին, երբ առավոտյան ժամը չորսին արթնացա գլխիս անհասանելի խորքերից եկող ապոկալիպտիկ ցավից:

https://1915.info

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Ձչացի, որ ծնողներիս արթնացնեմ: Նրանք արագ ներս վազեցին սենյակ, բայց ոչինչ չէին կարող անել ուղեղումս գերնոր աստղի պայթյունը, ներգանգային հրե ճայթյունների անվերջանալի շղթան մեղմելու համար: Ես արդեն մտածում էի, թե մեկընդմիշտ հեռանում եմ և, ինչպես նախկինում, ինքս ինձ անընդհատ կրկնում էի, թե մարմինն անջատվում է, երբ ցավը չափից անտանելի է դառնում, որ գիտակցությունը ժամանակավոր է, և սա շուտով կանցնի: Բայց, ինչպես միշտ, ուշքս չգնաց: Մնացել էի ծովափին, ծփացող ալիքների տակ՝ չկարողանալով վերջնականապես ջրահեղձ լինել:

Հայրս մեքենան վարելիս հեռախոսով խոսում էր հիվանդանոցի աշխատակցի հետ, իսկ ես, գլուխս դրած մայրիկիս գոգին, պառկած էի հետևի նստատեղին: Ոչինչ չէի կարող անել: Ճչալն էլ ավելի էր վատացնում վիճակս: Իրականում յուրաքանչյուր արտաքին ու ներքին ազդակ ավելի էր վատացնում վիճակս:

Միակ լուծումը աշխարհը ջնջելն էր, նորից դարձնել խավար, լուռ ու անմարդաբնակ, վերադառնալ «մեծ պայթյունին» նախորդող ժամանակները՝ սկիզբ, երբ Բանն էր, և Բանի հետ միայնակ ապրել այդ դատարկ, չստեղծված տարածության մեջ:

Մարդիկ շատ են խոսում քաղցկեղով հիվանդների քաջության մասին, ես չեմ ժխտում դա: Ինձ տարիներով ծակել էին,

դանակի տակ պառկեցրել, թունավորել, բայց շարունակում էի առաջ ընթանալ: Սակայն վստահեցնում եմ, շատ-շատ երջանիկ կլինեի, եթե այս պահին մահանայի:

Արթնացա վերակենդանացման բաժանմունքում: Հասկացա, որ այնտեղ եմ, որովհետև առանձին հիվանդասենյակում չէի, դրան գումարած՝ շուրջբոլորս սարքերի ծնգծնգոց էր լսվում, ու նաև մենակ էի: Մանկական հիվանդանոցում ինֆեկցիայից խուսափելու նպատակով ընտանիքի անդամներին չի թույլատրվում օրը քսանչորս ժամ հիվանդի հետ մնալ վերակենդանացման բաժանմունքում: Միջանցքից լացուկոծ լսվեց. ինչ-որ մեկի երեխան մահացել էր: Ես ինձ միայնակ էի զգում: Սեղմեցի կանչի կարմիր կոճակը:

Մի քանի վայրկյան հետո ներս մտավ բուժքույրը:

– Բարև, – ասացի:

– Բարև, Հեյզել: Ես Էլիսոնն եմ՝ քո բուժքույրը, – ասաց նա:

– Բարև, իմ բուժքույր Էլիսոն, – ասացի ու այդ պահին նորից ինձ շատ հոգնած զգացի:

Հետո կրկին որոշ ժամանակով արթնացա, երբ արդեն ծնողներս ինձ մոտ էին՝ լացելով ու դեմքս անընդհատ համբուրելով: Զգվեցի դեպի ծնողներս ու փորձեցի գրկել նրանց, բայց գրկախառնվելիս ամեն տեղս ցավում էր: Հետո հայրս ու մայրս ասացին, որ գլխուղեղումս ուռուցք չկա, գլխացավիս պատճառը թերօքսիգենացումն էր, որն առաջացել էր թոքերիս մեջ մեծ քանակությամբ՝ մեկ ու կես լիտր, հեղուկ հավաքվելուց, ինչը, սակայն, բարեհաջող դուրս էին բերել կրծքավանդակիցս, և հնարավոր է՝ մի փոքր անհարմարություն զգայի կողիս շրջանում, որտեղ, «հապա մի նայի՛ր» խողովակ է, որ կրծքավանդակիցս իջնելով միանում է պոլիէթիլենե պարկին, ինչը կիսով չափ լցված էր հայրիկիս սիրելի սաթագույն գարեջրին շատ նման հեղուկով: Մայրս ասաց, որ ես շուտով տուն եմ գնալու: Իսկապես գնալու եմ: Ուղղակի ժամանակ առ ժամանակ հեղուկը պետք է հեռացվի թոքերիցս, ու պետք է վերադառնամ ԵՕՍ-ին՝ երկաստիճան օդափոխման գիշերային սարքին, որն օդը

https://1915.info

դուրս ու ներս է մղում իմ անպիտան թոքերից: Նաև ասացին, որ հիվանդանոցում հայտնվելուս առաջին գիշերն ամբողջ մարմինս տոմոգրաֆիա են արել, ու լավ նորություն՝ ուռուցքները չեն մեծացել, նորերն էլ չեն հայտնվել: Իսկ ուսիս ցավը թերօքսիգենացման ցավն էր՝ սրտի չափից ուժեղ աշխատելու արդյունքում առաջացած ցավը:

– Բժիշկ Մարիան էսօր առավոտյան ասաց, որ լավատեսորեն է տրամադրված, – ասաց հայրս:

Ինձ դուր էր գալիս բժիշկ Մարիան: Նա երբեք չէր խաբում, դրա համար նրանից այդպիսի խոսքեր լսելը շատ հաճելի էր:

– Մի անհանգստացիր, Հեյզել, – ասաց մայրս, – շուտով կհամակերպվենք սրան:

Ես գլխով արեցի, իսկ հետո իմ բուժքույր Էլիսոնը քաղաքավարի ձևով դուրս հանեց նրանց: Հետո հարցրեց, թե «սառույցի տաշեղներ» ուզո՞ւմ եմ, ես գլխով արեցի, ու նա նստեց մահճակալիս եզրին և սկսեց գդալով կերակրել ինձ:

– Ուրեմն էսպես, մի քանի օր անգիտակից վիճակում էիր, – ասաց Էլիսոնը, – հը՛մմ, և ի՞նչ ես բաց թողել: Ախ հա, հայտնիներից մեկը թմրանյութ էր օգտագործել: Քաղաքական գործիչները տարաձայնությունների մեջ են: Հայտնիներից մեկ ուրիշը մի լողազգեստ էր հագել, որ արտացոլում էր նրա մարմնի թերությունները: Սպորտային խաղերից մեկում մի թիմը հաղթեց մյուսին:

Ես ժպտացի:

– Չի կարելի էս ամեն ինչը հենց էնպես թողնել ու անհետանալ, Հեյզե՛լ: Էնքան բան ես բաց թողնում էդպես:

– Մի քիչ էլ, – ասացի՝ գլխով ցույց տալով նրա ձեռքի սպիտակ պենոպլաստե բաժակը:

– Էլ չի կարելի, – ասաց, – բայց ես ըմբոստ եմ, – ու մի գդալ էլ մանրացրած սառույց տվեց:

– Շնորհակալություն, – արտաբերեցի դժվարությամբ:

«Փառք Աստծուն՝ լավ բուժքույրերի համար»:

– Հոգնե՞լ ես, – հարցրեց:

Գլխով արեցի:

– Լավ, մի քիչ քնիր, – ասաց, – կաշխատեմ մի քանի ժամ ոչ ոքի ներս չթողնել, որ հանգիստ քնես, մինչև գան՝ ջերմությունդ, արյան ճնշումդ և նման այլ բաներ չափելու:

Ես նորից շնորհակալություն հայտնեցի: Հիվանդանոցներում բավականին շատ ես շնորհակալություն հայտնում: Ու երբ փորձում էի հարմար տեղավորվել անկողնու մեջ, բուժքույրը հարցրեց.

– Իսկ չե՞ս ուզում ընկերոջիցդ հարցնել:

– Ես ընկեր չունեմ:

– Բայց քո էստեղ հայտնվելու օրվանից մի տղա սպասասարահի դռներից էն կողմ չի գնում:

– Նա ինձ հո էս վիճակում չի՞ տեսել:

– Չէ, միայն ծնողներդ են մտել էստեղ:

Ես թեթևացած գլխով արեցի ու ընկղմվեցի ջրային քնի մեջ:

Ինձ միայն վեց օրից էին հիվանդանոցից տուն թողնելու, վեց պարապության օր՝ ամբողջ ժամանակ ձայնամեկուսիչ առաստաղի հախճասալերին աչքերս հառելով, կամ հեռուստացույց դիտելով, կամ էլ քնելով և ցավերի մեջ երազելով, որ ժամանակն արագ անցնի: Օգոստոսին ու, ընդհանրապես ծնողներիցս բացի, ուրիշ ոչ մեկին չէի տեսնում: Մազերս ծտի բույն էին դարձել, մտավոր հետամնացի պես քստքստացնելով էի քայլում: Բայց և այնպես, օրեցօր քիչ-քիչ ավելի լավ էի զգում ինձ: Ամեն անգամ քնից ավելի ինձ նման էի արթնանում:

– Քունը շատ լավ միջոց է քաղցկեղի դեմ, – արդեն հազարերորդ անգամ կրկնեց ինձ բուժող բժիշկ Ջիմը, երբ մի առավոտ, բժշկական ֆակուլտետի ուսանողներով շրջապատված, պտտվում էր շուրջս:

– Ուրեմն ես քաղցկեղի դեմ պայքարող մի մեծ սարք եմ, – ասացի:

– Ճիշտ էդպես, Հեյզել: Շարունակիր հանգստանալ, և հուսանք, որ շուտով տուն կվերադառնաս:

Երեքշաբթի ինձ ասացին, որ չորեքշաբթի տուն եմ գնալու: Չորեքշաբթի բժշկական ֆակուլտետի երկու ուսա-

https://1915.info

նող, նվազագույն վերահսկողության տակ, կրծքավանդակից հանեցին խողովակը: Այդ գործընթացը շատ նման էր հակառակ ուղղությամբ դանակահարվելուն, որը, ընդհանուր առմամբ, այնքան էլ լավ չընթացավ, և որոշվեց, որ ես պետք է հիվանդանոցում մնամ մինչև հինգշաբթի: Արդեն սկսում էի մտածել, թե ինչ-որ էքզիստենցիալիստական գիտափորձի սուբյեկտ եմ, որի վարձատրությունը մշտապես ձգձգվում է, երբ ուրբաթ առավոտյան եկավ բժիշկ Մարիան, մի քանի վայրկյան զննեց ինձ և ասաց, որ արդեն կարող եմ տուն գնալ:

Երբ մայրս բացեց իր շատ մեծ պայուսակը, պարզ դարձավ, որ նա այս ամբողջ ժամանակ հետը տանում-բերում էր իմ տուն գնալու հագուստը: Մի բուժքույր եկավ ու հանեց ներերակային կաթոցիկը: Ես ինձ կապանքներից ազատված զգացի, չնայած նորից պետք է հետս քարշ տայի թթվածնի բալոնը: Գնացի լոգարան, շաբաթվա մեջ առաջին անգամ ցնցուղ ընդունեցի, հագնվեցի ու երբ դուրս եկա, ինձ այնքան հոգնած զգացի, որ ստիպված էի մի քիչ պառկել, շունչ քաշել: Մայրս հարցրեց.

– Ուզո՞ւմ ես Օգոստոսին տեսնել:

– Երևի, – պատասխանեցի մեկ րոպե դադարից հետո: Վեր կացա, քստքստացնելով մոտեցա պատի մոտ դրված պլաստմասսե աթոռներից մեկին, բալոնս մտցրի դրա տակը ու, լրիվ ուժասպառ, փլվեցի աթոռին:

Մի քանի րոպե անց հայրս ներս մտավ Օգոստոսի հետ: Նրա մազերը խառնված էին, ճակատի վրա ընկած: Ինձ տեսնելով՝ Օգոստոսի դեմքին շողաց իսկական Օգոստոս ուոթերսյան հիմարավուն ժպիտը, ու ես էլ ակամայից ժպտացի նրան: Նա նստեց իմ աթոռի կողքին դրված կապույտ դերմատինե ետ ծալովի բազկաթոռին ու թեքվեց իմ կողմ. թվում էր՝ անկարող է զսպել ժպիտը:

Մայրս ու հայրս մեզ մենակ թողեցին, ինչից անհարմար դրություն ստեղծվեց: Ինքս ինձ մի կերպ ստիպեցի նայել նրա աչքերի մեջ, թեև դրանք այն չափից դուրս գեղեցիկ աչքերից էին, որոնց շատ դժվար է նայելը:

– Կարոտել էի քեզ, – ասաց Օգոստոսը:

Ինձ համար անցանկալիորեն բարակ ձայնով ասացի.

– Շնորհակալ եմ, որ չես փորձել տեսնել ինձ, երբ սարսափելի տեսք ունեի:

– Անկեղծ ասած, դու հիմա էլ մի լավ տեսքի չես:

Ծիծաղեցի:

– Ես էլ քեզ էի կարոտել: Ուղղակի չեմ ուզում, որ դու տեսնես... էս ամեն ինչը: Ուղղակի ուզում եմ, որ ... դե... լավ, կարևոր չէ: Միշտ չէ, որ մարդ ստանում է էն, ինչ ուզում է:

– Լռուրջ, ես էլ կարծում էի աշխարհը երազանքներ իրականացնող գործարան է, – ասաց:

– Դե, ուրեմն սա էդ դեպքը չէ:

Նա այնքան գեղեցիկ էր: Ուզում էր ձեռքս բռնել, բայց ես տարուբերեցի գլուխս ու ցածրաձայն ասացի.

– Ոչ: Եթե շարունակելու ենք շփվել, մեր հարաբերություններն էսպիսի ընթացք չպետք է ստանան:

– Լավ, – ասաց, – ի դեպ, երազանքների իրականացման ճակատից երկու՝ լավ ու վատ, նորություններ կան:

– Ճվ ...

– Վատ նորությունն էն է, որ ակնհայտորեն չենք կարող Ամստերդամ գնալ, մինչև չլավանաս: Բայց երբ քեզ ավելի լավ զգաս, Ջինները, այնուամենայնիվ, կիրագործեն իրենց հռչակավոր հրաշքը:

– Դա՞ էր լավ նորությունը:

– Չէ, լավ նորությունն էն է, որ մինչ դու քնած էիր, Փիթեր վան Հաութենը մի փոքր էլ է մեզ հետ կիսվել իր մտքի գոհարներով:

Նա նորից ձեռքը մոտեցրեց ձեռքիս, բայց այս անգամ «Թոշակի անցած վաստակավոր վիպագիր Փիթեր վան Հաութեն» դրոշմագրով ծալծլված թուղթը ձեռքիս մեջ դնելու նպատակով:

Նամակը բացեցի երբ տուն հասա, տեղավորվեցի իմ հսկայական ու դատարկ անկողնում՝ բացառելով բժշկական անձնակազմի կողմից ընդհատվելու յուրաքանչյուր

https://1915.info

https://1915.info

հնարավորություն: Վան Հաութենի թեք, խուճուճ ձեռագրի վերծանումը ինձանից մի հավերժություն խլեց.

«Հարգելի պարոն Ուոթերս

Ստանալով ապրիլի տասնչորսին ուղարկված Ձեր էլեկտրոնային նամակը՝ բավականին ազդվեցի շեքսպիրյան բարդության ձեր ողբերգությամբ: Այս պատմության մեջ յուրաքանչյուրն անշրջելի համարթիա ունի. աղջիկն այդքան հիվանդ է, իսկ Դուք՝ այդքան առողջ: Եթե նա լիներ ավելի առողջ կամ Դուք՝ ավելի հիվանդ, աստղերը ձեզ այդքան չէին խանգարի, չնայած խանգարելն աստղերի բնույթն է: Ու երբեք Շեքսպիրն այնքան չէր սխալվել, որքան Կասսիոսի շուրթերով ասելով. «Մեղավորը, սիրելի Բրուտոս, մեր աստղերը չեն, այլ մենք՝ ինքներս»: Շատ հեշտ է նման բան ասելը, երբ դու հռոմեացի ազնվական ես կամ առավել ևս՝ Շեքսպիր, բայց մեր աստղերի մեջ մեղքի պակաս չի զգացվում:

Քանի քննարկում ենք ծերուկ Վիլի թերությունները, նշեմ, որ Ձեր գրությունը օրիորդ Հեյզելի մասին, ինձ հիշեցրեց բանաստեղծի հիսունհինգերորդ սոնետը, որն այսպես է սկսվում.

«Միապետերի ոչ մարմարակերտ, ոչ էլ ոսկեզօծ հուշարձանները չեն կարող ապրել այս հզոր երգից առավել երկար:

Բայց քո անունը ավելի վառ կպահեն իմ այս տողերը, քան լիրբ ժամանակի փոշու տակ անցած որևէ մի քար»:

Թեմայից դուրս, բայց, իրոք, անպատկառ լիրբ է ժամանակը, որ տիրանում է մեզ բոլորիս: Սա հիանալի բանաստեղծություն է, բայց՝ ստապատիր: Մենք, անշուշտ, հիշում ենք Շեքսպիրի հզոր երգը, բայց ինչ ենք հիշում այն անձնավորությունից, որին ձոնված է այս բանաստեղծությունը: Ոչինչ: Կարող ենք վստահ ասել, որ նա արական սեռի ներկայացուցիչ էր, բայց մնացած ամեն ինչի մասին մեզ մնում է սոսկ ենթադրություններ անել: Շեքսպիրը շատ քիչ բան է ասում մարդու մասին, որին թաղել է իր լեզվաբանական սարկոֆագում: (Նկատենք նաև, որ գրականության մասին միշտ ներկա ժամանակով ենք խոսում, մինչդեռ մահացածների նկատմամբ այդչափ բարեսիրտ չենք): Մահացածների

մասին գրելով՝ չես անմահացնում նրանց: Լեզուն թաղում է, բայց հարություն չի տալիս: (Գաղտնիքը բացելով՝ ասեմ, որ առաջինը ես չեմ արել այս դիտարկումը, համեմատել Մաքլիշի «Ոչ մարմարե, ոչ էլ ոսկեզօծ հուշարձանները» բանաստեղծության հետևյալ հերոսական տողը. «Իսկ ես կասեմ, որ դու կմեռնես, ու ոչ ոք էլ չի հիշելու քեզ»):

Մի փոքր շեղվեցի: Մի խոսքով, սա է ասածս. մահացածները տեսանելի են միայն հիշողության սոսկալի անթարթ աչքերին: Ապրողները, փառք Աստծու, պահպանում են զարմացնելու և հիասթափեցնելու ունակությունը: Ձեր Հեյզելը ողջ է, պարոն Ուոթերս, և չարժե, որ Ձեր կամքը թելադրեք, հակառակվեք նրա այդքան կշռադատված, շրջահայացորեն ընդունած որոշմանը, հատկապես, եթե նա դրան հանգել է կարեկցանքից ելնելով: Նա ցանկանում է ազատել Ձեզ տառապանքից, և Դուք պետք է թույլ տաք անել դա: Գուցե օրիորդ Հեյզելի տրամաբանությունն այնքան էլ համոզիչ չէ Ձեզ համար, բայց ես Ձեզնից երկար եմ քայլել արցունքների այդ հովտում, և իմ տեսանկյունից նա չէ խենթը:

Սիրով՝ Փիթեր վան Հաութեն»:

Դա, իրոք, նա էր գրել: Մատս լիզելով՝ թեթևակի հպեցի թղթին, և թանաքը մի քիչ լղոզվեց: Համոզվեցի, որ նամակը, իսկապես, իրական էր:

– Մա՛, – կանչեցի, թեև ոչ շատ բարձր, բայց դրա կարիքը չկար էլ, քանի որ նա միշտ սպասում էր իմ կանչին:

Շուտով գլուխը դռնից ներս մտցրեց ու հարցրեց.

– Լա՞վ ես, քաղցրիկս:

– Կարո՞ղ ես զանգել բժիշկ Մարիային ու հարցնել, արդյոք միջմայրցամաքային թռիչքը վտանգավո՞ր է կյանքիս համար:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Մի քանի օր հետո Քաղցկեղի խմբի մի մեծ ժողով հրավիրվեց: Ժամանակ առ ժամանակ մի խումբ բժիշկներ, սոցաշխատողներ, ֆիզիոթերապևտներ ու էլ ով ասես հավաքվում էին խորհրդակցությունների մեծ սեղանի շուրջ և քննարկում իմ վիճակը (ոչ թե Օգոստոս Ուոթերսի կամ Ամստերդամի, այլ քաղցկեղի հետ կապված իմ առողջական վիճակը):

Ժողովը բժիշկ Մարիան էր վարում: Երբ ներս մտա, նա գրկեց ինձ: Բժիշկ Մարիան գրկախառնությունների սիրահար էր:

Ես, կարծես թե, ինձ ավելի լավ էի զգում: Ամբողջ գիշերը ԵՕՍ-ով քնելուց հետո թոքերս համարյա նորմալ էին թվում, չնայած, արդեն չէի էլ հիշում, թե նորմալ թոքերը որն են:

Բոլորը հավաքվեցին, ցուցադրաբար անջատելով իրենց փեյջերները և մնացած ամեն ինչ, որպեսզի ուշադրության կենտրոնում միայն ես լինեմ: Հետո բժիշկ Մարիան ասաց.

– Ուրեմն այսպես, ֆալանքսիֆորն ուրախալիորեն շարունակում է կանխարգելել ուռուցքների աճը, բայց հեղուկի հավաքվելու հետ կապված ակնհայտորեն դեռ լուրջ խնդիրներ կան: Եվ այսպիսով, սա է հարցը. ինչպիսի՞ն պետք է լինի բուժման հետագա ընթացքը:

Այս ասելով՝ նա նայեց ինձ, ասես պատասխանի էր սպասում:

– Դեմ, – ասացի, – կարծում եմ՝ այդ հարցին պատասխա-

նելու համար էս սենյակի ամենահարմար մարդը չեմ:

Բժիշկ Մարիան ժպտալով ասաց.

– Ճիշտ ես, ես բժիշկ Սիմոնսի պատասխանին եմ սպասում: Ինչ կասեք, բժիշկ Սիմոնս:

Բժիշկ Սիմոնսը քաղցկեղի մեկ այլ տեսակով զբաղվող բժիշկ էր:

– Այլ հիվանդների փորձից գիտենք, որ ուռուցքների մեծ մասը, չնայած ֆալանքսիֆորի ընդունմանը, ի վերջո զարգանալու մի եղանակ գտնում են, բայց եթե սա այդ դեպքը լիներ, մենք ուլտրաձայնային և այլ հետազոտությունների արդյունքում կնկատեինք ուռուցքների աճ, ինչը չենք տեսնում: Ուրեմն սա դեռ այդ դեպքը չէ:

«Դեռ», – մտքումս կրկնեցի:

Բժիշկ Սիմոնսը, ցուցամատը սեղանին թխկթխկացնելով, շարունակեց.

– Տվյալ պարագայում հակված եմ այն մտքին, որ ֆալանքսիֆորը, միգուցե, նպաստում է այտուցմանը, բայց մենք ավելի լուրջ խնդիրների առաջ կկանգնենք, եթե դադարեցնեք դեղամիջոցի ընդունումը:

Բժիշկ Մարիան ավելացրեց.

– Ֆալանքսիֆորի երկարաժամկետ օգտագործման հետևանքները լավ ուսումնասիրված չեն: Շատ քչերն են քեզ պես երկար օգտագործել այդ դեղը:

– Ուրեմն ոչ մի բան չե՞նք անելու:

– Շարունակելու ենք բուժման նախկին կուրսը, – հայտնեց բժիշկ Մարիան, – բայց նաև պետք է ինչ-որ բան ձեռնարկենք հեղուկի կուտակումը կանխելու համար:

Այս ամենից մի տեսակ սիրտս սկսեց խառնել, ու ինձ թվաց, թե ուր որ է իսկապես հետ եմ տալու: Ես ընդհանրապես ատում էի Քաղցկեղի խմբի ժողովները, բայց այս մեկը հատկապես զզվելի էր:

– Քո քաղցկեղը չի անհետանում, Հեյզել, բայց մեր պրակտիկայում եղել են մարդիկ, որ ուռուցքի ներթափանցման

նման մակարդակով բավականին երկար են ապրել:

Էլ չհարցրի, թե այդ ինչքանն է բավականին երկար համարվում, նախկինում մեկ անգամ արդեն գործել էի այդ սխալը:

– Գիտեմ, վերակենդանացման բաժանմունքից հենց նոր դուրս եկած լինելով, միգուցե չհավատաս սրան, բայց այդ հեղուկը, գոնե ներկա պահին, վերահսկելի է:

– Իսկ հնարավոր չէ՞ թոքերի փոխպատվաստում կամ նման մի բան անել, – հարցրի:

Բժիշկ Մարիայի շուրթերը սեղմվեցին իրար.

– Ցավոք, փոխպատվաստման համար դու այնքան էլ հարմար թեկնածու չես:

Դե, իհարկե, անիմաստ է առողջ թոքերը վատնել անհուսալի դեպքի վրա: Գլխով արեցի՝ փորձելով ցույց չտալ, որ այդ խոսքերը ցավ պատճառեցին ինձ: Հայրս սկսեց ցածրաձայն արտասվել: Ես չնայեցի նրա կողմը, բայց երկար ժամանակ ոչ ոք ոչինչ չէր խոսում, սենյակում միայն նրա սնքրտոցն էր լսվում:

Անտանելի էր գիտակցել, որ ակամայից ցավ եմ պատճառում նրան: Առավել հաճախ դա մտքիցս թռչում էր, բայց սա էր դաժան իրականությունը. միգուցե և ծնողներս ուրախ էին, որ ես կայի նրանց կյանքում, բայց միևնույն է, ես էի նրանց տառապանքի ալֆան և օմեգան:

«Հրաշքից» առաջ, երբ ես վերակենդանացման բաժանմունքում էի ու թվում էր, թե ուր որ է մահանալու եմ, և մայրս հանգստացնում էր ինձ՝ ասելով, թե ոչինչ, եթե էլ ուժ չունեմ, կարող եմ հանձնվել, ու ես փորձում էի հանձնվել, բայց թոքերս շարունակ օդ էին փնտրում, նա, հորս կրծքին հեկեկալով, ասաց մի բան, որ կուզենայի երբեք լսած չլինել, և, հուսով եմ, նա երբեք չի իմանա, որ դա լսել եմ: Նա ասաց. «Ես էլ մայրիկ չեմ լինելու»: Ու այդ խոսքերն ուղղակի կոտրեցին սիրտս:

Ժողովի ընթացքում ամբողջ ժամանակ դրա մասին էի

մտածում: Գլխիցս չէի կարողանում հանել այդ խոսքերը, ու թե ինչպես նա դրանք ասաց. ասես էլ երբեք նախկին նորմալ կյանքին չի վերադառնալու, ու երևի հենց այդպես էլ լինելու է:

Ինչևէ, վերջիվերջո որոշեցին ամեն ինչ նույնը թողնել, միայն թե ավելի հաճախ դրենաժ անել: Վերջում հարցրի, թե կարո՞ղ եմ Ամստերդամ գնալ, որի վրա բժիշկ Սիմոնսը պարզապես ծիծաղեց, բայց բժիշկ Մարիան ասաց.

– Իսկ ինչո՞ւ ոչ:

– Ինչու ո՞չ, – տարակուսեց բժիշկ Սիմոնսը:

– Այո, ոչ մի խանգարող պատճառ չեմ տեսնում, – ասաց բժիշկ Մարիան, – ի վերջո ինքնաթիռում էլ թթվածին կա:

– Իսկ երկաստիճան օդափոխման սարքը՞, ինչպե՞ս են դա տանելու, անցկացնելո՞ւ են մաքսային անցակետով:

– Այո, կամ էլ մեկ ուրիշը նրան այնտեղ կսպասի:

– Ֆալանքսիֆորով բուժվող խոստումնալից արդյունքներ գրանցած միակ հիվանդին թույլ տալ ութժամյա թռիչք կատարել նրա հիվանդության դեպքին մոտիկից ծանոթ միակ բժիշկներից հեռու՝ դա ուղղակի աղետ է:

Բժիշկ Մարիան թոթվեց ուսերը:

– Միգուցե և դա մի քիչ ռիսկային է, – ընդունեց, բայց շրջվելով իմ կողմը՝ ասաց, – բայց, դե, ի վերջո դա քո՛ կյանքն է:

Բայց դա այդքան էլ այդպես չէր: Մեքենայով տուն գնալիս ծնողներս որոշեցին, որ ես Ամստերդամ չեմ գնա, մինչև բժիշկները չհաստատեն, որ դա ապահով է:

•••

Այդ գիշեր, ընթրիքից հետո, զանգահարեց Օգոստոսը: Ես արդեն պառկել էի քնելու: Վերջին դեպքերից հետո ընթրելով անմիջապես պառկում էի քնելու՝ շրջապատված բարձերի մի մեծ կույտով, Կապուտակը՝ կողքիս, լեփթոփը՝ գոգիս:

Հեռախոսը վերցնելով՝ ասացի.

– Վատ նորություն ունեմ:

– Գրո՛ղը տանի, ի՞նչ է եղել, – հարցրեց:

– Ամստերդամ գնալ չեմ կարող: Բժիշկներիցս մեկը կարծում է, որ դա շատ վատ միտք է:

Որոշ ժամանակ լռելուց հետո ասաց.

– Աստված իմ, պետք է ինքս վճարեի ճանապարհորդության համար ու հենց «Գետնատարած ոսկորների» մոտից քեզ ուղիղ Ամստերդամ տանեի:

– Բայց էդ դեպքում, հավանաբար, Ամստերդամում մահացու ելքով թերօքսիգենացում կունենայի, և մարմինս ինքնաթիռի բեռնախցիկով հետ կուղարկեին տուն, – ասացի:

– Դե, բայց մինչև դա իմ հիանալի ռոմանտիկ արարքը վերջապես կստիպեր քեզ ինձ հետ անկողին մտնել:

Ուժեղ ծիծաղեցի, այնքան ուժեղ, որ կրծքավանդակիս մեջ տեղադրված խողովակի հետքը իրեն զգացնել տվեց:

– Ծիծաղում ես, որովհետև դա ճիշտ է, չէ՞:

Ու ես նորից ծիծաղեցի:

– Ճիշտ եմ ասում, չէ՞:

– Երևի չէ, – ասացի, բայց մի վայրկյան հետո ավելացրի, – չնայած, ով գիտե, միգուցե և...

Խեղճ-խեղճ հառաչեց:

– Ես հաստատ կույս եմ մեռնելու, – ասաց:

– Դու կո՞ւյս ես, – զարմացա:

– Հեյզել Գրեյս, – ասաց, – մոտդ թուղթ ու գրիչ կա՞:

Ասացի, որ կա:

– Լավ, ուրեմն մի շրջան գծիր:

Արեցի, ինչ նա ասաց:

– Իսկ հիմա էդ շրջանի մեջ ավելի փոքր շրջան գծիր:

Դա էլ գծեցի:

– Մեծ շրջանը կույսերն են: Իսկ փոքրը՝ միոտանի տասնյոթ տարեկան տղաները:

Ես նորից ծիծաղեցի և ասացի, որ դրան գումարած, եթե

քո սոցիալական շփումը սահմանափակվում է միայն մանկական հիվանդանոցով, ընդհանրապես սեռական ակտիվության հույս չկա: Հետո մենք խոսեցինք վան Հաութենի ապշելիորեն դիպուկ ու փայլուն դիտարկումը ժամանակի անպատկառ լիրբ լինելու վերաբերյալ ու, չնայած ես պառկած էի իմ անկողնում, իսկ նա իր նկուղային ննջարանում էր, այնպիսի զգացողություն էր, ասես նորից հայտնված լինեինք այն երրորդ աննյութական տարածության մեջ: Այս վայրը նրա հետ միասին այցելելն ինձ, իսկապես, շատ էր դուր գալիս:

Հետո իրար հրաժեշտ տվեցինք, ու անջատեցի հեռախոսը: Քիչ անց մայրս ու հայրս ներս մտան, չնայած մահճակալս երեքիս համար փոքր էր, նրանք երկու կողմերից պառկեցին կողքիս, ու մենք իմ սենյակի հեռուստացույցով սկսեցինք դիտել «Ամերիկայի հաջորդ թոփ մոդելը» հեռուստաշոուն: Սելենա անունով մասնակիցը, որին չէի սիրում, դուրս մնաց շոուից, ինչն ինձ շատ ուրախացրեց: Հետո մայրս ինձ միացրեց ԵՕՍ-ին, կարգի բերեց անկողինս ու վրաս գցեց վերմակս: Հայրս, չսափրած դեմքով ծակծկելով, համբուրեց ճակատս, և ես փակեցի աչքերս:

ԵՕՍ-ն ամբողջությամբ կառավարում էր իմ շնչառությունը, ինչը բավականին նյարդայնացնող էր, բայց ինձ շատ էին դուր գալիս դրա հանած ձայները. ներշնչելիս ղռղռում էր, իսկ արտաշնչելիս ֆսսում: Կարծես ինձ հետ միաժամանակ շնչող վիշապ լիներ, ասես իմ սեփական ընտանի վիշապն ունենայի, որ ամեն գիշեր պառկում էր կողքիս, զգվում ինձ ու այնքան էր սիրում ինձ, որ իր շնչառությունը համաձայնեցնում էր իմի հետ: Այդպես, դրա մասին մտածելով՝ քուն մտա:

Հաջորդ առավոտ ուշ արթնացա: Անկողնում պառկած հեռուստացույց նայեցի, հետո ստուգեցի էլ. փոստս և սկսեցի էլեկտրոնային նամակ ստեղծագործել Փիթեր վան Հաութենին՝ ասելով, թե, ցավոք, Ամստերդամ գալ չեմ կարող, բայց երդվում եմ մորս անունով, որ գրքի հերոսների մասին ստացած ինֆորմացիայով երբեք ոչ մեկի հետ չեմ կիսվի ու

նույնիսկ նման ցանկություն էլ չունեմ, որովհետև ահավոր եսասեր անձնավորություն եմ, և շատ-շատ եմ խնդրում նրան պարզապես ասել, թե Վարդակակաչ Մարդն ազնիվ մարդ է, թե՞ խաբեբա, Աննայի մայրը վերջիվերջո ամուսնանո՞ւմ է նրա հետ, թե՞ ոչ ու նաև մի քիչ տեղեկություն գերմանամուկ Սիզիֆոսի մասին:

Բայց չուղարկեցի նամակը: Շատ պաթետիկ էր ստացվել, նույնիսկ ինձ համար:

Ժամը երեքի կողմերը, մտածելով, որ Օգոստոսն արդեն դպրոցից տուն եկած կլինի, դուրս եկա ետնաբակ ու զանգեցի նրան: Մինչ զանգը գնում էր, նստեցի անխնամ, չափից շատ երկարած ու խատուտիկներով լի խոտածածկի վրա: Ճոճանակը դեռ այնտեղ էր: Երեխա ժամանակ ավելի բարձր ճոճվելու համար ոտքիս անընդհատ հրումից գետնի վրա առաջացած փոսիկի միջից մոլախոտեր էին աճել: Հիշեցի, թե ինչպես հայրս խաղալիքների խանութից բերեց ճոճանակ պատրաստելու հավաքածուն և հարևանի հետ ետնաբակում հավաքեց այն: Վերջացնելով՝ հայրս պնդեց, որ ամրությունը ստուգելու համար առաջինն ինքը ճոճվի, և նրա ծանրությունից ճոճանակը քիչ էր մնում կոտրվեր:

Երկինքը մռայլ էր, ամպամած և անձրևոտ, չնայած դեռ չէր անձրևում: Անջատեցի հեռախոսս, երբ միացավ Օգոստոսի ինքնապատասխանիչը: Հետո հեռախոսը դրեցի կողքիս ու աչքերս հառելով ճոճանակին՝ մտածեցի, որ պատրաստ էի հրաժարվել ինձ մնացած բոլոր-բոլոր հիվանդ ապրելու օրերից՝ մի քանի առողջ օր անցկացնելու դիմաց: Հետո փորձեցի ինքս ինձ համոզել, թե կարող էր և ավելի վատ լինել, որ կյանքը երազանքներն իրականացնող գործարան չէ, և որ ես դեռ ապրում էի քաղցկեղով, ոչ թե արդեն մահանում դրանից, ու չպետք է թույլ տայի նրան սպանել ինձ, մինչև իսկապես դա կաներ: Հետո սկսեցի նորից ու նորից կրկնել. «Հիմար, հիմար, հիմար, հիմար, հիմար, հիմար, հիմար», մինչև ինչյունն առանձնացավ, վերացավ իմաստից: Ու

ես դեռ կրկնում էի այդ բառը, երբ Օգոստոսը հետ զանգեց:

– Բարև, – ասացի:

– Հեյզել Գրեյս, – ասաց:

– Բարև, – կրկնեցի:

– Լա՞ց ես լինում, Հեյզել Գրեյս:

– Ըհը:

– Ինչո՞ւ:

– Որովհետև ուզում եմ Ամստերդամ գնալ, որ նա ինձ ասի, թե հետո ինչ է լինում գրքի հերոսների հետ, ու զզվել եմ, էլ էսպիսի կյանքով չեմ ուզում ապրել, էս մռայլ երկինքը ճնշում է ինձ, մեկ էլ՝ էս հին ճոճանակը, որ հայրս է պատրաստել ինձ համար, երբ դեռ փոքր էի:

– Հենց հիմա պետք է տեսնեմ էդ արցունքաբեր հին ճոճանակը: Քսան րոպեից էդտեղ կլինեմ:

Մնացի ետնաբակում, որովհետև մայրս, ինձ լացելիս տեսնելով, շատ էր հուզվում և անհանգստանում, քանի որ ես հազվադեպ էի լաց լինում: Գիտեի, որ հիմա ինձ տեսնելով՝ նա կուզենար խոսել, քննարկել, թե գուցե արժի փոփոխել դեղորայքի չափաբաժինը և այլն, և այլն, և այդ խոսակցության մասին մտքից անգամ սիրտս խառնում էր:

Այնպես չէր, որ «ավելի բարձր, ավելի բարձր» գոչող, առողջ դստերը ճոճող առողջ հայրիկի մասին հուզիչ ու պայծառ հիշողություններն էին տանջում կամ էլ նման փոխաբերական ռեզոնանս ունեցող պահ էր ինձ մոտ: Ուղղակի ճոճանակը, միայնակ ու լքված, կանգնած էր այնտեղ, երկու, փոքրիկ ճոճվող նստատեղերն անշարժ ու տխուր կախված էին խունացած տախտակից, իսկ դրանց ուրվագիծն ասես երեխայի նկարած ժպիտ լիներ:

Հետևում, սահելով բացվող ապակե դռան ձայնը լսելով՝ ետ շրջվեցի: Օգոստոսն էր՝ հագին խակի տաբատ ու վերևի կոճակն արձակած կարճաթև վանդակավոր վերնաշապիկ: Թևքով սրբեցի դեմքս, ժպտալով բարևեցի:

Շուրջ մի քանի վայրկյան փորձում էր նստել կողքիս,

գետնի վրա: Վերջապես անհաջող վայրեջք կատարելով՝ ծամածռեց դեմքն ու նոր բարևեց:

Նայեցի նրա կողմը, բայց նա նայում էր ուղիղ դիմացը՝ հայացքը հառած ինչ-որ մի կետի:

– Լրիվ հասկանում եմ քեզ, – ասաց՝ թևը ուսիս դնելով, – սա շատ տխուր, գրողի տարած ճոճանակ է:

Գլխով հրելով նրա ուսը՝ ասացի.

– Շնորհակալ եմ, որ եկար:

– Հասկացիր վերջապես, որ, ինձ քեզնից հեռու պահելով, իմ համակրանքը քո հանդեպ չի քչանալու:

– Դեեե՜...

– Ինձ փրկելու քո բոլոր ջանքերն իզուր են, – շարունակեց:

– Բայց ինչո՞ւ: Ինչո՞ւ ես ընդհանրապես ինձ հավանում: Քեզ հերիք չէ՞ր էն ամենը, ինչի միջով անցել ես, – հարցրի՝ մտածելով Քերոլայն Մեթերսի մասին:

Գասը ոչինչ չպատասխանեց: Ուղղակի գրկել էր ինձ՝ իր ուժեղ մատներով սեղմելով ձախ թևս:

– Էս անիծյալ ճոճանակի հետ մի բան պետք է անենք, – ասաց, – ասում եմ քեզ՝ սա խնդրի իննսուն տոկոսն է:

Երբ արդեն լրիվ հանգստացա, ներս գնացինք ու նստեցինք բազմոցին՝ կողք կողքի, լեփթոփի մի կեսը՝ իմ, մյուսը՝ նրա (արհեստական) ոտքի վրա:

– Թեժացել է, – ասացի՝ նկատի ունենալով լեփթոփը:

– Արդե՞ն, – ասաց՝ բազմիմաստ ժպտալով:

Նա բացեց «Լրիվ անվճար, առանց թակարդների» կոչվող նվիրատվությունների կայքը, ու մենք սկսեցինք միասին գտնել ճոճանակը:

– Ի՞նչ վերնագիր դնենք, – հարցրեց:

– Ճոճանակը տուն է փնտրում, – առաջարկեցի:

– Հուսահատ ու մենավոր ճոճանակը սիրառատ ու ջերմ օջախ է փնտրում:

– Մենավոր, մի քիչ պեդոֆիլիկ ճոճանակը երեխաների հետույքներ է փնտրում, – ասացի:

Նա ծիծաղեց ու ասաց.

– Ահա թե ինչու:

– Ինչ:

– Ահա թե ինչու եմ քեզ սիրում: Գիտես, թե ինչքան հազվադեպ երևույթ է հանդիպել մի գրավիչ աղջկա, որ պեդոֆիլ բառն ածականի է վերածում: Դու էնքան զբաղված ես «դու» լինելով, որ չես էլ նկատում, թե ինչ չտեսնված էակ ես:

Քթով խոր շունչ քաշեցի: Այս աշխարհում օդն ինձ երբեք չէր բավականացնում, բայց դրա պակասն առավել սուր էի զգում հենց այս պահին:

Միասին, ընթացքում միմյանց խմբագրելով, գրեցինք-վերջացրինք գովազդը: Վերջում կանգնեցինք հետևյալի վրա.

Հուսահատ ու մենավոր ճոճանակը սիրառատ ու ջերմ օջախ է փնտրում:

Մաշված, բայց բավականին ամուր մի ճոճանակ նոր տուն է փնտրում: Կերտեք հիշողություններ ձեր երեխայի կամ երեխաների հետ, որպեսզի նրանք էլ օրերից մի օր, նայելով ճոճանակին, համակվեն սուր, սենտիմենտալ զգացողություններով, ինչպես ես այսօր: Կյանքում ամեն ինչ անցողիկ է և ակնթարթային, հարգելի ընթերցող, բայց այս ճոճանակը ձեր երեխաներին քնքուշ ու ապահով կծանոթացնի կյանքի վերելքներին ու վայրէջքներին, ինչպես նաև կսովորեցնի կյանքի ամենակարևոր դասը. կապ չունի, թե ինչքան ուժեղ ես հրվում ու ինչքան բարձր ես ելնում, միևնույն է՝ գլխիցդ վեր չես թռչի:

Տվյալ պահին ճոճանակը բնակվում է 83-րդ և Սփրինգ Միլ հասցեում:

Դրանից հետո միացրինք հեռուստացույցը, բայց ոչ մի հետաքրքիր բան ցույց չէին տալիս: Ես մահճակալիս կողքին դրված սեղանից վերցրի «Արքայական վիշտը» և տարա հյուրասենյակ: Օգոստոս Ուոթերսն սկսեց ինձ համար կարդալ գիրքը, իսկ մայրս, խոհանոցում ճաշ պատրաստելով, ականջ էր դնում:

– *Մայրիկի ապակե աչքը շրջվեց ներս,* – սկսեց Օգոստոսը: Ու մինչ նա կարդում էր, ես սիրահարվեցի քուն մտնելու պես. սկզբում դանդաղ, հետո՝ անմիջապես ու միանգամից:

Երբ մեկ ժամ հետո ստուգեցի էլ. փոստս, պարզեցի, որ ճոճանակի երկրպագուների մի մեծ բանակ է հավաքվել: Ի վերջո, մեր ընտրությունը կանգ առավ Դանիել Ալվարես անունով մի մարդու վրա, որն ուղարկել էր իր երեք երեխաների նկարը՝ համակարգչային խաղեր խաղալիս: Իսկ նամակը վերնագրել էր այսպես. «Ուղղակի ուզում եմ, որ կտրվեն համակարգչից ու գոնե մեկ-մեկ բակ դուրս գան խաղալու»:

Պատասխանեցի նրա նամակին՝ ասելով, որ կարող է գալ ու տանել ճոճանակը, երբ իրեն հարմար է:

Օգոստոսն առաջարկեց իր հետ աջակցության խմբակ գնալ, բայց քաղցկեղով հագեցած օրն, իրոք, հոգնեցրել էր ինձ, ու ես հրաժարվեցի: Միասին նստած էինք բազմոցին: Նա, առաջ հրվելով, արդեն պատրաստվում էր վեր կենալ, բայց հանկարծ նորից հետ նստեց ու արագ համբուրեց այտս:

– Օգոստո՛ս, – բղավեցի:

– Ուղղակի ընկերական համբույր էր, – ասաց ու, նորից առաջ հրվելով, այս անգամ իսկապես վեր կացավ, մոտեցավ մորս ու ասաց, – շատ հաճելի էր նորից ձեզ տեսնել:

Մայրս տարածեց թևերը՝ նրան գրկելու համար: Այդ պահին Օգոստոսն առաջ հակվեց ու համբուրեց մայրիկիս այտը, հետո շրջվելով դեպի ինձ՝ ասաց.

– Տեսնո՛ւմ ես:

Ընթրիքից հետո միանգամից պառկեցի քնելու, և ԵՕՍ-ը խլացրեց սենյակիցս դուրս գտնվող ամբողջ աշխարհը:

Իսկ ճոճանակն այլևս երբեք չտեսա:

Բավականին երկար քնեցի՝ տասը ժամ: Միգուցե դանդաղ ապաքինումն էր պատճառը կամ, գուցե, որովհետև քունը լավագույն միջոցն է քաղցկեղի դեմ ու, միգուցե, որովհետև որևէ կոնկրետ արթնանալու ժամ չունեցող դեռահաս էի: Քոլեջ վերադառնալու համար դեռ բավականա-

https://1915.info

չափ չէի ապաքինվել: Երբ վերջապես զգացի, որ ուզում եմ վեր կենալ, հանեցի ԵՕՍ-ի դիմակը, թթվածնի խողովակի ծայրերն անցկացրի քթանցքերիս մեջ, միացրի բալոնը, հետո լեփթոփս հանեցի մահճակալիս տակից, որտեղ թողել էի նախորդ գիշեր:

Լիդևիջ Վլիգենթարթից նամակ էր եկել.

Սիրելի Հեյզել

«Ջին» հիմնադրամն ինձ հաղորդել է, որ մայիսի չորսին Օգոստոս Ուոթերսի և Ձեր մայրիկի ուղեկցությամբ այցելելու եք մեզ: Ուղիղ մեկ շաբաթից: Ես և Փիթերը մեծ ուրախությամբ սպասում ենք հանդիպմանը: Ձեր հյուրանոցը՝ «Ֆիլոսոֆը», Փիթերի տնից ընդամենը մեկ փողոց այն կողմ է: Կարծում եմ, Ձեզ մեկ օր պետք է հանգիստ թողնենք՝ նոր ժամային գոտուն հարմարվելու համար: Այսպիսով, մայիսի 5-ի առավոտյան ժամը տասին կսպասենք Ձեզ Փիթերի տանը՝ մի բաժակ սուրճի, որի ընթացքում Փիթերը կպատասխանի գրքի վերբերյալ Ձեր հարցերին: Իսկ հետո կարող ենք միասին թանգարան գնալ կամ «Աննա Ֆրանկի տուն-թանգարան» այցելել:

Լավագույն մաղթանքներով

«Արքայական վիշտ» գրքի հեղինակ

Փիթեր վան Հաութենի գործադիր օգնական՝

Լիդևիջ Վլիգենթարթ

...

– Մա՛, – կանչեցի, բայց նա չարձագանքեց: – Մա՛, – բղավեցի, բայց նա նորից չարձագանքեց:

Մեկ անգամ ևս շատ բարձր կանչեցի: Նա, վարդագույն սրբիչով փաթաթված, ամբողջովին թաց, ներս վազեց ու թեթևակի տագնապով հարցրեց.

– Ինչ է պատահել:

– Ոչ մի կարևոր բան: Կներես, չգիտեի, որ ցնցուղ էիր ընդունում:

– Լոգանք: Ուղղակի մի քանի վայրկյանով ուզում էի լոգարանում պառկել, – ասաց՝ փակելով աչքերը, – ներիր: Ի՞նչ էիր ասում:

– Զանգիր Ջիներին ու ասա, որ չեղյալ համարեն ճանապարհորդությունը: Փիթեր վան Հաութենի օգնականից հենց նոր նամակ ստացա: Նա կարծում է, թե այցելելու ենք իրենց:

Մայրս սեղմեց շուրթերը ու, աչքերը կկոցելով, մի կողմ թեքեց հայացքը:

– Եվ ի՞նչ, – հարցրի:

– Բայց հայրիկիդ խոստացել եմ, որ մինչև նրա գալը քեզ ոչինչ չեմ ասի:

– Ի՞նչ, մա՛ – պնդեցի:

– Ճանապարհորդությունը կայանալու է,– վերջապես ասաց, – երեկ գիշեր բժիշկ Մարիան զանգահարեց ու համոզիչ փաստարկներ բերեց, որ դու իրավունք ունես տնօրինելու քո...

– Քեզ շա՛տ եմ սիրում, մա՛, – գոչեցի:

Նա մոտեցավ մահճակալիս և գրկեց ինձ:

Հաղորդագրություն գրեցի Օգոստոսին, քանի որ գիտեի՝ այդ ժամին դպրոցում էր:

«Դեռ ազա՛տ ես մայիսի երեքին»:

Միանգամից պատասխանեց.

«Կյանքը ժպտում է քեզ, Ուոթերս»:

Միայն թե մեկ շաբաթ էլ ողջ մնայի, կիմանայի Աննայի մոր ու Հոլանդացի Վարդակակաչ Մարդու չգրված գաղտնիքները: Ես նայեցի ներքև՝ կրծքավանդակիս, ու շշնջացի թոքերիս. «Ձեզ պինդ պահեք, հանկարծ ինձ հուսախաբ չանեք»:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ամստերդամ մեկնելուց մեկ օր առաջ, Օգոստոսին հանդիպելուց հետո առաջին անգամ նորից աջակցության խմբակ գնացի: «Բառիս բուն իմաստով Հիսուսի սրտում» մասնակիցների կազմը մի քիչ փոփոխվել էր: Շուտ էի եկել, այնքան շուտ, որ կույր աղիքի որդանման ելուստի քաղցկեղով հիվանդ, տևականորեն լավ վիճակում գտնվող ուժեղ Լիդան, մինչ աղանդերի սեղանիկին հենված շոկոլադե թխվածքաբլիթ էի ուտում, հասցրեց բոլորի մասին տեղեկություններ հաղորդել:

Տասներկու տարեկան, լեյկիմիայով հիվանդ Մայքլը մահացել էր: Նա, ինչպես Լիդան ասաց, հերոսաբար էր պայքարում: Կարելի է մտածել՝ պայքարն այլ կերպ էլ է լինում: Մնացած բոլորը դեռ այստեղ էին: Քենը ճառագայթահարումից հետո ԱՔՆ էր: Լուկասի հիվանդությունը նորից կրկնվել էր: Լիդան դա ասաց տխուր ժպիտով ու թեթևակի թոթվելով ուսերը, ասես նորից իր հին վատ սովորությանը վերադարձած հարբեցողի մասին էր խոսում:

Մի սիրունիկ, թմբլիկ աղջնակ, սեղանին մոտենալով, բարևեց Լիդային, հետո ներկայացավ ինձ՝ որպես Սյուզան: Չգիտեի, թե ինչ հիվանդ էր, բայց դեմքին քթից դեպի շուրթերն իջնող ու այտի մեջտեղով անցնող սպի կար: Նա փորձել էր շպարով թաքցնել դա, բայց արդյունքում ավելի էր ընդգծել: Այդքան երկար կանգնած մնալուց շունչս արդեն կտրվում էր.

– Ես երևի գնամ նստեմ, – ասացի:

Այդ պահին վերելակի դուռը բացվեց և դուրս եկավ Այզեքը՝ մայրիկի հետ: Արևային ակնոցով էր: Մի ձեռքով կառչել էր մոր թևից, իսկ մյուս ձեռքով ձեռնափայտ էր բռնել:

– Աջակցության խմբակի Հեյզելը, ոչ՝ Մոնիկան, – ասացի, երբ արդեն բավականին մոտեցել էր:

Նա ժպտաց ու պատասխանեց:

– Բարև, Հեյզել: Գործերդ ինչպե՞ս են:

– Լավ: Գիտե՞ս, քո կուրանալուց հետո շատ սեքսուալ եմ դարձել:

– Չեմ էլ կասկածում, – ասաց:

Մայրն ուղեկցեց նրան աթոռի մոտ, համբուրեց գլուխն ու քստքստացնելով քայլեց դեպի վերելակը: Այզեքը, շոշափելով տակի աթոռը, նստեց: Ես նստեցի նրա կողքին:

– Դե, ինչպե՞ս ես:

– Նորմալ: Ուրախ եմ, որ տուն եմ վերադարձել: Գասն ինձ ասաց, որ վերակենդանացման բաժանմունք ես ընկել:

– Ըհը:

– Լավ չի:

– Հիմա ավելի լավ եմ: Ու վաղը Գասի հետ Ամստերդամ եմ գնալու:

– Գիտեմ, լավ տեղեկացված եմ քո կյանքի մասին, քանի որ Գասը բացի քեզնից էլ ուրիշ ոչ մի բանի մասին չի խոսում:

Ի պատասխան ժպտացի:

Փաթրիքը մաքրեց կոկորդն ու ասաց.

– Բոլորին խնդրում եմ նստել:

Ապա հայացքս բռնելով՝ բացականչեց.

– Հեյզե՛լ, շատ ուրախ եմ քեզ տեսնել:

Բոլորը նստեցին: Փաթրիքը նորից սկսեց պատմել իր ամորձիներից զրկվելու պատմությունը: Ու ես, հոգոցներով հաղորդակցվելով Այզեքի հետ, կարեկցելով սենյակում ու նաև նրանից դուրս գտնվող բոլոր հիվանդներին, շնչառությունս կարգավորելու համար կամ ցավերի պատճառով անընդհատ շեղվելով խոսակցությունից, մտա աջակցության

խմբակի սովորական ռիթմի մեջ: Աշխարհը շարունակում էր ապրել, ինչպես միշտ, առանց իմ լիարժեք մասնակցության: Ու մտքերիցս կտրվեցի միայն այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը տվեց անունս:

Դա Լիդա Ուժեղն էր: Ռեմիսիայում գտնվող Լիդան: Շիկահեր, առողջ, ամրակազմ Լիդան, որ լողում էր ավագ դպրոցի լողորդների թիմում: Լիդան, որ կորցրել էր միայն կույր աղիքի որդանման ելուստը, տվեց անունս՝ ասելով.

– Հեյզելն իսկապես ինձ համար ոգեշնչման աղբյուր է: Նա երբեք չի դադարում պայքարելուց, վեր է կենում ամեն առավոտ ու անտրտունջ կռիվ մղում: Նա շատ ուժեղ մարդ է: Ինձանից շատ ավելի ուժեղ: Երանի, ես էլ նրա պես ուժեղ լինեի:

– Հեյզել, ինչ ես զգում՝ էս խոսքերը լսելով:

Թոթվեցի ուսերս ու, Լիդային նայելով, ասացի.

– Ամբողջ ուժս քեզ կտայի՝ քո ռեմիսիայի դիմաց:

Բայց նույն պահին զղջացի խոսքերիս համար:

– Չեմ կարծում, որ Լիդան դա ի նկատի ուներ, – ասաց Փաթրիքը, – կարծում եմ, նա...

Բայց ես արդեն նրան չէի լսում:

Ողջերի համար աղոթելուց ու մահացածների անունների անվերջանալի ցուցակը, որի վերջում ավելացվել էր Մայքլի անունը, կարդալուց հետո իրար ձեռք բռնեցինք ու ասացինք.

«Ապրենք այսօրվա օրով»:

Ու Լիդան ներողությունների ու բացատրությունների տարափով իսկույն մոտեցավ ինձ:

Բայց ես ասացի, որ ամեն ինչ կարգին է ու նրանից ազատվելով՝ դիմեցի Այզեքին.

– Ինձ վերև կուղեկցե՞ս:

Նա թևանցուկ արեց ինձ, ու միասին քայլեցինք դեպի վերելակը՝ ուրախանալով աստիճաններով բարձրանալուց խուսափելու պատրվակ ունենալու համար: Համարյա արդեն հասել էինք վերելակին, երբ «բառիս բուն իմաստով Հիսուսի

Սրտի» անկյունում նկատեցի Այզեքի մայրիկին:

– Ես էստեղ եմ, – ասաց նա:

Այզեքը, թևս բաց թողնելով, թևանցուկ արեց մորը, ապա հարցրեց.

– Մեզ հյուր կգա՞ս:

– Ըհը, – համաձայնեցի:

Նա մեղքս շատ էր գալիս: Ու չնայած ինքս զզվում էի, երբ մարդիկ կարեկցանքով էին վերաբերվում ինձ, բայց նրան չկարեկցել պարզապես չէի կարողանում:

Այզեքն ապրում էր փոքրիկ միհարկանի տանը, Մերիդան Հիլզում, ժամանակակից, շքեղ մասնավոր դպրոցի կողքին: Նստեցինք հյուրասենյակում, իսկ նրա մայրը գնաց խոհանոց՝ ընթրիք պատրաստելու: Հետո Այզեքը հարցրեց, թե ուզո՞ւմ եմ խաղալ:

– Ըհը, – ասացի:

Նա խնդրեց, որ իրեն տամ հեռակառավարման վահանակը: Միացրեց հեռուստացույցը, իսկ հետո՝ դրան միացրած համակարգիչը: Հեռուստացույցի էկրանը դեռ սև էր, բայց մի քանի վայրկյան անց թավ ձայն լսվեց.

– Խաբկանք: Մե՞կ, թե՞ երկու խաղացող:

– Երկու: Դադար, – ասաց Այզեքն ու դիմեց ինձ, – Գասի հետ անընդհատ էս խաղն ենք խաղում, բայց նրա հետ խաղալը նյարդայնացնող է, քանի որ շատ անձնազոհ, ինքնասպան խաղացող է: Նա, էսպես ասած, չափից շատ է տարվում խաղաղ քաղաքացիներին փրկելով:

– Օ, այո՛, – ասացի՝ հիշելով կոտրված մրցանակների գիշերը:

– Սկսել խաղը, – ասաց Այզեքը:

– Առաջին խաղացող, հաստատեք ձեր ինքնությունը:

– Ահա առաջին խաղացողի սեքսուալ, շատ սեքսուալ ձայնը, – ասաց Այզեքը:

– Երկրորդ խաղացող, հաստատեք ձեր ինքնությունը:

– Երկրորդ խաղացողը ես եմ, – ասացի:

https://1915.info

Ավագ սերժանտ Մաքս Մեյհեմն ու շարքային զինվոր Ջասպեր Ջեքսն արթնանում են մութ ու դպրարկ, մոր երեք ու կես քառակուսի մետր տարածք ունեցող սենյակում:

Այզեքը մատը տնկեց հեռուստացույցին՝ հասկացնելով ինձ, որ պետք է մի բան ասեմ կամ անեմ:

– Ը-ը-ը... էստեղ անջատիչ չկա՞:

– *Չկա:*

– Իսկ դռո՞ւռ:

– *Շարքային Ջեքսը հայտնաբերում է դռռը: Բայց դռռը կողպված է:*

– Դռան վերևում բանալի կա, – ասաց Այզեքը:

– *Այո, կա: Մեյհեմը բացում է դռռը: Դեռ լրիվ մութ է:*

– Դանակ հանիր, – ասաց Այզեքը:

– Դանակ հանիր, – կրկնեցի:

Մի երեխա՝ ենթադրաբար Այզեքի եղբայրը, դուրս թռավ խոհանոցից: Նա երևի տասը տարեկան էր, աշխույժ և էներգիայով լի: Թռչկոտելով ներս մտավ հյուրասենյակ ու շատ հաջող նմանակելով Այզեքի ձայնը՝ գոչեց.

– Ինքնասպան լինել:

Սերժանտ Մեյհեմը դանակը մոտեցնում է վզին:

– *Վստահ եք, որ ցանկանում եք...*

– Ո՛չ, – բղավեց Այզեքը, – դադար: Գրեհեմ, խելոք մնա, թե չէ ջարդդ կտամ:

Գրեհեմը քրքջաց ու ցատկոտելով վազեց միջանցք:

Մեյհեմն ու Ջեքսը, այսինքն՝ ես ու Այզեքը, խարխափելով առաջ էինք գնում քարայրում: Հանկարծ բախվեցինք մի մարդու, որը դանակի սպառնալիքի տակ մեզ հայտնեց, թե ուկրաինական բանտի ավելի քան մեկ մղոն խորությամբ գետնափոր քարայրում ենք, իսկ հետո մենք նրան դանակահարեցինք: Շարունակեցինք ճանապարհը: Ձայնային էֆեկտները՝ փոթորկոտ ստորգետնյա գետը, ուկրաիներեն կամ ակցենտով անգլերեն խոսող ձայներն ուղղորդում էին մեզ քարայրի միջով, բայց այս խաղում տեսնելու ոչ մի բան

չկար, միայն ձայներ էին: Արդեն մեկ ժամ է, խաղում էինք, երբ լսեցինք մի հուսահատ բանտարկյալի աղերսագին ճիչերը.

«Աստված իմ, օգնեցեք, օգնեցեք»:

– Դադար, – ասաց Այզեքը, – այստեղ Գասը միշտ պնդում է, որ գտնենք բանտարկյալին, չնայած դա խանգարում է հաղթելուն: Բայց բանտարկյալին «իսկապես ազատելու» միակ ճանապարհը հաղթելն է:

– Այո, համակարգչային խաղերին չափից լուրջ է վերաբերվում, – ասացի, – ուշքը գնում է փոխաբերությունների համար:

– Դու նրան հավանո՞ւմ ես, – հարցրեց Այզեքը:

– Իհարկե հավանում եմ: Նա հիանալի տղա է:

– Բայց չես ուզում ընկերություն անել նրա հետ:

Թոթվեցի ուսերս:

– Դե, ամեն ինչ մի փոքր բարդ է:

– Գիտեմ ինչ ես փորձում անել: Չես ուզում նրան դնել մի դրության մեջ, որին չի դիմանա: Չես ուզում, որ Մոնիկայի նման վարվի քեզ հետ:

– Հա, նման մի բան, – ասացի:

Թեև, ավելի ճիշտ, չէի ուզում ինքս նրա հետ Այզեքի պես վարվել:

– Ճիշտն ասած, դու էլ Մոնիկայի հետ լավ չես վարվել:

– Բայց ես ի՞նչ եմ արել, – ասաց՝ պաշտպանվողական դիրք գրավելով:

– Դե, քո ամբողջ հիվանդությունը, հետո՝ կուրանալը...

– Բայց դա իմ մեղքը չէ:

– Չեմ ասում, որ դու ես մեղավոր: Ուղղակի դա էլ հաճելի բան չէ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Մեզ հետ ընդամենը մեկ ճամպրուկ կարող էինք վերցնել, քանի որ ես ի վիճակի չէի տանելու, իսկ երկուսը քարշ տալը մայրիկիս համար շատ դժվար կլիներ: Այսպիսով, ստիպված էինք ամեն ինչ տեղավորել մեծ, սև ճամպրուկի մեջ՝ միլլիոնավոր տարիներ առաջ ստացած ծնողներիս հարսանեկան նվերը, որն իր կյանքը պետք է անցկացներ էկզոտիկ վայրերում, բայց ստիպված էր սահմանափակվելու Դեյթոն գնալ-գալով, որտեղ «Մորիս Փրոփերթի» կորպորացիան ենթաձյուղ ուներ, և հայրս հաճախ էր այնտեղ գնում:

Այսպիսով, սկսեցինք վիճել ճամպրուկի համար: Ես պնդում էի, որ ճամպրուկի կեսից ավելին պետք է իմը լինի, քանի որ առանց ինձ ու իմ քաղցկեղի մենք ոչ մի Ամստերդամ էլ չէինք գնա: Իսկ մայրս հակադարձում էր, թե չափերով ինքն ինձանից երկու անգամ մեծ է, հետևաբար պարկեշտությունը պահպանելու համար նրան ավելի շատ կտոր է հարկավոր: Այդ պատճառով նրան պետք է հասներ ճամպրուկի գոնե երկու երրորդ մասը:

Վերջում, ոչ քեզ, ոչ՝ ինձ, հավասար կիսեցինք ճամպրուկը:

Մեր թռիչքը կեսօրի կողմերն էր, բայց մայրս ժամը հինգ անց կես արթնացրեց ինձ՝ վառելով լույսն ու բացականչելով.

– Ամստերդա՛մ:

Ամբողջ առավոտ այս ու այն կողմ էր վազում՝ համոզվելու, որ վերցրել ենք փոխադրական վարդակները, քառակի ստու-

https://1915.info

գելով, որ ճիշտ քանակությամբ թթվածնի բալոն ենք տանում մեզ հետ, ու որ դրանք բոլորը լիքն են և այլն, և այլն: Իսկ ես դանդաղ դուրս սահեցի անկողնուցս, հագա «դեպի Ամստերդամ ճանապարհորդության հանդերձանքը»՝ ջինսե տաբատ, վարդագույն անթև վերնաշապիկ և սև բրդե ժակետ, եթե հանկարծ ինքնաթիռում ցուրտ լիներ:

Ժամը վեցն անց տասնհինգին արդեն ամեն ինչ տեղավորել էինք ավտոմեքենայում: Մայրս պնդեց, որ հայրիկի հետ միասին նախաճաշենք, չնայած սկզբունքորեն դեմ էի մինչև լուսաբացը ուտելուն՝ հիմնավորելով, թե տասնիններորդ դարի ռուս գեղջուկ չէի, որը դաշտում ամբողջ օրն անցկացնելու համար ուժ հավաքելու կարիք ուներ: Ինչևէ, մինչ մայրս ու հայրս վայելում էին իրենց սիրելի ձվով բլիթները, ինձ ստիպեցի մի քիչ ձվածեղ ուտել:

– Ինչո՞ւ է նախաճաշի ուտելիքը հենց սա, – հարցրի, – ինչո՞ւ, օրինակ, կարրի[1] չենք ուտում նախաճաշին:

– Հեյզել, կե՛ր:

– Հա, բայց ինչո՞ւ, – նորից հարցրի, – չէ, լուրջ, ինչո՞ւ է ձուն բացառապես նախաճաշի ուտելիք: Կարող ես հանգիստ սենդվիչիդ մեջ բեկոն դնել, ու ոչ մեկը ոչինչ չի ասի: Բայց հենց ձու ավելացրիր, վերջ, դա արդեն «նախաճաշի» սենդվիչ է:

Հայրս լիքը բերանով պատասխանեց.

– Երբ վերադառնաս, ընթրիքին կնախաճաշենք, պայմանավորվեցի՞նք:

– Ես չեմ ուզում նախաճաշել ընթրիքին, – ասացի՝ դանակն ու պատառաքաղը խաչելով դեռ ուտելիքով բավականին լի ափսեիս վրա: – Ուզում եմ ընթրիքին ձվածեղ ուտել՝ առանց լայնորեն տարածված անհեթեթ համոզմունքի, թե ձվածեղ ներառող ուտելիքը նախաճաշ է, նույնիսկ եթե տեղի է ունենում ընթրիքի ժամին:

1 Հարավային և հարավարևելյան Ասիայի խոհանոցի կծու համեմունքներով կերակուր: Պատրաստվում է շոգեխաշած բանջարեղենից, ընդեղենից կամ մսից:

– Դե, եթե սա քեզ համար շատ կարևոր, առաջնահերթ խնդիր է, – ասաց մայրս, – ու անպայման ուզում ես հաղթանակ տանել էս հարցում, մենք քո հետևում կանգնած ենք:

– Բայց ոչ շատ հեռու, – ավելացրեց հայրս, ու մայրս ծիծաղեց:

Համենայն դեպս, թեև գիտեի, որ դա հիմարություն է, բայց մի տեսակ «վատ» էի զգում ձվածեղի համար:

Երբ կերան վերջացրին, հայրս լվաց ափսեները, հետո մեզ ճանապարհեց մինչև մեքենան: Ու, դե, իհարկե, սկսեց լաց լինել և իր թաց, չսափրված ծակծկող դեմքով համբուրեց այտս և, քիթը հպելով այտիս, շշնջաց.

– Քեզ շատ եմ սիրում ու հպարտանում քեզնով:

«Տեսնես ինչի՞ համար»:

– Շնորհակալ եմ, հայրիկ:

– Մի քանի օրից կտեսնվենք, քաղցրիկս: Շատ եմ սիրում քեզ:

– Ես էլ քեզ եմ սիրում, հայրիկ, – ժպտացի, – ընդամենը երեք օրով ենք գնում:

Բակից հետընթաց դուրս գալիս, մեքենայից ձեռքով հաջողություն էի անում նրան: Նա էլ էր թափահարում ձեռքը և շարունակ լաց լինում: Ու ես մտածեցի, որ երևի անհանգստանում է, թե հնարավոր է՝ այլևս երբեք չտեսնի ինձ. մի միտք, որ, երևի, նրան այցելում էր յուրաքանչյուր առավոտ աշխատանքի գնալիս: Կարծում եմ, դա անտանելի զգացողություն է:

Մայրս ու ես ուղղվեցինք Օգոստոսենց տուն: Երբ տեղ հասանք, մայրս խնդրեց ինձ ուժերս խնայել ու մնալ մեքենայում, բայց, դե, իհարկե, նրան չլսեցի ու հետը դուրս եկա մեքենայից: Երբ մոտեցանք նրանց տան դռանը, ներսից լացի ձայներ լսվեցին: Սկզբում մտքովս չանցավ, թե դա կարող է Գասը լինել, քանի որ նրա թավ, խռպոտ ձայնին ընդհանրապես նման չէր, բայց իսկույն ճանաչեցի նրա, լացից խզված, աղավաղված ձայնը, երբ բղավեց. «Որովհետև էս իմ

https://1915.info

կյանքն է, մա՛: Ու այն ինձ է պատկանում»:

Այդ պահին մայրս արագ բռնեց ուսերիցս ու տարավ հետ՝ մեքենայի մոտ:

– Քեզ ի՞նչ եղավ, մա՛, – զարմացած հարցրի:

– Ականջ դնել չի կարելի, Հեյզել:

Հետ նստեցինք մեքենան, ու ես հաղորդագրություն գրեցի Օգոստոսին՝ տեղեկացնելով, որ դրսում սպասում ենք իրեն:

Որոշ ժամանակ, հայացքներս նրանց տանը գամված, սպասում էինք: Հետաքրքիր է, տներին նայելիս գրեթե միշտ այնպիսի տպավորություն ես ստանում, թե այնտեղ ոչ մի բան չի կատարվում, թեև դրանց մեջ է ընթանում մեր կյանքի մեծ մասը: Միգուցե հենց դա է ճարտարապետության գլխավոր նպատակը:

– Կարծես թե շատ շուտ ենք եկել, – քիչ անց ասաց մայրիկս:

– Ըհը, ու ինձ ժամը հինգն անց կեսին արթնացնելու կարիք չկար:

Մայրս կենտրոնական վահանակի վրայից վերցրեց իր սուրճի բաժակն ու կում արեց: Հեռախոսս դզզաց: Օգոստոսից հաղորդագրություն էր եկել.

«Ուղղակի չեմ կարողանում որոշել, թե ինչ հագնեմ: Ինձ ավելի շատ սպորտային շապիկով ես հավանում, թե՞ դասական վերնաշապիկով»:

«Դասական վերնաշապիկով», – պատասխանեցի:

Երեսուն վայրկյան հետո տան դուռը բացվեց ու երևաց ժպտացող Օգոստոսը՝ հետևից քարշ տալով անիվներով ճամպրուկը: Հագին լավ արդուկած, ջինսե տաբատի մեջ մտցրած բաց երկնագույն վերնաշապիկ էր: Բերանից ծխախոտ էր կախված: Մայրս դուրս եկավ նրան բարևելու: Ակնթարթորեն բերանից հանեց ծխախոտն ու նորից խոսեց իր ինքնավստահ ձայնով, որին ես սովոր էի.

– Ինչ հաճելի է նորից ձեզ տեսնել, տիկին:

Նրանց հետևում էի հետադարձ տեսանելիության հայելու միջով, բայց տեսադաշտս փակվեց, երբ մայրս բացեց

https://1915.info

բեռնախցիկը: Ռոպեներ հետո Օգոստոսը բացեց հետևի դուռը և ներգրավվեց մեկ ոտքով մեքենայի հետնամաս մտնելու բարդ ու խրթին գործընթացում:

– Ուզո՞ւմ ես առջևում նստել, – առաջարկեցի:

– Ամենևին ոչ, – ասաց, – հա ու բարև, Հեյզել Գրեյս:

– Բարև, – պատասխանեցի: – Լա՞վ ես:

– Լավ եմ, – պատասխանեց:

– Շատ լավ, – ասացի ես:

Մայրս ներս մտավ ու, փակելով մեքենայի դուռը, հայտարարեց.

– Հաջորդ կայարանը՝ Ամստերդամ:

Ինչն այդքան էլ ճիշտ չէր: Հաջորդ կայարանը օդանավակայանի կանգառն էր: Իսկ հետո ավտոբուսով գնացինք տերմինալ, որտեղից բաց տանիքով էլեկտրական մեքենան տարավ մեզ հսկիչ-անցագրային կետ: Հերթի առջևում կանգնած անվտանգության աշխատակիցը բղավում էր, թե լավ կլինի, որ մեր ճամպրուկները պայթուցիկներ, հրազեններ ու 100 մլ-ից ավելի հեղուկ չպարունակեն: Այդ ժամանակ Օգոստոսին ասացի.

– Դիտարկում՝ հերթ կանգնելը ինչ-որ առումով մարդկանց ճնշելու մի ձև է:

– Ճիշտ ես, – համաձայնեց:

Որպեսզի ինձ ձեռքով չխուզարկեն, նախընտրեցի անցնել մետաղորսիչի միջով, առանց իմ սայլակի, բալոնի, ու նույնիսկ առանց քթիս մեջ դրվող խողովակների: Վերջին մի քանի ամսվա ընթացքում սա առաջին անգամն էր, որ առանց թթվածնի քայլ էի կատարում: Այդպես ազատ, առանց բեռի քայլելն ուղղակի հիանալի էր: Անցա ռուբիկոնը, ու սարքի լռությունը վկայեց, որ ես, թեև կարճ ժամանակով, բայց «անմետաղ» էակ էի:

Մարմինս իրեն անկախացած էր զգում: Նման մի զգացողություն ունեցել էի երեխա ժամանակ, երբ օրվա մեծ մասն ստիպված էի ուսերիս կրել դպրոցական գրքերով լի, ծանր

պայուսակը, ու երբ վերջապես այն ցած էի դնում, այնքան թեթևացած էի ինձ զգում, կարծես օդում ճախրելիս լինեի:

Մոտ տասը վայրկյանից թոքերս սկսեցին սեղմվել աղջամուղջին փակվող ծաղիկների պես: Նստեցի սարքի մոտ դրված մոխրագույն նստարանին, խզխզալով ու հազալով փորձեցի շունչ քաշել, և ես ինձ թշվառ ու ողորմելի էի զգում, մինչև կանյուլան չդրվեց տեղը:

Բայց նույնիսկ այդ ժամանակ էլ էր ցավում: Ցավը միշտ ինձ հետ էր՝ անընդհատ իր վրա ուշադրություն հրավիրելով, պահանջելով, որ իրեն զգամ: Ցավն ասես անընդհատ սթափեցնում էր ինձ, երբ ինձնից դուրս՝ աշխարհում, ինչ-որ մի բան հանկարծ իմ մեկնաբանության կամ ուշադրության կարիքն էր զգում: Մայրս անհանգստացած ինձ էր նայում: Նա ինչ-որ բան էր հարցրել ինձ: Բայց ի՞նչ, ի՞նչ էր հարցրել: Հետո հիշեցի. հարցրել էր, թե ի՞նչ է պատահել:

– Ոչ մի բան, – ասացի:

– Ամստերդա՛մ, – ասաց գրեթե բղավելով:

– Ամստերդամ, – ժպտալով կրկնեցի:

Մայրս, ձեռքն ինձ պարզելով, օգնեց վեր կենալ:

Թռիչքից մոտ մեկ ժամ առաջ մենք արդեն սպասասրահում էինք:

– Տիկին Լանքասթեր, զարմանալիորեն ճշտապահ անձնավորություն եք, – գրեթե դատարկ սպասասրահում նստելով կողքիս՝ ասաց Օգոստոսը:

– Դե, դա նաև նրանից է, որ սկզբունքորեն շատ զբաղված չեմ:

– Բայց դու շատ զբաղված ես, – առարկեցի ես ու նույն պահին հասկացա, որ մայրիկի գործը հիմնականում ես էի:

Մեկ այլ գործ էլ ուներ՝ հայրիկիս հետ ամուսնացած լինելը: Հայրս շատ բաներից, օրինակ՝ բանկային գործերից, ջրմուղագործ կանչելուց, խոհարարությունից ու, մի խոսքով, ոչնչից, բացի «Մորիս Փրոփերթիում» աշխատելուց, գլուխ չէր հանում: Այնուամենայնիվ, մայրիկիս հիմնական գործը ես

էի: Նրա և իմ ապրելու գլխավոր դրդապատճառները խիստ սերտաճած էին:

Երբ սպասասրահն սկսեց լցվել, Օգոստոսն ասաց.

– Մինչև մեկնելը գնամ համբուրգեր գնեմ: Քեզ ինչ-որ բան բերեմ:

– Չէ, շնորհակալ եմ, – ասացի, – բայց բարձր եմ գնահատում, որ տեղի չես տվել ընդունված նախաճաշային սովորույթին:

Գլուխը մի կողմի վրա թեքելով՝ զարմացած նայեց ինձ:

– Հեյզելը բարձրացրել է «ձվածեղի սահմանափակվածության» խնդիրը, – ասաց մայրս:

– Ուղղակի անհարմար է, բոլորս ապրում ենք՝ կուրորեն ընդունելով, որ ձվածեղը բացառապես առնչվում է առավոտի հետ:

– Սա արժի քննարկել, – ասաց Օգոստոսը, – բայց հիմա սովից մեռնում եմ: Հիմա կգամ:

Օգոստոսի գնալուց հետո արդեն քսան րոպե էր անցել, բայց նա դեռ չէր վերադարձել: Ես մայրիկիս հայտնեցի անհանգստությունս, թե միգուցե նրան ինչ-որ բան է պատահել: Մայրս մեկ վայրկյանով հայացքը կտրեց իր անտանելի ամսագրից ու ասաց.

– Երևի զուգարան է մտել, մի անհանգստացիր:

Օդանավակայանի աշխատակցուհին մոտեցավ ինձ՝ թթվածնիս բալոնը ավիաընկերության կողմից տրամադրված մեկ ուրիշով փոխարինելու: Ինձ մի փոքր անհարմար էի զգում, երբ հետաքրքրասեր հայացքների ներքո այդ տիկինն իմ առջև ծնկի իջած փոխում էր բալոնը: Ցրվելու համար սկսեցի հաղորդագրություն գրել Օգոստոսին:

Նա չպատասխանեց: Մայրս բավականին հանգիստ էր, մինչդեռ իմ մտքով արդեն «դեպի Ամստերդամ ճանապարհորդությունը փչացնող» ամեն տեսակի բան էր անցնում՝ ձերբակալություն, վնասվածք, նյարդային խանգարում: Ռոպեներն անցնում էին, ու ես զգում էի, որ կրծքավանդակումս

https://1915.info

ոչ քաղցկեղային ինչ-որ բան էր կատարվում:

Երբ տոմսարկղի հետևում կանգնած կինը հայտարարեց, որ արդեն սկսում են ինքնաթիռ թողնել հավելյալ ժամանակի կարիք ունեցող մարդկանց, ու բոլորը միանգամից շրջվեցին իմ կողմը, այդ պահին տեսա Օգոստոսին, որ արագ կաղալով, մի ձեռքում Մակդոնալդսի տոպրակը բռնած, ուսապարկը մեկ ուսից կախված, մոտենում էր մեզ:

– Որտեղ էիր, – հարցրի:

– Շատ երկար հերթ էր, կներես, – ասաց՝ ձեռքը մեկնելով, որ օգնի բարձրանամ:

Նրա մեկնած ձեռքը բռնելով՝ վեր կացա, ու մենք միասին քայլեցինք ինքնաթիռի մուտքի մոտ:

Բոլորը մեզ վրա էին ուղղել հետաքրքրված հայացքները՝ փորձելով գուշակել, թե ինչ հիվանդ ենք, մահացո՞ւ է մեր հիվանդությունը, թե՞ ոչ, ու թե մայրս, երևի, շատ ուժեղ կին է և նման շատ ուրիշ բաներ: Դա քաղցկեղով հիվանդ լինելու վատագույն պահերից էր: Հիվանդության ֆիզիկական վկայությունը մեկուսացնում է քեզ մյուս մարդկանցից: Մենք անհամատեղելիորեն ուրիշ էինք, ու երբեք դա այդքան ակնհայտ չէր եղել, որքան հիմա, երբ երեքս մտանք դատարկ ինքնաթիռ, ու բորտուղեկցորդուհին կարեկցաբար գլխով արեց մեզ՝ ցույց տալով ինքնաթիռի ամենածայրում գտնվող մեր տեղերը: Ես նստեցի մեր երեքտեղանոց շարքի մեջտեղում, Օգոստոսը նստեց պատուհանի մոտ, իսկ մայրս՝ իմ մյուս կողմում՝ միջանցքի մոտ: Մայրիկիս կողքին ինձ մի տեսակ շրջափակված էի զգում, այդ պատճառով թեքվեցի Օգոստոսի կողմը: Մենք ինքնաթիռի թևի ուղիղ հետևն էինք ընկել: Օգոստոսը բաց արեց իր տոպրակն ու հանեց բուրգերը:

– Ի դեպ, ձվածեղի մասին, – ասաց, – իմ կարծիքով, նախաճաշայնացումը ձվածեղին որոշակի ծիսականություն է հաղորդում: Չե՞ս կարծում: Կարող ես բեկոն կամ չեդդար պանիր գտնել ամեն տեղ, ամեն պահի՝ տակոների, տարբեր սենդվիչների մեջ, բայց ձվածեղը, ձվածեղը կարևոր է:

– Անհեթեթություն, – ասացի:

Մարդիկ արդեն սկսել էին լցվել: Որպեսզի նրանց չնայեմ, գլուխս ուրիշ՝ այսինքն Օգոստոսի կողմը թեքեցի:

– Ուղղակի ուզում եմ ասել, որ միգուցե ձվածեղը սահմանափակված է, բայց նաև՝ առանձնահատուկ է. հատուկ վայր ու ժամանակ ունի, ինչպես եկեղեցին:

– Բացարձակ սխալ ես, – առարկեցի, – ուղղակի կուլ ես գնացել ծնողներիդ ասեղնագործած բարձերի սենտիմենտալությանը: Պնդում ես, որ փխրուն ու հազվագյուտ իրը հիասքանչ է, պարզապես որովհետև փխրուն է ու հազվագյուտ: Բայց շատ լավ գիտես, որ դա սուտ է:

– Քեզ շատ դժվար է մխիթարելը:

– Հեշտ մխիթարությունը մխիթարանք չէ, – ասացի, – մի ժամանակ դու հազվագյուտ ու փխրուն ծաղիկ էիր: Հիշում ես, չէ՞:

Մի պահ լռելուց հետո ասաց.

– Դու գիտես ինչպես բերանս փակես, Հեյզել Գրեյս:

– Դա իմ արտոնությունն է և պարտականությունը:

Նախքան հայացքս կհեռացնեի նրա աչքերից, ասաց.

– Լսիր, կներես, բայց իրականում փախել էի սպասասրահից: Մակդոնալդսի հերթը էնքան էլ մեծ չէր: Ուղղակի ուզում էի խուսափել մարդկանց հետաքրքրասեր հայացքներից:

– Մեծ մասամբ՝ դեպի ինձ ուղղված, – ասացի:

Գասին նայելով՝ չէիր մտածի, թե հիվանդ է եղել, իսկ իմ հիվանդությունը տեսանելի էր արտաքուստ, ինչը նաև տնակյաց դառնալուս առաջնային պատճառներից մեկն էր:

– Մեծ խարիզմայով աչքի ընկնող Օգոստոս Ուոթերսն ամաչում է նստել թթվածնի բալոնով աղջկա կողքին, – ասացի:

– Չեմ ամաչում, ուղղակի երբեմն նրանք ինձ հունից հանում են: Իսկ էսօր նյարդայնանալ չեմ ուզում:

Մեկ րոպե հետո նա ձեռքը գրպանը տարավ ու բացեց ծխախոտի տուփը:

https://1915.info

Մոտավորապես ինը վայրկյանից մի շիկահեր բորտուղեկցորդուհի մոտ վազեց ու ասաց.

– Պարոն, այս ինքնաթիռում, այսինքն, ընդհանրապես ինքնաթիռներում, ծխել չի կարելի:

– Ես չեմ ծխում, ուղղակի ... – փորձեց բացատրել՝ ծխախոտը բերանում պարեցնելով:

– Բայց ...

– Դա փոխաբերություն է, – բացատրեցի, – նա ապանող բանը դնում է բերանում, բայց նրան ապանելու զորություն չի տալիս:

Ուղեկցորդուհին մի պահ շփոթվեց, բայց անմիջապես ուշքի գալով՝ ասաց.

– Ամեն դեպքում այդ փոխաբերությունն արգելված է թռիչքի ժամանակ:

Գասը գլխով արեց ու ծխախոտը հետ դրեց տուփի մեջ:

Վերջապես դուրս եկանք թռիչքուղի, և օդաչուն ասաց.

«Բոլորին խնդրում եմ պատրաստվել թռիչքի»:

Իսկ հետո երկու հսկայական ռեակտիվ շարժիչները դղրդյունով կենդանացան, ու ինքնաթիռն սկսեց արագություն հավաքել:

– Ահա թե ինչ են մարդիկ զգում, երբ մեքենայի ղեկին դու ես լինում, – ասացի:

Նա ժպտաց ինձ, բայց լարված սեղմել էր ծնոտը, և ես հարցրի.

– Լա՞վ ես:

Արագությունն ավելանում էր: Գասը հանկարծ ամուր բռնեց բազկակալը, աչքերը լայնացան: Ձեռքս դրեցի նրա ձեռքին ու նորից հարցրի.

– Լա՞վ ես:

Բայց նա ուղղակի աչքերը չռեց վրաս ու ոչինչ չասաց:

– Թռչելուց վախենո՞ւմ ես:

– Մեկ րոպեից կասեմ, – ասաց:

Ինքնաթիռն սկսեց օդ բարձրանալ: Գասը պատուհանից

դուրս նայեց՝ հետաքրքրությամբ դիտելով մեր ներքևում աստիճանաբար փոքրացող մոլորակը: Քիչ հետո ձեռքիս տակ զգացի, որ նրա ձեռքի լարվածությունը թուլացավ: Նա նայեց ինձ, հետո՝ նորից պատուհանից դուրս ու հայտարարեց.

– Մենք թռչում ենք:

– Նախկինում երբեք ինքնաթիռ չեմ նստել:

Նա տարուբերեց գլուխը:

– Նայի՛ր, – գրեթե գոռաց՝ մատը տնկելով պատուհանին:

– Ըհը, տեսնում եմ, – ասացի, – կարծում եմ, ինքնաթիռում ենք:

– Մարդկության ամբողջ պատմության մեջ ոչ մի բան էս տեսքը չի ունեցել, – ասաց:

Նրա ոգևորությունն ուղղակի աքանչելի էր: Չկարողանալով ինձ զսպել՝ նրա կողմը ձգվեցի ու արագ համբուրեցի այտը:

– Ի գիտություն քեզ՝ ես դեռ այստեղ եմ, – ասաց մայրս, – Կողքիդ նստած է մայրդ, որ բռնել էր ձեռքդ, երբ առաջին քայլերն էիր անում:

– Ընկերական համբույր էր, – հիշեցրի՝ նրա այտն էլ համբուրելով:

– Բայց էնքան էլ ընկերականի նման չէր, – ցածր, միայն ինձ համար լսելի մրթմրթաց Օգոստոսը:

Մեծ, ռոմանտիկ արարքների ընդունակ ու փոխաբերությունների սիրահար Օգոստոսի միջից ի հայտ եկած զարմացած, հուզված և անմեղ Գասն ուղղակի անդիմադրելի էր:

Կարճ ժամանակում հասանք Դետրոյթ: Երբ ցած իջանք, մեզ այնտեղ դիմավորեց էլեկտրական մեքենան ու տարավ Ամստերդամ թռչող ինքնաթիռի մուտքի մոտ: Այս ինքնաթիռում յուրաքանչյուր նստատեղի հետևում հեռուստացույց կար: Երբ արդեն թռչում էինք ամպերի վրայով, Օգոստոսն ու ես այնպես կարգավորեցինք մեր հեռուստացույցները, որ երկուսիս էկրաններին էլ միևնույն ժամանակ նույն ռոմանտիկ կատակերգությունը ցուցադրվի: Ու չնայած երկուսս էլ լրիվ

https://1915.info

միաժամանակ սեղմեցինք սկսելու կոճակը, նրա մոտ ֆիլմը մի քանի վայրկյան շուտ սկսվեց, և յուրաքանչյուր ծիծաղելի պահին նա սկսում էր ծիծաղել հենց այն ժամանակ, երբ ես դեռ նոր էի լսում կատակը:

Ըստ մայրիկիս մեծ ծրագրի՝ պետք է թռիչքի վերջին մի քանի ժամը քնեինք, որպեսզի, երբ առավոտյան ժամը ութին վայրէջք կատարեինք, թարմ ուժերով, կյանքից առավելագույնը քամելու պատրաստ մտնեինք քաղաք: Այսպիսով, հենց ֆիլմը վերջացավ, մայրս, Օգոստոսը և ես քնաբեր ընդունեցինք: Մայրս մի քանի վայրկյանից անջատվեց, բայց ես ու Օգոստոսը, դեռ որոշ ժամանակ արթուն մնալով, պատուհանից դուրս էինք նայում: Պարզկա օր էր, ու թեև չէինք տեսնում արևամուտը, բայց տեսնում էինք երկնքի արձագանքը դրան:

– Աստված իմ, ինչ գեղեցիկ է, – ասացի:

– Ծագող արևը չափազանց պայծառ էր նրա խավարող աչքերում, – Օգոստոսը մեջբերում արեց «Արքայական վշտից»:

– Բայց արևը հիմա չի ծագում, – առարկեցի:

– Ինչ-որ մի տեղ ծագում է, – ասաց ու մեկ րոպե հետո ավելացրեց, – դիտարկում. հիանալի կլիներ թռչել ամբողջ աշխարհով մեկ ծագող արևի հետևից սլացող գերարագ ինքնաթիռով:

– Ու նաև ավելի երկար կապրեինք:

Թերահավատորեն նայեց ինձ:

– Դե, ըստ հարաբերականության տեսության, – նա դեռ մի քիչ զարմացած էր: – Արագ շարժվելով՝ անշարժ վիճակի համեմատ ավելի դանդաղ ենք ծերանում: Ու հենց հիմա մեզ համար ժամանակն ավելի դանդաղ է անցնում, քան գետնի վրա գտնվող մարդկանց համար:

– Ախ, էս քոլեջի աղջիկները, – ասաց, – էնքան խելոք են:

Ի պատասխան՝ ոլորեցի աչքերս: Նա իր ծնկով (իսկական) թեթևակի խփեց ծնկիս, ես էլ իմով խփեցի նրա ծնկին ու հարցրի.

https://1915.info

– Քունդ տանո՞ւմ է:

– Ընդհանրապես չի տանում, – պատասխանեց:

– Իմն էլ, – ասացի:

Քնաբեր կամ հանգստացնող դեղերն ինձ վրա այն ազդեցությունը չէին ունենում, ինչ որ սովորական մարդկանց վրա:

– Ուզո՞ւմ ես մի ուրիշ ֆիլմ էլ դիտենք, – առաջարկեց, – այստեղ հեյզելյան շրջանի Պորտմանի մասնակցությամբ ֆիլմ կա:

– Մի ֆիլմ դիր, որ դու էլ տեսած չլինես:

Ի վերջո որոշեցինք դիտել «300»-ը: Պատերազմական կինոնկար՝ 300 սպարտացիների մասին, որ Սպարտան պաշտպանում են միլիոնանոց պարսկական բանակի ներխուժումից: Օգոստոսի ֆիլմը նորից իմինից առաջ սկսվեց: Մի քանի րոպեից նա սկսեց բացականչել. «գրողը տանի» կամ «ֆաթալիթի» (մահացու հարված), երբ ինչ-որ մեկին սպանում էին առանձնահատուկ դաժանությամբ: Բազկակալին հենվելով՝ թեքվեցի նրա կողմը, գլուխս դրեցի ուսին այնպես, որ տեսնեմ նրա էկրանը, ու մենք իսկապես կարողանանք միասին դիտել ֆիլմը:

«300»-ը կիսամերկ, ձիթապատ, ամրակազմ ու մկանուտ երիտասարդների մեծ քանակությամբ աչքի ընկնող ու մեծ լարվածություն չպահանջող, հեշտ դիտվող ֆիլմ էր, որտեղ գերակշռում էր հիմնականում անարդյունավետ ու աննպատակ սուր ճոճելը: Անկեղծ ասած, շարունակ իրար վրա կուտակվող պարսիկների ու սպարտացիների անկենդան մարմինների մեջ այդպես էլ չկարողացա հասկանալ, թե ինչու էին պարսիկները չար, իսկ սպարտացիները՝ հրաշալի մարդիկ:

«Արդի ժամանակներում, – մեջբերում «Արքայական վշտից», – մեծ տեղ են զբաղեցնում մարտերը, որտեղ ոչ ոք որևէ արժեքավոր բան չի կորցնում, բացի, թերևս, կյանքից, ինչի արժեքավորությունը, սակայն, նույնպես վիճելի է»:

Ու այս՝ իրար հետ մարտնչող տիտանների դեպքում հենց այդպես էր:

https://1915.info

Ֆիլմի վեջերում համարյա բոլորը մահացան: Այստեղ մի խելացնոր պահ կար, երբ սպարտացիներն սկսեցին, մահացածների մարմիններն իրար վրա կիտելով, դիակների պատ շարել: Եվ այդպես, դիակները դարձան պարսիկների առաջընթացը դեպի Սպարտա խոչընդոտող հսկայական պատնեշ: Այդ արյունալի տեսարանն անհիմն վայրագություն համարելով՝ հայացքս թեքեցի էկրանից ու հարցրի Օգոստոսին.

– Ինչ ես կարծում, քանի՞ մարդ է մահացել:

Բայց նա ձեռքի շարժումով լռեցրեց ինձ.

– Շ222, – ասաց, – գնալով հետաքրքրանում է:

Եվ այսպես, հարձակվելով, պարսիկները ստիպված էին մագլցել «մահվան պատը», իսկ սպարտացիներն արդեն բավականին բարձր դիրք էին զբաղեցրել դիակների սարի գագաթին: Երբ նրանցից մեկն սպանվում էր, նահատակների պատն ավելի էր բարձրանում ու, հետևաբար, մագլցելն ավելի էր դժվարանում: Բոլորը ճոճում էին իրենց թրերը, նետեր արձակում, և արյան գետեր էին հոսում «մահվան սարի վրայով»:

Գլուխս մի պահ բարձրացրի Օգոստոսի ուսից՝ արյունահեղ տեսարաններից դադար վերցնելու, և սկսեցի հետևել նրան՝ ֆիլմը դիտելիս: Հիմարավուն ժպիտը դեմքից չէր հեռանում: Աչքի պոչով նայում էի իմ էկրանին, որտեղ պարսիկների ու սպարտացիների սարն ավելի ու ավելի էր բարձրանում: Երբ պարսիկները վերջիվերջո առաջ անցան, հայացքս նորից Օգոստոսին ուղղեցի, չնայած բարի հերոսները պարտվում էին, Օգոստոսը հրճվանքի մեջ էր: Կրկին զգվեցի նրան, բայց մինչև ճակատմարտի ավարտն աչքերս փակ պահեցի:

Երբ արդեն սկսեցին հայտնվել տիտրերը, նա հանեց ականջակալներն ու ասաց.

– Կներես, ուղղակի տարվել էի այդ վեհ զոհաբերությամբ: Ինչ էիր ասում:

– Ինչ ես կարծում, քանի՞ մարդ է մահացել:

– Նկատի ունես, այս հորինված ֆիլմում քանի հորինված կերպա՞ր մահացավ: Ոչ բավականաչափ, – կատակեց:

– Չէ, ընդհանրապես: Ինչ ես կարծում, էս աշխարհում ընդհանրապես քանի՞ մարդ է մահացել:

– Դրա պատասխանն ինձ հայտնի է, – ասաց, – հիմա երկրի վրա ապրում է յոթ բիլիոն մարդ, իսկ մոտ իննսունութ բիլիոն մարդ մահացած է:

– Օ՜, – զարմացա:

Միշտ կարծել էի, թե բնակչությունն այնքան արագ էր աճում, որ հիմա երկրի վրա ավելի շատ մարդ էր ապրում, քան բոլոր մահացածները միասին վերցրած:

– Էս երկրի վրա ապրող յուրաքանչյուր մարդուն տասնչորս մահացած է ընկնում, – ասաց:

Տիտրերը դեռ շարունակվում էին: Երևի այդ բոլոր դիակների ինքնությունը հաստատելու համար շատ ժամանակ էր պահանջվում: Գլուխս դեռ նրա ուսին էր:

– Մի քանի տարի առաջ դրա վերաբերյալ փոքրիկ հետազոտություն եմ անցկացրել, – շարունակեց Օգոստոսը: – Ինձ հետաքրքիր էր, թե հնարավո՞ր է բոլորին հիշել: Այսինքն, եթե կազմակերպված լինեինք ու յուրաքանչյուրիս հանձնարարվեր որոշակի քանակությամբ մահացած մարդու հիշելու, ողջերը կհերիքեի՞ն բոլոր մեռածներին հիշելու համար:

– Եվ, հերիքեցի՞ն:

– Իհարկե, յուրաքանչյուրը կարող է տասնչորս հոգու անուն հիշել: Բայց մենք շատ անկազմակերպ սգվորներ ենք: Արդյունքում շատերը հիշում են Շեքսպիրին, բայց ոչ մեկը չի հիշում նրան, ում Շեքսպիրը ձոնել է հիսունհինգերորդ սոնետը:

– Ճիշտ ես, – համաձայնեցի:

Մի պահ լռություն էր, հետո առաջարկեց.

– Արի կարդանք:

Ասացի՝ որ վատ միտք չէ: Ու ես սկսեցի կարդալ պոե-

զիայի դասին հանձնարարված Ալեն Գինզբերգի «Ոռնոց» երկար բանաստեղծությունը, իսկ Գասը վերընթերցում էր «Արքայական վիշտը»:

Քիչ հետո հարցրեց.

– Լավն է:

– Բանաստեղծությունը:

– Ըհը:

– Հա, շատ լավն է: Պատկերացնում ես, այս բանաստեղծության հերոսներն ինձնից շատ են դեղ ընդունում: Իսկ «Արքայական վիշտը»:

– Դեռ կատարյալ է: Բարձր կկարդաս ինձ համար:

– Էս բանաստեղծությունը չես կարող բարձր կարդալ, երբ մայրդ կողքիդ քնած է: Դրա մեջ սոդոմիզմի, «հրեշտակի փոշու» ու նման բաների մասին է խոսվում:

– Հենց նոր նշեցիր իմ ամենասիրելի երկու զբաղմունքները, – ասաց, – լավ, ուրեմն մի ուրիշ բան կարդա:

– Բայց մոտս ուրիշ բան չկա, – ասացի:

– Լավ չէ, ես էլ, հակառակի պես, պոեզիա լսելու մեծ ցանկություն ունեմ: Իսկ ինչ-որ բան անգիր չե՞ս հիշում:

– Լավ, լսիր «Դե ել, վեր կաց գնանք դու ու ես», – հուզված սկսեցի, – երբ երեկոն սփռվում է երկնքում, եթերով քնեցրածի պես:

– Մի քիչ դանդաղ, – ասաց:

Հուզվում էի այնպես, ինչպես առաջին անգամ «Արքայական վշտի» մասին նրան ասելիս:

– Ըմ, լավ.

Գնանք, շրջենք կիսադատարկ փողոցներով,
մրմունջների ապաստաններով
անհանգիստ գիշերների՝ մեկ-գիշերանոց, էժանագին հյուրանոցներում,
ոստրեների խեցիներով լի փոշոտ հատակով ռեստորաններում:
Քեզ կրնկակոխ հետևող փողոցներով,

https://1915.info

որ ինչպես կաղկալի փասկարկ,
հեկասպնդում են մի նենգ նպատակ.
հանգեցնել քեզ մի ճնշող հարցի,
բայց մի հարցրու, թե այդ ինչ հարցի,
արի ուղղակի գնանք նրանց այցի:

– Սիրում եմ քեզ, – շշնջաց:

– Օգոստո՛ս:

– Այո, սիրում եմ – ասաց՝ սևեռուն հայացքով նայելով ինձ, կնճռելով աչքերի անկյունները: – Սիրում եմ քեզ, ու սովոր չեմ ինձ զրկել ճշմարտությունն ասելու պարզագույն հաճույքից: Սիրում եմ քեզ ու գիտեմ, որ սերը պարզապես ճիչ է դատարկ տարածության մեջ, ու որ մոռացությունն անխուսափելի է, ու որ բոլորս դատապարտված ենք: Եվ կգա մի օր, երբ մեր ամբողջ աշխատանքը հողին կհավասարվի, գիտեմ, որ արևը կուլ կտա մեր միակ ու անկրկնելի Երկիր մոլորակը, բայց միևնույն է՝ ես սիրում եմ քեզ:

– Օգոստոս, – չիմանալով ուրիշ ինչ ասել՝ կրկնեցի նրա անունը:

Կարծես ներսումս ամեն ինչ տակնուվրա էր լինում, ալեկոծվում՝ խեղդելով ինձ այս տարօրինակորեն ցավոտ ու տանջալից ուրախության մեջ, բայց ես նույն խոսքերը նրան ասել չէի կարող: Ընդհանրապես ոչինչ ասել չէի կարող: Ուղղակի նայում էի նրան, նա էլ նայում էր ինձ: Հետո նա, շուրթերը սեղմելով, գլխով արեց ու գլուխը հենելով պատուհանին՝ շրջվեց մի կողմը:

https://1915.info

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Կարծես թե, վերջիվերջո, քնով ընկա ու արթնացա իջեցվող շասսիի ձայնից: Բերանումս շատ տհաճ համ էի զգում: Փորձեցի փակ պահել՝ վախենալով թունավորել օդանավը:

Շրջվեցի Օգոստոսի կողմը: Աչքերը հառել էր պատուհանից դուրս, ու երբ ցածրիկ ամպերից ներքև իջանք, մի քիչ թեքվեցի, որ տեսնեմ Նիդերլանդները: Երկիրն ասես ընկղմված լիներ օվկիանոսի մեջ: Չորս կողմից ջրանցքներով շրջապատված, փոքրիկ կանաչ ուղղանկյուններ էին: Փաստացի, վայրէջք կատարեցինք ջրանցքին զուգահեռ. ասես երկու թռիչքուղի լիներ, մեկը՝ մեզ համար, մյուսը՝ ջրային թռչունների:

Մեր ճամպրուկներն ստանալով և մաքսազերծումն անցնելով՝ բոլորս լցվեցինք տաքսի, որը մի գունատ ու ճաղատ մարդ էր վարում: Նա խոսում էր կատարյալ անգլերենով: Կարելի է ասել, ինձանից լավ էր անգլերեն խոսում:

– Հյուրանոց «Ֆիլոսոֆ», – ասացի:

Նա հարցրեց.

– Ամերիկացիներ եք:

– Այո, – ասաց մայրս, – Ինդիանայից ենք:

– Ինդիանա, – կրկնեց: – Հնդկացիներից գողանում են իրենց երկիրը, բայց անունը թողնում են, հա՞:

– Դե, նման մի բան, – ասաց մայրս:

Տաքսին դուրս եկավ փողոց, ու մենք ուղղվեցինք դեպի կապույտ, կրկնակի ձայնավորներով, օրինակ՝ Օսթիայզն,

https://1915.info

Հաարլեմ, ցուցանակներով լի մայրուղի: Մայրուղու կողքին կիլոմետրերով ձգվում էր հարթ, դատարկ տարածություն՝ հսկայական կորպորացիաների հատուկենտ գլխավոր գրասենյակներով: Կարծ ասած, Հոլանդիան նման էր Ինդիանապոլիսին, միայն թե այստեղ ավտոմեքենաներն ավելի փոքր էին:

– Սա՞ է Ամստերդամը, – հարցրի վարորդին:

– Եվ այո, և ոչ, – պատասխանեց, – Ամստերդամը նման է ծառի օղակներին, որքան մոտենում ես կենտրոնին, այնքան ծերանում է:

Եվ իրոք, ամեն ինչ կատարվեց միանգամից: Հենց դուրս եկանք մայրուղուց, հայտնվեցին իմ պատկերացրած՝ ջրանցքների վրա վտանգավոր կերպով թեքված տների շարքերը, համատարած հեծանիվները և «Մեծ ծխասրահ» գովազդային վահանակներով սրճարանները: Մենք ընթանում էինք ջրանցքի վրայով: Ես կամուրջի վրայից տեսնում էի ջրի երկայնքով կառանած բազմաթիվ լողացող տները: Սա ընդհանրապես նման չէր Ամերիկային: Ասես մի հին նկար լիներ, սակայն իրական, ամեն ինչ այնքա՜ն անհավատալիորեն իդեալական էր առավոտյան լույսի ներքո: Մոքովս անցավ, թե ինչքան սքանչելիորեն տարօրինակ ու անսովոր կլիներ ապրել մի վայրում, որտեղ գրեթե ամեն ինչ կառուցված էր արդեն վաղուց մահացածների կողմից:

– Այս տները շա՞տ հին են, – հարցրեց մայրս:

– Ջրանցքային տներից շատերը պատկանում են Ոսկե՝ տասնյոթերորդ դարաշրջանին, – պատասխանեց տաքսու վարորդը: – Մեր քաղաքը շատ հարուստ պատմություն ունի, չնայած զբոսաշրջիկներից շատերին միայն Կարմիր լապտերների թաղամասն է հետաքրքրում: – Մի պահ լռեց, ապա շարունակեց, – որոշ զբոսաշրջիկներ կարծում են, թե Ամստերդամը մեղքի քաղաք է, բայց իրականում այն ազատության քաղաք է: Իսկ ազատության մեջ շատ մարդիկ մեղք են գտնում:

«Ֆիլոսոֆ» հյուրանոցի բոլոր համարները փիլիսոփաների

անուններով էին կոչվում: Իմ ու մայրիկիս սենյակը՝ «Կիերկեգորը», առաջին հարկում էր, իսկ Օգոստոսինը «Հայդեգերն» էր՝ մեզնից մի հարկ վերև: Մեր սենյակը փոքր էր. պատի մոտ դրված երկտեղանոց մահճակալով՝ կողքին «Երկաստիճան օդափոխման սարքս», թթվածնի կոնցենտրատորը ու մահճակալի ոտքի մոտ մի դյուժին վերալիցքավորվող թթվածնի բալոններ: Բացի սարքավորումներից, կային հին, փոշոտ, մաշված նստատեղով, նախշավոր մի թիկնաթոռ, գրասեղան և մահճակալի գլխավերևում Սյորեն Կիերկեգորի աշխատությունների ժողովածուներ պարունակող մի գրադարակ: Գրասեղանին մի զամբյուղ էր դրված, որը լի էր Ջինների կողմից ուղարկված նվերներով՝ փայտե կոշիկներ, նարնջագույն հոլանդական վերնաշապիկ, շոկոլադներ ու շատ ուրիշ հետաքրքիր բաներ:

«Ֆիլոսոֆն» Ամստերդամի հանրահայտ Վոնդելի անվան զբոսայգու ուղիղ կողքին էր: Մայրս ուզում էր գնալ զբոսանքի, բայց ես գերհոգնած էի: Նա միացրեց երկաստիճան օդափոխման սարքը և դեմքիս դրեց դիմակը: Զզվում էի դիմակը դեմքիս խոսելուց, բայց ասացի.

– Դու գնա, զբոսնիր, իսկ ես կզանգեմ քեզ, երբ արթնանամ:

– Լավ, – համաձայնեց, – բարի երազներ, քաղցրիկս:

Բայց երբ մի քանի ժամ հետո արթնացա, նա նստած էր անկյունում դրված փոքրիկ, հին թիկնաթոռին և ուղեցույց էր կարդում:

– Բարի առավոտ, – ասացի:

– Իրականում արդեն երեկո է, – պատասխանեց՝ հոգոցով վեր կենալով տեղից:

Մոտեցավ մահճակալիս, սայլակի մեջ բալոն դրեց, միացրեց խողովակին: Այդ ընթացքում հանեցի դիմակն ու խողովակի ծայրերն անցկացրի քթանցքներիս մեջ: Ընդունվող թթվածնի հաճախականությունը ռոպեում երկուսուկես լիտրի վրա դրեց, ինչը նշանակում էր վեց ժամից փոխելու կարիք կլիներ, հետո ոտքի կանգնելով՝ հարցրեց.

– Ինչպե՞ս ես զգում քեզ:

– Լավ, – ասացի, – հիանալի: Վոնդելի զբոսայգին դուրդ եկա՞վ:

– Ճիշտն ասած, զբոսանքի չգնացի, – ասաց, – բայց զբոսայգու մասին ամեն ինչ կարդացի ուղեցույցում:

– Մա՜, դու պարտավոր չէիր էստեղ մնալ:

Մայրս ուսերը թոթվեց:

– Գիտեմ, բայց ուզում էի մնալ: Շատ եմ սիրում քնած ժամանակ նայել քեզ:

– Ըհը, քնիս հսկիչն ես:

Նա ծիծաղեց, բայց դեռ ինձ վատ էի զգում:

– Ուղղակի ուզում եմ, որ դուրս գաս, լավ ժամանակ անցկացնես, հասկանո՞ւմ ես, – ասացի:

– Լավ, լավ, էս գիշեր մի լավ կզվարճանամ: Մամայական խենթություններ կանեմ, երբ դու և Օգոստոսը ընթրելու գնաք:

– Առանց քե՞զ:

– Հա, առանց ինձ: Ձեզ համար «Օրանյի» ռեստորանում տեղ է պատվիրված, – ասաց մայրս, – պարոն Վան Հաութենի օգնականն է կազմակերպել: Դա հարևան՝ «Յորդան» կոչվող թաղամասում է, որն, ըստ ուղեցույցի, հիանալի վայր է: Էստեղ՝ մոտակայքում, տրամվայների կանգառ կա: Օգոստոսը հասցեն գիտի: Կարող եք ընթրել բացօթյա, հետևել կողքով անցնող նավակներին: Ուղղակի սքանչելի կլինի ու շատ ռոմանտիկ:

– Մա՜:

– Ի՞նչ, բան էր ասացինք էլի: Լավ, արդեն պետք է հագնվես: Միգուցե, սարաֆա՞նդ հագնես:

Ուղղակի ապշել կարելի է. ինչպիսի խելահեղ իրավիճակ: Մայրը իր տասնվեցամյա աղջկան տասնյոթամյա տղայի հետ մենակ ուղարկում է զբոսնելու մի օտար քաղաքում, որ հայտնի է իր ամենաթողությամբ: Բայց սա էլ է մահանալու կողմնակի ազդեցություններից. չէի կարող վազել, պարել, ազոտով հարուստ ուտելիք ուտել, բայց ազատության քաղաքում ես դրա բնակիչներից ամենաանկախների շարքում էի:

https://1915.info

Դե, իհարկե, հագա «Ֆորեվր 21» խանութից գնված կապույտ նախշերով, մինչև ծունկը հասնող ալիքվող, զանգաձև սարաֆաններ, զուգագուլպաներ ու տափակ ներբանով կոշիկներ, քանի որ ինձ դուր էր գալիս նրանից շատ ցածրահասակ լինելը: Գնացի ծիծաղելիորեն փոքրիկ լոգարան ու մազերիս հետ կռիվ տվի այնքան, մինչև 2000-ականների Նատալի Պորտմանի մազերի տեսքն ստացան: Երեկոյան ուղիղ ժամը վեցին (իսկ տանը՝ կեսօրին) դուռը թակեցին:

– Ո՞վ է, – հարցրի դռանը մոտենալով. «Ֆիլոսոֆ» հյուրանոցի դռներին դիտանցքներ չկային:

– Լավ, – պատասխանեց Օգոստոսը. ձայնից զգացի, որ բերանին նորից ծխախոտ կա:

Ինքս ինձ զննեցի: Սարաֆանը կրծքավանդակիս ու անրակներիս բավականին մեծ մասն էր ի ցույց դնում, Օգոստոսն այդպիսի բաց զգեստով դեռ ինձ չէր տեսել: Անպարկեշտ զգեստ չէր, բայց բացառիկ դեպքերից էր, երբ մաշկիս որոշ հատված էի ցուցադրում: (Մայրս այս առումով մի կարգախոս ուներ, որին համաձայն էի. «Լանքասթերներն իրանը չեն մերկացնում):

Դուռը բացեցի: Օգոստոսը հագել էր նեղ դարձածալերով, վրան հիանալի նստող սև կոստյում, տակից՝ երկնագույն վերնաշապիկ ու բարակ սև փողկապ: Նրա անժպիտ բերանի անկյունից ծխախոտ էր կախված:

– Հեյզել Գրեյս, – ասաց, – ցնցող տեսք ունես:

– Ես, – ասացի՝ հուսալով, որ նախադասության շարունակությունը կծագի ձայնալարերիս միջով անցնող օդից, բայց նման բան տեղի չունեցավ: Հետո վերջապես ասացի, – կարծես թե, շատ համեստ եմ հագնված:

– Ա՛խ, այս աղջիկները, – ասաց՝ ժպտալով ինձ:

– Օգոստոս, – ասաց մայրս, – անչափ հմայիչ տեսք ունես:

– Շնորհակալություն, տիկին, – ասաց:

Հետո ինձ պարզեց թևը ու ես, նրան թևանցուկ անելով, ետ նայեցի մորս:

– Դե, մինչ ժամը տասնմեկը, – ասաց մայրս:

Երբ լայնարձակ, ծանրաբեռնված երթևեկությամբ փողոցում համար մեկ տրամվային էինք սպասում, Օգոստոսին ասացի.

– Ըստ երևույթին սա թաղումների կոստյումդ է:

– Ոչ, – ասաց, – էդ կոստյումն էսքան լավը չէ:

Կապույտ ու սպիտակ տրամվայը ժամանեց: Օգոստոսը մեր քարտերը ցույց տվեց վարորդին: Վերջինս ասաց, որ պետք է դրանք թափահարենք շրջանաձև սենսորի առջև: Երբ ներս մտանք լեփ-լեցուն տրամվայ, մի ծերուկ մեզ զիջեց իր տեղը: Ես փորձեցի հրաժարվել, բայց նա համառորեն ցույց էր տալիս նստարանը՝ առաջարկելով նստել: Տրամվայով երթևեկեցինք երեք կանգառ, որի ընթացքում, թեք նստած, պատուհանից դուրս էի նայում Օգոստոսի հետ:

Օգոստոսը մատով ցույց էր տալիս ծառերն ու ասում.

– Նայի՛ր:

Ամենուրեք ջրանցքների երկայնքով ծփիներ էին, որոնցից սերմեր էին թափվում: Բայց դրանք նման չէին սերմերի, այլ կարծես փոքրացված ու գունազրկված վարդի թերթիկներ լինեին: Ու այդ գունատ թերթիկների կույտերը քամու տակ ճախրում էին օդում՝ նման թռչունների երամների: Հազարավոր թերթիկներ՝ ասես գարնանային ձյունամրրիկ:

Մեզ իր տեղը զիջած ծերունին նկատեց մեր հետաքրքրությունն ու անգլերենով ասաց.

– Ամստերդամի գարնանային ձյունը: Ծփիները կոնֆետտիով[1] դիմավորում են գարունը:

Հետո փոխեցինք տրամվայը, ու ևս չորս կանգառից հետո հասանք մի գեղեցիկ ջրանցքով բաժանված փողոց: Հինավուրց կամրջի և գեղատեսիլ ջրանցքային տների արտացոլանքները մեղմ ծածանվում էին ջրի վրա:

«Օրանյին» տրամվայից մի քանի քայլ այն կողմ էր: Ռեստորանը փողոցի մի կողմում էր, իսկ դրա բացօթյա հատվածը՝

1 Զանազան գույների մանր թղթիկներ՝ տոնակատարությունների ժամանակ իրար վրա շաղ տալու համար:

մյուսում՝ ջրանցքի ուղիղ եզրին: Ինձ ու Օգոստոսին տեսնելով՝ ռեստորանի ադմինիստրատորի աչքերը փայլեցին:

– Պարոն և տիկին Ուոթերսներ, – հարցրեց:

– Կարծես թե՝ այո, – ասացի:

– Ձեր սեղանն այնտեղ է, – ասաց՝ ցույց տալով փողոցի մյուս կողմում գտնվող նեղ սեղանը՝ ջրանցքից ընդամենը մի քանի սանտիմետր այն կողմ: – Շամպայնը հյուրասիրություն է մեր կողմից:

Գասն ու ես ժպտալով իրար նայեցինք: Մենք անցանք փողոցը, Օգոստոսը աթոռը քաշեց, որ նստեմ, հետո օգնեց ինձ այն մոտեցնել սեղանին: Երկու շամպայնի բաժակ էր դրված սպիտակ սփռոցով ծածկված սեղանին: Օդի թեթևակի սառնությունն սքանչելիորեն հավասարակշռության էր բերում արևի լույսը: Մեր մի կողմով արագ սլանում էին հեծանվորդ-ները՝ աշխատանքից տուն վերադարձող լավ հագնված տղամարդիկ ու կանայք, իրենց ընկերների հեծանիվների հետնամասում կողքանց նստած անհավանականորեն հմայիչ շիկահերներ, ծնողների հետևում՝ պլաստմասե նստատեղերի վրա վեր ու վար թռչող առանց սաղավարտի փոքրիկներ: Իսկ մեր մյուս կողմում ջրանցքի ջուրը հեղձվում էր միլիոնավոր կոնֆետտիների սերմերից: Աղյուսե ափերի մոտ կառանած էին կիսով չափ անձրևաջրով լցված փոքրիկ նավակներ, որոնցից որոշները համարյա սուզված էին ջրի տակ: Մի փոքր հեռու՝ ջրանցքի ներքևում, երևում էին կամրջանավերի վրա լողացող տները, իսկ ջրանցքի մեջտեղից դանդաղ դեպի մեզ էր շարժվում շարժական ստերեո համակարգով և այգու աթոռներով կահավորված բացօթյա, հարթահատակ մի նավակ: Օգոստոսը վեր բարձրացրեց շամպայնի բաժակը: Ես էլ իմ բաժակը վերցրի, թեև երբեք ալկոհոլ չէի օգտագործել՝ չհաշված հայրիկիս գարեջրից արած փոքրիկ կումերը:

– Լավ, – ասաց Օգոստոսը:

– Լավ, – ասացի, ու մենք իրար չրխկացրինք մեր բաժակները:

https://1915.info

https://1915.info

Ես կում արեցի: Փոքրիկ պղպջակները հալվեցին բերանումս ու ճամփա բռնեցին հյուսիս՝ դեպի ուղեղս: Քաղցր էր, սառը և համեղ:

– Ինչ լավն է, – ասացի, – նախկինում երբեք շամպայն չէի խմել:

Հայտնվեց ամրակազմ, շեկ, ալիքվող մազերով մատուցողը: Կարծես թե նա Օգոստոսից էլ բարձրահասակ էր:

– Իսկ գիտեք, – սկսեց հաճելի ակցենտով, – թե ինչ է ասել Դոմ Պերինյոնը շամպայնը հայտնագործելուց հետո:

– Ոչ, – ասացի:

– Նա կանչել է իր վանական եղբայրներին՝ բացականչելով. «Շուտ եկեք այստեղ, ես ճաշակում եմ աստղերը»: Բարի գալուստ Ամստերդամ: Ցանկանում եք ծանոթանալ մեր այսօրվա ճաշացանկին, թե՞ կօգտվեք շեֆ խոհարարի հատուկ առաջարկից:

Ես նայեցի Օգոստոսին, նա էլ՝ ինձ:

– Շեֆ խոհարարի հատուկ առաջարկը հետաքրքիր է հնչում, բայց Հեյզելը բուսակեր է, – ասաց Օգոստոսը:

Դրա մասին ընդամենը մեկ անգամ էի ասել նրան՝ մեր առաջին հանդիպման ժամանակ:

– Ոչ մի խնդիր, – ասաց մատուցողը:

– Հիանալի է: Իսկ կարո՞ղ եք էլի բերել սրանից, – Օգոստոսը նորից շամպայն խնդրեց:

– Իհարկե, – ասաց մատուցողը, – այս երեկո շշալցրել ենք բոլոր աստղերը, սիրելի ընկերներ: Ահ, այս կոնֆետտիները, – ասաց՝ թեթևակի հպումով հեռացնելով ծառի սերմը մերկ ուսիս վրայից, – վերջին տարիներին երբեք այսքան առատ չի եղել: Դրանք ամենուր են: Շատ նյարդայնացնող է:

Մատուցողը հեռացավ: Դիտում էինք, թե ինչպես են կոնֆետտիները թափվում երկնքից, զեփյուռի ներքո սահում գետնի վրայով ու ընկնում ջրանցք:

– Մի տեսակ դժվար է հավատալ, որ ինչ-որ մեկին սա կարող է նյարդայնացնել, – մի քիչ հետո ասաց Օգոստոսը:

https://1915.info

– Մարդիկ միշտ ընտելանում են գեղեցկությանը:

– Բայց ես քո գեղեցկությանը դեռ չեմ ընտելացել, – ժպտալով պատասխանեց:

Զգացի, թե ինչպես եմ կարմրում:

– Շնորհակալ եմ ինձ հետ Ամստերդամ գալու համար, – ասաց:

– Շնորհակալ եմ, որ թույլ տվեցիր զավթել քո «երազանքը», – ասացի:

– Շնորհակալ եմ էս շլացուցիչ զգեստը հագնելու համար, – ասաց:

Ես տարուբերեցի գլուխս՝ փորձելով չժպտալ նրան: Չէի ուզում նռնակ լինել: Բայց միևնույն ժամանակ նա շատ լավ գիտեր, թե ինչ է անում: Ու սա նրա ընտրությունն էլ էր:

– Հեյ, իսկ ինչպե՞ս է վերջանում այն բանաստեղծությունը:

– Հը՞:

– Էն, որ ինձ համար արտասանում էիր ինքնաթիռում:

– Օ՜, «Փրաֆրոքը»: Էսպես է վերջանում. «Ու ծվարել ենք ծովախոռոչում/ջրիմուռներով՝կարմիրուշագանակագաթույր, պսակազարդ ծովահարսներին հյուր/ Մինչ արթնանալով մարդկային ձայնից, կխեղդվենք–կկորչենք անլուր»:

Օգոստոսը ծխախոտ հանեց ու ֆիլտրը սեղանին թփթփացնելով՝ ասաց.

– Ախ, էդ հիմար մարդկային ձայները, միշտ ամեն ինչ փչացնում են:

Մատուցողը վերադարձավ ևս երկու շամպայնի բաժակով ու, ինչպես նա ասաց՝ «նարդոսով համեմված բելգիական սպիտակ ծնեբեկով»:

– Ես էլ նախկինում երբեք շամպայն չէի խմել, – մատուցողի գնալուց հետո ասաց Գասը: – Դե, եթե դա քեզ հետաքրքրում է: Ու սպիտակ ծնեբեկ էլ երբեք չեմ փորձել:

Այդ ընթացքում ծամում էի առաջին կտորը:

– Շատ համեղ է, – վստահեցրի:

Մի կտոր կծեց, կուլ տվեց ու բացականչեց.

– Աստված իմ, եթե ծնեբեկը միշտ էս համն ունենար, ես էլ բուսակեր կլինեի:

Լաքապատ նավակով մի քանի մարդ ջրանցքի վրայով ներքևից մոտեցան մեզ: Նրանցից մեկը՝ շիկագանգուր մի կին, մոտ երեսուն տարեկան, գարեջրից հարբած՝ բարձրացրեց բաժակն ու բարձրաձայն ինչ-որ բան ասաց մեզ:

– Մենք հոլանդերեն չենք հասկանում,- ի պատասխան գոչեց Օգոստոսը:

Նրանցից մեկ ուրիշը բացականչեց թարգմանությունը.

– Գեղեցիկ զույգը գեղեցիկ է:

Ուտելիքն այնքան համեղ էր, որ մատուցվող յուրաքանչյուր ուտեստի հետ մեր զրույցն ակամայից վերածվում էր դրա համեղության գովերգումների:

– Ուզում եմ, որ էս մանուշակագույն գազարով ռիզոտտոն[1] մարդ դառնա: Ես նրան կտանեմ Լաս Վեգաս ու կամուսնանամ հետը:

– Բուրումնավետ ոլոռով օշարակ, դու էնքան անսպասելիորեն հիասքանչ ես:

Երանի՜ ավելի քաղցած լինեի:

Կարմիր մանանեխի տերևներով համեմված կանաչ սխտորով նյոկիից[2] հետո մատուցողն ասաց.

– Հաջորդն աղանդերն է: Նախքան աղանդերը էլի աստղեր կցանկանա՞ք:

Գլուխս տարուբերելով՝ հրաժարվեցի: Երկու բաժակը բավական էր ինձ: Հանգստացնողների ու ցավազրկողների նման շամպայնի հանդեպ նույնպես բարձր դիմադրողականություն ունեի. ինձ տաքացած էի զգում, բայց ոչ՝ հարբած: Ու չէի էլ ուզում հարբել: Այսպիսի գիշերները հաճախ չեն պատահում: Ես ուզում էի հիշել այս գիշերը:

– Ըմմմմ, – ասացի, երբ մատուցողը հեռացավ:

---

1 Բրնձից պատրաստված իտալական ուտեստ:

2 Իտալական խմորագնդիկներ: Սովորաբար պատրաստում են սպիտակաձավարով, ալյուրով, պանրով, ձվով, կարտոֆիլով, հացի փշրանքներով և այլն:

https://1915.info

Օգոստոսը, նայելով ջրանցքն ի վար, ծուռ ժպտում էր, իսկ ես նայում էի ջրանցքն ի վեր: Նայելու, տեսնելու շատ բան ունեինք, հետևաբար, տիրող լռությունն անհարմարության զգացում չէր առաջացնում, բայց ես ուզում էի, որ ամեն ինչ կատարյալ լիներ: Ու երևի թե կատարյալ էր, բայց այնպիսի զգացողություն ունեի, ասես մեկը բեմադրած լիներ իմ պատկերացրած, երազած Ամստերդամը, ինչն անընդհատ հիշեցնում էր, որ այս ընթրիքը, ինչպես և մեր ճանապարհորդությունը, պարզապես քաղցկեղի բոնուսներից էր: Ուղղակի ուզում էի, որ խոսեինք ու կատակեինք, մեզ զգայինք հարմար ու անկաշկանդ, ինչպես այն երեկո մեր տանը՝ միասին բազմոցին նստած, բայց այս ամենի մեջ, ինչ-որ տեղ խորքում, լարվածություն էր թաքնված:

– Սա թաղումներ գնալու կոստյում չէ, – քիչ անց խոսեց Օգոստոսը: – Երբ առաջին անգամ իմացա, որ հիվանդ եմ, դե, այսինքն, երբ ինձ ասացին, որ ութսունհինգ տոկոսով բուժվելու հնարավորություն ունեմ: Գիտեմ, որ հավանականությունը բավականին մեծ էր, բայց ինձ անընդհատ հետապնդում էր միտքը, թե սա ռուսական ռուլետկայի նման մի բան է: Նկատի ունեմ, ես վեց ամիս կամ միգուցե մեկ տարի ստիպված էի լինելու անցնել դժոխքի միջով, կորցնել ոտքս ու վերջում, հնարավոր է, ոչինչ էլ չստացվեր, հասկանո՞ւմ ես:

– Հասկանում եմ, – ասացի, թեև, իրականում, այդքան էլ չէի հասկանում:

Ես միշտ էլ մահվան եզրին կանգնած հիվանդ եմ եղել, ու ամբողջ բուժումս ուղղված է եղել կյանքս երկարեցնելուն, ոչ թե քաղցկեղս բուժելուն: Ֆալանքսիֆորը որոշակի շփոթություն էր մտցրել քաղցկեղիս պատմության մեջ, բայց, միևնույն է, ես Օգոստոսից տարբերվում էի: Կյանքիս վերջին գլուխը գրվել էր հենց ախտորոշման պահին, իսկ Գասը, ինչպես քաղցկեղ տարած շատ հիվանդներ, ապրում էր անորոշության մեջ:

– Դե, հա, – շարունակեց Գասը, – ու ես ուզում էի պատրաստ

https://1915.info

https://1915.info

լինել դրան: Մենք հողակտոր գնեցինք Քրաուն Հիլում, հետո մի օր հայրիկիս հետ գնացինք Էնտեղ: Մի քիչ շրջելուց հետո ընտրեցի գերեզմանիս տեղը: Ու նաև ծրագրել էի իմ ամբողջ թաղման արարողությունը, մի խոսքով ամեն, ամեն ինչ: Իսկ վիրահատությունից առաջ ծնողներիս խնդրեցի ինձ համար մի լավ կոստյում գնեն, մեկ էլ տեսար՝ մահացա: Եվ մինչև էսօր սա հագնելու դեռ ոչ մի առիթ չէի ունեցել:

– Ուրեմն սա քո մահվան կոստյումն է:

– Ճիշտ էդպես: Իսկ դու մահվան հագուստ չունե՞ս:

– Ունեմ, – ասացի, – տասնհինգամյակիս գնված զգեստն է, բայց ժամադրություններին դա չեմ հագնում:

Նրա աչքերը բոցավառվեցին:

– Ուրեմն սա ժամադրությո՞ւն է, – հարցրեց:

Ամաչելով խոնարհեցի հայացքս:

– Մի ճնշիր ինձ, լա՞վ:

Երկուսս էլ արդեն լրիվ կշտացել էինք, բայց հյութալի մարակույայով[1] պատված սերուցքային աղանդերը չափից լավն էր հրաժարվելու համար. գոնե մի փոքրիկ կտոր անպայման պետք էր փորձել, ուստի ոտքերս կախ էինք գցել աղանդերի շուրջը՝ փորձելով նորից սովածանալ: Արևը կարծես չարաճճի երեխա լիներ, որ համառորեն չէր ուզում գնալ քնելու: Արդեն ժամը ութն անց կես էր, բայց դեռ լուսավոր էր:

Մեկ էլ հանկարծ Օգոստոսը հարցրեց.

– Հանդերձյալ կյանքին հավատո՞ւմ ես:

– Կարծում եմ հավերժական կյանքը սխալ հասկացություն է:

– Սխալ հասկացությունը դու ես, – ասաց՝ քթի տակ ծիծաղելով:

– Գիտեմ, դրա համար էլ ինձ դուրս են հանում շրջանառությունից:

– Ընդհանրապես ծիծաղելի չէ, – ասաց՝ գլուխը փողոցի կողմը թեքելով:

---

1 Արևադարձային միրգ

https://1915.info

Երկու աղջիկ, նստած նույն հեծանիվին, անցան փողոցով:

– Դե լավ, ուղղակի կատակ էր, – ասացի:

– Քո շրջանառությունից դուրս հանվելու միտքն ընդհանրապես ծիծաղելի չէ ինձ համար: Բայց լավ, լուրջ, վերադառնանք հանդերձյալ կյանքին:

– Ոչ, չեմ հավատում, – ասացի, բայց հետո ինքս ինձ ուղղեցի, – դե միգուցե ոչ կտրականապես, բայց և էնպես՝ ոչ: Իսկ դո՞ւ:

– Այո, – ասաց՝ վստահությամբ լի ձայնով: – Լիովին: Ոչ թե, որ երկնքում միաեղջյուրներ ես հեծնում, տավիղ նվագում և ամպեղեն դղյակում ապրում: Բայց, այո, հավատում եմ «Ինչ-որ մի բանի»՝ մեծատառ «Ի»-ով: Ու միշտ էլ հավատացել եմ:

– Ճի՞շտ, – զարմացա:

Հավատքը երկնային արքայության հետ միշտ մի տեսակ ասոցացրել էի դատարկամտության հետ: Բայց Գասը հիմար չէր:

– Այո, – ցածրաձայն շարունակեց, – ես հավատում եմ «Արքայական վշտի» էս տողին՝ «Ծագող արևը չափազանց պայծառ էր նրա խավարող աչքերում»: Կարծում եմ ծագող արևն Աստվածն է, ու նրա աչքերը խավարում են, բայց անհետ չեն կորչում: Չեմ կարծում, որ հետո վերադառնում ենք ապրողներին հետապնդելու կամ սփոփելու համար, բայց հավատում եմ, որ ինչ-որ բան կատարվում է մեզ հետ:

– Ու դու վախենո՞ւմ ես մոռացությունից:

– Այո, երկրային մոռացությունից եմ վախենում: Չեմ ուզում ծնողներիս նման հնչել, բայց հավատում եմ, որ մարդիկ հոգի ունեն, ու ես հավատում եմ հոգու անմահությանը: Մոռացության վախն ուրիշ բան է: Վախենում եմ, որ ոչինչ չեմ կարողանալու տալ իմ կյանքի փոխարեն: Եթե կյանքդ չես ծառայեցնում համայն աշխարհի բարօրությանը, գոնե պետք է մահանաս մարդկությանն ինչ-որ օգուտ տալով: Վախենում եմ, որ հա՛մ իմ կյանքը, հա՛մ էլ մահը անիմաստ ու անօգուտ են լինելու:

Չհամաձայնելով՝ տարուբերեցի գլուխս:

– Ինչ, – հարցրեց:

– Էդ քո սևեռուն միտքը՝ մահանալ ինչ-որ մի բանի համար, կամ հետևիցդ մի մեծ հերոսական հետք թողնել, չգիտեմ, մի քիչ տարօրինակ է:

– Բոլորն են ուզում արտասովոր կյանք վարել:

– Ոչ բոլորը, – ասացի՝ չկարողանալով թաքցնել վրդովմունքս:

– Բարկացա՞ր:

– Ուղղակի, – ասացի՝ չկարողանալով ավարտել նախադասությունը, – ուղղակի: – Մեր միջև երերում էր մոմի լույսը, – քո կողմից ուղղակի ստորություն է՝ ասել, որ միայն էն կյանքերն են կարևոր, որ ծառայել են ինչ-որ մի բանի համար կամ մահացել ինչ-որ բանի համար: Իսկական ստորություն է ինձ նման բան ասելը:

Չգիտես ինչու, ինձ փոքր երեխայի պես էի զգում: Փորձելով անտարբեր ձևանալ՝ աղանդերից մի կտոր դրեցի բերանս:

– Կներես, – ասաց, – ես դա՛ նկատի չունեի: Ուղղակի իմ մասին էի մտածում:

– Ըհը, ճիշտ է, – ասացի:

Ստամոքսս արդեն չափից շատ լիքն էր, աղանդերը ուտել-վերջացնել չէի կարող: Բացի դա՝ վախենում էի, թե կարող է փսխեմ, քանի որ հաճախ էի փսխում ուտելուց հետո (շատակեր չէի, պարզապես քաղցկեղի հետևանքներն էին): Աղանդերս Գասի կողմը հրելով՝ առաջարկեցի նրան, բայց հրաժարվեց՝ տարուբերելով գլուխը:

– Կներես, – նորից ասաց՝ սեղանի վրայով ձգվելով, որ ձեռքս բռնի:

Ես թույլ տվեցի ձեռքս բռնել:

– Գիտե՞ս, ամեն ինչ կարող էր ավելի վատ լինել:

– Էդ ինչպե՞ս, – հարցրի՝ հոգու հետ խաղալով:

– Դե, իմ զուգարանակոնքի վերևում մի էսպիսի գեղագրություն կա. «Ամեն օր լողացիր Աստծու խոսքերի մխիթարության

https://1915.info

մեջ»: Եվ, ուրեմն, կարող էի շատ ավելի վատը լինել, Հեյզել:

– Հակահիգիենիկ է հնչում, – ասացի:

– Կարող էի ավելի վատը լինել:

– Կարող էիր ավելի վատը լինել, – կրկնեցի ժպտալով:

Նա իսկապես հավանում էր ինձ: Ու, միգուցե, ես ինքնասիրահարված նարգիզ էի, բայց, երբ այդ պահին՝ «Օրանյիում», հասկացա դա, սկսեցի ավելի շատ հավանել նրան:

Երբ մեր մատուցողը եկավ աղանդերը հավաքելու, ասաց.

– Պարոն Փիթեր վան Հաութենը վճարել է ձեր ընթրիքի համար:

Ու Օգոստոսը ժպտալով ասաց.

– Էդ Փիթեր վան Հաութենը շատ լավ մարդ է երևում:

Մինչ քայլում էինք ջրանցքի երկայնքով, մթնեց: «Օրանյիից» մի թաղամաս վերև կանգնեցինք մի նստարանի մոտ, որ շրջապատված էր ճաղաշարին ու իրար ամրացրած հին ու ժանգոտ հեծանիվներով: Նստեցինք կողք կողքի՝ դեմքով դեպի ջրանցքը, ու նա մի ձեռքով գրկեց ինձ:

Այդտեղից տեսնում էի Կարմիր լապտերների թաղամասից առկայծող լույսի ճառագայթները: Ու, չնայած, դա *Կարմիր* լապտերների թաղամասն էր, բայց այնտեղից եկող լույսը մի տեսակ մռայլ ու չարագուշակ կանաչ էր: Ես պատկերացրի նեղլիկ փողոցներով թավալգլոր թրև եկող հարբած ու ծխած հազարավոր զբոսաշրջիկների:

– Չեմ հավատում, որ վաղը նա մեզ ամեն ինչ պատմելու է, – ասացի: – Փիթեր վան Հաութենը մեզ պատմելու է աշխարհի ամենալավ գրքի հանրահայտ չգրված վերջաբանը:

– Դրան գումարած՝ նա վճարեց մեր ընթրիքի համար, – ասաց Օգոստոսը:

– Մեր հանդիպումն էսպես եմ պատկերացնում. սկզբից նա կխուզարկի մեզ՝ համոզվելու, որ ձայնագրող սարքեր չունենք, իսկ հետո կնստի մեր մեջտեղում՝ իր հյուրասենյակի բազմոցի վրա ու շշուկով կասի, թե արդյոք Աննայի մայրը, ի վերջո, ամուսնացավ Վարդակակաչ Մարդու հետ:

– Մի մոռացիր Գերմանամուկ Սիզիփոսի մասին, – ավելացրեց Օգոստոսը:

– Իհարկե, ու նաև, թե ինչ ճակատագիր է սպասվում Գերմանամուկ Սիզիփոսին:

Առաջ թեքվեցի՝ ջրանցքի մեջ նայելու: Ծփիների գունատ թերթիկները ամբողջությամբ պատել էին ջրանցքը. շատ հետաքրքիր տեսարան էր:

– Գրքի շարունակությունը, որ գոյություն կունենա միայն մեզ համար, – ասացի:

– Իսկ ի՞նչ գուշակություններ ունես:

– Դե, անկեղծ ասած, չգիտեմ: Վրայով երևի մի հազար անգամ անցել եմ, բայց ամեն անգամ վերընթերցելիս տարբեր մտքերի եմ հանգել, հասկանում ես, – նա գլխով արեց, – իսկ ո՞րն է քո տեսությունը:

– Կարծում եմ՝ Վարդակակաչ Մարդը խաբեբա չէ, բայց հարուստ էլ չէ, ինչպես հավատացնում է նրանց: Ու մտածում եմ, որ Աննայի մահից հետո նրա մայրը Վարդակակաչ Մարդու հետ մեկնում է Հոլանդիա՝ էնտեղ ընդմիշտ բնակություն հաստատելու մտադրությամբ, բայց ոչինչ չի ստացվում, քանի որ նա ուզում է մոտ լինել դստերը:

Չէի պատկերացնում, որ նա այդքան շատ էր խորհել գրքի շուրջը, որ «Արքայական վշտի» նկատմամբ հետաքրքրությունը կապ չուներ իմ հանդեպ նրա հետաքրքրության հետ:

Ներքևում ջուրը, բախվելով ջրանցքի քարե պատերին, մեղմիկ ծփում էր: Ընկերների մի խումբ, արագ-արագ կոկորդային հոլանդերենով իրար ինչ-որ բան բղավելով, հեծանիվներով սլացավ մեր կողքով:

Փոքրիկ նավակները՝ ինձանից ոչ շատ երկար, կիսով չափ սուզված ջրի տակ, չափից երկար ժամանակ լրիվ անշարժ, կանգնած ջրի հոտը, ուսիս դրված՝ ինձ դեպի իրեն ձգող Օգոստոսի ձեռքը, նրա իրական ոտքը ամողջությամբ՝ ոտնաթաթից մինչև կոնքերը, հպված իմ իրական ոտքին: Մի թեթև հենվեցի նրա մարմնին: Նա ցավից կծկվեց:

https://1915.info

– Ներիր, լավ ես:

Ակնհայտ ցավի միջով մի կերպ «այո» արտաբերեց:

– Ներիր, – կրկնեցի, – իմ ոսկրոտ ուսերը...

– Ամեն ինչ կարգին է, – ասաց, – չէ, շատ գեղեցիկ ուսերը:

Բավականին երկար ժամանակ նստած մնացինք այդտեղ: Վերջապես ձեռքը վերցրեց ուսից ու դրեց նստարանի թիկնակին: Հիմնականում ուղղակի լուռ նայում էինք ջրանցքին: Ես անընդհատ մտածում էի, թե ինչպե՞ս են կարողացել ստեղծել այս վայրն ու պահպանել դրա գոյությունը, մինչդեռ պետք է արդեն ջրի տակ անցած լիներ, ու որ նաև ես էլ բժիշկ Մարիայի համար Ամստերդամի նման մի բան էի՝ կիսախորտակված մի անոմալիա: Եվ այս ամենն ստիպեցին ինձ մտածել մահվան մասին:

– Կարո՞ղ եմ քեզ Քերոլայն Մեթերսի մասին հարցնել:

– Իսկ դու ասում ես մահից հետո կյանք չկա, – ասաց՝ առանց ինձ նայելու: – Իհարկե, կարող ես հարցնել: Իսկ ի՞նչ ես ուզում իմանալ:

Ուզում էի իմանալ, որ նրա հետ ամեն ինչ կարգին կլինի իմ մահից հետո: Չէի ուզում լինել նռնակ, մի չար, պայթյունավտանգ ուժ իմ սիրելի մարդկանց կյանքում:

– Ուղղակի, ըըմ, ուզում եմ իմանալ, թե ինչ կատարվեց:

Նա հոգոց հանեց՝ արտաշնչելով այնքան երկար, որ ասես պարծենար իմ քնձռոտ թոքերի մոտ: Մի նոր ծխախոտ դրեց բերանը:

– Գիտես, որ աշխարհում հիվանդանոցի մանկական խաղահրապարակից ավելի քիչ խաղացված վայր չկա:

Գլխով արեցի:

– Դե, ես մի քանի շաբաթ Մեմորիալում էի, երբ ոտքս էին հեռացնում ու մնացած ամեն ինչ: Հինգերորդ հարկում էի: Իմ սենյակից տեսարան էր բացվում դեպի խաղահրապարակ, որը, իհարկե, միշտ ամայի էր: Ու արդեն լող էի տալիս հիվանդանոցի բակի դատարկ խաղահրապարակի փոխաբերական ռեզոնանսի մեջ, երբ մի աղջիկ սկսեց ամեն օր

միայնակ հայտնվել խաղահրապարակում՝ լրիվ միայնակ ճոճվելով ճոճանակի վրա, ինչպես ֆիլմերում է լինում: Հետո իմ լավ բուժքույրերից մեկին խնդրեցի հարցուփորձ անել ու ամեն ինչ պարզել էդ աղջկա մասին: Եվ մի օր էդ բուժքույրը նրան բերեց ինձ այցի: Էդ աղջիկը Քերոլայնն էր: Ես գործի դրեցի իմ ամբողջ խարիզման՝ նրան գրավելու համար:

Նա լռեց, և ես որոշեցի մի բան ասել.

– Դու էնքան էլ խարիզմատիկ չես:

Նա թերահավատորեն ժպտաց:

– Ուղղակի շատ գրավիչ տեսք ունես, – բացատրեցի:

Նա ծիծաղեց:

– Մահացած մարդկանց մասին..., – ասաց, բայց միանգամից կանգ առավ: – Բանն այն է, որ դու սրիկայի պես ես խոսում, եթե չես ռոմանտիկացնում նրանց հետ կապված ամեն ինչ, բայց իրականում... իրականում ամեն ինչ շատ ավելի բարդ է: Դե, քեզ հաստատ ծանոթ են քաղցկեղի ուժեղ ու հաստատակամ զոհերի մասին նման ամպագոռգոռ խոսքերը, թե նրանք, անմարդկային ուժ և ջանքեր գործադրելով, հերոսաբար ու անտրտունջ պայքարում են իրենց հիվանդության դեմ: Եվ երբեք չեն դադարում ժպտալուց՝ նույնիսկ ամենավերջում և այլն, և այլն:

– Իհարկե, – ասացի, – նրանք բարեսիրտ ու վեհանձն մարդիկ են, որոնց յուրաքանչյուր շունչը «ոգեշնչման աղբյուր է բոլորիս համար»: Նրանք էնքան ուժեղ են: Մենք հիանում ենք նրանցով:

– Ճիշտ է, իսկ իրականում, ակնհայտորեն բացի մեզնից, ըստ վիճակագրության, քաղցկեղով հիվանդ երեխաներն ավելի հաճախ էդքան էլ հիանալի, կարեկցող, համեստ ու դիմացկուն չեն լինում: Քերոլայնն անընդհատ վատ տրամադրություն ուներ, միշտ նոթերը կիտած էր ու խղճուկ, բայց դա ինձ դուր էր գալիս: Ինձ դուր էր գալիս համարել, որ ամբողջ աշխարհում ես միակ մարդն էի, որին նա չէր ատում, ու մենք ամբողջ ժամանակը միասին էինք անցկացնում՝

https://1915.info

սրան-նրան ծաղրելով: Ծաղրում էինք բուժքույրերին, մեր ընտանիքների անդամներին, մի խոսքով, բոլոր-բոլորին: Ու չգիտեմ՝ նա էդպիսին էր, թե ուռուցքն էր պատճառը: Նրա բուժքույրերից մեկը մի օր ինձ ասաց, որ Քերոլայնի ուռուցքը բժիշկների շրջանում հայտնի էր որպես «տականք ուռուցք», որովհետև մարդուն հրեշ է դարձնում: Եվ ուրեմն էդ աղջիկը, որ զրկվել էր ուղեղի մեկ հինգերորդ մասից, ու որի մոտ «տականք ուռուցքի» կրկնություն էր գրանցվել, նա... նա քաղցկեղով հիվանդ, դիմացկուն երեխայի հերոսության տիպար չէր: Նա... անկեղծ ասած, իսկական լիրբ էր: Բայց չես կարող նման բան ասել, քանի որ նա ուռուցք ուներ ու նաև, որովհետև հիմա մահացած է: Բայց դե հասկանում ես, նա շատ պատճառներ ուներ էդքան տհաճ ու անտանելի լինելու համար:

Իհարկե հասկանում էի:

– Հիշո՞ւմ ես «Արքայական վշտից» էն հատվածը, երբ Աննան ֆուտբոլի դաշտի միջով գնում է ֆիզկուլտուրայի դասի կամ չգիտեմ ուր ու հանկարծ դեմքով ընկնում է խոտի վրա: Էդ ժամանակ հասկանում է, որ քաղցկեղը վերադարձել է, տարածվել նյարդային համակարգում, ու չի կարողանում տեղից վեր կենալ, մնում է էդպես տեղում մեխված, դեմքը՝ ֆուտբոլի դաշտի խոտից մեկ մատնաչափ վերև, մոտիկից զննելով խոտը ու նկատելով դրա վրա ընկնող արևի շողը... Բառացիորեն չեմ հիշում տողերը, բայց մոտավորապես էս-պես էր. Աննան ուիթմենյան բացահայտում է անում, որ մարդկային էությունը արարչագործության վեհությամբ հիանալու հնարավորությունն է: Հիշո՞ւմ ես էդ հատվածը:

– Հիշում եմ:

– Էսպիսով, հետագայում, երբ սկսեցին ամբողջ ներքինս մշակել քիմիայով, չգիտես ինչու, իմ մեջ հույս արթնացավ: Ոչ թե հենց կոնկրետ կենդանի մնալու, այլ ուղղակի ինձ զգում էի էնպես, ինչպես Աննան՝ գրքում. հուզմունքի ու երախտագիտության զգացողությունը, որ ուղղակի էդ ամեն

ինչով հիանալու հնարավորություն ունես: Բայց էդ ընթացքում Քերոլայնի վիճակն ավելի ու ավելի էր վատանում: Որոշ ժամանակ անց նրան տուն ուղարկեցին: Եվ լինում էին պահեր, երբ մտածում էի, թե կարող ենք սովորական, նորմալ հարաբերություններ ունենալ, բայց, իրականում, չէինք կարող, քանի որ նրա մտքերի ու խոսքի միջև զտիչ չկար, ինչը ցավալի էր, տհաճ ու շատ հաճախ վիրավորական: Բայց դե գլխուղեղի քաղցկեղով հիվանդ աղջկան լքելու իրավունք չունես: Ու նրա ծնողներն էլ էին հավանում ինձ, նաև փոքր եղբայր ուներ, որն իսկապես ընտիր երեխա էր: Ու, վերջիվերջո, ինչպե՞ս կարող ես լքել նրան, երբ նա մահվան եզրին է: Էդ ամեն ինչը շարունակվեց մոտ մեկ տարի, բայց կարծես հավերժություն լիներ: Ամբողջ տարին անցկացնել մի աղջկա հետ, որ մեկ էլ հանկարծ կսկսեր ծիծաղել՝ մատը տնկելով պրոթեզիս ու ինձ «միոտանի սև սատանա» անվանելով:

– Օ՜, ոչ:

– Դե երևի ուռուցքն էր պատճառը, որ խժռում էր նրա ուղեղը: Կամ միգուցե ոչ էլ ուռուցքն էր մեղավոր դրանում, բայց դա չէիր կարող իմանալ, քանի որ նա ու իր ուռուցքն անբաժանելի էին: Եվ երբ վիճակն ավելի վատացավ, սկսեց անընդհատ կրկնել նույն պատմություններն ու ծիծաղել սեփական ասածների վրա, նույնիսկ եթե նույն բանը էդ օրվա մեջ արդեն մի հարյուր անգամ կրկնել էր: Շաբաթներ շարունակ նորից ու նորից նույն կատակն էր անում, օրինակ՝ «Գասը հիանալի ոտքեր ունի: Ավելի ճիշտ՝ ոտք», ու հետո սկսում էր խելագարի պես ծիծաղել:

– Օ՜, Գաս, – ասացի, – դա ուղղակի ..., – չգիտեի էլ ինչ ասեմ:

Նա ինձ չէր նայում: Մտածեցի, որ այդ պահին նրան նայելն իմ կողմից մի տեսակ ոտնձգություն կլինի նրա զգացմունքների հանդեպ: Զգացի, թե ինչպես առաջ հակվեց, բերանից հանեց ծխախոտը, պտտեցրեց բթամատի ու ցուցա-

https://1915.info

մատի արանքում, իսկ հետո նորից բերանը դրեց:

– Դե, – ասաց, – ճիշտն ասած, իրոք, հիանալի ոտք ունեմ:

– Ցավում եմ, – ասացի, – իսկապես շատ եմ ցավում:

– Ամեն ինչ կարգին է, Հեյզել Գրեյս: Պարզ ասեմ, երբ աջակցության խմբակում ինձ թվաց, թե Քերոլայն Մեթերսի ուրվականն եմ տեսնում, անկեղծ ասած, էդքան էլ չուրախացա: Նայում էի ուշադիր, բայց ոչ կարոտով լի: Դե, հասկանում ես, թե ինչու:

Գրպանից հանեց ծխախոտի տուփը, ծխախոտը հետ դրեց տուփի մեջ:

– Ցավում եմ, – նորից ասացի:

– Ես էլ, – ասաց:

– Չեմ ուզում ես էլ քեզ հետ նման կերպ վարվեմ, – ասացի:

– Օ՛, ես դրան ընդհանրապես դեմ չեմ, Հեյզել Գրեյս: Ինձ համար մեծ պատիվ կլինի, եթե սիրտս կոտրես:

https://1915.info

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Արթնացա Հոլանդիայի ժամանակով առավոտյան ժամը չորսին՝ պատրաստ դիմավորելու նոր բացվող օրը: Նորից քնելու բոլոր ջանքերս ձախողվեցին: Ես ուղղակի պառկել էի օդը ներս մղող ու դուրս հանող օդափոխման սարքով՝ վայելելով վիշապային ձայները, բայց երազելով, որ ինքս կարողանայի ընտրել շնչառության ռիթմը:

Մինչև ժամը վեցի կողմերը վերընթերցեցի «Արքայական վիշտը», հետո մայրս արթնացավ ու գլորվեց ինձ մոտ: Գլուխը դրեց ուսիս՝ բավականին անհարմար և աղոտ Օգոստոսին հիշեցնող դիրքով:

Շուտով մեր համարում մատուցեցին նախաճաշը, որը, ի մեծ ուրախություն ինձ, ներառում էր երշիկեղեն և ամերիկյան ընդունված նախաճաշային կառուցվածքը ժխտող շատ ուրիշ ուտեստներ: Զգեստը, որ մտադիր էի հագնել Փիթեր վան Հաութենի հետ հանդիպմանը, փաստորեն, արդեն օգտագործել էի «Օրանյիում» ընթրիքի ժամանակ: Ցնցուղ ընդունելուց ու մազերս կիսով չափ հարթեցնելուց հետո, մոտ երեսուն րոպե մորս հետ քննարկում էինք ձեռքի տակ եղած հագուստների առավելություններն ու թերությունները, մինչև որոշեցի հնարավորինս «Արքայական վշտի» հերոսուհի Աննայի նման հագնվել. «Չաք Թեյլոր» կեղեր, մուգ ջինս ու երկնագույն սպորտային շապիկ:

Շապիկի վրա տպված էր Ռենե Մագրիտի հայտնի սյուռեալիստական նկարը, որտեղ նա մի ծխամորձ էր պատկերել,

https://1915.info

իսկ տակը շեղ տառերով գրել՝ *Ceci n'est pas une pipe («Սա ծխամորձ չէ):*

– Մեկ է, էդ շապիկի իմաստը չեմ հասկանում, – ասաց մայրս:

– Փիթեր վան Հաութենը հաստատ կհասկանա: «Արքայական վշտում» մոտ յոթ հազար անգամ հիշատակում է Ռենե Մագրիտին:

– Բայց չէ՞ որ դա ծխամորձ է:

– Ոչ, ծխամորձ չէ, այլ՝ ծխամորձի նկար: Հասկացա՞ր: Առարկայի յուրաքանչյուր պատկեր, ըստ էության, վերացական է: Իրականում, շատ խելացի միտք է:

– Էդ ե՞րբ էսքան մեծացար ու սկսեցիր հասկանալ բաներ, որ շփոթության մեջ են գցում քո ծեր մայրիկին, – զարմացավ մայրս: – Կարծես երեկ լիներ, որ բացատրում էի իմ յոթամյա Հեյզելին, թե ինչու է երկինքը կապույտ: Ու էդ ժամանակ կարծում էիր, թե ես հանճար եմ:

– Իսկ ինչո՞ւ է երկինքը կապույտ, – հարցրի:

– Որովհետև ..., – ասաց, ու ես սկսեցի ծիծաղել:

Որքան մոտենում էր ժամը տասը, այնքան ավելի շատ էի հուզվում: Հուզվում էի, որ նորից տեսնելու եմ Օգոստոսին, հուզվում էի, որ շուտով հանդիպելու եմ Փիթեր վան Հաութենին, անհանգստանում էի, որ այնքան էլ լավ հագուստ չեմ ընտրել, անհանգստանում էի, որ նրա տունը չենք գտնի, քանի որ Ամստերդամի բոլոր տները շատ նման են իրար, անհանգստանում էի, որ կմոլորվենք ու դեպի հյուրանոց հետդարձի ճանապարհը չենք կարողանա գտնել, մի խոսքով՝ շատ-շատ անհանգիստ էի ու հուզված: Մայրս անընդհատ փորձում էր խոսել ինձ հետ, բայց այդ պահին ուղղակի ունակ չէի նրան լսելու: Արդեն ուզում էի մայրիկիս խնդրել, որ բարձրանա վերև ու տեսնի, թե արդյոք Օգոստոսն արթնացե՞լ է, երբ նա թակեց դուռը:

Բացեցի դուռը: Նայելով շապիկիս՝ ժպտաց ու ասաց.

– Զվարճալի է:

– Կրծքերս զվարճալի չանվանես, – ասացի:

– Հեյ, ես էստեղ եմ, – հետևից ասաց մայրս:

Բայց Օգոստոսը ասածիցս կարմրել ու շփոթվել էր, ինչը, վերջապես, ուղիղ նրա աչքերի մեջ նայելու համարձակություն տվեց ինձ:

– Հաստատ չես ուզում մեզ հետ գալ, – հարցրի մայրիկիս:

– Էսօր ուզում եմ Ամստերդամի ազգային թանգարան գնալ, հետո զբոսնել Վոնդելի զբոսայգում, – ասաց մայրս, – ու հետո, չնեղանաս, բայց էդ գիրքը չեմ հասկանում: Նրան ու Լիդևիջին իմ կողմից շնորհակալություն կհայտնես, լավ:

– Լավ, – ասացի՝ գրկելով նրան, ու նա համբուրեց գլուխս՝ ականջիցս մի քիչ վերև:

Սպիտակ շենքերի շարքը, որտեղ գտնվում էր Փիթեր վան Հաութենի տունը, հյուրանոցին շատ մոտ էր՝ Վոնդել փողոցում՝ այգու դիմաց: Համար 158 շենքն էր: Օգոստոսը մի ձեռքով թևանցուկ արեց ինձ, մյուսով բռնեց թթվածնի բալոնը, ու մենք բարձրացանք լաքապատ կապտասև շքադռան մոտ տանող երեք աստիճաններով: Սիրտս ուժգին բաբախում էր: Ընդամենը մի փակ դուռ էր մեզ բաժանում պատասխաններից, որոնց մասին երազել էի առաջին անգամ անավարտ էջը կարդալուց ի վեր:

Ներսից լսվում էր պատուհանագոգերը դղրդացնելու չափ բարձր բասային հիփ-հոփ: Ես մտածեցի, որ Փիթեր վան Հաութենը երևի երեխա ունի, որը սիրում է ռեփ լսել:

Առյուծի գլխի տեսք ունեցող դռան թակը բռնելով՝ զգուշորեն թակեցի: Երաժշտությունը շարունակվում էր:

– Երևի չի լսում բարձր երաժշտության պատճառով,– ենթադրեց Օգոստոսը:

Բռնելով առյուծի գլուխը՝ ավելի ուժեղ թակեց:

Երաժշտությունն անջատվեց, ինչին հետևեց ոտքերի քստքստոցը: Լսվեց բացվող սողնակի ձայնը: Հետո՝ ևս մեկը: Դուռը ճռռոցով բացվեց: Հաստափոր, նոսր մազերով, կախ ընկած այտերով, մեկ շաբաթվա մորուքով մի մարդ, արևից աչքերը կկոցելով, հայտնվեց մեր առջև: Նրա հա-

https://1915.info

գին տղամարդու բաց երկնագույն գիշերազգեստ էր՝ հին կինոնկարների հերոսների նման: Նրա դեմքն ու փորը այնքան կլոր էին, իսկ թևերը այնքան բարակ ու ոսկրոտ, որ շատ նման էր մեջը չորս փայտիկ խրած խմորագնդիկի:

– Պարոն վան Հաութենն, – թեթևակի ծղրտոցով ասաց Օգոստոսը:

Դուռը շրխկոցով փակեց: Դռան հետևում լսեցի մի կակազող սուր ձայն բղավելիս. «Լիիի՜-դուու՜- վեյ» (մինչ այդ ես նրա օգնականի անունը Լիդևիջ էի արտասանում):

Դռան հետևից ամեն ինչ լսվում էր:

– Նրանք արդեն այստեղ են, Փիթեր:

– Այստեղ են, Լիդուվեյ, երկու պատանի տեսիլք կանգնած են դռան ետևում:

– Տեսի՞լք, – Լիդուվեյը հարցրեց հաճելի հոլանդական առոգանությամբ:

– Ուրվական, ուրու, ոգի, հոգեզեշ, այլմոլորակային, եկվոր՝ տեսի՛լք, Լիդուվեյ: Ամերիկյան գրականության ասպիրանտուրայում սովորողն ինչպե՞ս կարող է անգլերենի այդքան նողկալի իմացություն ցուցաբերել, – շնչակտուր վրա տվեց վան Հաութենը:

– Փի՛թեր, նրանք այլմոլորակայիններ չեն: Օգոստոսն ու Հեյզելն են՝ ձեր երիտասարդ երկրպագուները, որոնց հետ նամակագրական կապի մեջ էիք:

– Ինչպե՞ս թե: Նրա՞նք են, բայց ես կարծում էի նրանք Ամերիկայում են:

– Այո, բայց դուք եք նրանց հրավիրել այստեղ, հիշո՞ւմ եք:

– Գիտե՞ս ինչու եմ հեռացել Ամերիկայից, Լիդուվեյ: Որ այլևս երբեք ստիպված չլինեմ ամերիկացու հանդիպել:

– Բայց դուք ինքներդ ամերիկացի եք:

– Այո, անդառնալիորեն այդպես է: Սակայն, ինչ վերաբերում է ա՛յս ամերիկացիներին, ասա նրանց, որ անմիջապես հեռանան այստեղից: Ասա, որ մի սոսկալի սխալմունք է տեղի ունեցել, որ վան Հաութենի անիծյալ հրավերը հռետորական

https://1915.info

https://1915.info

բնույթի էր, ոչ՝ իրական, ու որ նման հրավերները պարզապես պետք է սիմվոլիկ համարել:

Ինձ թվաց, թե հիմա հետ կտամ: Նայեցի հուսահատությունից կախ ընկած ուսերով Օգոստոսին, որ աչքը դռնից չէր կտրում:

– Ես դա չեմ անի, Փիթեր, – պատասխանեց Լիդուվեյը: – Դուք պարտավոր եք հանդիպել նրանց հետ: Պարտավոր եք: Պետք է տեսնեք նրանց: Պետք է տեսնեք, թե ինչ կարևորություն ունի ձեր աշխատանքը:

– Լիդուվեյ, դու դիտավորյալ խաբե՞լ ես ինձ, որ այս հանդիպումը կազմակերպես:

Սրան երկար լռություն հետևեց, ապա դուռը նորից բացվեց: Գլուխը մետրոնոմի պես Օգոստոսից դեպի ինձ դարձնելով ու աչքերը դեռ կկոցելով՝ հարցրեց.

– Ձեզնից ո՞ր մեկն է Օգոստոս Ուոթերսը:

Օգոստոսը երկչոտ բարձրացրեց ձեռքը: Վան Հաութենը գլխով անելով ասաց.

– Դե ինչ, էս ծտի հարցերը վերջապես լուծեցի՞ր:

Որից հետո կյանքումս առաջին ու վերջին անգամ տեսա իսկապես զարմանքից պապանձված Օգոստոս Ուոթերսին:

– Ես, – կմկմաց, – ես, հը՛մ, Հեյզել, ը՛ը, դե, գիտես...

– Երևում է՝ այս տղան մտավոր թերզարգացածություն ունի, – Փիթեր վան Հաութենը դիմեց Լիդուվեյին:

– Փի՛թեր, – կշտամբանքով ասաց Լիդուվեյը:

– Լավ, – ձեռքը մեկնելով ինձ՝ ասաց Փիթեր վան Հաութենը, – ամեն դեպքում հաճելի է հանդիպել գոյաբանորեն անհավանական էակների:

Ես սեղմեցի նրա փքված ձեռքը, հետո նա և Օգոստոսը նույնպես ձեռք սեղմեցին: Իսկ այդ ընթացքում ինձ տանջում էր այն հարցը, թե ինչ է նշանակում «գոյաբանորեն»: Այնուամենայնիվ, միտքն ինձ դուր էր գալիս: Օգոստոսն ու ես միասին «Անհավանական էակների» ակումբում էինք՝ մենք ու բաղակտուցները:

Իհարկե, այստեղ գալուց հուսով էի, որ Փիթեր վան Հաութենը նորմալ, գիտակից մարդ կլինի, բայց աշխարհը երազանքներ իրականացնող գործարան չէ: Ինչևէ, կարևորն այն էր, որ դուռը բաց էր, ու ես կանգնած էի «Արքայական վշտի» ավարտից հետո տեղի ունեցած դեպքերին ծանոթանալու շեմին: Ու դա ինձ համար բավական էր: Նրա ու Լիդուվեյի հետևից մտանք ներս և, անցնելով հսկայական կաղնեփայտե ճաշասեղանի մոտով, որի շուրջն ընդամենը երկու աթոռ էր դրված, մտանք մի չափազանց աղքատիկ հյուրասենյակ: Հյուրասենյակը շատ նման էր թանգարանի, ուղղակի այստեղ դատարկ, սպիտակ պատերի վրա արվեստի գործեր չկային: Սենյակը գրեթե դատարկ էր: Պողպատե սև, կաշեպատ մեկ բազմոցից ու թիկնաթոռից բացի ուրիշ ոչ մի բան չկար: Հետո բազմոցի հետևում նկատեցի բերանները կապած երկու մեծ, սև, լեփլեցուն աղբի տոպրակ:

– Ա՞ղբ է, – շշնջացի Օգոստոսին՝ կարծելով, թե բավականին ցածր եմ ասում, և բացի նրանից, ուրիշ ոչ ոք չի լսի:

– Երկրպագուների նամակներն են, – պատասխանեց վան Հաութենը՝ թիկնաթոռին նստելով, – տասնութ տարվա ընթացքում կուտակված: Չեմ կարողանում բացել դրանք: Շատ սարսափազդու է: Դուք առաջին նամակագիրներն եք, որոնց պատասխանել եմ, ու տե՛ս, թե ինչի հանգեցրեց դա: Անկեղծ ասած, ընթերցողների իրականությունը միանգամայն անախորժ եմ համարում:

Սրանով բացատրվում էր, թե ինչու ոչ մի անգամ նամակներիս չէր պատասխանել, նույնիսկ չէր էլ կարդացել դրանք: Ու մտածեցի, թե ինչու էր ընդհանրապես դրանք պահում, առավել ևս, գրեթե ամբողջովին դատարկ սենյակում:

Վան Հաութենը ոտքերը դրեց թախտին, խաչեց հողաթափերով ոտնաթաթերը ու ձեռքով մեզ ցույց տվեց բազմոցը: Օգոստոսն ու ես նստեցինք իրար կողքի, բայց ոչ շատ մոտ:

– Կցանկանա՞ք սկզբից նախաճաշել, – հարցրեց Լիդուվեյը:

Սկսեցի բացատրել, որ արդեն կերել ենք ու քաղցած չենք,

երբ հանկարծ Փիթերն ընդհատեց ինձ.

– Չափից շուտ է նախաճաշի համար, Լիդուվեյ:

– Նրանք Ամերիկայից են եկել, Փիթեր: Ֆիզիկապես նրանց համար հիմա կեսօրից անց է:

– Ուրեմն չափից ուշ է նախաճաշի համար, – ասաց վան Հաութենը: – Ինչևէ, ձեզ համար ֆիզիկապես կեսօրն անց է թե ոչ, մենք կոկտեյլ կխմենք: Սկոտչ խմո՞ւմ ես, – հարցրեց ինձ:

– Ես, օ՜, ոչ, շնորհակալ եմ, – ասացի:

– Իսկ դո՞ւ, Օգոստոս Ուոթերս, – դիմեց Գասին:

– Ըը, չէ, չեմ ուզում:

– Ուրեմն՝ միայն ինձ համար, Լիդուվեյ: Սկոտչ և ջուր, խնդրում եմ:

Փիթերը, ուշադրությունը Գասի վրա թեքելով, հարցրեց.

– Գիտե՞ս ինչպես ենք այս տանն սկոտչ ու ջուր պատրաստում:

– Ոչ, պարոն, – պատասխանեց Գասը:

– Նախ բաժակի մեջ լցնում ենք սկոտչը, հետո գլխում ջրի մասին մտքեր արթնացնում: Եվ վերջում իրական սկոտչը խառնում ենք ջրի վերացական գաղափարի հետ:

– Գուցե սկզբում նախաճաշե՞ք, Փիթեր, – առաջարկեց Լիդուվեյը:

Փիթերը նայեց մեզ ու բարձր շշնջաց.

– Նա կարծում է, թե խմիչքից կախվածություն ունեմ:

– Ինչպես նաև կարծում եմ, որ արևը ծագել է, – պատասխանեց Լիդուվեյը:

Այնուամենայնիվ, մոտեցավ հյուրասենյակի բարին, ձգվելով հանեց սկոտչի շիշն ու բաժակը կիսով չափ լցնելով՝ հանձնեց Փիթերին: Փիթեր վան Հաութենը կում արեց, հետո ուղիղ նստեց աթոռին ու ասաց.

– Այսքան լավ խմիչքն արժանի է, որ իրեն գեղեցիկ կեցվածքով խմեն:

Նրա խոսքերն ստիպեցին ինձ ուշադրություն դարձնել

https://1915.info

նստածս դիրքին ու մի փոքր ավելի ուղիղ կեցվածք ընդունել՝ կարգի բերելով կանյուլան:

Հայրս միշտ ասում էր, թե մարդկանց մասին կարող ես կարծիք կազմել ըստ մատուցողների ու օգնականների նկատմամբ նրանց վերաբերմունքի: Ու այդ չափանիշի համաձայն Փիթեր վան Հաութենը երևի աշխարհի տականքների տականքն էր:

– Ուրեմն հավանո՞ւմ ես իմ գիրքը, – հարցրեց Օգոստոսին՝ ևս մի կում անելով:

– Այո, – ասացի Օգոստոսի փոխարեն, – ու Օգոստոսն օգտագործել է իր «Երազանքը»՝ ձեզ տեսնելու համար, որպեսզի կարողանանք գալ էստեղ, և դուք մեզ պատմեք, թե ինչ է տեղի ունենում «Արքայական վշտի» ավարտից հետո:

Վան Հաութենը ոչինչ չասաց, ուղղակի մի մեծ կում արեց խմիչքից:

Մի րոպե հետո Օգոստոսն ասաց.

– Կարելի է ասել, որ ձեր գիրքն է միացրել մեզ:

– Բայց դուք միասին չեք, – նկատեց՝ առանց ինձ նայելու:

– Դե համարյա միացրել է մեզ, – ասացի:

Ու հիմա նա շրջվեց դեպի ինձ:

– Դիտմամբ ես նրա նման հագնվել:

– Աննայի՞, – հարցրի:

Բայց նա ուղղակի աչքերը լուռ հառել էր վրաս:

– Ըհը, մոտավորապես:

Նա նորից մի մեծ կում արեց, հետո ծամածռեց դեմքը:

– Ես խմիչքից կախվածություն չունեմ, – հայտարարեց՝ չափից դուրս բարձր ձայնով: – Պարզապես, ալկոհոլի հետ չերչիլյան հարաբերությունների մեջ եմ: Կարող եմ կատակներ անել, կառավարել Անգլիան, մի խոսքով, ինչ ասես, բայց չխմել չեմ կարող: – Նա մի հայացք գցեց Լիդուվեյի վրա ու գլխով ցույց տվեց բաժակը:

Լիդուվեյը, բաժակը վերցնելով, հետ դարձավ բարի մոտ:

– Միայն ջրի գաղափարը, – հիշեցրեց:

– Հասկացա, հասկացա – գրեթե ամերիկյան շեշտադրությամբ ասաց Լիդուվեյը:

Շուտով ժամանեց երկրորդ բաժակը: Վան Հաութենը նորից մեջքն ուղղեց՝ ի նշան հարգանքի: Նա մի կողմ շպրտեց հողաթափերը: Շատ տգեղ ոտնաթաթեր ուներ: Լրիվ փչացնում էր ինձ մոտ ձևավորված հանճարեղ գրողի պատկերը: Բայց նա ուներ ինձ հուզող հարցերի պատասխանները:

– Լավ, – ասացի, – նախ, շատ շնորհակալություն երեկվա ընթրիքի համար:

– Երեկ նրանց համար ընթրի՞ք ենք պատվիրել, – հարցրեց Լիդուվեյին:

– Այո՝ «Օրանյիում»:

– Ահ, այո: Հավատացնում եմ ձեզ, ես դրա հետ ոչ մի կապ չունեմ: Պետք է Լիդուվեյին շնորհակալություն հայտնեք. նա փողերս վատնելու բացառիկ տաղանդ ունի:

– Խնդրեմ, սիրելիներս – ասաց Լիդուվեյը:

– Համենայն դեպս, շնորհակալություն, – ասաց Օգոստոսը: Նրա ձայնի մեջ վրդովմունք կար:

– Լավ, ահա և ես, – որոշ ժամանակ հետո ասաց Փիթերը, – և որո՞նք են ձեր հարցերը:

– Ըը, – սկսեց Օգոստոսը:

– Նամակներում այնքան խելացի էր թվում, – վան Հաութենը դիմեց Լիդուվեյին՝ Օգոստոսին նկատի ունենալով, – հավանաբար, քաղցկեղը հենակետ է հիմնել նրա ուղեղում:

– Փիթե՛ր, – ցնցված բացականչեց Լիդուվեյը:

Ինձ նույնպես ցնցեց նրա ասածը, բայց այդ քամահրելի մարդու մեջ մի հաճելի բան կար, որ, մեր հիվանդությունից դրդված, առանձնահատուկ հարգանքով չէր վերաբերվում մեզ:

– Մենք իսկապես մի քանի հարց ունենք, – ասացի, – դրանք նշել էի իմ նամակում: Չգիտեմ, հիշում եք, թե ոչ:

– Չեմ հիշում:

– Նա վատ հիշողություն ունի, – բացատրեց Լիդուվեյը:

https://1915.info

– Երանի իրոք վատ հիշողություն ունենայի, – ասաց վան Հաութենը:

– Եվ ուրեմն, մեր հարցերը, – պնդեցի:

– Մի տես, է, ինքն իր մասին հոգնակիով է խոսում, – կոնկրետ ոչ մեկին չդիմելով՝ ասաց Փիթերը:

Եվս մի կում արեց: Չգիտեմ, թե սկոտչն ինչ համ ուներ, բայց եթե թեկուզ մի քիչ նման էր շամպայնին, գլխումս չէր տեղավորվում, թե ինչպես կարող էր այդքան շատ, այդքան արագ ու այդքան վաղ խմել դրանից:

– Քեզ ծանոթ է Զենոնի պարադոքսը կրիայի մասին, – հանկարծ հարցրեց ինձ:

– Մեզ հետաքրքրում է, թե ինչ է տեղի ունենում գրքի ավարտից հետո, մասնավորապես՝ Աննայի ...

– Դու անիրավացիորեն ենթադրում ես, թե պետք է անպայման լսեմ քո հարցը, որ պատասխանեմ դրան: Լսե՞լ ես փիլիսոփա Զենոնի մասին:

Թեթևակի տարուբերեցի գլուխս:

– Շատ ափսոս: Զենոնը նախասոկրատյան փիլիսոփա էր, որ ասում են, թե հայտնաբերել է Պարմենիդեսի առաջ քաշած աշխարհայացքի քառասուն պարադոքս: Դե, իհարկե, գիտեք, թե ով էր Պարմենիդեսը, այնպես չէ՞ – ասաց վան Հաութենը:

Ես գլխով արեցի, իբր թե՝ այո, բայց իրականում Պարմենիդեսին չէի ճանաչում:

– Փառք Աստծու, – ասաց, – Զենոնը մեծապես մասնագիտացել էր Պարմենիդեսի անճշտություններն ու պարզամիտ մտքերը բացահայտելու մեջ, ինչն այդքան էլ դժվար բան չէր, քանի որ Պարմենիդեսը տպավորիչ կերպով սխալ էր միշտ ու ամեն հարցում: Պարմենիդեսը նույն արժեքն ուներ, որքան ծանոթը, որին յուրաքանչյուր անգամ ձիարշավի տանելիս, կարող ես վստահ լինել, որ սխալ ձիու վրա խաղադրույք կանի: Սակայն Զենոնի ամենակարևոր ... բայց մի վայրկյան, նախ ինձ ներկայացրեք շվեդական հիփ-հոփից ձեր տեղեկացվածության աստիճանը:

Չէի հասկանում, Փիթեր վան Հաութենը ծաղրո՞ւմ էր մեզ, թե՞ ոչ: Մի պահ լռությունից հետո Օգոստոսն ասաց.

– Շատ սահմանափակ:

– Լավ, բայց հավանաբար լսած կլինեք Ա֊ֆասի և Ֆիլսիի արգասավոր Fläcken[1] ալբոմի մասին:

– Չենք լսել, – ասացի երկուսիս փոխարեն:

– Լիդուվեյ, հենց հիմա միացրու «Բումֆալերալան»:

Լիդուվեյը մոտեցավ նվագարկիչին, մի քիչ պտտեցրեց անվակը, ապա սեղմեց կոճակը: Ռեփ երաժշտությունը թնդաց ամեն կողմից: Մի շատ սովորական ռեփ էր՝ ուղղակի շվեդերեն բառերով:

Երբ երգը վերջացավ, Փիթեր վան Հաութենը, առավելագույնս լայնացած մանրիկ աչքերով, սպասողական նայեց մեզ:

–Դե՞, – հարցրեց, – դե, ի՞նչ կասեք:

– Ներեցեք, պարոն, բայց մենք շվեդերեն չենք հասկանում, – ասացի:

– Պարզ է, որ չեք հասկանում: Ես էլ չեմ հասկանում: Գրողը տանի, ո՞վ է ընդհանրապես շվեդերեն հասկանում: Կարևոր չէ, թե ինչ հիմարություն են դուրս տալիս ձայները, այլ՝ թե ինչ են զգո՞ւմ ձայները: Վստահաբար գիտեք, որ գոյություն ունի միայն երկու հույզ՝ սեր ու վախ, իսկ այդ Ա֊ֆասին ու Ֆիլսին ընթանում են դրանց միջով այնքան ճարպկորեն, որ Շվեդիայից դուրս հիփ-հոփ երաժշտության մեջ նման բան պարզապես չես գտնի: Ուզո՞ւմ եք մի անգամ էլ լսել:

– Ի՞նչ է, մեզ ձե՞ռ եք առնում, – ասաց Գասը:

– Ներեցեք, ինչ ասացի՞ք:

– Սա ինչ-որ ներկայացո՞ւմ է, թե՞ ինչ:

Փիթերը նայեց Լիդուվեյին ու հարցրեց.

– Մի՞թե:

– Ցավոք, ոչ, – պատասխանեց Լիդուվեյը, – նա միշտ այսպիսին չէ: Սա հազվադեպ երևույթ է:

---

1 Fläcken – շվեդերեն, նշանակում է բիծ:

https://1915.info

– Զայնդ կտրիր, Լիդուվեյ: Ռուդոլֆ Օտտոն ասել է, որ եթե չես հանդիպել նումինոզին՝ աստվածությանը, եթե իռացիոնալ հանդիպում չես ունեցել առեղծվածային երկյուղի հետ, ուրեմն նրա ստեղծագործությունը քեզ համար չէ: Ու ես կասեմ ձեզ, պատանի ընկերներ, եթե ունակ չեք լսելու Աֆասի և Ֆիլսիի խրոխտ արձագանքը վախին, ուրեմն իմ ստեղծագործությունը ձեզ համար չէ:

Նման հատուկ նշանակություն այդ երգին տալ չէի կարող: Ինձ համար դա մի շատ սովորական ռեփ էր, ուղղակի՝ շվեդերենով:

– Ըմմ, լավ – փորձեցի վերադառնալ գրքին, – իսկ հիմա՝ «Արքայական վշտի» մասին: Երբ գիրքը վերջանում է, Աննայի մայրը պատրաստվում է ...

Վան Հաութենն ընդհատեց ինձ՝ խոսելով ու միաժամանակ թխկթխկացնելով բաժակին, մինչև Լիդուվեյը նորից սկոտչ լցրեց:

– Եվ այսպես, Ջենոնն առավել հայտնի է կրիայի մասին իր պարադոքսով, – ասաց: – Պատկերացրեք, թե վազքով մրցում եք կրիայի հետ: Մեկնարկի կետում կրիան տասը մետրանոց առավելություն ունի: Այն ժամանակամիջոցում, որ կպահանջվի քեզնից վազել-անցնել այդ տասը մետրը, կրիան կարող է ևս մեկ մետր առաջ շարժվել: Ու մինչ դու վազելով կանցնես այդ տարածությունը, կրիան նորից մի քայլ առաջ կանի, ու այդպես անվերջ: Դու կրիայից արագ ես վազում, բայց երբեք նրան հասնել չես կարող, կարող ես միայն կրճատել ձեր միջև եղած տարածությունը:

Իհարկե, կարող ես շրջանցել կրիային՝ առանց մտածելու ներգրավված մեխանիկայի շուրջը, սակայն հարցը, թե ինչպես կարելի է անել դա, պարզվում է այնքան անհավատալիորեն բարդ է, որ իրականում ոչ ոք չէր կարողացել լուծել, մինչև Կանտորը չբացահայտեց, թե որոշ անվերջություններ մեծ են այլ անվերջություններից:

– Եվ ... – հարցրի:

https://1915.am

https://1915.info

– Կարծում եմ, սա տալիս է ձեր հարցի պատասխանը, – համոզված ասաց ու մի մեծ կում արեց խմիչքից:

– Էդքան էլ չէ, – ասացի, – մեզ հետաքրքրում էր, թե ինչ է լինում «Արքայական ...

– Ես հրաժարվում եմ այդ նեխած վեպի ամեն մի բառից, – ինձ ընդհատելով՝ ասաց վան Հաութենը:

– Ոչ, – ասացի:

– Ներեցեք ...

– Ոչ, դա անընդունելի է, – շարունակեցի: – Հասկանում եմ, որ պատմությունն ավարտվում է շարադրանքի կեսին, որովհետև Աննան մահանում է կամ շատ թույլ է լինում գրելը շարունակելու համար: Բայց դուք մեզ ասել եք, որ կպատմեք, թե ինչ է պատահում մնացած բոլորին, մենք էստեղ հենց դրա համար ենք եկել: Ու մենք ... ես ուզո՛ւմ եմ, որ պատմեք:

Վան Հաութենը հառաչեց: Եվս մի կում անելով՝ ասաց.

– Շատ լավ: Ո՞ւմ պատմությունն եք այդքան տենչում իմանալ:

– Աննայի մայրիկի, Հոլանդացի Վարդակակաչ Մարդու, Սիզիփոս գերմանամկան, մի խոսքով, բոլոր-բոլորի:

Վան Հաութենը փակեց աչքերը, արտաշնչելով ուռցրեց շուրթերը, իսկ հետո հայացքն ուղղեց վերև՝ առաստաղի վրա խաչաձև շարված փայտե չորսուներին:

– Գերմանամուկը ... – քիչ հետո շարունակեց, – գերմանամկանն իր խնամակալության տակ է առնում Քրիսթինը:

Նախքան Աննայի հիվանդանալը, Քրիսթինը նրա ընկերներից էր: Դա խելքին մոտ էր: Քրիսթինն ու Աննան մի քանի էպիզոդներում խաղում էին Սիզիփոսի հետ:

– Քրիսթինը նրան որդեգրում է, և վեպի ավարտից մի քանի տարի հետո գերմանամուկը մահանում է խաղաղ ու հանգիստ՝ քնած ժամանակ:

Վերջապես, սառույցը տեղից շարժվեց:

– Հիանալի է, – ասացի, – Շատ լավ, հիմա՝ Հոլանդացի Վարդակակաչ Մարդը: Նա խաբեբա՞ է: Նա և Աննայի մայրիկն ամուսնանո՞ւմ են:

Վան Հաութենը դեռ առաստաղի չորսուներին էր նայում: Նորից մի ումպ արեց: Բաժակը կրկին գրեթե դատարկվել էր:

– Լիդուվեյ, ես չեմ կարող սա անել: Չեմ կարող: Չեմ կարող: – Ապա հայացքն ինձ վրա ուղղելով՝ ասաց: – Ոչինչ էլ չի պատահում Հոլանդացի Վարդակակաչ Մարդուն: Նա ոչ խաբեբա է, ոչ էլ ոչ խաբեբա. նա աստված է: Նա Աստծու ակնհայտ ու աներկբա փոխաբերական պատկերն է, ու հարցնելը, թե ինչ է լինում նրա հետ, համարժեք է հարցնելուն, թե ինչ է լինում «Գեթսբիի» բժիշկ Թ. Ջ. Էքլբերգի անմարմին աչքերի հետ: Աննայի մայրն ու նա ամուսնանում են, թե՞ ոչ: Մենք վեպի մասին ենք խոսում, բալիկս, ոչ թե պատմական ինչ-որ իրադարձության:

– Ճիշտ է, բայց դուք հաստատ մտածած կլինեք, թե հետո ինչ է կատարվում նրանց հետ: Նրանց, այսինքն՝ որպես հերոսների, նկատի ունեմ՝ անկախ նրանց փոխաբերական կամ այլ նշանակություններից:

– Նրանք հնարովի հերոսներ են, – ասաց՝ նորից թխկթխկացնելով բաժակը, – ոչինչ էլ չի պատահում նրանց:

– Բայց խոստացել եք, որ կպատմեք, – համառեցի:

Մտքումս անընդհատ կրկնում էի, որ պետք է հաստատակամ լինեմ: Պետք է ամեն գնով իմ հարցերի վրա պահեի նրա անկայուն, անընդհատ շեղվող ուշադրությունը:

– Գուցե, բայց քանի որ թյուրիմացաբար կարծում էի, թե դուք ի վիճակի չեք անդրօվկիանոսյան ճանապարհորդություն կատարելու, թերևս փորձում էի ինչ-որ կերպ սփոփել ձեզ, ինչը, կարծես թե, լրիվ հիմարություն էր իմ կողմից: Բայց ամենայն ազնվությամբ ասեմ, որ այդ պարզամիտ միտքը, թե վեպի հեղինակը որևէ առանձնահատուկ վարկածներ ունի վեպի հերոսների հետագա կյանքի վերաբերյալ... պարզապես ծիծաղելի է: Այդ վեպը կազմվել է էջի վրա արված խզբզոցներից, հարգելիս: Այնտեղ բնակվող հերոսներն այդ խզբզոցներից դուրս կյանք չունեն: Ինչ է կատարվում նրանց հետ հետո՞: Նրանք բոլորը դադարում են գոյություն

ունենալուց հենց այն պահին, երբ ավարտվում է վեպը:

– Չի կարող պատահել, – ասացի՝ վեր հրվելով բազմոցից: – Չէ, հասկանում եմ դա, բայց ուղղակի անհնար է նրանց համար ապագա չպատկերացնելը: Իսկ դուք ամենահարմար մարդն եք այդ ապագան պատկերացնելու համար: Ինչ-որ բան տեղի է ունենում նաև Աննայի մոր հետ: Նա կամ ամուսնանում է Հոլանդացի Վարդակակաչ Մարդու հետ, կամ չի ամուսնանում: Կամ էլի է երեխաներ ունենում, կամ չի ունենում: Ու ես ուզում եմ իմանալ, թե ինչ է տեղի ունենում նրա հետ:

Վան Հաութենը սեղմեց շուրթերը:

– Ցավում եմ, որ չեմ կարող բավարարել ձեր երեխայական քմահաճույքները, բայց հրաժարվում եմ ձեզ խղճալուց, ինչին դուք այդքան սովոր եք:

– Ինձ ձեր խղճահարությունը պետք չէ, – ասացի:

– Ինչպես խղճում են բոլոր հիվանդ երեխաներին, – անկիրք շարունակեց, – ասում ես, որ խղճահարության կարիք չունես, բայց քո գոյությունն իսկ կախված է դրանից:

– Փիթե՛ր, – ասաց Լիդուվեյը, բայց նա, մեջքով հենվելով աթոռին, լեզուն փաթ ընկնելով հարբած բերանում, շարունակեց:

– Հիվանդ երեխաների զարգացումն անխուսափելիորեն կանգ է առնում: Դուք դատապարտված եք ձեր մնացած օրերն ապրելու այն երեխայի պես, ինչպիսին էիք հիվանդությունն ախտորոշելու ժամանակ: Իսկ մեզ՝ մեծահասակների մոտ, դա խղճահարություն է առաջացնում, ու այդ պատճառով, մենք վճարում ենք ձեր բուժումների, թթվածնի սարքերի համար: Մենք ձեզ հաց ու ջուր ենք տալիս, թեև գիտենք, որ դժվար թե երկար ձգեք:

– Փիթե՛ր, – բղավեց Լիդուվեյը:

– Դուք կողմնակի ազդեցություն եք, – շարունակեց վան Հաութենը, – էվոլյուցիոն գործընթացի կողմնակի ազդեցություն, որին շատ քիչ են հուզում առանձին կյանքերը: Դուք

մուտացիայի ձախողված էքսպերիմենտ եք:

– Ես դուրս եմ գալիս աշխատանքից, – գոչեց Լիդուվեյը: Նրա աչքերում արցունքներ կային:

Ես չէի բարկանում: Նա փնտրում էր ճշմարտությունն ասելու ամենացավոտ եղանակը, բայց, միևնույն է, ես արդեն գիտեի այդ ճշմարտությունը: Շատ տարիներ էի անցկացրել աչքերս հառած առաստաղներին՝ ննջարանիցս սկսած, վերակենդանացման բաժանմունքով վերջացրած ու վաղուց արդեն գտել էի սեփական հիվանդությունս նկարագրելու ամենացավոտ եղանակները:

Մոտենալով Փիթերին՝ ասացի.

– Լսի՛ր, այ թափթփուկ, իմ հիվանդության մասին ոչ մի նոր բան չես ասի: Ինձ քեզնից ընդամենը մեկ բան է պետք, որից հետո ես ընդմիշտ դուրս կգամ այս տնից ու քո կյանքից. ԻՆՉ Է ԼԻՆՈՒՄ ԱՆՆԱՅԻ ՄԱՅՐԻԿԻ ՀԵՏ:

Նա թեթևակի բարձրացրեց կախ ընկած կզակներն ու թոթվեց ուսերը:

– Բայց չեմ կարող ասել քեզ, թե ինչ է տեղի ունենում նրա հետ, ինչպես չեմ կարող ասել, թե ինչ է լինում Պրուստի պատմիչի կամ Հոլդեն Քոլֆիլդի քրոջ կամ էլ Հաքըլբերի Ֆինի հետ՝ Արևմուտք փախչելուց հետո:

– Հիմարություն: Կատարյալ էշություն: Դե ասա մի բան: Մի բան հորինիր, գրո՛ղը տանի:

– Ո՛չ: Երախտապարտ կլինեի, որ իմ տանը չհայհոյեիք: Դա բարեկիրթ օրիորդներին վայել չէ:

Ես հիմա էլ այդքան բարկացած չէի, ուղղակի չափից դուրս ֆիքսվել էի ինձ խոստացված բանն ստանալու վրա: Ներսումս ինչ-որ մի բան, հավաքվելով, ստիպեց ինձ կռանալ ու հարվածել սկոտչի բաժակը բռնած նրա փքված ձեռքին: Բաժակում մնացած սկոտչը շփփաց նրա անծայրածիր, լայնարձակ դեմքին, բաժակը, քթին դիպչելով, դուրս թռավ ձեռքից, հետո հեզաձկուն պտտվելով օդում՝ շրխկաց հնամենի կարծր փայտանյութե հատակին ու ջարդուփշուր եղավ:

https://1915.info

https://1915.info

– Լիդուվեյ, – հանգիստ ասաց վան Հաութենը, – մարտինի բեր, խնդրում եմ: Ուզում եմ զգալ վերմուտի շունչը:

– Ես այլևս ձեզ մոտ չեմ աշխատում, – պատասխանեց Լիդուվեյը:

– Քեզ պարզապես ծիծաղելի ես պահում:

Ես չգիտեի՝ ինչ անեմ: Լավ վերաբերմունքը չաշխատեց, վատը՝ նույնպես: Բայց ինձ պատասխան էր պետք: Ես կտրել-անցել էի այս ամբողջ ճանապարհը, գողացել էի Օգոստոսի «երազանքը» ու պետք է ստանայի պատասխանները:

– Իսկ դու երբևէ մտածել ես, – խոսեց վան Հաութենը՝ արդեն կուլ տալով բառերը, – թե ինչու են քեզ այդքան հետաքրքրում այդ հիմար հարցերը:

– Դուք խոստացել եք, – բղավեցի՝ ականջներումս հնչելով կոտրված մրցանակների գիշերվանից արձագանքող Այզեքի աղեկտուր լացը:

Վան Հաութենը չպատասխանեց:

Ես, պատասխանի սպասելով, դեռ կանգնած էի նրա գլխավերևում: Հանկարծ թևիս վրա զգացի Օգոստոսի ձեռքը: Նա ինձ քաշելով տարավ դեպի դուռը: Ես հետևեցի նրան: Իսկ այդ ընթացքում վան Հաութենը վրդովված, ճռռում-ճռռում բարբաջում էր ժամանակակից դեռահասների անշնորհակալ լինելու ու քաղաքավարի հասարակության մահվան մասին, իսկ Լիդուվեյը, ի պատասխան, հիստերիկ տոնով ինչ-որ բան էր բղավում արագառիթմ կոկորդային հոլանդերենով:

– Ներեցեք իմ նախկին օգնականին, – ասաց վան Հաութենը,– հոլանդերենը ոչ այնքան լեզու է, որքան կոկորդի հիվանդություն:

Օգոստոսը սենյակից դուրս քաշեց ինձ, ու դուրս եկանք ծփիներից թափվող կոնֆետտիներով ողողված ուշ աշնանային առավոտվա մեջ:

Ինձ համար «արագ հեռանալ» հասկացությունը, որպես այդպիսին, գոյություն չուներ: Ինչևէ, Օգոստոսը բռնեց սայլակս, ու մենք իջանք աստիճաններով, հետո ներհյուսված

ուղղանկյունաձև աղյուսներով խորդուբորդ մայթեզրի վրայով սկսեցինք քայլել հետ՝ դեպի «Ֆիլոսոֆ»: Ճոճանակի դեպքից հետո առաջին անգամ սկսեցի լաց լինել:

– Հեյ, – ձեռքը մեջքիս դնելով՝ ասաց Օգոստոսը, – հեյ, ոչինչ, ոչինչ, հանգստացիր:

Գլխով արեցի ու ձեռքիս հետևի մասով սրբեցի արցունքներս:

– Անդուր մարդ էր, – ասաց:

Նորից գլխով արեցի:

– Ես կգրեմ վերջաբանը, քեզ համար, – առաջարկեց, ինչից ես ավելի ուժեղ սկսեցի լաց լինել:

– Կգրեմ, – շարունակեց, – անպայման կգրեմ ու շատ ավելի լավ, քան էդ քնձռոտ հարբեցողը կգրեր: Նրա ուղեղը շվեյցարական պանիր է: Իսկի չի էլ հիշում, որ գրել է էդ գիրքը: Դրանից տասն անգամ ավելի լավ պատմություն կգրեմ: Իմ գրածի մեջ արյուն, փորոտիք թափել, զոհաբերություններ կլինեն: «Արքայական վիշտը» «Լուսաբացի գնի» հետ խառնված: Քեզ դուր կգա:

Կեղծ ժպտալով՝ շարունակ տմբտմբացնում էի գլուխս: Հետո նա գրկեց ինձ՝ ամուր թևերով սեղմելով ինձ իր մկանուտ կրծքին: Մի քիչ թացացրի նրա վերնաշապիկը, հետո շատ թե քիչ ուշքի գալով՝ ասացի.

– Քո «երազանքն» իզուր տեղը էդ էշի վրա վատնեցինք:

– Ոչ, Հեյզել Գրեյս: Ճիշտ է, դու վատնեցիր իմ միակ ու անկրկնելի երազանքը, բայց ոչ թե նրա, այլ՝ մե՛զ վրա:

Հետևից բարձրակրունկների արագ-արագ կտկտոց լսվեց: Շրջվելով տեսա, որ Լիդուվեյը, աչքերի գծաներկն այտերի վրայով ծորալով, հիասթափությամբ ու զարհուրանքով լի դեմքի արտահայտությամբ, վազում է մեր հետևից:

– Եկեք միասին Աննա Ֆրանկի տուն թանգարանն այցելենք, – մեզ հավասարվելով՝ ասաց:

– Ես էդ հրեշի հետ ոչ մի տեղ չեմ գա, – ասաց Օգոստոսը:

– Բայց ո՞վ է նրան հրավիրում, – ասաց Լիդուվեյը:

Օգոստոսը, ձեռքով դեմքիս կեսը ծածկելով, ինձ դեռ պահում էր գրկում՝ կարծես ցանկանալով պաշտպանել:

– Չեմ կարծում, որ ..., – սկսեց նա, բայց ես ընդհատեցի:

– Եկեք գնանք, – ասացի:

Թեև շատ կուզենայի վան Հաութենից լսել հարցերիս պատասխանները, բայց դա հո իմ միակ ցանկությունը չէր: Ինձ ու Օգոստոսին ընդամենը երկու օր էր մնացել Ամստերդամում միասին անցկացնելու: Չէի կարող մի մռայլ ու թախծոտ ծերուկի թույլ տալ, որ դրանք փչացնի:

Լիդուվեյը վարում էր մի մոխրագույն, ծանրաշարժ «Ֆիաթ», որի շարժիչը հուզված չորս տարեկան աղջնակի ձայներ էր հանում: Մինչ ընթանում էինք Ամստերդամի փողոցներով, նա անընդհատ ներողությունների հեղեղ էր տեղում.

– Շատ ներողություն: Նման պահվածքին ուղղակի արդարացում չկա: Նա շատ վատառողջ է: Ես կարծում էի, թե ձեզ հանդիպելն օգտակար կլինի նրան, երբ տեսնի, որ իր աշխատանքն իրական կյանքեր է ձևավորում, բայց ... շատ-շատ եմ ցավում: Անհարմար բան ստացվեց, կներեք:

Ոչ ես, ոչ էլ Օգոստոսը չէինք խոսում: Ես նստած էի ետևի նստատեղին՝ նրա հետևում: Ձեռքս անցկացրի նրա նստարանի ու դռան միջև եղած արանքով՝ ցանկանալով բռնել ձեռքը, բայց չգտա:

Լիդուվեյը շարունակում էր.

– Ես աշխատում էի նրա մոտ, քանի որ հանձար էի համարում, ու բացի դա՝ աշխատավարձն էլ շատ բարձր էր, բայց նա ուղղակի հրեշ է դարձել:

– Երևի իր գրքով է էդքան հարստացել, հա՞, – քիչ անց հարցրի:

– Օ՜, ոչ, ոչ, նա վան Հաութենների տոհմից է, – պատասխանեց Լիդուվեյը: – Տասնյոթերորդ դարում նրա նախապապը հայտնագործել է, թե ինչպես կակաոն լուծել ջրում: Վան Հաութեններից ոմանք շատ վաղուց մեկնել էին Միացյալ

https://1915.info

Նահանգներ: Փիթերն էլ նրանցից է, բայց վեպը գրելուց հետո Հոլանդիա տեղափոխվեց: Նա խայտառակում է այդ մեծապատիվ ընտանիքի անունը:

Շարժիչը ճռնչաց: Լիդուվեյը փոխեց մեքենայի արագությունը, և մենք բարձրացանք ջրանցքի կամուրջի վրա:

– Հանգամանքներն են մեղավոր, – շարունակեց Լիդուվեյը, – հանգամանքներն են նրան այդքան դաժան դարձրել: Նա վատ մարդ չէ: Բայց այսօր, երբ նա ասաց այդ սարսափելի բաները, ականջներիս ուղղակի չէի հավատում: Շատ-շատ ներողություն եմ խնդրում:

Ստիպված էինք Աննա Ֆրանկի տուն-թանգարանից մի քանի շենք այն կողմ կայանել: Հետո, մինչ Լիդուվեյը հերթ էր կանգնել՝ մեզ համար տոմսեր գնելու, նստեցի գետնին՝ մեջքս հենելով ծառին ու սկսեցի նայել Պրինսենգրախտ ջրանցքում կառանած լողացող տներին: Օգոստոսը կանգնել էր իմ գլխավերևում՝ թթվածնիս սայլակով շրջան գծելով ու հետևելով, թե ինչպես են պտտվում անիվները: Ուզում էի, որ կողքիս նստի, բայց գիտեի, թե նրա համար ինչքան դժվար էր նստելը ու էլ ավելի դժվար՝ նստած տեղից վեր կենալը:

– Լա՞վ ես, – հարցրեց՝ նայելով ինձ:

Թոթվեցի ուսերս ու ձեռքս վեր պարզելով՝ բռնեցի նրա սրունքը: Դա նրա արհեստական սրունքն էր, բայց ձեռքս հետ չտարա: Նա նորից ցած նայեց:

– Ուզում էի ..., – ասացի:

– Գիտեմ, – ասաց, – գիտեմ: Երևում է, աշխարհը երազանքներ իրականացնող գործարան չէ:

Նրա ասածը թեթևակի ժպիտ բերեց դեմքիս:

Լիդուվեյը վերադարձավ տոմսերով, բայց նրա բարակ շուրթերը մտահոգությունից իրար էին սեղմված:

– Այնտեղ վերելակ չկա, – ասաց, – շատ ափսոս:

– Ոչինչ, – ասացի, – եկեք գնանք:

– Բայց աստիճանները շատ-շատ են, – ասաց, – ու նաև շատ թեք:

https://1915.info

– Ոչինչ, – կրկնեցի:

Օգոստոսն ուզում էր ինչ-որ բան ասել, բայց ես ընդհատեցի նրան.

– Գլուխ կհանեմ, մի անհանգստացեք:

Այցելությունն սկսվեց սենյակից, որտեղ ցուցադրվում էր մի տեսագրություն Հոլանդիայի հրեաների, նացիստների ներխուժման ու Ֆրանկների ընտանիքի մասին: Հետո բարձրացանք վերև՝ ջրանցքի մոտ գտնվող մի տուն, որտեղ Օտտո Ֆրանկի բիզնեսն էր եղել: Եվ ինձ, և Օգոստոսի համար դժվար էր այդ աստիճանները բարձրանալը: Երկուսս էլ շատ դանդաղ էինք բարձրանում, բայց ես ինձ ուժեղ էի զգում: Շուտով արդեն նայում էի հանրահայտ գրապահարանին, որ թաքցրել էր Աննա Ֆրանկին, նրա ընտանիքին ու էլի մի չորս հոգու: Գրապահարանը կիսաբաց էր, իսկ դրա հետևում էլ ավելի թեք ու շատ նեղ աստիճան էր, որի վրայով միայն մեկ-մեկ էր հնարավոր բարձրանալ: Մեր շուրջը շատ այցելուներ կային: Ես չէի ուզում խցանումների պատճառ դառնալ, բայց Լիդուվեյն ասաց.

– Բոլորին խնդրում եմ մի փոքր համբերատար լինել:

Ես սկսեցի բարձրանալ: Լիդուվեյը իմ հետևից բերում էր սայլակս, Գասն էլ բարձրանում էր նրա հետևից:

Ընդհանուր տասնչորս աստիճան էր: Անընդհատ մտածում էի մեր հետևից եկող մարդկանց մասին: Նրանց մեծ մասը տարբեր լեզուներով խոսող մեծահասակներ էին, ու ինձ մի տեսակ անհարմար էի զգում, կարծես ուրվական լինեի, որ և հանգստացնում է, և հոգնեցնում: Վերջապես տեղ հասա՝ հայտնվելով մի սարսռելի դատարկ սենյակում, հենվեցի պատին: Ուղեղս շարունակ կրկնում էր թոքերիս՝ «ամեն ինչ լավ է, հանգստացեք», իսկ թոքերս ասում էին ուղեղիս՝ «Օ՜, Աստված իմ, հիմա կմեռնենք»:

Դեռ չէի նկատել, որ Օգոստոսն արդեն բարձրացել է, երբ նա մոտեցավ, օֆ անելով, ձեռքի հետևի մասով սրբեց ճակատն ու ասաց.

– Դու չեմպիոն ես:

Մի քանի րոպե պատին հենվելուց հետո գնացի հաջորդ սենյակ, որտեղ Աննան թաքնվել էր ատամնաբույժ Ֆրից Փֆեֆֆերի հետ: Շատ փոքր ու առանց որևէ կահույքի սենյակ էր: Մտքովդ երբեք չէր անցնի, թե ինչ-որ մեկն ապրել էր այդտեղ, եթե թերթերից ու ամսագրերից Աննայի պոկած և պատերին փակցրած թղթերը չլինեին:

Եվս մի սանդուղք տանում էր սենյակ, որտեղ ապրել էր վան Պելսերի ընտանիքը: Այս մեկը նախորդից էլ ավելի թեք էր և տասնութ աստիճան ուներ, ինչ խոսք, ուղղակի փառահեղ սանդուղք: Մոտեցա սանդուղքին ու, նայելով վեր, մտածեցի, թե դա իմ ուժերից վեր է, բայց և գիտեի, որ միակ ճանապարհը վեր բարձրանալն է:

– Եկեք հետ գնանք, – առաջարկեց Գասը:

– Ես լավ եմ, – շշնջացի:

Թեև դա հիմարություն էր, բայց ինձ թվում էր, թե ես պարտական էի նրան՝ Աննա Ֆրանկին: Դե, որովհետև նա մահացած էր, իսկ ես՝ ոչ, որովհետև նա լուռ էր մնացել, վարագույրներն իջեցրած թողել, ամեն ինչ շատ ճիշտ էր արել, բայց, միևնույն է, մահացել էր: Այդ պատճառով ես պետք է բարձրանայի և տեսնեի մինչև գեստապոների գալուստը նրա ապրած աշխարհի մնացած մասը:

Սկսեցի բարձրանալ աստիճաններով՝ վեր սողալով ինչպես փոքրիկ երեխա: Սկզբից դանդաղ, որ կարողանամ շունչ քաշել, հետո՝ ավելի արագ, քանի որ հասկանում էի, որ չեմ կարողանում շնչել, և ուզում էի տեղ հասնել մինչև շունչս լրիվ կկտրվեր: Մինչ բարձրանում էի տասնութ սոսկալի թեք ու ծուռումուռ աստիճաններով, խավարը ներխուժեց իմ տեսադաշտը: Վերջապես հասա սանդուղքի գագաթին՝ գրեթե կուրացած ու սրտխառնոցով, թևերիս ու ոտքերիս մկաններում թթվածնի սուր պահանջ զգալով: Թոքերս լող էին տալիս ջրի մեջ, պատին հենված վայր իջա հատակին: Իմ գլխավերևում մի դատարկ ապակե ցուցափեղկ էր՝ ամրացված պատին: Աչքերս

https://1915.info
հառեցի վեր՝ դրա միջով նայելով առաստաղին ու աշխատելով գիտակցությունս չկորցնել:

Լիդուվեյը, կողքիս կքանստելով, ասաց.

– Ահա և վերջ, արդեն ամենավերևում ենք:

Ես գլխով արեցի: Աղոտ տեսնում էի շուրջս հավաքված մեծահասակներին, որ անհանգստացած ինձ էին նայում, լսում էի, թե ինչպես է Լիդուվեյը ցածրաձայն մեկ մի լեզվով, մեկ՝ մի ուրիշ, ամեն ինչ բացատրում այցելուներին, իսկ գլխավերևումս կանգնած Օգոստոսը շոյում էր մազերս:

Այդպես երկար նստելուց հետո Լիդուվեյն ու Օգոստոսն ինձ օգնեցին վեր բարձրանալ, ու ես տեսա այն, ինչը մինչ այդ խանգարում էր տեսնել ապակե ցուցափեղկը, այդ ժամանակաշրջանում այդ կողաշենքում ապրող երեխաների աճը չափելու համար պաստառին մատիտով արված գծերը՝ սանտիմետր առ սանտիմտեր, մինչև այն պահը, երբվանից այլևս չէին մեծանալու:

Դրանից հետո դուրս եկանք Ֆրանկների բնակության վայրից, բայց դեռ թանգարանում էինք: Երկար ու նեղ նախասրահում ցուցադրված էին կողաշենքի ութ բնակիչների նկարները և նկարագրությունը, թե ինչպես, որտեղ և երբ էր նրանցից յուրաքանչյուրը մահացել:

– Ամբողջ ընտանիքից միայն նա է ողջ մնացել պատերազմից հետո, – Լիդուվեյն ասաց մեզ՝ նկատի ունենալով Աննայի հորը՝ Օտտոյին:

Նա խոսում էր շշուկով, ասես եկեղեցում լինեինք:

– Ավելի ճիշտ՝ ցեղասպանությունից, ոչ թե պատերազմից, – ասաց Օգոստոսը:

– Ճիշտ է, – համաձայնեց Լիդուվեյը: – Չեմ պատկերացնում, թե ինչպես կարող ես շարունակել ապրել առանց ընտանիքիդ: Չեմ պատկերացնում:

Կարդալով մահացած յոթ հոգու մասին՝ մտածում էի Օտտո Ֆրանկի մասին, որ այլևս հայր չէր, մնացել էր մեն-մենակ օրագրի հետ՝ առանց կնոջ և երկու երեխաների: Նախասրահի

վերջում մի հսկայական, բառարանից էլ մեծ գիրք կար, որտեղ գրանցված էին Նիդերլանդներում Հոլոքոստից մահացած 103000 մարդկանց անունները: (Արտաքսված հոլանդացի հրեաներից միայն հինգ հազարն էր ողջ մնացել՝ ասում էր պատի ցուցանակը: Հինգ հազար Օտտո Ֆրանկներ): Գիրքը բացված էր Աննա Ֆրանկի անունով էջի վրա, բայց ինձ ցնցեց այն փաստը, որ ուղիղ նրա անվան տակ իրար հետևից գալիս էին չորս Ահարոն Ֆրանկներ: Չո՛րս: Չորս Ահարոն Ֆրանկ՝ առանց թանգարանների, հուշատախտակների, ու ոչ ոք չկար, որ սգար նրանց մահը: Մնքումս որոշեցի հիշել ու աղոթել չորս Ահարոն Ֆրանկների համար, քանի դեռ ողջ էի: (Միգուցե որոշ մարդիկ ճշմարիտ ու ամենազոր Աստծուն հավատալու կարիք ունեն՝ աղոթելու համար, բայց ես՝ ոչ):

Երբ սենյակի վերջը հասանք, Գասը կանգ առավ ու հարցրեց.

– Լա՞վ ես:

Ես գլխով արեցի: Ձեռքս ուղղեցի հետ՝ Աննայի նկարին, ու ասացի.

– Գիտե՞ս ամենավատը որն է: Էն, որ նա համարյա փրկվում էր: Նա մահացել է ազատագրումից ընդամենը մի քանի շաբաթ առաջ:

Լիդուվեյը մի քանի քայլ հեռացավ՝ ինչ-որ մի տեսանյութ դիտելու, իսկ ես բռնեցի Օգոստոսի ձեռքը, և մենք հաջորդ սենյակ մտանք: Եռանկյունաձև սենյակ էր, որտեղ պահվում էին ամիսներով իր դուստրերին փնտրելու ընթացքում Օտտո Ֆրանկի գրած նամակները: Սենյակի մեջտեղի պատին Օտտո Ֆրանկի մասնակցությամբ մի տեսանյութ էր ցուցադրվում: Նա անգլերեն էր խոսում:

– Դեռ նացիստներ մնացե՞լ են, որոնց կկարողանայի գտնել ու արդար դատաստան տեսնել, – ասաց Օգոստոսը, երբ, ցուցասեղանների վրա խոնարհված, կարդում էինք Օտտոյի նամակներն ու հուսահատեցնող պատասխանները,– թե՞ ոչ, ազատագրումից հետո ոչ մեկը նրա երեխաներին չէր տեսել:

– Կարծում եմ նրանք բոլորն էլ արդեն մահացած կլինեն:

Բայց էնպես չէ, թե նացիստները չարագործության մենաշնորհ ունեին:

– Ճիշտ ես, – համաձայնեց, – ահա թե ինչ պետք է անենք, Հեյզել Գրեյս: Պետք է միավորվենք ու դառնանք վրիժառու գործակալների զույգ, թնդյունով սլանանք աշխարհով մեկ՝ վերացնելով անարդարությունները, պաշտպանելով թույլերին, փրկելով վտանգի մեջ հայտնվածներին:

Չնայած դա նրա երազանքն էր, ոչ թե իմը, բայց տարվեցի դրանով: Վերջիվերջո, նա էլ իմով էր տարվել:

– Մեր անվախությունը կլինի մեր գաղտնի զենքը, – ասացի:

– Մեր սխրանքների մասին պատմությունները կապրեն երկար-երկար, մինչև երկրի երեսին կդադարի հնչել մարդկային ձայնը:

– Ու նույնիսկ դրանից հետո, երբ ռոբոտները վերհիշեն մարդկանց անիմաստ զոհաբերությունները և կարեկցանքը, մեզ էլ կհիշեն:

– Ռոբոտավարի կծիծաղեն մեր համարձակ խենթություն-ների վրա, բայց իրենց երկաթե սրտերի խորքում նրանք էլ կցանկանան մեզ նման ապրած ու մահացած լինել՝ հերոսի գործ անելիս:

– Օգոստոս Ուոթերս, – նայեցի նրան ու մտքովս անցավ, որ, երևի, Աննա Ֆրանկի տուն-թանգարանում չես կարող համբուրվել: Բայց հետո մտածեցի, որ Աննա Ֆրանկը, այնուամենայնիվ, ինչ-որ մեկին համբուրել է Աննա Ֆրանկ տուն-թանգարանում, ու որ նրան շատ դուր կգար, եթե իր տունը դառնար մի վայր, որտեղ երիտասարդներն ու անդառնալիորեն կոտրվածները տրվում են սիրուն:

«Պետք է ասեմ, – տեսահոլովակում հոլանդական առոգանությամբ անգլերենով ասում էր Օտտո Ֆրանկը, – ինձ շատ էին զարմացնում Աննայի խորը մտքերը»:

Ու հետո մենք համբուրվեցինք: Ես բաց թողեցի թթվածնի սարքը և ձգվեցի դեպի նրա վիզը: Նա, բարձրացնելով ինձ ոտնաթաթերիս վրա, գրկեց իրանս: Երբ նրա կիսափակ

https://1915.info

շուրթերը հպվեցին շուրթերիս, շունչս սկսեց կտրվել նոր և հրաշալի ձևով: Մեր շուրջը եղած տարածությունը գոլորշիացավ, և մի պահ իսկապես սիրեցի մարմինս: Ինձ թվաց, թե քաղցկեղից ավերված մարմինը, որ տարիներով քարշ էի տալիս, հանկարծ արդարացրեց իմ պայքարը, կրծքավանդակիս խողովակներն ու ներերակային կատետրները, ուռուցքների վերջ չունեցող մարմնական դավաճանությունները:

«Նա իմ ճանաչած աղջնակը չէր. բոլորովին ուրիշ Աննա էր: Նա երբեք այդ տեսակի ներքին զգացմունքներ ցույց չէր տվել»,- շարունակում էր խոսել Օտտո Ֆրանկը:

Համբույրը մի հավերժություն տևեց՝ հետևից լսվող Օտտո Ֆրանկի ձայնի ուղեկցությամբ:

«Եվ ես եկա եզրակացության (քանի որ ես շատ լավ հարաբերությունների մեջ էի Աննայի հետ), որ ծնողների մեծամասնությունն իսկապես չի ճանաչում իրենց երեխաներին», - ասում էր նա:

Գիտակցելով, որ աչքերս փակ են, բաց արեցի: Օգոստոսն ուշադիր ինձ էր նայում, նրա կապույտ աչքերը դեռ երբեք այդքան մոտ չէին եղել, իսկ նրա հետևում տեսա մեզ շրջապատած մարդկանց խիտ ամբոխը: Կարծես թե վրդովված էին: Ցնցված: Ա՛խ այս դեռահասները՝ իրենց հորմոններով, համբուրվում են տեսահոլովակի ներքո, որում դողդոջուն ձայնով որդեկորույս հայր է խոսում:

Ես կտրուկ հետ քաշվեցի Օգոստոսից: Մինչ ես գլուխս կախած հայացքս հառել էի կեղերիս, նա արագ համբուրեց ճակատս:

Հետո նրանք սկսեցին ծափահարել: Բոլորը, այս բոլոր հասուն մարդիկ պարզապես սկսեցին ծափահարել, իսկ մեկն էլ եվրոպական առոգանությամբ բացականչեց՝ «բրավո»: Օգոստոսը ժպտալով խոնարհվեց: Ծիծաղելով՝ ես նույնպես թեթևակի խոնարհվեցի, ինչին հետևեց ծափահարությունների մեկ այլ տարափ:

Բոլոր մեծահասակներին թույլ տալով առաջինն իջնել՝ մենք

ուղղվեցինք դեպի աստիճանները: Սրճարանից մի փոքր այս կողմ, որտեղից, փառք Աստծու, վերելակով իջանք առաջին հարկ և նվերների խանութ, ցուցադրված էր Աննայի օրագրից մի քանի էջ և ցիտատների չհրատարակված գիրքը: Բացված էր գրքի այն էջը, որտեղ Շեքսպիրի խոսքերն էին. «Ո՞վ է այնքան ամրակուռ, որ մոլորության ենթակա չլինի»[1]:

Լիդուվեյը մեզ հետ տարավ «Ֆիլոսոֆ»: Դրսում անձրև էր մաղում: Ես ու Օգոստոսը, հյուրանոցի մոտ աղյուսե մայթին կանգնած, դանդաղ թրջվում էինք:

– Երևի հանգստի կարիք ունես, – առաջարկեց Օգոստոսը:

– Ես լավ եմ, – ասացի:

– Լավ: – Մի պահ լռելուց հետո հարցրեց, – Ինչի՞ մասին ես մտածում:

– Քո:

– Իսկ ինչ ես մտածում իմ մասին:

– Չգիտեմ էլ, թե որի՞ն նախապատվություն տամ՝
Վերջավորությունների՞ գեղեցկությանը,
Թե՞ ակնարկների գեղեցկությանը,
Սև կեռնեխի ճոկողությունի՞ն,
Թե՞ որ դրանից հետո է լինելու:

– Աստված իմ, ինչ սեքսուալ ես:

– Կարող ենք քո սենյակ գնալ:

– Ավելի վատ առաջարկներ էլ եմ լսել:

Երկուսով խցկվեցինք փոքրիկ վերելակի մեջ: Ամբողջ մակերեսը՝ ներառյալ հատակը, հայելապատ էր: Վերելակը փակելու համար ստիպված էինք դուռը քաշել, և այդ ինամենի վերելակը ճռռալով դանդաղ բարձրացավ երկրորդ հարկ: Ես հոգնած էի, քրտնած ու մտահոգված, որ ընդհանրապես ահավոր տեսք ունեմ և վատ եմ բուրում: Այնուամենայնիվ, նրան համբուրեցի վերելակում: Հետո նա, ինձնից հետ քաշվելով, մատնացույց արեց հայելին և ասաց.

---

1 Վ. Շեքսպիր, II հատոր, «Հուլիոս Կեսար», թարգմ.՝ Խ. Դաշտենց, Հայաստանի պետական հրատարակչություն, Երևան, 1964, 194 էջ

– Տես, անթիվ-անվերջ Հեյզելներ:

– Որոշ անվերջություններ մեծ են այլ անվերջություններից, – ծոր տվեցի՝ նմանակելով վան Հաութենին:

– Ապուշի մեկն է, – ասաց Օգոստոսը:

Մեր երկրորդ հարկ հասնելը դարեր տևեց:

Վերջապես վերելակը կանգ առավ, և Օգոստոսը հրեց հայելապատ դուռը: Դուռը կիսաբաց անելիս հանկարծ կծկվեց ցավից ու մեկ վայրկյանով բաց թողեց այն:

– Լավ ես,– հարցրի ես:

Քիչ հետո ասաց.

– Հա, հա, ուղղակի ծանր է:

Նա կրկին հրեց ու բացեց դուռը: Իհարկե, նա ճանապարհը զիջեց ինձ, բայց ես չգիտեի, թե որ կողմ գնամ: Այսպիսով, դուրս գալով, ուղղակի կանգնեցի վերելակի մոտ, նա էլ կանգնեց կողքիս ու այդպես կանգնած մնաց: Դեմքը դեռ ծամածռված էր: Ես նորից հարցրի.

– Լավ ես:

– Ուղղակի լավ մարզավիճակում չեմ, Հեյզել Գրեյս: Ամեն ինչ կարգին է:

Այդպես ուղղակի կանգնել էինք միջանցքում: Նա չէր էլ փորձում ինձ իր սենյակ ուղեկցել, իսկ ես էլ չգիտեի, թե որտեղ է այն: Քանի շարունակվում էր այս անհարմար վիճակը, գնալով համոզվում էի, որ նա ուղիներ էր փնտրում ինձ հետ մերձեցումից խուսափելու համար, ու որ ես երբեք չպետք է նման բան առաջարկած լինեի, որ դա օրիորդին սազական չէր, հետևաբար զզվելի էր թվացել Օգոստոս Ուոթերսին, որ անթարթ ինձ էր նայում: Ուղղակի կանգնել էր այնտեղ ու փորձում էր այդ վիճակից իրեն ազատելու բարեկիրթ ձև գտնել: Իսկ հետո՝ մի ամբողջ հավերժություն անց, վերջապես ասաց.

– Ծնկիցս մի քիչ վերև է, կամաց-կամաց նեղանալով միանում է մաշկիս: Ու մի զզվելի սպի կա, որը նման է...

– Ինչի մասին ես խոսում, – հարցրի:

– Ոտքիս, – ասաց, – ուզում եմ, որ պատրաստ լինես, եթե ...

դե, երբ տեսնես ոտքս:

– Օ՜հ, հանգստացիր, – ասացի՝ անելով այն երկու քայլը, որ բաժանում էր մեզ:

Սեղմելով պատին՝ ուժգին, կրքոտ համբուրեցի նրան ու շարունակում էի համբուրել, մինչ նա սենյակի բանալին էր փնտրում:

Ներս սահեցինք անկողին: Թթվածնիս սարքը թեթևակի սահմանափակում էր ազատությունս, բայց նույնիսկ այդպես կարողացա նրա վրա ելնել ու հանել վերնաշապիկը, զգալ նրա անրակից ներքև գտնվող մաշկի վրայի քրտնքի համը՝ շուրթերս հպելով նրա մաշկին ու շշնջալով. «Սիրում եմ քեզ, Օգոստոս Ուոթերս», զգալով, թե այդ բառերից, ինչպես է մարմնիս տակ թուլանում, հաճույքից հալվում նրա մարմինը: Ձեռքերը ներքև տանելով՝ փորձեց հանել վերնաշապիկս, բայց խճճվեց խողովակիս մեջ: Ես ծիծաղեցի:

•••

– Ինչպե՞ս ես ամեն օր դա անում, – հարցրեց Օգոստոսը, մինչ ես վերնաշապիկս արձակում էի խողովակներից:

Հանկարծ հիմարի պես սկսեցի անհանգստանալ, որ վարդագույն վարտիքս չի համապատասխանում մանուշակագույն կրծկալիս, կարծես թե տղաները նկատում են նման բաները: Սահեցի ծածկոցի տակ, հանեցի ջինսս ու գուլպաներս, հետո սկսեցի դիտել, թե ինչպես էր վերմակը պար գալիս, մինչ դրա տակից Օգոստոսը հանում էր նախ ջինսը, հետո՝ ոտքը:

Ամեն ինչ ծածկոցների տակ թաքցրած՝ կողք կողքի պառկել էինք մեջքի վրա: Քիչ հետո ձեռքս տարա նրա ազդրին ու դանդաղ ներքև սահեցնելով՝ հասա անդամահատված մասին՝ կոշտ, սպիաշատ մաշկին: Նա ջղաձգվեց:

– Ցավո՞ւմ է, – հարցրի:

– Չէ, – ասաց ու կողքի վրա շրջվելով՝ համբուրեց ինձ:

– Էնքան սեքսուալ ես, – ասացի՝ ձեռքս դեռ նրա ոտքին:

– Արդեն սկսում եմ մտածել, որ դու անդամալույծների

ֆետիշիստ ես, – ասաց՝ շարունակելով համբուրել ինձ:

– Ես Օգոստոս Ուոթերսի ֆետիշիստ եմ, – ծիծաղելով պատասխանեցի:

Իսկ հետո կատարվածն իմ պատկերացրածի լրիվ հակառակն էր. դանդաղ ու հանգիստ և համբերատար, ոչ այդքան ցավոտ, ոչ էլ այդքան սքանչելի: Պահպանակի հետ կապված խնդիրներ ծագեցին, բայց իմ մոտից այդ ամենն այնքան էլ լավ չէր երևում: Մահճակալի սնարը չկոտրեցինք: Ոչ մի գոռոց-ճիչ չարձակեցինք: Ու անկեղծ ասած, դա, երևի, առանց որևէ բառ ասելու մեր միասին անցկացրած ամենաերկար ժամանակահատվածն էր:

Միայն մեկ բան ընդունված ձևով եղավ:

Երբ գլուխս Օգոստոսի կրծքին դրած լսում էի նրա սրտխփոցը, նա ասաց.

– Հեյզել Գրեյս, աչքերս բառիս բուն իմաստով փակվում են:

– Բառացիության սխալ կիրառություն, – ասացի:

– Չէ, – ասաց, – էնքան հոգնած եմ:

Նա գլուխը մի կողմ թեքեց: Ականջս կրծքավանդակին հպած, լսեցի, թե ինչպես են նրա թոքերը քնի ռիթմի անցնում: Քիչ հետո վեր կացա, հագնվեցի ու «Ֆիլոսոֆ» հյուրանոցի գրենական պիտույքները գտնելով՝ մի սիրային նամակ գրեցի.

«Թանկագին Օգոստոս,



Սիրով՝
քո Հեյզել Գրեյս

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Հաջորդ առավոտ՝ մեր վերջին լրիվ օրն Ամստերդամում, մայրս, Օգոստոսը և ես մեր հյուրանոցից կես թաղամաս քայլեցինք մինչև Վոնդելի անվան զբոսայգի, որտեղ Հոլանդական ազգային կինոթանգարանի մոտ մի սրճարան գտանք: Հսկայական շագանակենու ցանցանման ստվերում նստելով մի բաժակ լատտեյի շուրջ, որը, ինչպես մատուցողն ասաց, հոլանդացիներն անվանում են «սխալ սուրճ», որովհետև դրա մեջ ավելի շատ կաթ է, քան սուրճ, մայրիկիս պատմեցինք մեծն Փիթեր վան Հաութենի հետ մեր հանդիպման մասին: Մենք պատմությունը զվարճալի երանգներով ներկայացրինք: Կարծում եմ, որ այս աշխարհում ինքդ կարող ես ընտրել, թե ինչպես պատմել տխուր պատմությունները: Մենք ընտրեցինք զվարճալի տարբերակը: Օգոստոսը, սրճարանի աթոռի վրա փռվելով, ձևացրեց, թե ինքը լեզուն կապ ընկած, տառերը կուլ տվող վան Հաութենն է, որ նույնիսկ չէր կարողանում տեղից վեր կենալ: Ես էլ կանգնեցի և կատաղած ու ագրեսիվ վիճակում ինքս ինձ խաղալով՝ գոռացի.

– Վե՛ր կաց, այ գեր անճոռնի ծերուկ:

– Դու նրան անճոռնի՞ ես ասել, – զարմացավ Օգոստոսը:

– Իբր թե՝ հա, շարունակիր:

– Ե-ե-ես ա-ա-նճոռնի չեմ: Ա-ա-նճոռնին ինքդ ես, այ քթի մեջ խողովակով աղջիկ:

– Դու վախկոտի մեկն ես, – գոռացի, և Օգոստոսը, դերից

դուրս գալով, սկսեց ծիծաղել:

Ես նստեցի տեղս: Հետո մայրիկիս պատմեցինք Աննա Ֆրանկի տուն-թանգարան այցելության մասին՝ դե, իհարկե, բաց թողնելով մեր համբույրը:

– Իսկ հետո՞, վան Հաութենի տա՞ննն եք գիշերել, – հարցրեց մայրս:

Նույնիսկ չհասցրի էլ կարմրել, երբ Օգոստոսն ասաց.

– Չէ, ուղղակի նստած էինք սրճարանում: Հեյզելը զվարճացնում էր ինձ Վեննի դիագրամային կատակներով:

Նա նայեց ինձ: Աստվա՜ծ իմ, ի՜նչ սեքսուալ էր:

– Հիանալի է: Լավ, ես գնամ մի քիչ զբոսնեմ, կարծում եմ դուք խոսելու շատ բան ունեք, – ասաց՝ բազմանշանակ նայելով Օգոստոսին: – Իսկ ավելի ուշ կարող ենք նավակով շրջել ջրանցքի վրայով:

– Ը՜մմ, լավ, – համաձայնեցի:

Մայրս հինգ եվրոյանոց թղթադրամ դրեց իր սուրճի ափսեի տակ, հետո համբուրեց գլուխս՝ շշնջալով. «Սիրում-սիրում-սիրում եմ քեզ», – սովորականից երկու անգամ ավելի շատ սեր:

Գասը, իրար խաչվող ու բետոնի վրա առանձնացող ճյուղերի ստվերը ցույց տալով, ասաց.

– Սիրուն է, չէ՞:

– Ըհը, – համաձայնեցի:

– Էնքան լավ փոխաբերություն է:

– Սա՞ էլ:

– Առարկաների նեգատիվային պատկերներն իրար են միանում, հետո՝ անջատվում իրարից, – ասաց:

Մեր առջևով հարյուրավոր մարդիկ անցան՝ վազքով, հեծանիվներով և անվաչմուշկներով: Ամստերդամը շարժման ու ակտիվության քաղաք էր, քաղաք, որ նախընտրում էր չշրջել ավտոմեքենայով, հետևաբար, ես անխուսափելիորեն մերժված ու չընդունված էի զգում ինձ: Բայց, Աստվա՜ծ իմ, որքա՜ն գեղեցիկ քաղաք էր. հսկայական ծառի շուրջը բռնած առվակը, ջրի եզրին անշարժ կանգնած ձկնկուլը, որ

նախաձաշ էր փնտրում ջրում լող տվող միլիոնավոր ծփիների թերթիկների մեջ:

Բայց Օգոստոսն այդ ամենը չէր նկատում: Նա շատ էր տարվել ստվերների շարժը դիտելով: Վերջապես ասաց.

– Ամբողջ օրը կնստեի ու սրան կնայեի, բայց պետք է հյուրանոց գնանք:

– Ժամանակ ունենք, – հարցրի:

Նա տխուր ժպիտով պատասխանեց.

– Երանի չէր ...

– Ինչ-որ բան է պատահել, – հարցրի:

Բայց նա ուղղակի գլխով հյուրանոցի կողմը ցույց տվեց:

Մենք լուռ քայլում էինք, Օգոստոսը՝ ինձանից կես քայլ առաջ: Շատ էի վախենում հարցնել, թե արդյոք վախենալու պատճառ ունեմ:

Ուրեմն գոյություն ունի այսպիսի մի բան, որ կոչվում է Մասլոուի «պահանջմունքների հիերարխիա»: Ըստ էության, այդ մարդը՝ Աբրահամ Մասլոուն, հայտնի է դարձել իր տեսությամբ, թե որոշակի պահանջմունքներ պետք է բավարարվեն, որից հետո միայն քեզ մոտ կարող են այլ պահանջմունքներ ծագել: Ահա դրանք.



ՄԱՍԼՈՈՒԻ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԻԵՐԱՐԽԻԱ

https://1915.info

Բավարարելով սննդի ու ջրի պահանջմունքները՝ բարձրանում ես պահանջմունքների հաջորդ սանդղակ՝ անվտանգություն: Հետո անցնում ես հաջորդ խմբին, հետո՝ հաջորդին, հետո՝ հաջորդին, բայց ըստ Մասլոուի, ամենակարևորն այն է, որ մինչև ֆիզիոլոգիական պահանջմունքներդ չբավարարվեն, անվտանգության ու սոցիալական պահանջմունքները քեզ չեն էլ անհանգստացնի: Էլ չեմ ասում՝ «ինքնիրացումը», երբ սկսում ես արվեստով զբաղվել, խորհել էթիկայի, քվանտային ֆիզիկայի և նման բաների շուրջ:

Ըստ Մասլոուի, ի վիճակի չլինելով ինձ ապահով զգալ առողջությանս հարցում, ես մնացել էի բուրգի երկրորդ սանդղակում, հետևաբար՝ անկարող էի հասնել սիրուն, հարգանքին, արվեստին ու մնացած բաներին, ինչը, իհարկե, լրիվ հիմարություն է: Արվեստով զբաղվելու կամ փիլիսոփայության շուրջ խորհելու մղումը հիվանդ ժամանակ ոչ մի տեղ չի կորչում: Այդ մղումները պարզապես ձևափոխվում են հիվանդության կողմից:

Ըստ Մասլոուի բուրգի ստացվում էր, թե ես թերի, կիսատ մարդ եմ ու շատերը համաձայն էին նրա հետ: Բայց ոչ՝ Օգոստոսը: Ինձ միշտ թվացել էր, թե նա կարողացել էր սիրել ինձ, քանի որ ինքն էլ էր ժամանակին հիվանդ եղել: Միայն նոր-նոր էր մտքովս անցնում, որ միգուցե և նա հիմա էլ դեռ հիվանդ է:

Մտանք իմ սենյակ՝«Կիերկեգոր»: Կարծելով, որ նա էլ կմիանա ինձ, նստեցի մահճակալին, բայց նա նստեց փոշոտ նախշավոր թիկնաթոռին: Ախ, այդ աթոռը: Հետաքրքիր է, քանի՞ տարվա էր, մի հիսո՞ւն:

Մինչ նա տուփից ծխախոտ էր հանում և շուրթերի արանքը դնում, զգացի, որ կոկորդումս կծիկ է առաջանում: Նա հառաչելով հենվեց աթոռին.

– Վերակենդանացման բաժանմունքում հայտնվելուցդ մի օր առաջ ազդրս սկսեց ցավել:

– Ոչ, – ասացի:

Խուճապը վրա հասավ՝ ինձ իր մեջ առնելով:

Նա գլխով արեց:

– Դե, գնացի տոմոգրաֆիայի ու..., – լռելով՝ ծխախոտը դուրս քաշեց բերանից ու սեղմեց ատամները:

Կյանքիս մեծ մասը նվիրել էի ինձ սիրող մարդկանց առջև արցունքներս զսպելուն ու լավ էի հասկանում, թե ինչ էր անում Օգոստոսը: Սեղմում ես ատամներդ, նայում վերև, ինքդ քեզ ասում, որ եթե նրանք քեզ լացելիս տեսնեն, մեծ ցավ կզգան, ու դու նրանց կյանքում կլինես ոչ այլինչ, քան «Տխրություն»: Եվ, եթե ընդամենը տխրություն դառնալ չես ուզում, ուրեմն չպետք է լաց լինես: Եվ անընդհատ ինքդ քեզ կրկնում ես այդ ամենը՝ նայելով վերև՝ առաստաղին, իսկ հետո կուլ ես տալիս արցունքներդ, թեև կոկորդդ չի ուզում փակվել: Եվ դու նայում ես քեզ սիրող անձնավորությանն ու ժպտում:

Նրա դեմքին առկայծեց իր ծուռ ժպիտը, հետո ասաց.

– Ու ես լուսավորվեցի ինչպես տոնածառ, Հեյզել Գրեյս: Կրծքավանդակս, ձախ ազդրս, լյարդս, ամեն-ամեն տեղ:

Ամեն տեղ: Այդ բառը որոշ ժամանակ մնաց օդում կախված: Երկուսս էլ գիտեինք՝ ինչ էր դա նշանակում: Վեր կացա, ինքս ինձ ու սայլս քարշ տալով գորգի վրա, որ ավելի մեծ էր, քան Օգոստոսը երբևէ կլիներ, ծնկի իջա աթոռի մոտ, գլուխս դրի նրա գոգին ու գրկեցի իրանը:

Նա շոյում էր մազերս:

– Ցավալի է, – ասացի:

– Ներիր, որ չէի ասել քեզ, – ասաց հանգիստ ձայնով: – Կարծում եմ, մայրդ գիտի: Նոր էնպես նայեց ինձ: Երևի մայրս է ասել նրան կամ ուրիշ տեղից է իմացել: Ես պետք է ասած լինեի քեզ: Հիմարի մեկն եմ, եսասեր ապուշ:

Դե, իհարկե, հասկանում էի, թե ինչու ինձ ոչինչ չէր ասել: Նույն պատճառով, թե ինչու ես չէի ուզում, որ նա ինձ վերակենդանացման բաժանմունքում տեսներ: Նույնիսկ մեկ րոպեով չէի կարող նրա վրա բարկանալ ու միայն հիմա, երբ արդեն սիրահարվել էի «նռնակի», հասկացա, թե ինչ հիմարն

էի ես, երբ փորձում էի ուրիշներին փրկել իմ վերահաս բեկորացումից: Չէի կարող ջնջել Օգոստոսի հանդեպ սերս: Ու չէի էլ ուզում անել դա:

– Արդար չէ, – ասացի, – գրո՛ղը տանի, շատ անարդար է:

– Աշխարհը, – ասաց նա, – երազանքներն իրականացնող գործարան չէ:

Ու հետո փղձկաց, ընդամենը մեկ րոպեով: Անզոր ու մոլեգին հեկեկոցը՝ ասես որոտ առանց կայծակի, ահարկու կատաղությունը, որ տառապանքի ոլորտում դիլետանտները կարող են սխալմամբ թուլության տեղ ընդունել: Հետո ինձ իրեն մոտ քաշեց ու, դեմքը իմ դեմքից ընդամենը մի քանի սանտիմետր հեռու, վճռեց.

– Ես կպայքարեմ: Կպայքարեմ դրա դեմ՝ հանուն քեզ: Մի՛ անհանգստացիր ինձ համար, Հեյզել Գրեյս: Ես լավ եմ: Ոտքս կախ գցելու մի ձև կգտնեմ ու դեռ երկար ժամանակ քեզ կհոգնեցնեմ:

Ես լաց էի լինում: Բայց նույնիսկ այդ ժամանակ նա իրեն ուժեղ էր պահում՝ ինձ այնքան ամուր գրկելով, որ տեսնում էի իմ շուրջը փաթաթված թևերի ջլուտ մկանները:

– Ներիր, – ասում էր նա: – Ես կլավանամ: Ամեն ինչ լավ կլինի: Խոստանում եմ, – ու ժպտում էր իր ծուռ ժպիտով:

Նա համբուրեց ճակատս, ու հետո զգացի, թե ինչպես թեթևակի ներս քաշեց հզոր, ամրակազմ կուրծքը:

– Կարծես թե, այնուամենայնիվ, համարթիա ունեմ:

Որոշ ժամանակ անց նրան քաշելով անկողին տարա ու այդպես կողք կողքի պառկած, նա պատմում էր ինձ, որ սկսել էր պալիատիվ քիմիոթերապիա անցնել, բայց դադարեցրել էր Ամստերդամ գնալու համար, չնայած դա շատ էր բարկացրել ծնողներին: Նրանք փորձել էին ետ կանգնեցնել, մինչև իսկ մեր մեկնելու առավոտը, երբ ես լսեցի նրան գոռալիս, թե իր մարմինն իրեն է պատկանում:

– Կարող էինք տեղափոխել ճանապարհորդությունը, – ասացի:

– Չէ, չէինք կարող, – առարկեց, – Միևնույն է՝ օգուտ չէր տալիս: Զգում էի, որ օգուտ չի տալիս, հասկանում ես:

Ի նշան համաձայնության՝ գլխով արեցի:

– Էդ ամեն ինչը ուղղակի հիմարություն է, խաբեություն, – ասացի:

– Երբ տուն գնամ, մի ուրիշ բան կփորձեմ: Նրանք միշտ նոր գաղափարներ են ունենում:

– Ըհը, – համաձայնեցի, քանի որ ինքս էլ էի փորձադաշտ:

– Ես որոշ առումով խաբել եմ քեզ՝ հավատացնելով, որ առողջ մարդու ես սիրահարվում, – ասաց:

Ուսերս թոթվելով՝ ասացի.

– Ես էլ նույնը կանեի:

– Չէ, դու հաստատ չէիր անի, բայց բոլորը քեզ նման հիասքանչ լինել չեն կարող:

Համբուրեց ինձ, հետո դեմքը ծամածռեց:

– Ցավեր ունես, – հարցրի:

– Չէ, ուղղակի ... – երկար-երկար առաստաղին նայելուց հետո վերջապես ասաց, – սիրում եմ էս աշխարհը: Սիրում եմ շամպայն խմել: Սիրում եմ չծխել: Սիրում եմ հոլանդերեն խոսող հոլանդացիների ձայները: Իսկ հիմա ... նույնիսկ մի ճակատամարտի չեմ մասնակցել: Նույնիսկ կռիվ չեմ արել:

– Քո կռիվը քաղցկեղի դեմ է, – ասացի, – պետք է մարտնչես դրա դեմ ու երբեք չհանձնվես:

Ատում էի, երբ մարդիկ, քաղցկեղի դեմ ճակատամարտին նախապատրաստելու համար, փորձում էին այդպես սիրտ տալ ինձ, այնուամենայնիվ, ես էլ նույն բանն էի անում Օգոստոսի հանդեպ:

– Դու ... դու պետք է ապրես այսօրվա օրով: Հիմա սա է քո պատերազմը:

Ինքս ինձնից զզվում էի հիմար սենտիմենտալության համար, բայց ուրիշ ինչ կարող էի անել:

– Պատերազմ, – հեգնանքով կրկնեց, – ինչի՞ հետ եմ պատերազմում: Քաղցկեղի՞ս: Իսկ ինչ է իմ քաղցկեղը: Քաղցկեղս

ես եմ: Ուռուցքներն ինձանից են կազմված: Դրանք կազմված են ինձանից նույն ձևով, ինչպես սիրտս ու ուղեղս են ինձանից կազմված: Սա քաղաքացիական պատերազմ է, Հեյզել Գրեյս, նախապես որոշված հաղթողով:

– Գաս, – ասացի, բայց շարունակել չկարողացա: Նա չափից դուրս խելացի էր այն մխիթարանքների համար, որ կարող էի առաջարկել:

– Լավ, – ասաց:

Բայց ոչինչ էլ լավ չէր: Մեկ րոպե հետո շարունակեց.

– Եթե Ամստերդամի ազգային թանգարան գնաս, ինչը ես իրոք ուզում էի անել... Բայց ո՞ւմ ենք խաբում, ոչ ես, ոչ էլ դու ի վիճակի չենք թանգարաններով շրջելու: Ինչևէ, մինչև մեր մեկնելը օնլայն դիտեցի թանգարանի հավաքածուները: Եթե այցելեիր թանգարանը, հուսանք, որ մի օր անպայման կայցելես, մահացած մարդկանց շատ նկարներ կտեսնեիր: Կտեսնեիր Հիսուսին՝ խաչի վրա, կտեսնեիր վզից խոցված մի տղայի, ծովում, տարբեր ճակատամարտերում մահացող մարդկանց ու նահատակների մի ամբողջ շարք, բայց ո՛չ մի քաղցկեղով հիվանդ երեխա՛: Ժանտախտից, ծաղիկից, դեղին տենդից կամ նման մի բանից մահացած ոչ մեկին չես տեսնի էնտեղ, որովհետև հիվանդության մեջ փառք չկա: Էդպիսի մահը ոչ մի նշանակություն չունի: Հիվանդությունից մահանալը պատիվ չի բերում:

Աբրահամ Մասլոու, ձեզ եմ ներկայացնում Օգոստոս Ուոթերսին, ով իր էքզիստենցիալիստական հետաքրքրասիրությամբ գերազանցում է իր լավ կերած-խմած, սիրված-գուրգուրված ու առողջ եղբայրներից շատերին: Մինչ մարդկանց մեծ զանգվածներ շարունակում էին հրեշավոր չափերի հասնող սպառողական կյանք վարել, անգամ չխորհելով իրենց ապրած կյանքի մասին, Օգոստոս Ուոթերսը հեռվից ուսումնասիրում էր Ամստերդամի ազգային թանգարանի ցուցադրանմուշները:

– Ինչ, – քիչ անց հարցրեց Օգոստոսը:

https://1915.info

– Ոչ մի բան, ուղղակի ... ուղղակի, – խոսքս ավարտել չէի կարողանում, չգիտեի ինչպես: – Ուղղակի շատ, շատ եմ սիրում քեզ:

Նա կեսբերան ժպտաց՝ քիթը իմ քթից ընդամենը մի քանի սանտիմետր հեռու:

– Էդ զգացմունքը փոխադարձ է: Չեմ կարծում, որ կկարողանաս մոռանալ սրա մասին ու ինձ մահացողի պես չվերաբերվել:

– Ես չեմ մտածում, թե դու մահանում ես, – ասացի, – կարծում եմ, ուղղակի մի թեթև քաղցկեղ ունես:

Նա ժպտաց: Սև հումոր:

– Ես միայն վեր ընթացող կարուսելի վրա եմ, – ասաց:

– Իսկ քեզ ամբողջ ճանապարհիդ ընթացքում ուղեկցելն իմ արտոնությունն ու պարտականությունն է, – ավելացրի:

– Սիրով զբաղվելու փորձը շատ ծիծաղելի կդիտվի հիմա:

– Ոչ մի փորձ, – ասացի, – միայն գործ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Հետդարձի թռիչքի ժամանակ, երբ գետնից երեք հազար մետր բարձր ամպերից վեց հազար մետր վեր էինք բարձրացել, Գասն ասաց.

– Մի ժամանակ մտածում էի, որ զվարճալի կլիներ ամպերի վրա ապրել:

– Իհը, – համաձայնեցի, – դա կլիներ օդային փչովի ամրոցների նման, միայն թե ընդմիշտ:

– Բայց մի անգամ բնագիտության դասի ժամանակ պարոն Մարտինեսը հարցրեց, թե մեզնից ո՞վ է ինչ-որ ժամանակ երազել ամպերում ապրելու մասին, ու բոլորս ձեռք բարձրացրինք: Իսկ հետո պարոն Մարտինեսն ասաց, որ ամպերում քամին փչում է ժամում հարյուր հիսուն մղոն արագությամբ, իսկ ջերմաստիճանը զրոյից երեսուն աստիճան ցածր է, թթվածին չկա, ու մենք բոլորս մի քանի վայրկյանից կմահանանք էնտեղ:

– Երևում է, էդ ձեր ուսուցիչը շատ նրբանկատ մարդ է եղել:

– Ասեմ քեզ, Հեյզել Գրեյս, նա երազանքներ սպանելու մասնագետ էր: Հրաբուխները գեղեցի՞կ ես համարում: Ասա դա Պոմպեյի ճչացող տասը հազար դիակներին: Դեռ հոգու խորքում հավատո՞ւմ ես, որ էս աշխարհը կախարդական տարրեր ունի: Ոչ, դա ուղղակի անկանոն ցատկոտող ու իրար բախվող անհոգի մոլեկուլներ են: Մտահոգվո՞ւմ ես, թե ով հոգ կտանի քո մասին, եթե ծնողներդ մահանան: Ճիշտ էլ անում

ես, որովհետև կգա մի ժամանակ, երբ նրանք որդերի կեր կդառնան:

– Ինչքան քիչ բան իմանաս, էնքան հանգիստ կքնես, – ասացի:

Բորտուղեկցորդուհին ըմպելիքների սայլակով շրջում էր շարքերի միջով՝ կիսաձայն կրկնելով. «Ինչ կխմեք», «Ինչ կխմեք»:

Գասը, վրաս թեքվելով, բարձրացրեց ձեռքը և ասաց.

– Մեզ շամպայն կտանք:

– Քանմեկ տարեկան կանք, – կասկածանքով հարցրեց բորտուղեկցորդուհին:

Ես ցուցադրաբար ուղղեցի քթիս խողովակները: Բորտուղեկցորդուհին ժպտաց, հետո քնած մայրիկիս վրա հայացք գցելով՝ հարցրեց.

– Նա դեմ չի՞ լինի:

– Չէ, – վստահեցրի:

Ու նա երկու պլաստմասե բաժակների մեջ շամպայն լցրեց: «Քաղցկեղի բոնուսներ»:

Գասն ու ես, բաժակները չխկացնելով, իրար կենաց խմեցինք:

Հետո կում արինք: Սրանք «Օրանյիի» աստղերից ավելի խամրած էին, բայց վատը չէին:

– Գիտե՞ս, վան Հաութենի բոլոր ասածները ճիշտ էին, – ասաց Գասը:

– Միգուցե, բայց պարտադիր չէր, որ տականքի նման պահեր իրեն: Չեմ հավատում, թե նա պատկերացրել էր գերմանամուկ Սիզիփոսի ապագան, իսկ Աննայի մայրիկինը՝ ոչ:

Օգոստոսը թոթվեց ուսերը: Հանկարծ թվաց, թե նա մի տեսակ անջատվեց.

– Լա՞վ ես, – հարցրի:

Թեթևակի տարուբերեց գլուխը:

– Ցավում է, – ասաց:

https://1915.info

– Կո՞ւրծքդ:

Գլխով արեց: Սեղմեց բռունցքները: Ինչպես հետո ինքն էր նկարագրելու, ասես բարակ բարձրակրունկ կոշիկ հագած միոտանի գեր մարդ կանգնած լիներ կրծքավանդակի մեջտեղում: Հետ հրելով փակեցի նստարանի մատուցարանը ու առաջ թեքվեցի՝ նրա ուսապարկից դեղահաբեր հանելու: Նա մեկը շամպայնով կուլ տվեց:

– Լա՞վ ես, – նորից հարցրի:

Գասը նստել, բացում-փակում էր բռունցքը՝ սպասելով, թե երբ կազդի դեղը, որը ոչ այնքան անցկացնում, այլ ավելի շատ հեռացնում էր ցավը Օգոստոսից (ու նաև ինձանից):

– Կարծես, դա նրա համար անձնական հարց լիներ, – ցածրաձայն ասաց Գասը, – կարծես մեզ վրա կատաղած լիներ, չգիտես ինչու: Վան Հաութենին նկատի ունեմ:

Նա արագ կումերով խմեց մնացած շամպայնը և շուտով քնեց:

Հայրս սպասում էր մեզ ուղեբեռի հանձնման կետում, իրենց ուղևորների ազգանուններով (Ջոնսոն, Բարրինգթոն, Քարմայքլ) ցուցանակները բռնած լիմուզինի կոստյումավոր վարորդների միջև կանգնած: Հայրս էլ ցուցանակ ուներ, որի վրա գրված էր. «Իմ հիանալի ընտանիքը», իսկ դրա ներքևում՝ «և Գաս»:

Ես գրկեցի նրան ու, դե, իհարկե, նա սկսեց լաց լինել: Մեքենայով տուն գնալիս ես ու Գասը հայրիկին պատմեցինք Ամստերդամի մասին: Եվ միայն, երբ տուն հասանք, և ես, «Ֆիլիպիս» միանալով ու գոգիս դրված անձեռոցիկի վրա պիցցա ուտելով, սկսեցի դիտել հին ու բարի ամերիկյան հե–ռուստատեսությունը, միայն այդ ժամանակ հայրիկիս ասացի Գասի մասին.

– Նրա քաղցկեղը կրկնվել է:

– Գիտեմ, – ասաց՝ ինձ մոտ գալով, ու ավելացրեց, – նրա մայրը ճանապարհորդությունից առաջ ասել էր մեզ: Ցավում եմ, որ նա քեզնից գաղտնի է պահել: Շատ եմ ցավում, Հեյզել:

Երկար ժամանակ ոչինչ չէի խոսում: Հեռուստաշոուն, որ դիտում էինք, իրենց համար տուն ընտրող մարդկանց մասին էր:

– Իմիջիայլոց, ձեր բացակայության ընթացքում «Արքայական վիշտը» կարդացի, – ասաց հայրս:

Գլուխս նրա կողմը թեքելով՝ ասացի.

– Օ՜, ընտիր է: Եվ ինչ կարծիքի ես:

– Լավն էր: Ինձ համար մի քիչ բարդ էր: Չէ՞ որ ես բիոքիմիայի մասնագետ եմ, ոչ թե գրականագետ: Բայց կուզեի, որ գիրքն ավարտ ունենար:

– Հա, շատ տարածված դժգոհություն է:

– Ու մի քիչ էլ հուսահատեցնող, – շարունակեց, – մի քիչ պարտվողական:

– Եթե պարտվողական ասելով նկատի ունես անկեղծ, ուրեմն համաձայն եմ:

– Չեմ կարծում, թե պարտվողականությունն ազնվություն է, – պատասխանեց հայրս: – Հրաժարվում եմ ընդունել դա:

– Ուրեմն կյանքում հենց էնպես ոչինչ չի լինում, և մենք բոլորս գնում ենք ապրելու ամպերում, տավիղ նվագելու ու առանձնատներում բնակվելու, հա՞:

Հայրս ժպտաց, գրկեց ինձ, իրեն մոտ քաշեց ու կողքից գլուխս համբուրելով՝ ասաց.

– Չգիտեմ էլ, թե ինչին եմ հավատում, Հեյզել: Կարծում էի, թե մեծանալով իմանում ես՝ ինչին ես հավատում, բայց դա իմ դեպքը չէ:

– Ըը, լավ, – ասացի:

Նա նորից ասաց, որ ցավում էր Գասի համար, իսկ հետո մենք շարունակեցինք դիտել հեռուստաշոուն, և մարդիկ ընտրեցին իրենց տունը: Ես դեռ հայրիկիս գրկում էի, արդեն մի տեսակ քունս տանում էր, բայց պառկել չէի ուզում, ու հանկարծ հայրս ասաց.

– Գիտե՞ս ինչին եմ հավատում: Հիշում եմ, քոլեջում մաթեմատիկայի դաս էի անցնում: Այդ իսկապես հիանալի մա-

թեմատիկայի դասը մի փոքրամարմին ծեր կին էր վարում: Նա խոսում էր Ֆուրյեի արագ ձևափոխությունների մասին, հանկարծ կես խոսքի վրա կանգնելով՝ ասաց. «Երբեմն թվում է, թե տիեզերքը ցանկանում է, որ իրեն նկատեն»: Ահա, թե ինչին եմ հավատում: Հավատում եմ, թե տիեզերքը ցանկանում է, որ իրեն նկատեն: Կարծում եմ, որ տիեզերքը մեծապես հակված է գիտակցություն ստեղծելուն ու, մասամբ, խելք է պարգևում, որովհետև տիեզերքին դուր է գալիս, երբ նկատում ու դիտարկում են իր էլեգանտությունը: Ու ո՞վ եմ ես, պատմության մեջտեղում ապրող մի էակ, որ տիեզերքին ասեմ, թե ինքը կամ նրա մասին իմ դիտարկումն անցողիկ է ու ժամանակավոր:

– Բայց դու շատ խելացի ես, – ասացի որոշ ժամանակ անց:

– Իսկ քեզ մոտ շատ լավ է ստացվում հաճոյախոսելը, – պատասխանեց:

Հաջորդ օրը, ցերեկվա ժամերին, մեքենայով գնացի Գասի տուն և նրա ծնողների հետ գետնանուշի կարագով ու ժելեով սենդվիչներ ուտելով՝ պատմեցի Ամստերդամի մասին, մինչ Գասը ննջում էր հյուրասենյակի բազմոցին, որի վրա «Վ նշանակում է վենդետտա» ֆիլմն էինք միասին դիտել: Խոհանոցից տեսնում էի նրան: Պառկած էր մեջքի վրա, գլուխը կողքի թեքած, ու արդեն ԿԵԿ էին միացրել: Քաղցկեղի վրա նոր կոկտեյլով էին հարձակվում՝ քիմիոթերապիայի երկու դեղամիջոց ու սպիտակուցային ռեցեպտոր, որով հույս ունեին ոչնչացնել Գասի քաղցկեղածին գենները: Ինձ ասացին, որ նրա բախտը բերել է, քանի որ կարողացել է ներգրավվել այդ փորձարկմանը: Բախտը բերե՞լ էր: Դեղերից մեկն ինձ ծանոթ էր: Դրա անունից անգամ սիրտս խառնում էր:

Որոշ ժամանակ անց Այզեքի մայրը նրան բերեց Գասենց տուն:

– Այզե՞ք, բարև, ես Հեյզելն եմ՝ աջակցության խմբակից, ոչ քո նախկին չար ընկերուհին:

Մայրը նրան ուղեկցեց ինձ մոտ: Ես վեր կացա ճաշասենյա-

կի աթոռից, գրկեցի նրան: Մոտ մեկ րոպե փնտրելուց հետո, վերջապես գտնելով, նա էլ գրկեց ինձ՝ շատ ամուր:

– Ինչպիսին էր Ամստերդամը, – հարցրեց:

– Հիասքանչ:

– Ուրթերս, – կանչեց, – որտեղ ես, եղբայր:

– Նա քնած է, – ասացի խզված ձայնով:

Այզեքը տարուբերեց գլուխը: Բոլորը լուռ էին:

– Լավ չի, – մեկ վայրկյան հետո ասաց Այզեքը:

Մայրը նրան տարավ նախապես դուրս քաշած աթոռի մոտ, ու Այզեքը նստեց:

– Բայց դեռ կարող եմ քո կույր քամակից առաջ անցնել «Հակաապստամբությունում», – ասաց Օգոստոսը՝ առանց մեր կողմ թեքվելու:

Դեղերը մի քիչ դանդաղեցրել էին նրա խոսքը՝ թեև ընդամենը հավասարեցնելով սովորական մարդկանց ռիթմին:

– Գրազ կգամ, բոլոր քամակներն էլ կույր են, – պատասխանեց Այզեքը՝ ձեռքերն օդում անվստահ պարզած, փնտրելով մայրիկին:

Մայրը բռնեց նրա ձեռքը, վեր բարձրացրեց, և միասին մոտեցան բազմոցին, որտեղ Գասն ու Այզեքն անփույթ գրկախառնվեցին:

– Ինչպե՞ս ես, – հարցրեց Այզեքը:

– Բացի նրանից, որ բերանումս անընդհատ մետաղի համ եմ զգում, միայն վեր ընթացող կարուսելի վրա եմ, ընկերս, – պատասխանեց Գասը:

Այզեքը ծիծաղեց:

– Աչքերդ ինչպե՞ս են, – հարցրեց Գասը:

– Օ՜, ընտիր, – պատասխանեց Այզեքը, – ուղղակի դրանք գլխիս մեջ չեն, դա է միակ խնդիրը:

– Ահ, արտակարգ է, – ասաց Գասը, – չեմ ուզում քեզնից առաջ անցնել, բայց մարմինս լրիվ քաղցկեղից է կազմված:

– Հա, լսել եմ դրա մասին, – ասաց Այզեքը՝ աշխատելով չհուզվել:

https://1915.info

Նա շոշափելով փորձեց գտնել Գասի ձեռքը, բայց ազդրը բռնեց:

– Ինձ գերի վերցրին, – ասաց Գասը:

Այզեքի մայրը ճաշասենյակից երկու աթոռ բերեց: Ես ու Այզեքը նստեցինք Գասի կողքին: Ես բռնեցի Գասի ձեռքը՝ շրջանաձև շարժումներով շոյելով բթից մինչև ցուցամատ ընկած տարածքը:

Մեծահասակներն իջան ներքնահարկ՝ ցավակցելու, թե ինչ, մեզ՝ երեքիս, մենակ թողնելով հյուրասենյակում: Քիչ հետո Օգոստոսը, դանդաղ արթնանալով, գլուխը թեքեց մեր կողմը:

– Ինչպես է Մոնիկան, – հարցրեց:

– Նրանից ոչ մի լուր չունեմ, – պատասխանեց Այզեքը, – ոչ մի բացիկ, ոչ մի էլ. նամակ, ոչ մի բան: Գիտես, արդեն մի սարք ունեմ, որ ինձ համար էլեկտրոնային նամակներս է կարդում: Մի ընտիր սարք է: Կարող եմ փոխել ձայնի սեռը, ակցենտը և այլն:

– Ուրեմն, եթե քեզ պոռնո պատմություն ուղարկեմ, կարող ես էնպես անել, որ դա քեզ համար մի ծեր գերմանացի կարդա՞:

– Ճիշտ էդպես, – ասաց Այզեքը, – չնայած առանց մորս օգնության դեռ չեմ կարողանում դրանից գլուխ հանել, ու, երևի, ճիշտ կլինի մի երկու շաբաթով հետաձգենք գերմանական պոռնոն:

– Նա մի հաղորդագրությո՞ւն էլ չի գրել քեզ, որ իմանա, թե ինչպես ես, – ապշեցի ես:

Ինձ համար ուղղակի անհասկանալի էր, թե ինչպես կարելի էր այդքան դաժան լինել:

– Բացարձակ ռադիոլռություն, – ասաց Այզեքը:

– Ինչ անամոթն է, – ասացի:

– Արդեն չեմ էլ մտածում դրա մասին: Ընկերուհի ունենալու ժամանակ չունեմ: Ես լրիվ դրույքով աշխատանք ունեմ՝ սովորել կույր լինել:

Գասը գլուխը թեքեց պատուհանի կողմը և հայացքն ուղղեց իրենց ներքնաբակ: Աչքերը փակվեցին:

Այզեքը հարցրեց, թե ինչպես եմ, ես էլ ասացի, որ լավ եմ: Հետո նա ինձ ասաց, որ աջակցության խմբակում մի նոր աղջիկ կա՝ շատ սեքսուալ ձայնով, և ուզում է, որ իր հետ գնամ այնտեղ ու ասեմ՝ իրականում սեքսուալ է, թե՞ ոչ: Հետո հանկարծ Օգոստոսն ասաց.

– Գրողը տանի, չի կարելի ընդհանրապես չհետաքրքրվել նախկին ընկերոջդ մասին, երբ նրա անիծյալ գլխից կտրել-հանել են անիծյալ աչքերը:

– Միայն մեկը, – ասաց Այզեքը:

– Հեյզել Գրեյս, մոտդ չորս դոլար կա՞, – հարցրեց Գասը:

– Ըը, այո, – ասացի:

– Ընտիր է: Ոտքս սուրճի սեղանի տակ է, խնդրում եմ, բեր:

Գասը հրվելով վեր բարձրացավ, նստեց բազմոցի եզրին: Ես նրան տվեցի պրոթեզը, նա այն դանդաղ ամրացրեց իր ոտքին:

Օգնեցի, որ վեր կենա, իսկ հետո թևանցուկ արեցի Այզեքին, որպեսզի նա չբախվի կահույքին, որը հանկարծակիորեն շատ կպչուն էր դարձել: Ու այդ պահին գիտակցեցի, որ վերջին մի քանի տարիների ընթացքում առաջին անգամ ես սենյակի ամենաառողջ մարդն եմ:

Մեքենան ես էի վարում: Օգոստոսը առջևի նստատեղին էր նստած, Այզեքը՝ հետևի: Մենք կանգնեցինք մթերային խանութի մոտ, որտեղից Օգոստոսի հրահանգով մի դյուժին ձու գնեցի, մինչ նա ու Այզեքը սպասում էին մեքենայում: Իսկ հետո Այզեքը հիշողությամբ առաջնորդեց մեզ Մոնիկայի տուն: Ագրեսիվորեն ստերիլ, երկհարկանի տուն էր՝ Հրեական համայնքային կենտրոնի կողքին: Մոնիկայի 1990 թվի վառ կանաչ Փոնթիաք Ֆայրբըրդը իր հաստ անիվներով կանգնած էր տան մոտ:

– Մեքենան էստե՞ղ է, – հարցրեց Այզեքը՝ զգալով, որ արգելակում եմ:

https://1915.info

– Օ՜ այո, էստեղ է, – պատասխանեց Օգոստոսը, – Գիտես ինչի է նման, Այզեք: Նման է բոլոր էն հույսերին, որ հիմարաբար փայփայել ենք:

– Ուրեմն նա տանն է:

Գասը, գլուխը դանդաղ հետ թեքելով, նայեց Այզեքին:

– Ինչ տարբերություն, թե նա ուր է: Հիմա կարևորը դու ես, ոչ թե նա:

Գասը, գոգին դրված հավկիթների տուփը բռնելով, բացեց դուռը և ոտքերը դուրս հանեց: Հետո Այզեքի համար բացեց դուռը: Ես հայելու մեջ դիտում էի, թե ինչպես է Գասն Այզեքին օգնում դուրս գալ մեքենայից՝ իրար ուսի հենված, ներքևում աստիճանաբար իրարից հեռանալով, ինչպես աղոթքի համար միացրած ձեռքերը, որի ժամանակ ափերը լիովին իրար չեն հպվում:

Քանի որ վանդալիզմն ինձ նյարդայնացնում էր, իջեցրի պատուհանը, որպեսզի այնտեղից դիտեմ նրանց: Նրանք մի քանի քայլով մոտեցան մեքենային, Գասը բացեց ձվերի տուփը և մի ձու տվեց Այզեքին: Այզեքը շպրտեց ձուն մեքենայի կողմը՝ մի ամբողջ տասը մետր վրիպելով:

– Մի քիչ ավելի ձախ, – հուշեց Գասը:

– Իմ շպրտածն էր ձախի վրա, թե՞ պետք է ավելի ձախ նշան բռնեմ:

– Ավելի ձախ նշան բռնիր, – ասաց Գասը:

Այզեքը մի փոքր ձախ թեքվեց:

– Ավելի ձախ:

Այզեքն էլի թեքվեց:

– Ըհը, ընտիր է: Ու ավելի թափով կշպրտես:

Գասը մի հատ էլ ձու տվեց նրան: Այզեքն ուժեղ նետեց ձուն, որը, մեքենայի վրա կամարաձև կորանալով, զարնվեց տան թեթևակի թեք տանիքին:

– Ուղիղ տասին, – ասաց Գասը:

– Ճիշտ, – ոգևորված հարցրեց Այզեքը:

– Չէ, դու մի հինգ մետր մեքենայից վերև շպրտեցիր:

Թափով նետիր, բայց ցածր: Ու էս վերջինից մի քիչ ավելի աջ:

Այզեքը, ձեռքը պարզելով, ինքնուրույն ձու վերցրեց տուփից, որ Գասը զգուշորեն պահել էր ձեռքում, ու նետեց՝ խփելով ետևի լապտերին:

– Այո՛, – բացականչեց Գասը, – ետևի լապտերին կպար:

Այզեքը ևս մի ձու վերցրեց ու վրիպեց՝ չափից շատ աջ նետելով: Հետո մեկ ուրիշը նետեց, որը շատ ցածր ստացվեց, ապա ևս մեկը նետելով՝ դիպավ հետևի ապակուն: Հետո երեք հատ իրար հետևից մեխեց բեռնախցիկի վրա:

– Հեյզել Գրեյս, – Գասը շրջվելով բղավեց, – նկարիր սա, որ հետո, երբ ռոբոտ աչքեր հնարեն, Այզեքը տեսնի:

Կիսով չափ դուրս գալով իջեցրած պատուհանի միջից՝ վեր ձգվեցի, և հեռախոսովս նկարեցի նրանց: Օգոստոսը՝ չվառած ծխախոտը բերանին, սքանչելի ծուռ ժպիտը դեմքին, մի ձեռքով գրեթե դատարկ վարդագույն տուփը գլխավերևում պահած, իսկ մյուս ձեռքը՝ արևային ակնոցով տեսախցիկի կողմը ոչ այնքան ուղիղ նայող Այզեքի ուսին: Իսկ նրանց հետևում երևում էին կանաչ Ֆայրբըրդի հետևի ապակուց և շիթից ծորացող ձվի դեղնուցները:

– Սա ի՞նչ է, – իմ նկարելուց մեկ րոպե անց միջին տարիքի մի կին դուրս եկավ տնից, – Աստծու սիրուն, ի՞նչ է կատարվում այստեղ:

– Տիկին, – ասաց Օգոստոսը, – ձեր աղջկա ավտոմեքենան հենց նոր արժանի ձվի հարվածներ է ստացել մի կույր երիտասարդից: Խնդրում եմ ներս գնացեք ու դուռը փակեք, թե չէ ստիպված կլինենք ոստիկանություն կանչել:

Մեկ րոպե տատանվելուց հետո Մոնիկայի մայրը, դուռը փակելով, նորից ներս մտավ:

Այզեքն իրար հետևից արագ-արագ նետեց վերջին երեք ձուն, և Գասը նրան ուղեկցեց մեր մեքենայի մոտ:

– Տեսնո՞ւմ ես, Այզեք, եթե դու նրանցից խլում ես ... զգույշ, հիմա մոտենում ենք մայթեզրին ... օրինավորության զգացումը, եթե ամեն ինչ շուռ ես տալիս էնպես, որ իրենց թվա,

թե հենց իրենք են հանցանք կատարում՝ նայելով, թե ... ըհը, ընդամենը մի քանի քայլ մնաց ... նայելով, թե ինչպես են իրենց մեքենայի վրա ձվեր նետում, նրանք ինքներն են շփոթվում, հուզվում, վախենում ու... դռան բռնակն ուղիղ դիմացդ է ... վերադառնում են իրենց հանգիստ ու թշվառ կյանքին:

Գասն արագ մոտեցավ մեքենայի առջևի դռանը և ներս մտավ:

Դռները փակվեցին: Ես, կտրուկ տեղից պոկվելով, առաջ սլացա, և մի երեսուն մետր վարելուց հետո հասկացա, որ ընթանում էինք փակուղի տանող փողոցով: Պտտվեցինք ու, նորից Մոնիկայի տան մոտով անցնելով, հետ սուրացինք:

Այլևս երբեք Գասին լուսանկարելու հնարավորություն չէի ունենալու:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Մի քանի օր անց իմ ու Գասի ծնողները և ես ու Գասը կիպ-կիպ նստել էինք Գասենց ճաշասենյակի սեղանի շուրջը և լցոնած պղպեղ էինք ուտում: Սեղանին գցած սփռոցը, ինչպես Գասի հայրիկը նշեց, նախորդ դարում էր օգտագործվել:

– Էմիլի, այս ռիզոտտոն ... – ասաց հայրս:

– Ուղղակի սքանչելի է, – շարունակեց մայրս:

– Օհ, շատ շնորհակալ եմ: Մեծ հաճույքով բաղադրատոմսը կտամ, – ասաց Գասի մայրը:

Գասը, մի կտոր կուլ տալով, ասաց.

– Գիտեք, առաջին բանը, որ մտքիս գալիս է՝ «սա Օրանյի չի»:

– Ճիշտ դիտարկում էր, Գաս – համաձայնեցի, – չնայած համեղ է, բայց «Օրանյիի» համը չունի:

– Հեյզե՛լ, – փորձեց սաստել մայրս:

– Սրա համը ուղղակի ...

– Ուղղակի ուտելիքի համ է, – նկատեցի:

– Ըհը, ճիշտ ես, – ասաց Գասը, – սա ընդամենը ուտելիք է, չնայած ընտիր պատրաստված: Բայց սրա համը, մեղմ ասած ...

– Սրա համն էնպիսին չէ, ասես Աստված ինքն իր ձեռքով երկնքից մի հինգ ճաշատեսակ պատրաստած լինի, որը հետո ջրանցքի մոտ գտնվող սեղանիդ շուրջը պտտվող իրական, բառիս բուն իմաստով ծաղկաթերթերի ներքո, մատուցում

են քեզ պղպջակավոր, խմորված շիճուկի շողշողուն գնդերի հետ միասին:

– Լավ ձևակերպում էր, – ասաց Գասը:

– Մեր երեխաները տարօրինակ են, – նկատեց Գասի հայրը:

– Լավ ձևակերպում էր, – կրկնեց հայրս:

Մեր ընթրիքից մեկ շաբաթ հետո Գասը կրծքավանդակի ցավերով հայտնվեց շտապ օգնության հիվանդասենյակում: Նրան հենց նույն գիշերը հոսպիտալացրին: Հաջորդ առավոտ գնացի Մեմորիալ ու նրան գտա չորրորդ հարկում: Այզեքին այցելելուց ի վեր Մեմորիալում չէի եղել: Այստեղ պատերը գերպայծառ գույներով ներկված չէին, ոչ էլ մեքենա վարող շների շրջանակների մեջ առնված նկարներ էին կախված, ինչպես մանկական հիվանդանոցում էր: Եվ այդ վայրի բացարձակ մերկությունն ինձ ստիպեց կարոտել մանկական հիվանդանոցի ուրախ ու երեխայական հիմար պատկերները: Մեմորիալն այնքա՜ն ֆունկցիոնալ էր ... Մի մեծ պահեստ: Նախադիակիզարան:

Երբ չորրորդ հարկում վերելակի դռները բացվեցին, տեսա սպասասրահում անցուդարձ անող, բջջայինով խոսող Գասի մայրիկին: Նա արագ կախեց հեռախոսը, գրկեց ինձ ու առաջարկեց օգնել՝ տանեմ սայլակս:

– Կարիք չկա, շնորհակալություն: Գասն ինչպե՞ս է:

– Շատ ծանր գիշեր է անցկացրել, Հեյզել, – ասաց նա: – Սիրտը շատ դժվար է աշխատում: Պետք է հնարավորինս նվազեցնի շարժումները: Սրանից հետո միայն անվասայլակով է տեղաշարժվելու: Հիմա նրան նոր, ավելի ուժեղ ցավազրկող են նշանակել: Հենց նոր նրա քույրերը եկան:

– Լավ, իսկ կարո՞ղ եմ նրան տեսնել, – հարցրի:

Նա, ձեռքը ուսիս դնելով, ամուր, մի քիչ տարօրինակ, արտասովոր ձևով գրկեց ինձ:

– Հեյզել, դու գիտես, որ մենք քեզ շատ ենք սիրում, բայց հիմա ուզում ենք նրա հետ ընտանիքով մենակ մնալ: Գասն

https://1915.info

էլ է դրան համաձայն: Լավ:

– Լավ, – ասացի:

– Ես նրան կասեմ, որ եկել էիր:

– Լավ, – ասացի, – էդ դեպքում մի քիչ էստեղ կնստեմ, կկարդամ:

Նա միջանցքով հետ գնաց Գասի սենյակ: Ես ամեն ինչ հասկանում էի, բայց, միևնույն է, կարոտում էի՝ մտածելով, որ միգուցե բաց էի թողնում նրան վերջին անգամ տեսնելու, հաջողություն ասելու հնարավորությունը և այլն, և այլն: Սպասասրահի ամբողջ երկայնքով շագանակագույն գորգ էր փռված, որի վրա փափուկ շագանակագույն կտորից աթոռներ էին դրված: Թթվածնիս սայլակը ոտքերիս տակ դնելով մի քիչ նստեցի երկտեղանոց բազմոցին: Հագիս «*Ceci n'est pas une pipe*» գրառումով վերնաշապիկն էր ու «Զաք Թեյլոր» կեդերը: Հենց նույն հանդերձանքը, որ հագել էի երկու շաբաթ առաջ՝ Վեննի դիագրամների երեկոյան, բայց նա դա չէր տեսնելու: Սկսեցի հետադարձ ուղղությամբ դիտել հեռախոսիս վերջին մի քանի ամսվա ընթացքում արված նկարները՝ սկսելով Մոնիկայի տան բակում արված նրա ու Այզեքի լուսանկարից և վերջացնելով նրա առաջին լուսանկարով, որ արել էի «Գետնատարած ոսկորների» ճանապարհին: Թվում էր, թե դա մի ամբողջ հավերժություն առաջ էր, ասես միասին շատ կարճ, բայց միևնույն ժամանակ անվերջանալի հավերժություն էինք անցկացրել: Որոշ անվերջություններ մեծ են այլ անվերջություններից:

Երկու շաբաթ հետո արվեստի զբոսայգու միջով Գասին անվասայլակով տարա «Գետնատարած ոսկորների» մոտ՝ շատ թանկ շամպայնի մի ամբողջ շիշ ու թթվածնիս սայլակը նրա գոգին: Շամպայնը Գասի բժիշկներից մեկն էր նվիրել: Գասը բժիշկներին՝ իրենց լավագույն շամպայնի շշերը երեխաներին նվիրելուն տրամադրող անձնավորություն էր: Գասն իր անվասայլակի, ես էլ խոնավ խոտի վրա նստեցինք «գետնատարած ոսկորներին» հնարավորինս մոտ, որքան

թույլ էր տալիս Գասի անվասայլակը: Մատով ցույց տվի կմախքի կրծքավանդակի ոսկրերի վրայից ուսին ցատկոտելու համար իրար խրախուսող փոքրիկ երեխաներին: Գասը, այդ աղմուկի մեջ լսելի լինելու համար ձայնը բարձրացնելով, ասաց.

– Վերջին անգամ, որ էստեղ էինք, ինձ երեխա էի պատկերացնում, իսկ հիմա՝ կմախք:

Ու Վինի Թուխի թղթե բաժակներով շամպայն խմեցինք:

https://1915.info

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

Մի սովորական օր հիվանդության վերջին փուլում գտնվող Գասի հետ:

Կեսօրի կողմերը նրա տուն գնացի: Նա արդեն կերել ու փսխել էր նախաճաշը: Ինձ դիմավորեց դռան մոտ՝ իր անվասայլակով: Այլևս այն մկանուտ, հմայիչ տղան չէր, որ աջակցության խմբակում ինձանից աչք չէր կտրում, բայց դեռ կեսժպիտը դեմքին էր, դեռ ծխում էր իր չվառած ծխախոտը, և կապույտ աչքերը պայծառ ու ժիր էին:

Մենք ճաշեցինք նրա ծնողների հետ ճաշասենյակի սեղանի շուրջ: Կերանք գետնանուշի կարագով ու ժելեով սենդվիչներ և նախորդ գիշերվանից մնացած ծնեբեկը: Գասը չէր ուտում: Հարցրի, թե ինչպես է իրեն զգում:

– Հրաշալի, – պատասխանեց, – իսկ դո՞ւ:

– Լավ: Ի՞նչ արեցիր անցած գիշեր:

– Բավականին երկար քնեցի: Ուզում եմ քեզ համար գրքի շարունակությունը գրել, Հեյզել Գրեյս, բայց միշտ էնքան հոգնած եմ լինում:

– Կարող ես բանավոր պատմել ինձ, – առաջարկեցի:

– Լավ, ուրեմն ես մնում եմ Հոլանդացի Վարդակակաչ Մարդու իմ նախավանհաութենյան վերլուծության կարծիքին: Խաբեբա չէ, բայց ոչ էլ էնքան հարուստ, ինչքան ցույց էր տալիս:

– Իսկ Աննայի մայրի՞կը:

– Դեռ մի վերջնական տարբերակի վրա չեմ կանգնել:

Համբերություն ունեցիր, այ սնդիկ, – ժպտաց:

Նրա ծնողները լուռ էին: Անընդհատ նայելով նրան, ոչ մի վայրկյան աչքերը չհեռացնելով նրանից՝ կարծես ուզում էին մինչև վերջ վայելել Գաս Ուոթերսի շոուն, քանի դեռ ցուցադրվում էր քաղաքում:

– Երբեմն երազում եմ հուշագրություն գրելու մասին, որն իմ հիշատակը վառ կպահի ինձ պաշտող հանրության սրտերում:

– Ինչիմ է պետք հանրության սերը, եթե ինձ ունես, – ասացի:

– Հեյզել Գրեյս, ինձ նման հիանալի ու ֆիզիկապես հրապուրիչ մարդկանց համար բավականին հեշտ է գրավել իրենց հանդիպած մարդկանց սրտերը, բայց էնպես անել, որ օտարները սիրեն քեզ ... ամբողջ աղը այ դրա մեջ է :

Ես ոլորեցի աչքերս:

Ճաշից հետո դուրս եկանք ետնաբակ: Նրա ուժերը դեռ տեղն էին անվասայլակն ինքնուրույն քշելու, փոքրիկ անվակները ձգելով՝ առջևի անիվները դռան շեմքի վրայով անցկացնելու համար: Չնայած ամեն ինչի՝ նա դեռ ատլետիկ էր, օժտված հավասարակշռությամբ և արագ ռեֆլեքսներով, որոնք նույնիսկ դեղերի առատ քանակությունը չէր կարողացել լիովին բթացնել:

Նրա ծնողները մնացել էին ներսում, բայց ետ նայելով՝ տեսնում էի, որ ճաշասենյակից անընդհատ մեզ էին դիտում:

Մոտ մեկ րոպե լուռ նստել էինք, հետո Գասն ասաց.

– Մեկ-մեկ ուզում եմ, որ էն ճոճանակը դեռ մեզ մոտ լիներ:

– Իմ ետնաբակի՞ ճոճանակը:

– Ըհը, էնպիսի ծայրաստիճան կարոտախտի մեջ եմ, որ կարոտում եմ մի ճոճանակ, ինչին իմ հետույքը երբեք չի էլ դիպել:

– Կարոտախտը քաղցկեղի կողմնակի ազդեցություններից է, – ասացի:

– Չէէէ, կարոտախտը մահանալու կողմնակի ազդեցու-

թյուններից է, – ուղղեց:

Վերևում փչում էր քամին՝ մեր մաշկի վրա վերադասավորելով ճյուղերի ստվերները: Գասը սեղմեց ձեռքս:

– Սա լավ կյանք է, Հեյզել Գրեյս:

Մենք ներս գնացինք, երբ դեղեր ընդունելու կարիք զգաց, որոնք ճզմում ու հեղուկ սննդանյութերի հետ միասին գաստրոստոմիկ խողովակի (Գ խողովակի)՝ փորի մեջ անհետացող պլաստմասայի մի կտորի միջով ներարկում էին նրան: Որոշ ժամանակ հանգիստ էր, անջատված: Մայրն ուզում էր, որ մի փոքր քնի, բայց նա, գլուխը տարուբերելով, հրաժարվեց այդ առաջարկից, ու մենք նրան այդպես կիսաքուն վիճակում թողեցինք աթոռի վրա:

Նրա ծնողներն սկսեցին դիտել Գասի և իր քույրերի մասնակցությամբ մի հին տեսագրություն, որտեղ քույրերը երևի իմ տարիքի էին, իսկ Գասը՝ մոտ հինգ տարեկան: Մի ուրիշ տան բակում նրանք բասկետբոլ էին խաղում: Չնայած Գասը փոքրիկ էր, բայց այնքան լավ էր գնդակ խաղացնում՝ անընդհատ ճարպիկ պտույտներ գործելով քրքջացող քույրերի շուրջը, որ ասես ծնված օրվանից դրանով զբաղված լիներ:

Ես առաջին անգամ էի նրան բասկետբոլ խաղալիս տեսնում:

– Շատ լավ էր խաղում, – նկատեցի:

– Բա որ ավագ դպրոցում տեսնեիր, – ասաց նրա հայրը: – Հենց առաջին տարուց դպրոցի թիմ ընդունվեց:

– Ուզում եմ ներքև իջնել, – մրմնջաց Գասը:

Մայրն ու հայրը անվասայլակը, Գասը վրան նստած, գլորելով տարան ներքև՝ խելահեղ թռիչքներով ցած սլանալով, որը բավականին վտանգավոր կհամարվեր, եթե վտանգը պահպանած լիներ իր արդիականությունը: Հետո նրանք մեզ մենակ թողեցին: Նա անկողին մտավ, ու մենք միասին պառկեցինք ծածկոցի տակ, ես՝ կողքի վրա, Գասը՝ մեջքի: Գլուխս հենած նրա ոսկրոտ ուսին, մաշկիս վրա զգալով

https://1915.info

սպորտային շապիկի միջով հորդող մարմնի ջերմությունը, ոտնաթաթս նրա իրական ոտնաթաթին խաչած ու ձեռքս՝ նրա այտին:

Երբ նրա դեմքը քթերի իրար դիպչելու չափ մոտ էր դեմքիս, ու ես տեսնում էի միայն նրա աչքերը, երբեք չէի ասի, թե հիվանդ է: Մի քիչ համբուրվեցինք, հետո «Տենդային հուրի» համանուն ալբոմը լսելով՝ պառկեցինք կողք կողքի, ու, վերջիվերջո, հենց այդպես էլ քնեցինք՝ խողովակների ու մարմինների քվանտային խճճվածություն:

Ավելի ուշ արթնանալով՝ բարձերն իրար վրա շարեցինք, դրանց վրա հենվելով՝ հարմար տեղավորվեցինք մահճակալի եզրին և սկսեցինք խաղալ «Հակաապստամբություն 2»-ը՝ «Լուսաբացի գինը»: Դե իհարկե, ես վատ էի խաղում: Բայց դա նրան ձեռնտու էր, քանի որ այդպես նրա համար ավելի հեշտ էր գեղեցիկ մահով մահանալը, ինձ համար իր կյանքը զոհաբերելով՝ դիպուկահարի գնդակի առջև ցատկելը կամ ինձ վրա կրակել պատրաստվող ժամապահին սպանելը: Այնպես էր հրճվում ինձ փրկելով:

– Դու իմ ընկերուհուն չես սպանի, անորոշ ազգության միջազգային ահաբեկի՛չ, – բացականչում էր նա:

Մտքովս մի պահ անցավ ձևացնեմ, թե խեղդվում եմ կամ նման մի բան, որ նա Հեյմլիխի հնարքով օգնի ինձ, և միգուցե այդպես ազատվի իր կյանքն անիմաստ ապրած ու աշխարհի բարօրության համար չմահանալու վախից: Բայց հետո պատկերացրի, որ միգուցե ֆիզիկապես ի վիճակի չլինի Հեյմլիխի հնարքն անելու, և ես ստիպված լինեմ բացահայտել իմ փոքրիկ խորամանկությունը, ինչից հետո երկուսս էլ ստորացված կզգանք մեզ:

«Սարսափելի դժվար է պահպանել արժանապատվությունը, երբ ծագող արևը չափազանց պայծառ է քո խավարող աչքերում», – մտածում էի ես, մինչ անիրական քաղաքի ավերակների միջով հետապնդում էինք վատ տղաներին:

Հետո Գասի հայրն իջավ ներքև ու Գասին վերև քարշ

տվեց: Նախասրահում, «Ընկերները հավերժ են» ասող քաջալերանքի տակ, ծնկի իջնելով, ես համբուրեցի ու բարի գիշեր մաղթեցի նրան: Ապա գնացի տուն և ընթրեցի ծնողներիս հետ՝ թողնելով, որ Գասն էլ ուտի (ու փսխի) իր ընթրիքը:

Մի քիչ հեռուստացույց դիտելուց հետո պառկեցի քնելու:

Արթնացա ու կեսօրի կողմերը նորից գնացի Գասի տուն:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

Ամստերդամից տուն վերադառնալուց մեկ ամիս անց, մի առավոտ մեքենայով գնացի Գասենց տուն: Ծնողներն ասացին, որ նա դեռ քնած է ներքևում: Մինչև մտնելը ես բարձր թակեցի ներքնահարկի դուռն ու կանչեցի.

– Գա՛ս:

Նրան հայտնաբերեցի իր հորինած լեզվով ինչ-որ բան մրմնջալիս: Նա միզել էր անկողնում: Ուղղակի ահավոր էր: Նույնիսկ նայել չէի կարողանում: Կանչեցի ծնողներին, նրանք միանգամից ներքև իջան: Մինչ նրանք մաքրում էին Գասին, ես բարձրացա վերև:

Երբ հետ իջա, նա դանդաղ դուրս էր գալիս քնաբեր դեղերի ազդեցությունից՝ դիմավորելով նոր տանջանքներով լի օրը: Ես հարմար դասավորեցի նրա բարձերը, որ Հակաապստամբություն խաղանք դատարկ, առանց սավանի ներքնակի վրա: Բայց նա այնքան ուժասպառ էր ու ցրված, որ համարյա ինձ նման վատ էր խաղում, ու հինգ րոպե չանցած երկուսս էլ մահանում էինք: Ոգևորությամբ լի ֆանտաստիկ հերոսական մահեր էլ չկային, ընդամենը մի քանի անտարբեր գործողություն:

Ես համարյա չէի խոսում: Ինչ-որ չափով ուզում էի մոռանար իմ ներկայության մասին, և հույս ունեի, թե չի հիշում, որ ես իմ սիրած տղային գտել էի սեփական մեզի լճակի մեջ՝ ուղեղը մթագնած վիճակում: Ինքս ինձ շարունակ հույս էի տալիս, թե հիմա նա կնայի ինձ ու զարմացած կհարցնի.

https://1915.info

– Հեյզել Գրեյս, որտեղից հայտնվեցիր էստեղ:

Բայց, ցավոք, նա ամեն ինչ հիշում էր:

– Անցնող ամեն րոպեի հետ ավելի ու ավելի խորն եմ ընկալում «նվաստացում» բառի իմաստը, – վերջապես ասաց:

– Գաս, հավատա, ես էլ եմ միզել անկողնում: Մի մեծ բան չէ:

– Մի ժամանակ դու ինձ, – ասաց ու, ծանր շունչ քաշելով, շարունակեց, – Օգոստոս էիր ասում:

– Գիտեմ, – քիչ հետո նորից խոսեց, – թեկուզ դա երեխայություն է, բայց միշտ մտածել եմ, որ բոլոր թերթերում տպելու են իմ մահախոսականը, իմ կյանքի պատմությունը պատմելու արժանի են համարելու: Հոգու խորքում միշտ հավատացել եմ, թե ես առանձնահատուկ եմ:

– Դու առանձնահատուկ ես, – ասացի:

– Գիտես, թե ինչ նկատի ունեմ, չէ՞, – ասաց:

Այո, գիտեի, թե ինչ նկատի ուներ, ուղղակի դրան համաձայն չէի:

– Ինձ ընդհանրապես չի հուզում, թե «Նյու Յորք թայմզն» ինձ համար մահախոսական կգրի թե ոչ: Միայն ուզում եմ, որ դու ինձ համար մահախոսական գրես, – ասացի: – Ասում ես, որ առանձնահատուկ չես, միայն որովհետև աշխարհը չգիտի քո մասին, բայց դրանով դու ինձ վիրավորում ես: Ես գիտեմ քո մասին:

– Չեմ կարծում, թե էնքան կձգեմ, որ քեզ համար մահախոսական գրեմ, – ներողություն խնդրելու նման ասաց Գասը:

Դա ինձ այնքան կատաղեցրեց:

– Ուղղակի ուզում եմ, որ «ես» բավական լինեմ քեզ համար, բայց դա երբեք չի լինի: Դա քեզ համար երբեք բավական չի լինի: Բայց քո ունեցածն էսքանն է: Դու ունես ինձ, քո ընտանիքը և էս աշխարհը: Սա է քո կյանքը: Ցավում եմ, որ էնքան էլ հաջող չի ստացվել, բայց մեկ է՝ Մարսի վրա ոտք դրած առաջին մարդը չես լինելու, բասկետբոլային աստղ չես դառնալու ու ոչ էլ նացիստների ես հետապնդելու: Մի քեզ

https://1915.info

նայիր, Գա՛ս: – Նա լուռ էր: –Այսինքն ... դե, նկատի ունեի, – սկսեցի ներողություն խնդրել:

– Դու հենց դա էլ նկատի ունեիր, – ընդհատեց ինձ:

Ես նորից սկսեցի ներողություն խնդրել, բայց նա ասաց.

– Ներիր, դու ճիշտ ես: Արի ուղղակի խաղանք:

Ու մենք շարունակեցինք ուղղակի խաղալ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Արթնացա «Տենդային հուրի» երգով հեռախոսազանգից: Գաձի սիրելի երգն էր: Դա նշանակում էր, որ ինքն էր զանգում կամ ինչ-որ մեկը նրա հեռախոսից: Նայեցի զարթուցիչին՝ գիշերվա ժամը 2:35-ն էր:

«Մահացել է»: - Ներսումս միանգամից մի մեծ դատարկություն զգալով՝ մտածեցի ես:

- Ալո, - հազիվ արտաբերեցի՝ նախապատրաստվելով ոչնչացված ծնողի ձայնը լսելուն:

- Հեյզել Գրեյս, - լսվեց Օգոստոսի թույլ ձայնը:

- Օհ, փառք Աստծու, բարև, բարև: Սիրում եմ քեզ:

- Հեյզել Գրեյս, ես լցակայանում եմ: Լավ չեմ: Պետք է օգնես ինձ:

- Ինչ: Որտեղ ես:

- 86-րդ և Դիչ փողոցի վրայի Սփիդվեյում: Ինչ-որ սխալ բան եմ արել, տեղից շարժել եմ Գ խողովակն ու չեմ կարողանում ուղղել:

- Հիմա ինը-մեկ-մեկ կզանգեմ:

- Չէ-չէ-չէ-չէ, նրանք ինձ հիվանդանոց կտանեն: Հեյզել, լսիր ինձ: Ոչ ինը-մեկ-մեկ կզանգես, ոչ էլ՝ ծնողներիս, թե չէ երբեք քեզ չեմ ների: Խնդրում եմ, ուղղակի արի և ուղղի էս գրողի տարած խողովակը: Ես ուղղակի, Աստված իմ, էս ինչ հիմարություն է: Չեմ ուզում ծնողներս իմանան, որ դուրս եմ եկել: Խնդրում եմ: Դեղերս ինձ մոտ են: Ուղղակի չեմ կարողանում ներս մտցնել: Խնդրում եմ, արի:

Լաց էր լինում: Նրան երբեք այդպես հեկեկալիս չէի լսել՝ բացի Ամստերդամ գնալուց առաջ նրա տան մոտ:

– Լավ, – ասացի, – հիմա գալիս եմ:

Հանեցի ԵՕՍ-ը, ինքս ինձ միացրի թթվածնի բալոնին, որը հետո դրեցի սայլակի մեջ, հագա սնիքերներս[1], որ սազում էին իմ վարդագույն բամբակե գիշերազգեստի տաբատին, ու Բաթլեր բասկետբոլային թիմի վերնաշապիկը, որ նախկինում Գասինն էր եղել: Խոհանոցի դարակից վերցրի բանալիները, նաև մի գրություն թողեցի, եթե հանկարծ ծնողներս արթնանային ու տեսնեին, որ տանը չեմ:

«Գնացել եմ Գասին տեսնելու: Շատ կարևոր է: Կներեք:

Սիրում եմ ձեզ, Հեյզել»:

Դեպի լցակայան մի քանի մետր վարելով՝ արդեն բավականաչափ արթնացել էի, որ սկսեի մտատանջվել, թե ինչու էր Գասը գիշերվա կեսին դուրս եկել տնից: Գուցե հալյուցինացիաներ էր ունեցել կամ էլ նրան նորից համակել էին մարտիրոսության ֆանտազիաները:

Թարթող դեղին լույսերի տակ արագ սլանում էի Դիչ փողոցով: Չափից արագ էի վարում մեքենան՝ մասամբ նրան շուտ հասնելու համար, մասամբ էլ հուսալով, որ ոստիկանները կկանգնեցնեն ինձ, ու ես հարգելի պատճառ կունենամ ինչ-որ մեկին ասելու, որ իմ մահացու հիվանդ ընկերն անսարք Գ խողովակով անօգնական վիճակում մնացել է լցակայանում: Բայց ոչ մի ոստիկան էլ չհայտնվեց ճանապարհիս, որ իմ փոխարեն որոշում կայացներ:

Կայանատեղիում ընդամենը երկու մեքենա կար: Կանգ առա նրա մեքենայի կողքին: Բացեցի դուռը: Ներսի լույսերը վառվեցին: Օգոստոսը նստած էր ղեկին, որն ամբողջովին պատված էր նրա փսխուքով, իսկ ձեռքերը սեղմված էին փորի այն հատվածին, որտեղից ներս էր մտնում Գ խողովակը:

– Բարև, – մրթմրթաց:

– Օ, Աստվա՛ծ իմ, Օգոստո՛ս, քեզ շտապ պետք է

---

1 Սպորտային կոշիկ

հիվանդանոց հասցնենք:

– Խնդրում եմ, ուղղակի մի հատ նայիր:

Հոտից սիրտս խառնում էր, բայց առաջ հակվեցի՝ ուսումնասիրելու պորտից վերև ընկած հատվածը, որտեղ վիրահատական միջամտությամբ տեղադրել էին խողովակը: Նրա որովայնի մաշկը տաք էր ու վառ կարմիր:

– Գաս, ինձ թվում է վարակ է անցել: Ես սա ուղղել չեմ կարող: Ինչո՞ւ ես էստեղ: Ինչո՞ւ տանը չես:

Նա փսխեց: Նույնիսկ բերանը ծնկներից մի կողմ թեքելու ուժ չուներ:

– Օհ, սիրելիս, – ասացի:

– Ուզում էի մի տուփ ծխախոտ գնել,– մրթմրթաց, – իմը կորցրել եմ: Կամ էլ վերցրել են մոտիցս: Չգիտեմ: Ասացին, որ ինձ համար նորը կգնեն, բայց ես ուզում էի ... ուզում էի ինքս դա անել: Թեկուզ մի փոքր բան ինքնուրույն անեմ:

Անթարթ հայացքով դիմացն էր նայում՝ անորոշ մի կետի: Աննկատ հանեցի հեռախոսս ու, ներքևում պահած, 911 հավաքեցի:

– Ներիր, – ասացի նրան:

– Ինը-մեկ-մեկ, ի՞նչ է պատահել:

– Բարև ձեզ, ես 86-րդ և Դիչ փողոցի վրայի Սփիդվեյում եմ, ինձ շտապ օգնություն է հարկավոր: Իմ կյանքի մեծ սերը Գ խողովակի հետ խնդիրներ ունի:

Նայեց ինձ: Ուղղակի ահավոր էր: Անգամ նրան նայել չէի կարողանում: Ծուռ ժպիտների ու չծխած ծխախոտների Օգոստոս Ուոթերսն էլ չկար, նրան փոխարինելու էր եկել ներքևում նստած այս հուսահատ ու նվաստացած արարածը:

– Վերջ, արդեն չծխել էլ չեմ կարողանում:

– Գաս, ես սիրում եմ քեզ:

– Իսկ ո՞ւր է ինչ-որ մեկի համար Փիթեր վան Հաութեն դառնալու իմ շանսը, – թույլ հարվածեց ղեկին՝ հնչեցնելով մեքենայի ազդանշանը, ու սկսեց լաց լինել:

Հետ տարավ գլուխը՝ վեր նայելով.

https://1915.info

– Ինքս ինձ ատում եմ, ատում եմ ինձ, ատում եմ, ատում եմ էս ամեն ինչը, զզվում եմ ինձնից, ատում եմ, ատում եմ, ատում եմ, ուղղակի թող էստեղ մեռնեմ: Գրո՛ղը տանի:

Ըստ ժանրային կլիշեների՝ այսպես պետք է լիներ: Օգոստոս Ուոթերսը մինչև վերջ պահպանեց իր հումորի զգացումը, նույնիսկ մեկ վայրկյանով չկորցրեց համարձակությունը: Նրա ոգին սավառնում էր անսանձ, ազատատենչ արծվի պես, մինչև որ աշխարհն այլևս չէր կարողանում տանել նրա զվարթ հոգին:

Բայց սա էր ճշմարտությունը: Խղճալի մի տղա, որ հուսահատորեն չէր ուզում խղճալի լինել՝ ճչալով ու լացելով, թունավորված վարակիչ Գ խողովակից, որը նրան ողջ էր պահում, բայց ոչ բավականաչափ:

Սրբեցի նրա դունչը, ձեռքերիս մեջ առա դեմքը և, ծնկի իջնելով, մոտեցա, որ տեսնեմ աչքերը, որոնք դեռ ապրում էին:

– Ցավում եմ: Երանի ամեն ինչ էն պարսիկների ու սպարտացիների կինոյի նման լիներ:

– Երանի, – ասաց նա:

– Ցավոք, էդպես չէ:

– Գիտեմ:

– Վատ տղաներ չկան:

– Ըհը:

– Իրականում, քաղցկեղն էլ վատը չէ: Ուղղակի ինքն էլ է ուզում ապրել:

– Ըհը:

– Ամեն ինչ լավ կլինի: Հավատա, լա՛վ,– ասացի:

Արդեն լսվում էին շտապ օգնության մեքենայի ազդանշանները:

– Լավ, – պատասխանեց:

Կորցնում էր գիտակցությունը:

– Գաս, խոստացիր, որ էլ նման բան չես անի: Քեզ համար ծխախոտ ես ինքս կառնեմ, լա՛վ:

Նայեց ինձ. աչքերը լողում էին իրենց բներում:

– Խոստացիր, – պնդեցի:

Նա թեթևակի գլխով արեց, հետո աչքերը փակվեցին, գլուխը ճոճվում էր վզի վրա:

– Գա՛ս, – բղավեցի, – ինձ հետ մնա, Գա՛ս:

– Մի բան արտասանիր ինձ համար, – ասաց, երբ անիծյալ շտապօգնության մեքենան սլացավ մեր կողքով:

Ու մինչ սպասում էինք, որ մեքենան պտտվի ու հետ դառնա մեզ մոտ, սկսեցի արտասանել մտքիս եկած առաջին բանաստեղծությունը՝ Վիլյամ Կառլոս Վիլյամսի «Կարմիր միանիվ ձեռնասայլակը».

Այնքան շատ բան է
կախված
կարմիր միանիվ
ձեռնասայլակից
անձրևաջրով
փայլեցված
սպիտակ ճուտիկների
կողքին:

Վիլյամսը բժիշկ էր: Ու սա ինձ բժշկական բանաստեղծություն էր թվում: Բանաստեղծությունը վերջացել էր, բայց շտապօգնության մեքենան դեռ մեզնից հեռու էր, ու ես շարունակություն էի հորինում:

– Եվ այնքան շատ բան է կախված, – ասում էի Օգոստոսին, – կապույտ երկինքը ճեղքող ծառի ճյուղերից: Այնքան շատ բան է կախված կապտաշուրթ տղայի փորից դուրս թռած թափանցիկ Գ–խողովակից: Այնքան շատ բան է կախված այս տիեզերքի հսկիչից:

Կիսագիտակից նայեց ինձ ու մրմնջաց.

– Իսկ դու ասում էիր, թե բանաստեղծություններ չես գրում:

https://1915.info

https://1915.info

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

Մի քանի օր հետո հիվանդանոցից տուն եկավ՝ վերջնականապես ու անդառնալիորեն զրկված իր ամբիցիաներից: Հիմա, ցավը մեղմելու համար, ավելի շատ դեղ էր պահանջվում: Մշտական տեղափոխվեց վերև՝ հիվանդանոցային անկողին՝ հյուրասենյակի պատուհանի մոտ:

Դրանք գիշերազգեստների ու ածած մորուքի օրեր էին, մրթմրթոցների, խնդրանքների օրեր, նաև անվերջ շնորհակալությունների՝ բոլորին, ովքեր իր համար ինչ-որ բան էին անում: Մի օր մատն ուղղեց սենյակի անկյունում դրված լվացքի զամբյուղի կողմն ու հարցրեց ինձ.

– Դա ի՞նչ է:

– Լվացքի զամբյուղ, – պատասխանեցի:

– Չէ, դրա կողքինը:

– Բայց դրա կողքին ոչ մի բան չկա:

– Իմ արժանապատվության վերջին կտորն է: Շատ փոքր է:

•••

Հաջորդ օրը, առանց դռան զանգը տալու, ներս մտա: Ծնողներին դուր չէր գալիս, որ դռան զանգն էին տալիս, քանի որ դա կարող էր քնից արթնացնել Գասին: Նրա քույրերն այնտեղ էին իրենց բանկիր ամուսինների և երեք երեխաների հետ՝ երեքն էլ տղա, ովքեր ինձ մոտ վազեցին և մուտքի

https://1915.info
շուրջը վազվզելով (կարծես, թոքերի տարողունակությունը վերականգնվող ռեսուրս է) սկսեցին երգելով հարցնել՝ «ո՞վ ես դու, ո՞վ ես դու, ո՞վ ես դու»: Գասի քույրերին էլի էի հանդիպել, բայց ոչ երեխաներին ու նրանց հայրերին:

– Ես Հեյզելն եմ, – ասացի:

– Գասն ընկերուհի ունի, – ասաց երեխաներից մեկը:

– Ես տեղյակ եմ, որ Գասն ընկերուհի ունի, – ասացի:

– Նա ծիծիկներ ունի, – ասաց մյուսը:

– Ճիշտ:

– Իսկ սա ինչի՞դ է պետք, – հարցրեց առաջինը՝ ցույց տալով թթվածնի բալոնը:

– Սա օգնում է ինձ շնչել, – ասացի, – Գասն արթո՞ւն է:

– Չէ, քնած է:

– Նա մեռնում է, – ավելացրեց մյուսը:

– Նա մեռնում է, – հանկարծ լրջանալով՝ հաստատեց երրորդը:

Մի պահ լռություն տիրեց: Ես մտածում էի՝ ինչ ասել, բայց հետո նրանցից մեկը ոտքով հարվածեց մյուսին, ու սկսվեց մրցավազքը: Իրար վրա ընկնելով, կծիկ կազմելով՝ չվեցին խոհանոց:

Քայլեցի Գասի ծնողների մոտ՝ հյուրասենյակ և ծանոթացա փեսաների՝ Քրիսի ու Դեյվի հետ:

Դեռ այնքան էլ չէի մտերմացել նրա քույրերի հետ, բայց երկուսն էլ գրկախառնությամբ ողջունեցին ինձ: Ջուլին նստած էր մահճակալի եզրին ու Գասի հետ խոսում էր ճիշտ այնպիսի ձայնով, որով մանկիկին կասեին, թե նա ինչ համով բալիկ է:

– Օ՜, Գասսի, Գասսի, մեր փոքրիկ Գասսի, – ասում էր նա:

«Մեր Գասսի՞: Ինչ է, նրան սեփականացրե՞լ են»:

– Ինչ է պատահել, Օգոստոս, – ասացի՝ փորձելով պատշաճ վարք ցուցաբերել:

– Մեր գեղեցիկ Գասսի, – խոնարհվելով նրա վրա՝ ասաց Մարթան:

Սկսեցի կասկածել՝ արդյո՞ք նա իրականում քնած էր, թե՞

բարի նպատակներով քույրերի հարձակումներից խույս տալու համար ուղղակի ամուր սեղմել էր ցավազրկող պոմպը:

Քիչ հետո արթնացավ ու առաջին բառը, որ ասաց, «Հեյզելն» էր, ինչը, խոստովանեմ, ինձ շատ ուրախացրեց. այսինքն, երևի ես էլ էի նրա ընտանիքի մասնիկը:

– Դուրս, – ցածրաձայն ասաց, – կարո՞ղ ենք գնալ:

Ու մենք դուրս եկանք՝ մայրը անվասայլակով տանելով նրան, իսկ նրա քույրերը, փեսաները, հայրը, զարմիկներն ու ես քայլելով նրանց հետևից: Ամպամած օր էր, օդն անշարժ ու տոթ, քանի որ ամառը մտնում էր իր իրավունքների մեջ:

Հագին երկարաթև մուգ կապույտ վերնաշապիկ էր ու բրդե սպորտային շալվար: Չգիտես ինչու, անընդհատ մրսում էր: Ջուր ուզեց, և հայրը ներս գնաց ու ջուր բերեց նրա համար:

Մարթան փորձեց նրան խոսեցնել՝ կողքին չոքելով ու ասելով.

– Դու միշտ էնքան գեղեցիկ աչքեր ես ունեցել:

Նա թեթևակի գլխով արեց:

Փեսաներից մեկը ձեռքը դրեց Գասի ուսին ու ասաց.

– Դե ի՞նչ, մաքուր օդին լա՞վ ես զգում:

Գասը թոթվեց ուսերը:

– Ցավազրկող ուզո՞ւմ ես, – ծնկի իջնելով ու միանալով Գասի շուրջը կազմած շրջանին՝ հարցրեց մայրը:

Մի քայլ հետ գնացի՝ դիտելով ծաղկաթմբի միջով դեպի Գասի ետնաբակի փոքրիկ խոտածածկը սուրացող զարմիկներին: Միանգամից սկսեցին իրար գետին տապալելու խաղ խաղալ:

– Երեխանե՛ր, – անորոշ բղավեց Ջուլին: – Հույս ունեմ, որ, – ասաց՝ Գասին դիմելով, – որ նրանք էլ քեզ նման բանիմաց, խելացի երիտասարդ կդառնան, երբ մեծանան:

Հազիվ զսպեցի զզվանքս բարձրաձայն արտահայտելու ցանկությունը:

– Բայց նա էդքան էլ խելոք չէ, – ասացի Ջուլիին:

– Ճիշտ է: Ուղղակի գեղեցկադեմ մարդկանց մեծ մասը

հիմար է, ու ես գերազանցում եմ ակնկալիքները, – ասաց Օգոստոսը:

– Ճիշտ է, առաջնայինը նրա գրավչությունն է, – համաձայնեցի:

– Ըհը, ու հաճախ կուրացնում է, – ասաց Գասը:

– Եվ իրոք, կուրացրեց մեր ընկեր Այզեքին, – ասացի:

– Դա սարսափելի ողբերգություն էր, բայց ինչ անեմ, որ էդքան մահացու սիրուն եմ:

– Ոչ մի բան էլ չես կարող անել:

– Էս սիրուն դեմքն իմ բեռն է:

– Էլ չեմ ասում՝ մարմինդ:

– Հա, լուրջ, էնքան սեքսուալ մարմին ունեմ, էլ դու սուս: Խորհուրդ չեմ տա՝ ինձ տկլոր տեսնես, Դեյվ: Այ, օրինակ, Հեյզել Գրեյսի շունչը կտրվեց, հենց ինձ տկլոր տեսավ, – ասաց՝ գլխով ցույց տալով թթվածնիս բալոնը:

– Լավ, հերիք է, – ասաց Գասի հայրիկը:

Հետո հանկարծակի գրկեց ինձ ու, գլուխս համբուրելով, շշնջաց.

– Աստծուն ամեն օր շնորհակալություն եմ հայտնում քեզ պարգևելու համար, բալիկս:

Ինչևէ, դա Գասի հետ անցկացրած վերջին լավ օրն էր մինչև նրա կյանքի վերջին օրը:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Քաղցկեղով հիվանդ երեխայի վերաբերյալ ամենաքիչ հանեթեթ կլիշեներից է «վերջին օրվա» կլիշեն, որտեղ քաղցկեղի զոհն ինքն իրեն հայտնաբերում է անսպասելի պահերում, երբ թվում է, թե կտրուկ վայրընթաց թեքվածքը հանկարծակիորեն հարթացել է, ու ցավը որոշ ժամանակով դարձել է տանելի: Միակ խնդիրը, իհարկե, այն է, որ երբեք չես կարող իմանալ, որ այդ լավ օրը կյանքիդ վերջին լավ օրն է: Այդ պահին դա ուղղակի սովորական լավ օր է:

Ես հանգստյան օր էի վերցրել Օգոստոսին այցելելուց, որովհետև ինքս էլ մի քիչ լավ չէի զգում: Ոչ մի յուրահատուկ բան, ուղղակի հոգնած էի: Ինձ համար ծուլության օր էր, ու երբ Օգոստոսը զանգեց երեկոյան ժամը հինգից հետո, արդեն միացված էի ԵՕՍ-ին, որը քարշ էինք տվել հյուրասենյակ, որպեսզի կարողանայի մայրիկիս ու հայրիկիս հետ հեռուստացույց դիտել:

– Բարև, Օգոստոս, – ասացի:

Նա պատասխանեց այն ձայնով, որով հմայել էր ինձ.

– Բարի երեկո, Հեյզել Գրեյս: Կարո՞ղ ես ժամանակ գտնել ու գալ «բառիս բուն իմաստով Հիսուսի սիրտ» ժամը ութի կողմերը:

– Ը՞մ, այո:

– Հիանալի է: Հա, ու եթե մեծ նեղություն չէ, խնդրում եմ, ինձ համար գերեզմանաձառ պատրաստիր:

– Ը՞ը ... – շփոթվեցի:

– Սիրում եմ քեզ, – ասաց:

– Ես էլ քեզ, – պատասխանեցի:

Ու հեռախոսագիծը կտտոցով անջատվեց:

– Ըհը ... – սկսեցի ես, – պետք է աջակցության խմբակ գնամ: Արտահերթ նիստ է:

Մայրս անջատեց հեռուստացույցի ձայնը:

– Ամեն ինչ կարգին է, – հարցրեց:

Հոնքերս բարձրացնելով՝ մի քանի վայրկյան նրան նայեցի ու ասացի.

– Համարենք, որ դա հռետորական հարց էր:

– Բայց ինչո՞ւ ...

– Որովհետև Գասն իմ կարիքն ունի: Մի անհանգստացեք, ես մեքենայով մենակ կգնամ, – սկսեցի բզբզալ ՕԵՍ-ի հետ, որպեսզի մայրս օգնի հանել դա, բայց նա տեղից չշարժվեց:

– Հեյզել, – ասաց, – հայրդ ու ես քեզ համարյա չենք տեսնում:

– Հատկապես մեզնից նա, ով ամբողջ շաբաթն աշխատում է,– ասաց հայրս:

– Նա իմ կարիքն ունի, – ասացի՝ վերջապես ինքնուրույն արձակելով ՕԵՍ-ը:

– Մենք էլ քո՛ կարիքն ունենք, բալիկս, – ասաց հայրս:

Նա բռնեց ու ամուր սեղմեց դաստակս, ասես երկու տարեկան փոքրիկ երեխա էի, որ ուր որ է դուրս էր թռչելու փողոց:

– Ուրեմն մահացու հիվանդացիր, հայրի՛կ: Էդ ժամանակ ավելի շատ տանը կմնամ:

– Հեյզե՛լ, – կշտամբանքով ասաց մայրս:

– Մի՞թե դու ինքդ չէիր ուզում, որ տնային ցեց չլինեմ, – ասացի նրան:

Հայրս դեռ կառչած էր թևիցս:

– Իսկ հիմա ուզում ես նա շուտ մահանա, որ ես նորից հետ գամ, մնամ գամված էստեղ ու թույլ տամ քեզ հոգ տանել իմ մասին, ինչպես էն ժամանակ էիր անում: Բայց ես դրա կարիքը չունեմ, մա: Էլ առաջվա պես քո կարիքը չեմ զգում:

https://1915.info

Ու, իմ կարծիքով, հենց քեզ է պետք սեփական կյանք ձեռք բերել:

– Հեյզե՛լ, – ձեռքս ավելի ամուր սեղմելով՝ բղավեց հայրս, – ներողություն խնդրիր մայրիկից:

Ես փորձում էի դուրս քաշել ձեռքս, բայց նա ոչ մի կերպ բաց չէր թողնում ու մի ձեռքով կանյուլաս դնել չէի կարողանում: Դա կատաղեցնում էր: Ես ընդամենն ուզում էի դեռահասներին հատուկ հին ու բարի ձևով, ոտքերս գետնին ուժեղ խփելով, դուրս գալ սենյակից, շրխկոցով փակել ննջարանիս դուռը, միացնել «Տենդային հուրը» և գազազած գերեզմանաձառ գրել, բայց չէի կարող, քանի որ չէի կարողանում շնչել, գրո՛ղը տանի:

– Կանյուլան, – նվնվացի, – շունչս կտրվում է:

Հայրս անմիջապես բաց թողեց ձեռքս ու շտապեց միացնել ինձ թթվածնին: Նրա աչքերում տեսնում էի մեղքի զգացումը, բայց դեռ բարկացած էր:

–Հեյզել, ներողություն խնդրիր մայրիկից:

– Լավ, կներեք, բայց խնդրում եմ, թույլ տվեք ինձ անել դա:

Նրանք ոչինչ չասացին: Մայրս թևերը ծալած նստել էր, նույնիսկ վրաս չէր նայում: Քիչ հետո վեր կացա ու գնացի իմ սենյակ՝ Օգոստոսի մասին ձառ գրելու:

Եվ մայրս, և հայրս մի քանի անգամ թակեցին դուռը, բայց ես ասացի, որ կարևոր գործով եմ զբաղված: Մի ամբողջ հավերժություն մտածում էի, թե ինչ եմ ուզում ասել նրա մասին, բայց, միևնույն է, վերջում էլի գոհ չէի իմ ստեղծագործությունից: Ու մինչ ես տեխնիկապես կվերջացնեի, տեսա արդեն ժամը յոթն անց քառասուն է, ինչը նշանակում էր, որ եթե շորերս չփոխեի էլ, միևնույն է, ուշանալու էի: Վերջիվերջո հագա բաց երկնագույն գիշերազգեստի շալվար, սանդալներ ու Գասի «Բաթլեր» վերնաշապիկը:

Դուրս եկա սենյակից ու փորձեցի արագ անցնել նրանց կողքով, բայց հայրս ասաց.

– Դու չես կարող տնից դուրս գալ առանց մեր թույլտվության:

– Օ՜, Աստվա՛ծ իմ, հայրիկ: Նա ուզում էր, որ ես իր համար գերեզմանաձառ գրեմ: Սրանից հետո ամեն անիծյալ գիշեր տանը կանցկացնեմ, լա՞վ:

Դա վերջապես փակեց նրանց բերանները:

Ամբողջ ճանապարհին ծնողներիս հանդեպ ունեցած բարկությունը չէր անցնում: Հասնելով՝ կայանեցի եկեղեցու հետևի կիսաշրջանաձև կանգառում՝ Օգոստոսի մեքենայի հետևը: Եկեղեցու ետնադուռը բաց էր պահում բռունցքաչափ մի քար: Ներս մտնելով՝ սկզբում մտածեցի աստիճաններով իջնել, բայց հետո որոշեցի սպասել հնամենի ճռճռացող վերելակին:

Երբ վերելակի դռները նորից բացվեցին, հայտնվեցի աջակցության խմբակի սենյակում, աթոռները շարված էին նույն ձևով՝ շրջանաձև: Բայց հիմա այնտեղ տեսնում էի միայն անվասայլակում նստած, սաստիկ նիհար Գասին: Նա նստած էր շրջանի կենտրոնում՝ դեմքով դեպի ինձ. վերելակի դռների բացվելուն էր սպասելիս եղել:

– Հեյզել Գրե՛յս, – ասաց, – ցնցող տեսք ունես:

– Դե, հա, գիտեմ:

Սենյակի մութ անկյունից ինչ-որ ձայն լսվեց: Այզեքը կանգնած էր փոքրիկ փայտե ամբիոնի հետևում՝ ձեռքերով դրա եզրերից բռնած:

– Ուզո՞ւմ ես նստել, – հարցրի նրան:

– Ոչ, ես պետք է գերեզմանաձառ ասեմ: Դու ուշացել ես:

– Դո՞ւ ... ե՞ս ... ի՞նչ ...

Գասը ձեռքի շարժումով հասկացրեց, որ նստեմ: Ես մի աթոռ տարա շրջանի կենտրոն՝ նրա կողքը, մինչ նա պտտում էր անվասայլակը, որ դեմքով շրջվի Այզեքի կողմը:

– Ուզում եմ իմ թաղմանը ներկա լինել, – ասաց Գասը, – իմիջիայլոց, իմ թաղմանը ճառ կասե՞ս:

– Ը՞ը, իհարկե, այո, – ասացի՝ ձեռքս գցելով նրա ուսին:

https://1915.info

Ձեռքս մեջքի վրայով տանելով՝ գրկեցի նրան իր անվասայլակի հետ միասին: Նա ցավից կծկվեց: Ես ձեռքս հետ քաշեցի:

– Հիանալի է, – ասաց, – հուսով եմ, որ ներկա կլինեմ՝ որպես ուրվական: Համենայն դեպս, ապահովության համար, որոշեցի...ըը, չեմ ուզում ձեզ անհարմար իրավիճակի մեջ դնել, բայց որոշել եմ կազմակերպել իմ նախաթաղումը, ու քանի որ էսօր համեմատաբար լավ տրամադրություն ունեմ, մտածեցի, որ սրանից լավ ժամանակ չի կարող լինել:

– Իսկ ինչպե՞ս ես էստեղ հասել, – հարցրի:

– Եթե ասեմ, որ ամբողջ գիշեր դուռը բաց են թողնում, կհավատա՞ս, – ասաց Գասը:

– Ը՞ը, չէ:

– Ճիշտ էլ կանես, – ժպտաց, – գիտեմ, որ սա մի քիչ ինքնագովության է նման:

– Հեյ, իմ ճառից գողություն մի՛ արա, – ասաց Այզեքը: – Ճառիս առաջին մասում ասվում է, թե ինչքան ինքնագով սրիկա էիր դու:

Ծիծաղեցի:

– Լավ, լավ, – ասաց Գասը, – բեմը քո տրամադրության տակ է:

Այզեքը մաքրեց կոկորդն ու սկսեց.

– Օգոստոս Ուոթերսն ինքնագով, պարծենկոտ սրիկա էր: Բայց մենք ներում ենք նրան: Մենք ներում ենք նրան ոչ թե, որովհետև նրա սիրտը փոխաբերականորեն էնքան լավն էր, որքան վատն էր բառացիորեն կամ որովհետև նա պատմության ցանկացած չծխողից շատ ավելի լավ գիտեր, թե ինչպես բերանում ծխախոտ պահել կամ որովհետև նա տասնութ տարեկան էր, բայց պետք է ավելի շատ ապրեր ...

– Տասնյոթ տարեկան, – ուղղեց Գասը:

– Դե, հույս ունեմ, որ դեռ մի քիչ էլ կապրես, մի խանգարիր հիմարի մեկը, – ասաց Այզեքը:

– Եվ ասեմ ձեզ, – շարունակեց, – Օգոստոս Ուոթերսն

էնքան էր խոսում, որ իր սեփական թաղման ժամանակ էլ էր մարդկանց ընդհատում: Ու ճոռոմախոս էլ էր: Օ՜, Հիսուսը վկա, էդ տղան նույնիսկ միզել չէր կարողանում առանց մարդկային արտաթորանքի բազմաթիվ փոխաբերական ռեզոնանսների մասին մտածելու: Ու նաև ինքնահավանի մեկն էր: Չեմ կարծում, թե երբևէ հանդիպել եմ ֆիզիկապես ավելի հմայիչ մի մարդու, որ էդքան շատ գիտակցի սեփական ֆիզիկական հմայքը: Բայց, ահա թե ինչ կասեմ՝ երբ ապագայի գիտնականները ռոբոտ աչքեր բերեն իմ տուն և առաջարկեն փորձել դրանք, ես նրանց տնից դուրս կվռնդեմ, որովհետև չեմ ուզում առանց նրա տեսնել աշխարհը:

Արդեն լացս գալիս էր:

– Իսկ էդ սիրուն հռետորական խոսքերն ասելուց հետո, իհարկե, կդնեմ ռոբոտ աչքերը, որովհետև դրանցով երևի կկարողանաս աղջիկներին առանց վերնազգեստի տեսնել ու նման բաներ: Օգոստո՛ս, բարի ճանապարհ, ընկերս:

Օգոստոսը, շուրթերն իրար սեղմած, որոշ ժամանակ գլխով էր անում, հետո, ի նշան հավանության, վեր տնկեց բութը: Ու քիչ անց ինքն իրեն հավաքելով՝ ասաց.

– Բայց աղջիկների առանց վերնաշապիկի տեսնելու մասը ես կհանեի:

Այզեքը դեռ երկու ձեռքով կառչած էր ամբիոնից: Նա սկսեց լաց լինել՝ ճակատը սեղմելով ամբիոնին ու ցնցելով ուսերը: Վերջապես ասաց.

– Գրողը տանի, Օգոստոս, խմբագրում ես քո սեփական գերեզմանաճառը:

– Մի հայհոյիր «բառիս բուն իմաստով Հիսուսի սրտում»:

– Գրողը տանի, – կրկնեց Այզեքը: Ապա բարձրացրեց գլուխը և արցունքները կուլ տալով՝ ասաց, – Հեյզել, ինձ կօգնե՞ս դուրս գալ էստեղից:

Լրիվ մոռացել էի, որ Այզեքն ինքնուրույն շրջան վերադառնալ չէր կարող: Վեր կացա, թևանցուկ արեցի նրան ու դանդաղ տարա Գասի կողքի աթոռի մոտ, որտեղ ես էի

նստած: Հետո ինքս մոտեցա ամբիոնին ու բաց արի թղթի կտորը, որի վրա գրել էի իմ գերեզմանաձառը:

– Իմ անունը Հեյզել է: Օգոստոս Ուոթերսն իմ կյանքի ամենամեծ դժբախտ աստղի տակ ծնված սերն էր: Մեր սիրո պատմությունն էպիկական պատմություն էր, ու ես չեմ կարողանա դրա մասին մեկ նախադասությունից ավելի խոսել՝ առանց արցունքների ծովի մեջ կորչելու: Գասը գիտեր: Գասը գիտի: Ես ձեզ չեմ պատմի մեր սիրո պատմությունը, որովհետև բոլոր իրական սիրային պատմությունների նման մեր պատմությունն էլ կմեռնի մեզ հետ, ինչպես և պետք է լինի: Հույս ունեի, թե նա էր ինձ համար գերեզմանաձառ ասելու, որովհետև նրանից ավելի ոչ մեկին չէի ուզենա, որ ... – ու ես սկսեցի լաց լինել: – Լավ, ախր ինչպես չլացեմ: Ինչպե՞ս ... լավ, լավ:

Մի քանի անգամ շունչ քաշեցի ու նորից վերադարձա թղթին.

– Քանի որ չեմ կարող մեր սիրո պատմության մասին խոսել, մաթեմատիկայի մասին կխոսեմ: Ես մաթեմատիկոս չեմ, բայց գիտեմ, որ 0–ից մինչև 1–ը անթիվ–անվերջ թվեր կան՝ 0.1, 0.12, 0.112 և այլ թվերի անվերջանալի մի հավաքածու: Եվ, իհարկե, ավելի մեծ քանակությամբ թվեր են ընկած 0–ից 2–ի միջև կամ 0–ից մինչև միլիոն: Որոշ անվերջություններ մեծ են այլ անվերջություններից: Սա մեզ սովորեցրել է ժամանակին մեր սիրած գրողներից մեկը: Լինում են օրեր, շա՛տ օրեր, երբ ինձ չի գոհացնում, վրդովվեցնում է իմ ունեցած անվերջությունների չափը: Ուզում եմ ավելի շատ թիվ, քան հավանական է, որ կստանամ և, Աստված իմ, Օգոստոս Ուոթերսի համար էլ նրա ստացածից ավելի շատ թիվ եմ ուզում: Բայց, Գաս, իմ սեր, բառերով չեմ կարող արտահայտել, թե որքան շնորհակալ եմ քեզ մեր փոքրիկ անվերջության համար: Ես դա ամբողջ աշխարհի հետ էլ չէի փոխի: Հաշվված օրերի ընթացքում ինձ մի ամբողջ հավերժություն ես տվել, որի համար քեզ շատ շնորհակալ եմ:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Օգոստոս Ուոթերսը մահացավ իր նախաթաղումից ութ օր հետո, Մեմորիալի վերակենդանացման բաժանմունքում, երբ քաղցկեղը, որը կազմված էր նրանից, վերջիվերջո կանգնեցրեց նրա սիրտը, որը նույնպես նրանից էր կազմված:

Նա իր մոր, հոր և քույրերի հետ էր եղել: Մայրը զանգահարեց ինձ առավոտյան ժամը երեքն անց կեսին: Իհարկե, գիտեի, որ հեռանում էր մեզնից: Քնելու գնալուց առաջ խոսել էի նրա հոր հետ, ու նա ինձ ասել էր, որ դա կարող էր հենց այդ օրը լինել, բայց, միևնույն է, երբ մահճակալիս կողքի սեղանի վրայից վերցրի հեռախոսն ու տեսա Գասի մայրիկի հեռախոսահամարը, ներսումս ամեն ինչ փուլ եկավ: Նա ուղղակի լաց էր լինում գծի մյուս կողմում: Հետո ինձ ասաց, որ շատ է ցավում, ու ես էլ նրան ասացի, որ ցավում եմ: Հետո ասաց, որ մինչև մահանալը մի քանի ժամ անգիտակից վիճակում է եղել:

Հետո ծնողներս ներս մտան՝ սպասողական նայելով ինձ: Ես ուղղակի գլխով արեցի, ու նրանք իրար գիրկ ընկան, համոզված եմ, համակված հարմոնիկ սարսափով, որ այդ ցավն ինչ-որ մի ժամանակ ուղղակիորեն իրենց էլ է դիպչելու:

Զանգեցի Այզեքին, ով անիծեց կյանքը, ամբողջ տիեզերքը ու նույնիսկ Աստծուն, հետո ասաց՝ ո՞ւր են անիծյալ մրցանակները, երբ կարիք ունես դրանք կոտրելու: Հետո հանկարծ հասկացա, որ ուրիշ էլ ոչ մեկը չունեի՝ զանգելու, ինչը շատ

ցավալի էր: Միակ մարդը, ում հետ իրոք կուզենայի խոսել Օգոստոս Ուոթերսի մահվան մասին, Օգոստոս Ուոթերսն էր:

Ծնողներս մի ամբողջ հավերժություն մնացին իմ սենյակում: Վերջապես առավոտյան հայրս հարցրեց.

– Ուզո՞ւմ ես մենակ մնալ:

Ես գլխով արեցի, իսկ մայրս ասաց.

– Մենք դռան հետևում կլինենք:

«Չէի էլ կասկածում», – մտածեցի:

Անտանելի էր այդ ամենը: Ամեն մի վայրկյանը նախորդից անտանելի էր: Անընդհատ գլխումս նրան զանգահարելու միտքն էր պտտվում՝ մտածելով, թե հետաքրքիր է՝ ով կպատասխանի: Վերջին միասին ացկացրած մի քանի շաբաթն ինձ հուշ էին մնացել, ու դա քիչ բան չէր, բայց ես զրկված էի հիշելու հաճույքից, քանի որ այլևս չկար մեկը, ում հետ կկարողանայի ընկնել հիշողությունների գիրկը: Թվում էր, թե, կորցնելով քեզ հետ հիշող զուգընկերոջը, հիշողությունն էլ ես կորցնում, ասես բոլոր մեր արածներն ավելի քիչ իրական էին ու կարևոր, քան ժամեր առաջ:

Երբ հայտնվում ես շտապ օգնության հիվանդասենյակում, առաջին բաներից, որ խնդրում են քեզ անել, տասը բալանոց սանդղակով ցավդ գնահատելն է, և, ըստ դրա, նրանք որոշում են, թե ինչ դեղեր նշանակեն, և ինչ հաճախականությամբ դրանք պետք է օգտագործես: Տարիների ընթացքում ինձ հարյուր անգամ տվել էին այդ հարցը: Հիշում եմ, որ մի անգամ, շատ վաղուց, երբ չէի կարողանում շունչ քաշել, ու կուրծքս ասես կրակի մեջ լիներ, որի բոցերը թվում էր, թե ներսից լիզում էին կողոսկրերս, մարմինս այրելով դուրս թռչելու ճանապարհ հարթում իրենց համար, ծնողներս ինձ հիվանդանոց տարան: Բուժքույրը խնդրեց գնահատել ցավը: Ես նույնիսկ խոսել չէի կարողանում, ձեռքով ինը մատ ցույց տվեցի:

Ավելի ուշ, երբ արդեն ինչ-որ բան էին տվել ինձ, ներս մտավ բուժքույրը և, ճնշումս չափելիս ձեռքս շոյելով, ասաց.

– Գիտեմ ինչպես իմացա, որ դու մարտիկ ես: Դու տասը բալանոց ցավն ինը գնահատեցիր:

Բայց դա այնքան էլ ճիշտ չէր: Ես այդ ցավն ինը գնահատեցի, քանի որ խնայում էի տասը: Եվ, ահա, մեծ ու սաստիկ տասը, որ նորից ու նորից հարվածում էր ինձ, մինչ ես անշարժ ու մենակ, աչքերս առաստաղին հառած, պառկած էի մահճակալին: Ալիքները շպրտում էին ինձ քարերի վրա, հետո նորից հետ տանում ծով, որպեսզի նորից զարկեն ժայռի խորդուբորդ դեմքին՝ թողնելով ինձ երեսնիվեր ջրի վրա լողալիս, չխեղդված:

Վերջապես զանգահարեցի նրան: Հինգ անգամ զանգը գնալուց հետո միացավ ինքնապատասխանիչը:

«Ձեզ հետ խոսում է Օգոստոս Ուոթերսի ինքնապատասխանիչը, – լսվեց նրա հնչեղ ձայնը, որով հմայել էր ինձ, – կարող եք հաղորդագրություն թողնել»:

Ծնգոց լսվեց: Հաջորդող քար լռությունն այնքան ահազդու էր: Այնքան էի ուզում նրա հետ վերադառնալ մեր գաղտնի գերերկրային երրորդ տարածություն, ուր հայտնվում էինք միասին հեռախոսով խոսելիս: Անհամբեր սպասում էի այդ զգացողությանը, որն այդպես էլ չայցելեց ինձ: Հեռախոսագծի քար լռությունը սփոփիչ չէր: Վերջիվերջո անջատեցի հեռախոսը:

Մահճակալիս տակից հանեցի լեփթոփս, միացրի ու նրա սոցէջ մտա, որն անընդմեջ հեղեղվում էր ցավակցական խոսքերով: Ամենավերջինում ասվում էր.

«Սիրում եմ քեզ, ընկերս: Էն աշխարհում կհանդիպենք»:

Գրել էր ինչ-որ մեկը, որի մասին երբեք չէի լսել: Իրականում գրառումներից գրեթե բոլորը, որ հայտնվում էին նրա էջի պատին համարյա նույնքան արագությամբ, որով կարդում էի դրանք, այնպիսի մարդկանցից էին, որոնց երբեք ոչ հանդիպել էի, ոչ էլ Օգոստոսն էր երբևէ խոսել նրանց մասին: Մարդիկ, որոնք հիմա, երբ Գասն արդեն մահացած էր, գովաբանում էին նրա տարբեր արժանիքները, չնայած,

https://1915.info

հաստատ գիտեի, որ նրանցից ոչ մեկն ամիսներով չէր տեսել ու նեղություն էլ չէր քաշել գոնե մեկ անգամ նրան այցելելու: Ու մտածեցի՝ արդյո՞ք իմ էջի պատն էլ էր այս տեսքն ունենալու իմ մահից հետո, թե՞ դպրոցից ու կյանքից բավականին երկար ժամանակով էի դուրս մնացել, որպեսզի խուսափեի նման լայնածավալ հիշատակագրումից:

Շարունակում էի կարդալ:

«Արդեն կարոտում եմ քեզ, եղբայր»:

«Ես քեզ շատ եմ սիրում, Օգոստոս: Աստված հոգիդ լուսավորի»:

«Դու հավերժ կապրես մեր սրտերում, մեծատառով մարդ»:

(Հատկապես այս վերջինը շատ նյարդայնացրեց ինձ, որը կարծես ակնարկեր նրանց անմահ լինելու մասին. «Դու հավերժ կապրես իմ հիշողության մեջ, որովհետև ես հավերժ ապրելու եմ: ՀԻՄԱ ԵՍ ՔՈ ԱՍՏՎԱԾՆ ԵՄ, ՄԵՌԱԾ ՏՂԱ: ՀԻՄԱ ԵՍ ԵՄ ՔՈ ՏԵՐԸ: Կարծելը, թե երբեք չես մահանալու, նույնպես մահանալու կողմնակի ազդեցություններից է):

«Դու էնքան լավ ընկեր էիր: Ցավում եմ, որ դպրոցից դուրս գալուցդ հետո քեզ համարյա չեմ տեսել, ախպերս: Գրազ կգամ՝ դրախտում արդեն բասկետբոլ ես խաղում»:

Պատկերացրի, թե ինչպես Օգոստոս Ուոթերսը կվերլուծեր այս մեկնաբանությունը.

«Եթե ես դրախտում բասկետբոլ եմ խաղում, ուրեմն ի՞նչ է ստացվում, դրախտում մի նյութական վայր կա, որտեղ նյութական գնդակնե՞ր են պահվում: Իսկ ո՞վ է պատրաստում այդ բասկետբոլային գնդակները: Մի՞թե դրախտում որոշ հոգիներ էնքան անբախտ են, որ ստիպված են աշխատել երկնային բասկետբոլային գնդակների գործարանում, որ-պեսզի ես խաղալու գնդակ ունենամ: Թե՞ ամենակարող Աստվածն է տիեզերական վակուումից բասկետբոլային գնդակներ ստեղծում: Էդ դրախտը մի անտեսանելի աշխա՞րհ է, որտեղ ֆիզիկայի օրենքները չեն գործում, եթե այո, ապա ինչո՞ւ, գրողը տանի, պետք է բասկետբոլ խաղամ, եթե կարող

եմ օդում թռչել, կարդալ, նայել սիրուն մարդկանց կամ անել բաներ, որ իրոք սիրում եմ անել: Ինձ թվում է, որ իմ մահացած ես-ի մասին քո պատկերացումներն ավելի շատ քեզ են նկարագրում, քան թե էն անձնավորությանը, որ ես եղել եմ կամ հիմա կամ»:

Նրա ծնողները կեսօրի կողմերը զանգեցին՝ ասելու, որ թաղումը հինգ օրից է լինելու՝ շաբաթ օրը: Աչքերիս առաջ անմիջապես հայտնվեց եկեղեցում հավաքված մարդկանց ամբոխը, որ կարծում էր, թե նա բասկետբոլ էր սիրում, ու սիրտս խառնեց այդ տեսարանից, բայց դե, պետք է գնայի, որովհետև ճառ ունեի ասելու և ընդհանրապես, մի խոսքով: Հեռախոսն անջատելով՝ շարունակեցի կարդալ նրա պատի գրառումները:

«Հենց նոր իմացա, որ Գաս Ուոթերսը մահացել է քաղցկեղի դեմ երկար պայքար մղելուց հետո: Հանգչիր խաղաղությամբ, ընկերս»:

Գիտեի, որ այս մարդիկ անկեղծ տխրել էին, ու նաև գիտեի, որ, իրականում, նրանց վրա չէի բարկանում: Ուղղակի ամբողջ աշխարհի վրա էի բարկացած: Բայց, նույնիսկ այդ դեպքում, այդ ամենն ինձ սարսափելի կատաղեցնում էր. դու ստանում ես այս բոլոր ընկերներին, երբ այլևս ընկերների կարիք չունես: Որոշեցի պատասխանել այդ գրառմանը.

«Մենք ապրում ենք գիտակցականության արարմանն ու ոչնչացմանը նվիրված տիեզերքում: Օգոստոս Ուոթերսը քաղցկեղի դեմ երկար պայքար մղելուց հետո չի մահացել: Նա մահացել է մարդկային գիտակցության դեմ պայքար մղելուց հետո՝ դառնալով, ինչպես և դուք եք օրերից մի օր դառնալու, տիեզերքի՝ հնարավոր ամեն ինչ ստեղծելու և ավերելու պահանջմունքի զոհը»:

Հրապարակեցի սա և, նորից ու նորից թարմացնելով էջը, սկսեցի սպասել ինչ-որ մեկի պատասխանին: Ոչ մի բան: Իմ մեկնաբանությունը կորավ նոր գրառումների ձնամրրիկում: Բոլորը շատ էին կարոտելու նրան: Բոլորն աղոթում էին նրա

ընտանիքի համար: Ու ես հիշեցի վան Հաութենի նամակը՝ գրելով հարություն չես տալիս, այլ թաղում ես:

Որոշ ժամանակ անց գնացի հյուրասենյակ՝ ծնողներիս հետ հեռուստացույց դիտելու: Չեմ կարող ասել, թե ինչ էին ցուցադրում, բայց ինչ-որ պահի մայրս հարցրեց.

– Հեյզել, ի՞նչ կարող ենք անել քեզ համար:

Ես ուղղակի տարուբերեցի գլուխս ու նորից սկսեցի լաց լինել:

– Ի՞նչ կարող ենք անել, – նորից հարցրեց:

Թոթվեցի ուսերս:

Բայց նա շարունակ հարցնում էր, կարծես թե կարող էր ինչ-որ բան անել, մինչև, ի վերջո բազմոցի վրայով սողալով, նրա գրկում կուչ եկա: Հայրս էլ մոտեցավ, ամուր գրկեց ոտքերս, ու ես փաթաթվեցի մայրիկիս: Եվ այդպես իրար գրկած մի քանի ժամ մնացինք, մինչև ալիքները նահանջեցին:

https://1915.info

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Սկզբում, երբ տեղ հասանք, նստեցի վերջին հրաժեշտի սրահի հետնամասում, որը «բառիս բուն իմաստով Հիսուսի սրտի» եկեղեցու խորանին կից անսվաղ քարե պատերով փոքրիկ սենյակ էր: Սենյակում մոտ ութսուն աթոռ էր շարված, որոնց երկու-երրորդը զբաղված էր, թեև ավելի շատ զգացվում էր մեկ երրորդի դատարկությունը:

Որոշ ժամանակ պարզապես դիտում էի դագաղին մոտեցող մարդկանց: Դագաղը դրված էր մանուշակագույն սփռոցով ծածկված սայլակառքի վրա: Բոլոր այս մարդիկ, ում նախկինում երբևէ չէի տեսել, ծնկի էին իջնում նրա կողքին կամ կանգնում գլխավերևում ու որոշ ժամանակ նայում նրան՝ գուցե լացելով կամ գուցե ինչ-որ բան ասելով: Իսկ հետո, նրան դիպչելու փոխարեն, բոլորը դիպչում էին դագաղին, որովհետև ոչ ոք չի ուզում մեռած մարդու ձեռք տալ:

Գասի մայրն ու հայրը կանգնած էին դագաղի կողքին: Նրանք գրկում էին բոլոր մոտեցողներին, բայց երբ նկատեցին ինձ, ժպտացին ու մոտեցան: Ես վեր կացա, առաջինը գրկեցի Գասի հորը, հետո՝ նրա մայրիկին, ով ամուր հպվեց ինձ, ինչպես Գասն էր ժամանակին անում՝ սեղմելով ուսերս: Նրանք երկուսն էլ կարճ ժամանակում այնքան էին ծերացել, որ աչքերը փոս էին ընկել, ուժասպառ դեմքերի մաշկը կախվել էր: Նրանք էլ էին հասել արգելավազքի վերջնակետին:

– Նա շատ էր սիրում քեզ, – ասաց Գասի մայրը, – իսկապես սիրում էր: Դա ուղղակի պատանեկան սիրահարվածու-

թյուն չէր կամ նման մի բան, – ավելացրեց, կարծես թե ես դա չգիտեի:

– Նա ձեզ էլ էր շատ սիրում, – կիսաձայն ասացի:

Դժվար է բացատրել, բայց նրանց հետ խոսելիս ասես դանակով խոցեիր նրանց ու ինքդ էլ խոցվեիր:

– Շատ ափսոս, – ասացի:

Իսկ հետո նրա ծնողներն սկսեցին խոսել իմ ծնողների հետ, որն ամբողջովին գլխի շարժումներից ու ձգված շուրթերից կազմված խոսակցություն էր: Դագաղի կողմը նայելով՝ տեսա, որ ոչ ոք չկա ու որոշեցի մոտենալ: Թթվածնի խողովակը քթանցքներիցս դուրս քաշեցի, գլխիս վրայով հանելով՝ տվեցի հորս. ուզում էի, որ այդ պահին միայն ես ու ինքը լինեինք, ուրիշ ոչ մի բան: Վերցրի փոքրիկ պայուսակս ու քայլեցի աթոռների շարքերից ձևավորված միջանցքով:

Ճանապարհը չափից երկար էր թվում, բայց թոքերիս անընդհատ ասում էի, որ սուս մնան, որ նրանք ուժեղ են ու կարող են անել սա: Մի քիչ մոտենալով՝ արդեն տեսնում էի նրան. մազերը կոկիկ սանրած էին ձախ կողմի վրա, ինչը նա հաստատ սարսափելի կհամարեր, իսկ դեմքը՝ ծեփագույն: Բայց, միևնույն է, նա դեռ իմ Գասն էր: Իմ երկարահասակ ու գեղեցիկ Գասը:

Ես ուզում էի հագնել փոքրիկ սև զգեստը, որ գնել էի իմ տասնհինգամյակին, իմ մահվան զգեստը, բայց այն այլևս վրաս չէր լինում: Ստիպված մի հասարակ, մինչև ծնկները հասնող, սև զգեստ հագա: Օգոստոսի հագին այն նույն՝ նեղ դարձածալերով կոստյումն էր, որ հագել էր «Օրանյիում»:

Նրա կողքին ծնկի իջնելով՝ հանկարծ նկատեցի, որ աչքերը փակել էին: Դե իհարկե պետք է փակեին: Ես էլ երբեք չէի տեսնելու նրա կապույտ աչքերը:

– Սիրում եմ քեզ՝ ներկա ժամանակով, – շշնջացի, հետո ձեռքս դրեցի նրա կրծքին դրված ձեռքին ու ասացի, – ամեն ինչ լավ է, Գաս: Ամեն ինչ լավ է: Լա՛վ: Լսո՞ւմ ես ինձ, ամեն ինչ լավ է: – Ընդհանրապես վստահ չէի ու հիմա էլ վստահ

չեմ, թե նա լսում էր ինձ: Առաջ հակվելով՝ համբուրեցի այտը:
– Լավ, – ասացի, – լավ:

Հետո հանկարծ գիտակցեցի, որ այդտեղ հավաքված բոլոր մարդիկ նայում են մեզ: Մեկ էլ վերջին անգամը, որ այսքան մարդ տեսել էր մեզ համբուրվելիս, Աննա Ֆրանկի տուն-թանգարանում էր: Չնայած որ, ըստ էության, արդեն «մենք» չկար՝ նայելու, միայն ես էի մնացել:

Բացեցի պայուսակս ու «Քեմլ լայթսի» մի լիքը տուփ հանեցի: Արագ շարժումով, հույս ունենալով, որ հետևից ոչ ոք չի տեսնի, նրա ու դագաղի արծաթագույն թավշե աստառի արանքը խցկեցի ծխախոտի տուփը:

– Կարող ես վառել սրանք, – շշնջացի, – ես դեմ չեմ լինի:

Մինչ ես խոսում էի նրա հետ, մայրս ու հայրս իմ թթվածնի բալոնով առաջացել էին երկրորդ շարք, որպեսզի ստիպված չլինեմ երկար հետ քայլել: Երբ նստեցի, հայրս ինձ անձեռոցիկ տվեց: Մաքրեցի քիթս ու, խողովակներն ականջներիս շուրջն անցկացնելով, հետ դրեցի քթանցքներիս մեջ:

Կարծում էի, թե իսկական հուղարկավորությունը կարգին խորանի մոտ էր անցկացվելու, բայց ամեն ինչ տեղի ունեցավ հենց այդտեղ, այդ փոքրիկ սենյակում՝ «բառիս բուն իմաստով Հիսուսի ձեռքում»: Ենթադրում եմ, որ խաչի այն հատվածում, որտեղ գամել էին նրան: Քահանան մոտեցավ դագաղին ու կանգնեց դրա հետևում: Կարծես դագաղը քարոզի ամբիոն էր, ինչ էր: Նա ասաց, թե Օգոստոսն ինչ խիզախ պայքար էր մղել հիվանդության դեմ, ու թե նրա հերոսական դիմակայությունը ոգեշնչման աղբյուր է բոլորիս համար: Եվ այդ քահանան արդեն սկսում էր ինձ սաստիկ նյարդայնացնել, երբ ասաց.

– Երկնքում Օգոստոսը վերջապես կլինի առողջ ու լիարժեք մարդ, – ակնարկելով, որ Օգոստոսը մյուս մարդկանցից թերի էր, քանի որ ընդամենը մեկ ոտք ուներ: Ես չկարողացա զսպել զզվանք արտահայտող հոգոցս:

Հայրս բռնեց ոտքիցս ու դատապարտող հայացքով նայեց

ինձ, բայց հետևից ինչ-որ մեկը հազիվ լսելի մրթմրթաց ականջիս.

– Մի գլուխ էշություն է դուրս տալիս, չէ՞, բալիկս:

Ես կտրուկ հետ շրջվեցի:

Փիթեր վան Հաութենն սպիտակ, իր կլոր կազմվածքին համապատասխան կարված, վուշե կոստյում էր հագել, փիրուզագույն վերնաշապիկ և կանաչ փողկապ: Կարծես ավելի շուտ Պանամայի գաղութացման առթիվ հագնված լիներ, ոչ թե թաղման:

Քահանան ասաց.

– Եկեք աղոթենք:

Բոլորը խոնարհեցին գլուխները, մինչդեռ ես, Փիթեր վան Հաութենին տեսնելով, բերանս բաց սառել մնացել էի: Քիչ հետո նա շշնջաց.

– Պետք է ձևացնենք, թե աղոթում ենք, – ու խոնարհեց գլուխը:

Փորձեցի մոռանալ նրա մասին և ուղղակի աղոթել Օգոստոսի համար: Իմ առջև խնդիր դրեցի լսել քահանային ու ոչ մի դեպքում ետ չնայել:

Քահանան կանչեց Այզեքին, որ հիմա շատ ավելի լուրջ էր, քան «նախաթաղման» ժամանակ:

– Օգոստոս Ուոթերսը «Քաղցկեղի հանրապետության» գաղտնի քաղաքի քաղաքապետն էր: Նա անփոխարինելի է մեզ համար, – սկսեց Այզեքը: – Նրա մասին կարելի է շատ զվարճալի պատմություններ պատմել, որովհետև շատ զվարճասեր տղա էր: Բայց հիմա ես մի լուրջ պատմություն եմ ուզում պատմել: Իմ աչքերն անդամահատելուց մեկ օր հետո Գասը հիվանդանոց եկավ: Ես կուրացած էի, կոտրված, ոչ ուզում էի մի բան անել, ոչ էլ լսել, ու հանկարծ Գասը աղմուկով մտավ հիվանդասենյակ ու բացականչեց. «Հիանալի նորություն ունեմ քեզ համար»: Ես ասացի, որ հիմա ոչ մի հիանալի նորություն լսելու հավես չունեմ, բայց Գասն ասաց. «Էս նորությունը հաստատ կուզենաս լսել»: Եվ ես հարցրի նրան.

https://1915.info

«Լավ, և ինչ նորություն է դա», ու նա պատասխանեց. «Չես էլ կարող պատկերացնել, թե ինչպիսի հիանալի ու ահավոր պահերով լի երկար ու լավ կյանք է սպասվում քեզ»:

Այզեքն էլ չկարողացավ շարունակել կամ միգուցե հենց այդքանն էր գրել:

Երբ Գասի ավագ դպրոցի դասընկերներից մեկը պատմեց-վերջացրեց Գասի բասկետբոլային մեծ տաղանդի ու, որպես թիմակից, բազմաթիվ լավ հատկանիշների մասին, քահանան ասաց.

– Իսկ հիմա մի քանի խոսք կասի Օգոստոսի առանձահատուկ ընկեր Հեյզելը:

«Առանձնահատուկ ընկեր»: Սրահում քմծիծաղներ լսվեցին: Ես մտածեցի, որ ապահովության համար ճիշտ կլիներ սկսել՝ քահանային ասելով.

– Ես նրա սիրած աղջիկն էի:

Այդպես էլ արեցի, ինչից հետո բոլորը ծիծաղեցին:

Հետո սկսեցի կարդալ իմ գրած գերեզմանաճառը:

– Գասի տանը մի հիանալի արտահայտություն կա, որը երկուսս էլ շատ սփոփիչ էինք համարում. «Եթե չլիներ ցավը, մենք չէինք իմանա, թե ինչ է իսկական ուրախությունը» ...

Այդպես շարունակ անհեթեթ «քաջալերանքներից» մեջբերումներ էի անում, իսկ Գասի ծնողները, իրար ձեռք բռնած, յուրաքանչյուր բառի հետ գրկում էին իրար ու գլխով անում: Թաղումները, ինչպես եզրակացրել էի, ապրողների համար են:

Նրա քրոջ՝ Ջուլիի՝ խոսելուց հետո, արարողությունն ավարտվեց Գասի Աստծու հետ միավորման մասին աղոթքով, ու ես հիշեցի, թե ինչ էր Գասն ինձ ասել «Օրանյիում»: Նա չէր հավատում երկնային դղյակներին ու տավիղներին, բայց հավատում էր մեծատառ «Ի»-ով «Ինչ-որ մի բանի»: Եվ ես աղոթելիս փորձեցի նրան պատկերացնել մեծատառ «Ի»-ով «Ինչ-որ մի տեղ», բայց նույնիսկ այդ դեպքում չէի կարողանում ինքս ինձ հավատացնել, թե ինչ-որ ժամանակ մենք

նորից միասին կլինենք: Արդեն չափից շատ մահացած մարդու գիտեի: Եվ գիտեի, որ հիմա ժամանակն ինձ համար այլ կերպ է անցնելու, նրա համար՝ այլ, ու որ ես, ինչպես այս սենյակում բոլորը, շարունակելու էինք սերեր ու կորուստներ ունենալ, իսկ նա՝ ոչ: Ու ինձ համար դա վերջնական և իրապես անտանելի ողբերգություն էր. բոլոր անթիվ-անհամար հանգուցյալների նման, նա էլ հետապնդվողից մեկընդմիշտ իջեցվել էր հետապնդող ուրվականի պաշտոնի:

Իսկ հետո Գասի փեսաներից մեկը մագնիտոֆոն բերեց ու միացրեց Գասի ընտրած երգը, «The Hectic Glow» խմբի կատարմամբ տխուր և հանգիստ մի երգ, որ կոչվում էր «Նոր գործընկերը»: Անկեղծ եմ ասում, այդ պահին շատ էի ուզում տուն գնալ: Այս մարդկանցից համարյա ոչ մեկին չէի ճանաչում ու նաև բաց ուսերիս վրա շարունակ զգում էի Փիթեր վան Հաութենի ծակող հայացքը: Բայց երգի ավարտից հետո, բոլորն սկսեցին մոտենալ ինձ ու ասել, որ շատ գեղեցիկ խոսեցի, որ շատ լավ պատարագ էր, ինչը սուտ էր: Սա հուղարկավորության արարողություն էր և ոչնչով չէր տարբերվում մյուս թաղման արարողություններից:

Նրա դիակիրները՝ հայրը, հորեղբոր թե քեռու տղաները և մի քանի ընկեր, որոնց նախկինում երբեք չէի տեսել, մոտեցան, բարձրացրին դագաղը և սկսեցին քայլել դիակառքի կողմը:

Երբ մայրս ու հայրս և ես նստեցինք մեքենան, ասացի.

– Չեմ ուզում գնալ: Հոգնել եմ:

– Հեյզել, – կշտամբեց մայրս:

– Մա, ախր էնտեղ նստելու տեղ չի լինի, ու դա հաստատ մի ամբողջ հավերժություն կտևի, իսկ ես ուժասպառ եմ:

– Հեյզել, մենք պետք է գնանք, հանուն պարոն և տիկին Ուոթերսների, – ասաց մայրս:

– Ուղղակի ...

Չգիտես ինչու, մեքենայի հետևի նստարանին նստած, ինձ այնքան փոքրիկ էի զգում: Ու մի տեսակ ուզում էլ էի փոքր լինել: Ուզում էի դառնալ մի վեց կամ յոթ տարեկան:

https://1915.info

– Լավ, – վերջապես ասացի:

Որոշ ժամանակ պարզապես անթարթ նայում էի պատուհանից դուրս: Իսկապես, չէի ուզում գնալ: Չէի ուզում տեսնել, թե ինչպես են նրան փոսն իջեցնում, այն հատվածում, որ ինքն էր իր հայրիկի հետ ընտրել: Չէի ուզում տեսնել, թե ինչպես են նրա ծնողները ծնկների վրա ընկնում ցողաթաթախ խոտի վրա, հառաչում վշտից: Չէի ուզում տեսնել Փիթեր վան Հաութենի՝ հարբեցողի փորի վրա ձգված վուշե պիջակը: Չէի ուզում լաց լինել այդ բոլոր մարդկանց առջև: Չէի ուզում մի բուռ հող նետել նրա գերեզմանի մեջ: Չէի ուզում, որ ծնողներս ստիպված լինեին կանգնել այդտեղ՝ պարզ, կապույտ երկնքի տակ, ցերեկային արևի թեք շողերի ներքո՝ մտածելով իրենց այս օրվա ու իրենց երեխայի, իմ գերեզմանի, իմ դագաղի ու իմ մի բուռ հողի մասին:

Բայց արեցի սրանք: Արեցի այդ ամենը, որովհետև մայրս ու հայրս գտնում էին, որ այդպես ճիշտ է:

...

Երբ ամեն ինչ վերջացավ, վան Հաութենը մոտեցավ ինձ և, հաստլիկ ձեռքն ուսիս դնելով, ասաց.

– Ինձ մինչև ներքև կհասցնեք, վարձով մեքենաս բլրի ներքևում եմ թողել:

Ես թոթվեցի ուսերս, և հենց հայրս անջատեց մեքենայի կողպման համակարգը, վան Հաութենն անմիջապես բացեց հետևի դուռը: Ներսում, առաջ թեքվելով, տեղավորվեց առջևի նստարանների արանքում և ասաց.

– Փիթեր վան Հաութեն, վաստակավոր վիպագիր, կիսով չափ մասնագիտացած մարդկանց հիասթափեցնելու գործում:

Ծնողներս ներկայացան: Հետո սեղմեցին նրա պարզած ձեռքը:

Ինձ շատ էր զարմացնում, որ Փիթեր վան Հաութենը կտրելանցել էր աշխարհի կեսը՝ թաղմանը մասնակցելու համար:

– Ինչպե՞ս եք նույնիսկ ..., – սկսեցի խոսել, բայց նա ընդհատեց ինձ:

– Ձեր դժոխային համացանցի միջոցով հետևել եմ Ինդիանապոլիսի մահախոսականներին, – ձեռքը վուշե կոստյումի ծոցագրպանը տանելով՝ վիսկիի մեկլիտրանոց շիշ հանեց:

– Եվ դուք վերցրիք ու տոմս գնեցիք, որ ...

Նա, պտտեցնելով բացելով 22ի կափարիչը, նորից ընդհատեց ինձ.

– Առաջին կարգի տոմսը հիսուն հազար արժեցավ, բայց ես բավականաչափ կարողություն ունեմ՝ նման բաներով ինձ երես տալու համար: Նաև թռիչքի ընթացքում անվճար խմիչք են տալիս: Եթե մտքիդ դնես, կարող ես նույնիսկ ծախսածիդ տեղը հանել:

Վան Հաութենը վիսկիից մի մեծ կում արեց, հետո, առաջ հակվելով, առաջարկեց հայրիկիս, ով ասաց.

– Ըը, շնորհակալություն, չեմ ուզում:

Հետո վան Հաութենն ինձ առաջարկեց շիշը, որը ես ընդունեցի:

– Հեյզել, – փորձեց սաստել մայրս, բայց ես վերցնելով բացեցի շիշն ու փոքր կում արեցի:

Դրանից ստամոքսումս նույն զգացողությունն առաջացավ, ինչ-որ թոքերումս էր: Շիշը վերադարձրի Վան Հաութենին, ով մի մեծ ու երկար կում արեց դրանից, հետո ասաց.

– Այսպիսով. Omnis cellula e cellula:

– Ի՞նչ:

– Քո ընկեր Ուոթերսն ու ես նամակագրական կապի մեջ էինք, և նրա վերջին ...

– Մի րոպե սպասեք, արդեն սկսել եք կարդալ ձեր երկրպագուների նամակները:

– Ոչ, նա դրանք իմ տուն էր ուղարկում, ոչ թե հրատարակչի միջոցով: Ու չէի ասի, թե նա իմ երկրպագուն էր: Նա արհամարհում էր ինձ: Ամեն դեպքում նա համառորեն պնդում էր,

https://1915.info

https://1915.info
որ իմ վատ պահվածքը կներվի, եթե գամ նրա թաղմանն ու պատմեմ քեզ, թե ինչ եղավ Աննայի մայրիկի հետ: Եվ ահա ես այստեղ եմ ու իմ պատասխանը սա է. «Omnis cellula e cellula»:

– Ինչ, – նորից հարցրի:

– Omnis cellula e cellula, – կրկնեց, – բոլոր բջիջներն առաջանում են այլ բջիջներից: Յուրաքանչյուր բջիջ ծագում է նախորդ բջջից, որը ծագել էր մեկ այլ բջջից: Կյանքը ծագում է կյանքից: Կյանքը կյանք է ծնում, որը նույնպես կյանք է ծնում, որը կյանք է ծնում, որը կյանք է ծնում:

Մենք բլրից ներքև իջանք:

– Լավ, – ասացի:

Հիմա սրա տրամադրությունը չունեի: Փիթեր վան Հաութենը չպետք է զավթեր Գասի թաղումը: Ես դա թույլ չէի տա:

– Շնորհակալ եմ, – ասացի, – կարծես թե արդեն բլրի ներքևն ենք հասել:

– Իսկ բացատրությունը չե՞ս ուզում լսել:

– Ոչ, – ասացի, – շնորհակալ եմ, պետք չէ: Իմ կարծիքով, դուք պաթետիկ հարբեցող եք, որ արտասովոր բաներ է ասում՝ ուշադրություն գրավելու համար, ինչպես իսկական մեծացած-փոքրացած տասնմեկ տարեկան երեխա, ու ես խղճում եմ ձեզ: Բայց, միևնույն է, դուք արդեն էն մարդը չեք, որ «Արքայական վիշտն» էր գրել: Ուրեմն, եթե նույնիսկ շատ ուզենաք, չեք կարող դրա շարունակությունը ստեղծել: Համենայն դեպս, շնորհակալություն: Ձեզ բարի կյանք:

– Բայց ...

– Խմիչքի համար էլ շնորհակալություն, – ասացի, – իսկ հիմա դուրս եկեք մեքենայից:

Նա կշտամբված տեսք ուներ: Հայրս կանգնեցրել էր մեքենան: Մի քանի րոպե այդպես կանգնած մնացինք Գասի գերեզմանից քիչ ներքև, մինչև վան Հաութենը բացեց դուռը ու, վերջապես լուռ, դուրս եկավ մեքենայից:

Երբ մենք հեռանում էինք, հետևի պատուհանից նայում էի նրան: Նա նորից կում արեց խմիչքից ու շիշը բարձրացրեց իմ

ուղղությամբ՝ կարծես կենացս խմելով: Նրա աչքերն այնքան տխուր էին: Ու, անկեղծ ասած, մի տեսակ վատ զգացի նրա հետ այդպես վարվելու համար:

Ժամը վեցի կողմերը վերջապես տուն հասանք: Ես լրիվ ուժասպառ էի: Ուզում էի քնել, բայց մայրս ստիպեց պանրով մակարոն ուտել՝ թույլ տալով գոնե անկողնում ուտեմ: Մի քանի ժամ քնեցի ՕԵՍ-ով: Արթնանալը սարսափելի էր, որովհետև մի պահի, երբ դեռ քունը գլխիս էր, ինձ թվաց, թե ամեն ինչ կարգին է, իսկ հետո տեղի ունեցածը նոր ուժով հարվածեց ինձ: Մայրս անջատեց ՕԵՍ-ը: Ինքս ինձ միացրի շարժական բալոնին ու, ոտքերս քարշ տալով, գնացի լոգարան՝ ատամներս լվանալու:

Ատամներս լվանալու ընթացքում, ինքս ինձ հայելում զննելով, մտածում էի մեծահասակների երկու տեսակի մասին: Կային Փիթեր վան Հաութեններ՝ թշվառ արարածներ, որ չափչփչում էին աշխարհը՝ փնտրելով ինչ-որ մեկի, ում կարող են ցավ պատճառել: Ու կային նաև իմ ծնողների նման մարդիկ, որ զոմբիացված ման էին գալիս աշխարհում՝ անելով, ինչ պետք է անեին՝ նույն ձևով շարունակելու համար:

Այս ապագաներից ոչ մեկն էլ ինձ համար առանձնապես ցանկալի չէր: Ինձ թվում էր, թե արդեն տեսել էի աշխարհի մաքուր ու լավ բոլոր բաները ու սկսում էի կասկածել, որ եթե նույնիսկ մահը մեր ճանապարհին չկանգներ, նման սերը, որ ես ու Օգոստոսն էինք իրար հանդեպ տածում, միևնույն է, երկար կյանք չէր կարող ունենալ: Եվ ինչպես մի բանաստեղծ էր ասում. «Լուսաբացը տեղը զիջում է ցերեկվան: Ոչ մի ոսկե բան հարատև չէ»:

Ինչ-որ մեկը թակեց լոգարանի դուռը:

– Զբաղված է, – ասացի:

– Հեյզել, – ասաց հայրս, – կարո՞ղ եմ ներս մտնել:

Ոչինչ չպատասխանեցի, բայց քիչ հետո բացեցի դուռը: Նստեցի փակ զուգարանակոնքի վրա: Ինչո՞ւ պետք է շնչելն այսքան ծանր աշխատանք լինի: Հայրս չոքեց կողքիս, բռնեց

գլուխս ու սեղմեց իր անրակին՝ ասելով.

– Շատ եմ ցավում, որ Գասը մահացել է:

Նրա վերնաշապիկը կարծես շնչահեղձ աներ ինձ, բայց, միևնույն ժամանակ ինձ դուր էր գալիս այդպես ամուր գրկված լինելը, ամուր սեղմված նրա կրծքին՝ զգալով հանգստացնող հայրական բույրը: Ասես բարկացած լիներ կամ նման մի բան, բայց ինձ դուր էր գալիս դա, որովհետև ես էլ էի բարկացած:

– Լրիվ ապուշություն է,– ասաց,– էդ ամեն ինչը լրիվ էշություն է. ողջ մնալու ութսուն տոկոսանոց հավանականություն, ու նա քսան տոկոսի մեջ է: Հիմարություն: Էնքան պայծառ երեխա էր: Լրիվ էշություն է: Ուղղակի ատում եմ դա: Բայց նրան սիրելը բացառիկ հաճույք էր, չէ՞:

Նրա վերնաշապիկին հպված՝ գլխով արեցի:

– Հիմա որոշակի պատկերացում ունես, թե ես ինչ եմ զգում քո հանդեպ, – ասաց:

Օ՜, իմ սիրելի ծերուկ: Միշտ գիտեր, թե ինչ ասեր:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Մի քանի օր հետո, կեսօրի կողմերը վեր կացա և գնացի Այզեքի տուն: Նա ինքը բացեց դուռը:

– Մայրս Գրեհեմին կինո է տարել, – ասաց:

– Ուզում եմ ինչ-որ բան անենք:

– Իսկ կարո՞ղ է էդ ինչ-որ բանը բազմոցին նստած կույրերի համակարգչային խաղ խաղալը լինել:

– Ըհը, իմ մտքով էլ էր դա անցնում:

Այսպիսով, մի քանի ժամ անցկացրինք՝ միասին խոսելով էկրանի հետ, խարխափելով անտեսանելի՝ առանց լույսի նույնիսկ մի շողի լաբիրինթոսային քարայրում: Անկասկած, խաղի ամենազվարճալի պահը համակարգչին ծիծաղաշարժ զրույցի մեջ ներքաշելու մեր փորձերն էին:

Ես. – Ձեռքդ դիր քարայրի պատին:

Համակարգիչ. – Դուք ձեռքը դնում եք քարայրի պատին:

Պատը խոնավ է:

Այզեք. – Լիզիր պատը:

Համակարգիչ. – Հրահանգն անհասկանալի է: Խնդրում եմ, կրկնեք:

Այզեք. – Դոմփիր խոնավ պատը:

Համակարգիչ. – Փորձում եք ցատկել: Հարվածում եք ձեր գլուխը:

Այզեք. – Ոչ թե ցատկիր, այլ դոմփիր:

Համակարգիչ. – Հրահանգն անհասկանալի է:

Այզեք. – Այ ընկեր, շաբաթներով մենակ թափառում եմ

էս մութ քարայրում, պետք է մի ձև լիցքաթափվեմ: Դոմփիր քարայրի՛ պատը:

Համակարգիչ. – Փորձում եք ցատ...

Ես. – Առաջամասդ մխիր պատի մեջ:

Համակարգիչ. – Հրահանգն անհաս...

Այզեք. – Քնքուշ սիրով զբաղվիր քարայրի հետ:

Համակարգիչ. – Հրահանգն անհաս...

Ես. – Լավ, ձախ ճանապարհով գնա:

Համակարգիչ. – Գնում եք ձախ ճանապարհով: Անցուղին ցածրանում է:

Ես. – Չորեքթաթ գնա:

Համակարգիչ. – Չորեքթաթ գնում եք հարյուր մետր: Անցուղին ավելի է ցածրանում:

Ես. – Սողալով գնա:

Համակարգիչ. – Սողալով գնում եք երեսուն մետր: Ձեր մարմնի վրայով ջրի բարակ շիթ է հոսում: Հասնում եք մանրաքարերի մի կույտի, որոնք փակում են ճանապարհը:

Ես. – Իսկ հիմա կարո՞ղ եմ քարայրը դոմփել:

Համակարգիչ. – Առանց կանգնելու չեք կարող ցատկել:

Այզեք. – Աշխարհն առանց Օգոստոսի ինձ դուր չի գալիս:

Համակարգիչ. – Հրահանգն անհաս...

Ես. – Ինձ էլ... Դադար:

Նա կառավարման վահանակը նետեց բազմոցին՝ մեր արանքում, ու հարցրեց.

– Իսկ կարո՞ղ է իմանաս՝ դա ցավո՞ւտ է, թե՞ ոչ:

– Երևի շունչը սկսել է կտրվել, – ենթադրեցի, – ու վերջի-վերջո կորցրել է գիտակցությունը, էնքան էլ հաճելի չի հնչում: Հա, մահանալն անդուր բան է:

– Ըհը, – համաձայնեց Այզեքը:

Երկար լռելուց հետո ասաց.

– Ուղղակի էնքան անհավատալի է:

– Բայց անընդհատ տեղի է ունենում:

https://1915.info

– Ջղայնացած ես երևում:

– Հա, – ասացի:

Երկար ժամանակ ուղղակի լուռ նստած էինք, ինչը հիանալի էր: Ես մտքով գնացել էի հետ՝ ամենասկիզբ, երբ «բառիս բուն իմաստով Հիսուսի սրտում» Գասն ասաց մեզ, թե վախենում է մոռացությունից: Ես էլ ասացի, որ նա վախենում էր մի համընդհանուր ու անխուսափելի երևույթից, և թե իրականում խնդիրը ոչ թե տառապանքի կամ մոռացության, այլ դրանց անբարո իմաստազրկության, տառապանքի բացարձակ անմարդկային նիհիլիզմի մեջ է: Մտաբերեցի հորս ասածը, թե տիեզերքը ցանկանում է, որ իրեն նկատեն: Բայց մենք էլ ուզում ենք, որ տիեզերքը նկատի մեզ, թքած չունենա մեզ վրա, նրան հուզի, հետաքրքրի մեր ապրած կյանքը, ոչ թե բանական կյանքի հավաքական գաղափարը, այլ՝ մեզնից յուրաքանչյուրի անհատական կյանքը:

– Գիտեմ, Գասն իսկապես սիրում էր քեզ, – ասաց Այզեքը:

– Գիտեմ:

– Ոչ մի րոպե բերանը չէր փակում, անընդհատ քո մասին էր խոսում:

– Գիտեմ:

– Դա նյարդայնացնում էր:

– Դե, էդքան էլ չէ:

– Իսկ էն իր գրածը տվեց քեզ:

– Ինչը:

– Էն ձեր սիրած գրքի շարունակությունն էր գրում, ինչ էր անում:

Այզեքի կողմը կտրուկ շրջվելով՝ բացականչեցի.

– Ինչ ...

– Ասում էր, թե քեզ համար ինչ-որ բան է գրում, բայց իրենից էնքան էլ լավ գրող դուրս չի գալիս:

– Երբ է ասել դա:

– Կոնկրետ չեմ հիշում: Ամստերդամից գալուց հետո:

– Կոնկրետ երբ: Փորձիր հիշել, – համառեցի:

«Ավարտելու հնարավորություն չի՞ ունեցել: Թե՞ ավարտել է ու թողել համակարգչում կամ ուրիշ մի տեղ»:

– Հը՛մ, – մտածկոտ ասաց Այզեքը, – հը՛մ, չգիտեմ: Կարծեմ, էստեղ էինք խոսում դրա մասին: Նա էստեղ էր եկել, ու մենք խաղում էինք իմ էլեկտրոնային նամակները կարդացող սարքի հետ: Հենց էդ ժամանակ մի նամակ էի ստացել տատիկից: Կարող ենք սարքի վրա նայել, եթե ուզում ես:

– Այո, այո: Ո՞ւր է էդ սարքը:

Նա դրա մասին մեկ ամիս առաջ էր խոսել: Մեկ ամիս: Ճիշտ է, ոչ այնքան լավ անցկացրած, բայց դե մի ամբողջ ամիս: Դա բավական էր գոնե ինչ-որ մի բան գրած լինելու համար: Նրանից կամ, թեկուզ, նրա կողմից դեռ ինչ-որ բան էր մնացել, ու ես անպայման պետք է գտնեի դա:

– Ես նրանց տուն եմ գնում, – ասացի Այզեքին:

Արագ վազեցի մեքենայի մոտ, թթվածնի սայլակը վեր բարձրացնելով՝ դրեցի ուղևորական նստատեղին: Հետո ինքս նստելով՝ գործի գցեցի շարժիչը: Նվագարկիչից հիփ-հոփ երաժշտություն հնչեց, և երբ ձգվեցի՝ ռադիոալիքը փոխելու, հետևից ինչ-որ մեկն սկսեց ռեփ երգել՝ շվեդերենով:

Հետ շրջվեցի ու Փիթեր վան Հաութենին տեսնելով՝ ճչացի:

– Ներողություն, չէի ուզում վախեցնել, – երաժշտությունից բարձր գոչեց Փիթեր վան Հաութենը:

Նրա հագին դեռ այն նույն՝ հուղարկավորության ժամանակ հագած կոստյումն էր, արդեն գրեթե մի շաբաթ էր անցել: Նրանից այնպիսի հոտ էր փչում, ասես ալկոհոլ էր քրտնում:

– Կարող ես քեզ պահել ձայնասկավառակը, – ասաց, – Սնուքն է՝ շվեդական գլխավոր ...

– Աաաաաաաաաաաաաա՜, դուրս կորեք իմ մեքենայից, – բղավեցի՝ անջատելով նվագարկիչը:

– Որքան գիտեմ, սա մայրիկիդ մեքենան է, – առարկեց, – բացի այդ՝ մեքենան կողպված չէր:

– Օ՜, Աստվա՛ծ իմ, դուրս եկեք մեքենայից, թե չէ ինը-մեկ-մեկ կզանգեմ: Ո՞րն է քո խնդիրը, ա՛յ ընկեր:

– Եթե միայն մեկը լիներ, – մտախոհ ասաց: – Ես այստեղ եմ՝ պարզապես ներողություն խնդրելու համար: Դու շատ ճիշտ էիր՝ ավելի վաղ նշելով, որ ես պաթետիկ, ալկոհոլից կախվածություն ունեցող փոքր մարդ եմ: Ես ընդամենը մեկ ծանոթ ունեի, որ ինձ հետ ժամանակ էր անցկացնում, միայն որովհետև վճարվում էր դրա համար: Ու ամենավատն այն է, որ նա էլ այն օրվանից անդարձ հեռացավ՝ ամբողջովին մենակ թողնելով ինձ՝ մի հազվագյուտ էակի, որ նույնիսկ կաշառքով չի կարողանում ինչ-որ մեկի ընկերակցությանն արժանանալ: Այդ ամենը ճիշտ է, Հեյզել: Այդ ամենը ու դեռ մի բան էլ ավելի:

– Լավ, – ասացի:

Նրա այս ճառն ավելի հուզիչ կստացվեր, եթե բառերը լողզելով չխոսեր:

– Դու ինձ Աննային ես հիշեցնում:

– Ես շատերին եմ շատ մարդկանց հիշեցնում, – պատասխանեցի, – բայց իսկապես հիմա պետք է գնամ:

– Դե, քշիր, ինչի՞ ես սպասում:

– Դուրս եկեք:

– Ոչ: Դու ինձ Աննային ես հիշեցնում, – կրկնեց:

Մեկ վայրկյան հետո մեքենան ետընթաց դուրս բերեցի բակից: Չէի կարողանում նրան դուրս հանել, ու պարտադիր էլ չէր, որ ես դա անեի: Կգնայի Գասենց տուն, ու Գասի ծնողներն էլ նրան դուրս կվռնդեին:

– Դու, իհարկե, գիտես, – ասաց վան Հաութենը, – Անտոնիետտա Մեոյին:

– Ըը, ոչ, – պատասխանեցի:

Միացրի նվագարկիչը: Բարձր հնչեց շվեդական հիփ հոփը, բայց վան Հաութենն ավելի բարձր բղավեց.

– Շուտով նա կարող է դառնալ ամենաերիտասարդ չնահատակված սուրբը՝ դասվելով Կաթոլիկ եկեղեցու սրբերի շարքում: Նա էլ էր հիվանդ հենց նույն քաղցկեղով, որից տառապում էր պրն Ուոթերսը, ոսկրի սարկոմայով: Նրա աջ

ոտքը հեռացրել էին: Շատ էր տառապում սաստիկ ցավերից: Ու երբ վեց տարեկան ծաղկուն հասակում Անտոնիետտան տանջամահ էր լինում քաղցկեղից, նա ասել է հորը. «Ցավը գործվածք է: Որքան ամուր է և ուժեղ, այնքան մեծ է նրա արժեքը»: Միթե դա ճիշտ է, Հեյզել:

Ես նայում էի հայելու մեջ նրա արտացոլքին:

– Ոչ, – երաժշտությունից բարձր բղավեցի, – դա հիմարություն է:

– Բայց չէիր ուզենա, որ դա ճիշտ լիներ, – նա էլ բղավելով հարցրեց:

Անջատեցի երաժշտությունը:

– Ցավում եմ, որ փչացրի ձեր ճանապարհորդությունը: Դուք չափազանց երիտասարդ էիք: Դուք ...

Նա փղձկաց. կարծես թե իրավունք ուներ Գասի վրա լաց լինելու: Վան Հաութենը պարզապես անհաշիվ սգվորներից մեկն էր, որ բացարձակ նրան չէր ճանաչում՝ ևս մի ուշացած լացուկոծ նրա սոցէջի պատին:

– Դուք չեք փչացրել մեր ճանապարհորդությունը, ինքնահավան տականք: Մենք հրաշալի ժամանակ ենք անցկացրել:

– Ես փորձում եմ, – ասաց: – Երդվում եմ, որ փորձում եմ:

Ու այդ պահին գլխի ընկա, որ Փիթեր վան Հաութենի ընտանիքի անդամներից մեկը մահացել էր: Ազնվությունը, որով նա գրել էր քաղցկեղով հիվանդ երեխաների մասին, փաստը, որ Ամստերդամում ինձ տեսնելով՝ առաջին հարցը, որ տվեց այն էր, թե արդյոք միտումնավոր եմ Աննայի պես հագնվել, նրա զզվելի պահվածքը իմ ու Օգոստոսի հանդեպ, ցավոտ հարցը՝ ցավի սաստկության ու նրա արժեքավորության միջև եղած կապի վերաբերյալ: Ու հիմա, մեքենայի հետևի նստատեղին փռված, խմում էր այդ ծերուկը, որ տարիներով հարբած էր եղել: Ես մտաբերեցի վիճակագրությունը, որը, երանի թե, երբեք չիմանայի. երեխայի մահից հետո ամուսնությունների կեսն ավարտվում է հենց այդ նույն տարում: Հետ նայեցի վան Հաութենին: Անցնում էինք քոլեջի մոտով: Մեքենան

կանգնեցնելով կայանված ավտոմեքենաների շարքի վերջում՝ հարցրի.

– Դուք երեխա՞ եք կորցրել:

– Այո, դստերս, – ասաց, – ութ տարեկան էր: Շատ գեղեցիկ էր տառապում, բայց երբեք սրբերի շարքում չի դասվի:

– Լեյկիմիայո՞վ էր հիվանդ, – հարցրի:

Գլխով արեց:

– Աննայի նման, – ասացի:

– Այո, շատ նման:

– Ամուսնացա՞ծ էիք:

– Ոչ, դե, այսինքն ոչ այն ընթացքում, երբ նա մահանում էր: Ես անտանելի էի դարձել նրան կորցնելուց դեռ շատ առաջ: Վիշտը չի փոխում, Հեյզել, այլ բացահայտում է քեզ:

– Դուք նրա հե՞տ էիք ապրում:

– Ոչ, սկզբում՝ ոչ, չնայած վերջում նրան բերեցինք Նյու Յորք, որտեղ ես էի ապրում: Մի շարք էքսպերիմենտալ կտտանքների համար, որոնք ավելի թշվառ դարձրին նրա ապրած վերջին օրերը, բայց ոչ էլ ավելացրին դրանց քանակը:

Մի վայրկյան հետո ասացի.

– Եվ ուրեմն, դուք նրան ասես երկրորդ կյանք տվեցիք, որտեղ նա հասցրեց դեռահաս դառնալ:

– Կարծում եմ՝ դա արդար գնահատական է, – ասաց: Իսկ հետո արագ ավելացրեց. – ենթադրում եմ, որ լսած կլինես Ֆիլիփպա Ֆութի «վագոնիկի խնդիրը» մտային գիտափորձի մասին:

– Իսկ հետո ես հայտնվում եմ ձեր տանը՝ հագնված մի աղջկա նման, որ հույս ունեիք, թե կապրի այդքան, կհասնի այդ տարիքին: Եվ դա ձեզ երևի հանկարծակիի բերեց:

– Կառավարումը կորցրած մի վագոնիկ ընթանում է ռելսերով, – ասաց:

– Ինձ ընդհանրապես չի հետաքրքրում ձեր հիմար մտային գիտափորձը, – ընդհատեցի նրան:

– Դա իմը չէ, Ֆիլիփպա Ֆութինն է:

https://1915.info

– Ոչ էլ նրանն է հետաքրքրում, – ասացի:

– Նա չէր հասկանում, թե ինչու է դա տեղի ունենում, – ասաց: – Ես պետք է ասեի նրան, որ շուտով մահանալու է: Նրա սոցաշխատողն էր գտնում, թե պետք է ասեմ այդ մասին: Ես պետք է ասեի նրան, որ մահանալու է, և ասացի, թե գնալու է երկնքում ապրելու: Ու նա հարցրեց, թե ես լինելո՞ւ եմ այնտեղ, ես ասացի՝ դեռ ոչ: Բայց ինչ-որ մի օր անպայման գնալու եմ իր մոտ, չէ՞, հարցրեց նա, ու ես խոստացա՝ այո, իհարկե, շատ շուտով: Նրան ասացի, որ այնտեղ՝ վերևում, մի մեծ ընտանիք ունենք, ովքեր մինչև իմ գնալը հոգ կտանեն նրա մասին: Իսկ հետո նա հարցրեց, թե ե՞րբ եմ գնալու այնտեղ՝ իր մոտ, ասացի՝ շատ շուտով: Քսաներկու տարի առաջ:

– Ցավում եմ:

– Ես էլ:

Քիչ անց հարցրի.

– Իսկ ի՞նչ եղավ նրա մայրիկի հետ:

Նա ժպտաց:

– Դեռ ուզում ես ինձնից կորզել պատմության շարունակությո՞ւնը, այ փոքրիկ առնետ:

Ես էլ ժպտացի նրան.

– Տուն գնացեք, սթափվեք: Եվս մի վեպ գրեք: Զբաղվեք մի բանով, որը ձեզ մոտ լավ է ստացվում: Բոլորի բախտը էդպես չի բերում, որ մի բանից էդքան լավ լինեն:

Նա երկար ժամանակ հայելու միջով նայում էր ինձ:

– Լավ, – վերջապես ասաց, – այո, ճիշտ ես: Ճիշտ ես:

Բայց նույնիսկ դա ասելով՝ նա հանեց համարյա դատարկ վիսկիի շիշը, խմեց, հետո նորից փակեց շիշը և բացեց դուռը:

– Հաջողություն, Հեյզել:

– Թեթև ապրեք, Վան Հաութեն:

Նա նստեց մեքենայի հետևի մայթեզրին: Հետադարձ տեսանելիության հայելու միջով հետևում էի նրա աստիճանաբար հեռացող պատկերին: Նա հանեց շիշը, մի պահ թվաց, թե ուզում է թողնել մայթեզրին, բայց հետո նորից մի մեծ կում արեց:

Ինդիանապոլիսում շոգ օր էր, օդը թանձր էր ու կանգնած, կարծես ամպի մեջ լինեինք: Ինձ համար դա օդի ամենավատ տեսակն էր: Ինքս ինձ համոզեցի, թե ընդամենն օդից է, որ բակից մինչև Գասենց տան դուռն ընկած ճանապարհն ինձ անվերջանալի է թվում:

Վերջապես տեղ հասնելով՝ դռան զանգը տվեցի: Գասի մայրը բացեց դուռը:

– Օհ, Հեյզել, – ասաց ու լաց լինելով փաթաթվեց՝ ամբողջովին իր թևերի մեջ առնելով ինձ:

Նա ինձ ստիպեց իր և Գասի հոր հետ մի քիչ սմբուկով լազանյա[1] ուտել: Երևի շատերն էին նրանց համար ուտելիք և այլ բաներ բերել:

– Ինչպե՞ս ես:

– Կարոտում եմ նրան:

– Ահ, այո:

Չգիտեի՝ ինչ ասեմ: Ուղղակի ուզում էի ներքև իջնել ու գտնել Օգոստոսի գրածը: Դրան գումարած, շատ էի նեղվում սենյակում տիրող լռությունից: Ուզում էի, որ խոսեին իրար հետ, սփոփեին միմյանց, իրար ձեռք բռնեին ու նման բաներ: Բայց նրանք պարզապես նստել էին այնտեղ, լազանյայի փոքր կտորներ էին ուտում և նույնիսկ իրար վրա չէին նայում:

– Երկնքում հրեշտակի կարիք կար, – քիչ հետո ասաց հայրը:

– Գիտեմ, – ասացի:

Հետո ներս մտան Գասի քույրերը՝ իրենց երեխաների հետ: Վեր կացա, գրկեցի երկու քույրերին, հետո սկսեցի դիտել խոհանոցով մեկ վազող երեխաներին, որ ներս բերեցին անչափ հարկավոր աղմուկն ու շարժումը. ցատկոտող, իրար բախվող գրգռված մոլեկուլներ, որ գոչում էին.

– Դու ես բռնողը:

– Չէ, դու ես:

---

1 Տարբեր միջուկներով լցոնված, իրար վրա շարված մակարոնի լայն, տափակ շերտերից պատրաստված իտալական ճաշատեսակ:

– Չէ, ես էի, բայց հետո ես քեզ բռնեցի:

– Դու չես բռնել ինձ, չես կպել ինձ:

– Դե լավ, ուրեմն հիմա բռնեցի:

– Չէ, այ հիմարի գլուխ, հիմա խաղի մեջ չենք:

– Դանիե՛լ, եղբորդ հիմարի գլուխ մի ասա:

– Մա, եթե չի կարելի էդ բառն ասել, ինչո՞ւ ես դու ասում. «հիմարի գլուխ, հիմարի գլուխ»:

Ու հետո բոլորը խմբով սկսեցին երգել.

– Հիմարի գլուխ, հիմարի գլուխ, հիմարի գլուխ ...

Իսկ սեղանի մոտ Գասի ծնողներն արդեն իրար ձեռք էին բռնել, որից ես ինձ մի քիչ ավելի լավ զգացի:

– Այզեքն ասել է ինձ, որ Գասն ինչ-որ բան էր գրում ինձ համար:

Երեխաները դեռ երգում էին իրենց «հիմարի գլուխ» երգը:

– Կարող ենք փնտրել համակարգչում, – առաջարկեց նրա մայրը:

– Վերջին շաբաթներին նա էնքան էլ չէր օգտագործում համակարգիչը, – ասացի:

– Ճիշտ է: Չգիտեմ էլ՝ դա բերել ենք վերև, թե ոչ: Այն դեռ ներքնահարկո՞ւմ է, Մարկ:

– Գաղափար չունեմ:

– Ըը՛մ, լավ, կարող եմ ..., – ասացի՝ գլխով ցույց տալով ներքնահարկի դուռը:

– Մենք դեռ պատրաստ չենք դրան, – ասաց հայրը, – բայց, իհարկե այո, Հեյզել: Իհարկե, կարող ես:

Իջա ներքև, անցա չհավաքած անկողնու, հեռուստացույցի առջև դրված խաղաթռռների մոտով: Նրա համակարգիչը մինչև հիմա միացած էր: Թխկթխկացրի մկնիկի վրա՝ էկրանը վերականգնելու համար, ու սկսեցի փնտրել խմբագրված վերջին ֆայլերը: Վերջին ամսվանից ոչինչ չկար: Ամենավերջինը Թոնի Մորրիսոնի «Ամենակապույտ աչքը» վեպի վերլուծությունն էր:

Միգուցե ձեռքով էր գրել: Մոտեցա գրադարակներին՝

ինչ-որ մի օրագիր կամ նոթատետր փնտրելով: Ոչ մի բան չգտա: Թերթեցի «Արքայական վշտի» նրա օրինակը. նույնիսկ մի նշում չէր արել դրա մեջ:

Հետո մոտեցա նրա մահճակալի մոտի սեղանին: «Անսպառ Մեյհեմ»՝ «Լուսաբացի գինը» մատենաշարի իններորդ գիրքը դրված էր սեղանի վրա՝ լուսամփոփի կողքին: 138-րդ էջի ծայրը ծալված էր: Նա այդպես էլ չէր հասցրել մինչև վերջ կարդալ:

– Գաղտնիքը բացեմ, Մեյհեմը կենդանի է մնում, – ասացի բարձրաձայն. մեկ էլ տեսար՝ լսում էր ինձ:

Հետո սողոսկեցի նրա չհավաքած անկողին, բոժոժի պես փաթաթվեցի նրա վերմակով՝ պարուրելով ինձ նրա բույրով:

Հանեցի կանյուլաս, որ ավելի լավ զգամ նրա բույրը, որն աստիճանաբար մարում-հեռանում էր, նույնիսկ երբ դեռ պառկած էի այնտեղ: Կուրծքս այրվում էր, արդեն չէի էլ կարողանում տարբերակել ցավերը:

Մի քիչ նստեցի անկողնում, հետո ետ դրեցի կանյուլան ու նախքան աստիճաններով բարձրանալը, որոշ ժամանակ տրամադրեցի շնչելուն: Ի պատասխան նրա ծնողների սպասողական հայացքների՝ պարզապես բացասաբար տարուբերեցի գլուխս: Երեխաներն արագ սլացան կողքովս: Գասի քույրերից մեկը, նրանց չէի տարբերում, ասաց.

– Մա, ուզո՞ւմ ես նրանց զբոսայգի տանեմ:

– Ոչ, ոչ, թող մնան:

– Գիտե՞ք որտեղ կարող էր դրած լինել իր նոթատետրը: Օրինակ՝ հիվանդանոցի մահճակալի մոտ կամ ուրիշ մի տեղ:

«Հոսփիսն» արդեն ետ էր տարել հիվանդանոցի մահճակալը:

– Հեյզել, – ասաց նրա հայրը, – դու էլ մեզ հետ ամեն օր էնտեղ էիր: Դու... նա երկար ժամանակով մենակ չէր մնում, քաղցրիկս: Դժվար թե ինչ-որ բան գրելու ժամանակ ունեցած լիներ: Գիտեմ, որ ուզում ես ... Ես էլ եմ դա ուզում: Բայց հիմա նրանից հաղորդագրությունները միայն վերևից են գալիս,

Հեյզել, – մատը վեր տնկեց առաստաղին, կարծես թե Գասը սավառնում էր հենց տան վերևում:

Գուցե և իրոք այնտեղ էր: Չգիտեմ: Այնուամենայնիվ, ես նրա ներկայությունը չէի զգում:

– Ըհը, – ասացի:

Խոստացա մի քանի օրից կրկին այցելել նրանց:

Բայց էլ երբեք կարգին չզգացի նրա բույրը:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Երեք օր անց՝ ԳՀ (Գասից հետո) տասնմեկերորդ օրը, առավոտյան նրա հայրը զանգեց: Դեռ միացած էի ԵՕՍ-ին, այդ պատճառով չպատասխանեցի, բայց հեռախոսի առաջին ծնգոցից հետո լսեցի նրա թողած ձայնային հաղորդագրությունը.

«Հեյզել, բարև: Գասի հայրիկն է: Ես մի, ըրը, սև «Մոլեսկին» նոթատետր եմ գտել ամսագրերի դարակում, որը հիվանդանոցի մահճակալի կողքին էր: Դարակը բավականին մոտ էր, կարծում եմ՝ ձեռքը կհասներ դրան: Ցավոք, ոչ մի բան գրված չէ նոթատետրում: Բոլոր էջերը մաքուր են: Բայց առաջին, երևի՝ երեք կամ չորս էջ, մի խոսքով, առաջին մի քանի էջը պոկված է նոթատետրից: Մենք ամբողջ տնով մեկ փնտրեցինք, բայց էդպես էլ չգտանք էդ էջերը: Ու չգիտեմ, թե սրանից ինչ կարելի է եզրակացնել: Բայց միգուցե էդ էջերը հենց Այզեքի ասածն են: Ինչևէ, հուսով եմ, որ լավ ես: Մենք ամեն օր աղոթում ենք քեզ համար, Հեյզել: Լավ, ցտեսություն»:

«Մոլեսկին» նոթատետրից պոկված երեք կամ չորս էջ, որ այլևս Օգոստոս Ուոթերսի տանը չեն: Որտեղ կարող էր թողած լինել դրանք ինձ համար: «Գետնատարած ոսկորների՞» մոտ: Ոչ, նա շատ թույլ էր այնտեղ հասնելու համար:

«Բառիս բուն իմաստով Հիսուսի սրտո՞ւմ»: Միգուցե հենց այնտեղ էր թողել ինձ համար՝ իր վերջին լավ օրը:

https://1915.info

Այսպիսով, հաջորդ օրը, աջակցության խմբակ գնալու համար, տնից քսան րոպե շուտ դուրս եկա: Սկզբում գնացի Այզեքի հետևից, հետո, մեքենայի ապակիներն իջեցրած, միասին ուղղվեցինք «բառիս բուն իմաստով Հիսուսի սիրտ»՝ լսելով «The Hectic Glow» խմբի թողարկած նոր ալբոմը, որը Գասը երբեք չէր լսելու:

Վերելակով իջանք: Այզեքին տարա «վստահության շրջանում» դրված մի աթոռի մոտ ու հետո սկսեցի դանդաղ շրջել «բառիս բուն իմաստով Հիսուսի սրտում»: Ամեն տեղ նայեցի՝ աթոռների տակ, ամբիոնի շուրջը, որի հետևում կանգնած իմ գերեզմանաձառն էի ասել, հյուրասիրությունների սեղանիկի տակ, կիրակնօրյա դպրոցի սաների, Աստծու սերը պատկերող, նկարներով լեփ-լեցուն հայտարարությունների տախտակի վրա: Ոչ մի տեղ չկար: Բացի նրա տնից՝ սա միակ վայրն էր, որտեղ եղել էինք միասին նրա վերջին օրերին, ու կամ էջերն այստեղ չէին, կամ էլ ինչ-որ տեղ բաց էի թողել: Միգուցե դրանք հիվանդանոցո՞ւմ էր թողել: Եթե այո, ուրեմն նրա մահից հետո հաստատ գցած կլինեին:

Երբ նստեցի Այզեքի կողքին, շունչս լրիվ կտրվում էր: Փաթրիքի ամորձատվածության մասին ամբողջ ողջույնի ուղերձը նվիրեցի թոքերիս համոզելուն, որ ամեն ինչ լավ է, որ նրանք կարող են շնչել, ու որ թթվածինը հերիքում է իրենց: Դրանցից հեղուկը Գասի մահից ընդամենը մեկ շաբաթ առաջ էր հեռացվել: Պառկած դիտում էի, թե ինչպես է սաթագույն քաղցկեղային հեղուկը խողովակի միջով դուրս ծորում միջիցս, բայց և այնպես թոքերս, կարծես թե, արդեն նորից լցվել էին: Այնքան էի կենտրոնացել ինքս ինձ շնչել համոզելու վրա, որ սկզբից չլսեցի, երբ Փաթրիքն անունս տվեց:

Զգաստանալով՝ հարցրի.

– Այո՞:

– Ինչպե՞ս ես:

– Լավ եմ, Փաթրիք: Մի քիչ շունչս է կտրվում:

https://1915.info

– Ցանկանում ես Օգոստոսի մասին քո հիշողություններով կիսվել մեր խմբի հետ:

– Չէ, ես ուղղակի մեռնել եմ ուզում, Փաթրիք: Իսկ դու երբևիցե մեռնելու ցանկություն ունեցել ես:

– Այո, – ասաց Փաթրիքը՝ առանց սովորականի պես դադար տալու, – այո, իհարկե: Եվ, ինչու չես մահանում:

Սկսեցի մտածել դրա մասին: Իմ հին, հերթապահ պատասխանը սա էր. ուզում էի ողջ մնալ ծնողներիս համար, որովհետև իմ մահից հետո նրանք ոչնչացված ու աներեխա կմնային: Դա հիմա էլ, որոշ առումով, ճիշտ էր, բայց միայն դա չէր պատճառը:

– Չգիտեմ, – ասացի:

– Հույս ունես, որ մի օր կառողջանաս:

– Ոչ, – ասացի, – դա չէ պատճառը: Իսկապես չգիտեմ: Այզեք:

Հոգնեցի խոսելուց:

Այզեքն սկսեց խոսել իսկական սիրո մասին: Չէի կարող նրանց ասել, թե ինչ եմ մտածում, որովհետև դա մի տեսակ անմտություն էր թվում: Մտածում էի տիեզերքի նկատվելու ցանկության մասին, ու որ ես պետք է հնարավորինս մեծ ուշադրություն հատկացնեմ դրան: Զգում էի, որ պարտք եմ տիեզերքին, ինչը կարող եմ հատուցել միայն իմ ուշադրությամբ ու նաև, որ պարտք եմ բոլոր նրանց, ովքեր այլևս անձնավորություն չէին, բոլոր նրանց, ովքեր դեռ անձնավորություն չէին դարձել: Ըստ էության, ինչ հայրս էր ասել ինձ:

Աջակցության խմբակի մնացած ամբողջ ընթացքում լուռ մնացի: Փաթրիքը հատուկ ինձ համար աղոթք ասաց: Իսկ Գասի անունն ավելացվել էր մահացածների երկար ցուցակի վերջում... նրանցից տասնչորսը յուրաքանչյուրիս կողմից հիշվելու համար: Հետո խոստացանք ապրել այսօրվա օրով, իսկ վերջում Այզեքին ուղեկցեցի մեքենայի մոտ:

Երբ տուն մտա, մայրս ու հայրս նստած էին ճաշասենյակի սեղանի շուրջը, յուրաքանչյուրն իր լեփթոփի դիմաց: Հենց

https://1915.info

դռնից ներս մտա, մայրս արագ փակեց լեփթոփը:

– Ինչ էիր նայում:

– Հակաօքսիդանտ բաղադրատոմսեր: Պատրաստ ես ՕԵՍ-ի և Ամերիկայի հաջորդ թոփ մոդելի համար, – հարցրեց մայրս:

– Ուզում եմ մի քիչ պառկել:

– Լավ ես:

– Հա, ուղղակի հոգնած եմ:

– Լավ, բայց մինչև դա պետք է մի բան ուտես:

– Մա՛, ես կատեգորիկ սոված չեմ:

Քայլ արեցի դեպի դուռը, բայց նա կանգնեցրեց ինձ.

– Հեյզել, պետք է մի բան ուտես: Մի քիչ պ...

– Չէ, գնում եմ քնելու:

– Ոչ, – ասաց մայրս, – չես գնում:

Նայեցի հայրիկիս, ով միայն թոթվեց ուսերը:

– Սա իմ կյանքն է:

– Դու քեզ սովամահ չես անելու, միայն որովհետև Օգոստոսը մահացել է: Դու պետք է ուտես:

Ես, իսկապես, չգիտես ինչու, շատ անտրամադիր էի:

– Չեմ կարող ուտել, մա՛: Չե՛մ կարող: Ինձ հանգիստ թող, լա՛վ:

Փորձեցի արագ անցնել նրա կողքով, բայց նա բռնեց ուսերիցս ու ասաց.

– Հեյզել, դու ուտելու ես: Պետք է սնվես, որ առողջ մնաս:

– Ո՛չ, – բղավեցի, – չեմ ուտի ու չեմ կարող առողջ մնալ, որովհետև առողջ չեմ: Ես մահանում եմ, մա: Ես մահանալու եմ ու ձեզ մենակ եմ թողնելու: Դու էլ ինձ չես ունենալու, որ անընդհատ պտտվես շուրջս, ու դու էլ մայրիկ չես լինելու: Շատ եմ ցավում, բայց ոչ մի բան անել չեմ կարող, լա՛վ, – վրա տվի և իսկույն փոշմանեցի ասածիս համար:

– Դու լսե՞լ ես:

– Ինչը:

– Դու լսե՞լ ես, թե ինչ եմ ասել հայրիկիդ, – նրա աչքերը

լցվեցին, – լսել ես:

Գլխով արեցի:

– Օ՜, Աստված իմ, Հեյզել: Ներիր ինձ: Ես սխալվել եմ, քաղցրիկս: Դա ճիշտ չէր: Ես դա ասել եմ հուսահատության պահին: Իրականում ես դրան չեմ հավատում:

Նա նստեց, ես էլ նստեցի նրա կողքին: Արդեն մտածում էի, որ, զայրանալու փոխարեն, ավելի լավ կլիներ մի քիչ մակարոն կերած ու փսխած լինեի:

– Իսկ ինչի՞ն ես հավատում:

– Քանի դեռ մեզնից մեկը կենդանի է, ես քո մայրն եմ լինելու, – ասաց նա, – նույնիսկ եթե դու մահանաս ...

– Երբ մահանամ, – ուղղեցի:

Նա գլխով արեց:

– Նույնիսկ երբ մահանաս, ես էլի քո մայրիկն եմ լինելու, Հեյզել: Ես երբեք չեմ դադարի քո մայրիկը լինելուց: Դու դադարել ես Գասին սիրելուց:

Ի պատասխան՝ տարուբերեցի գլուխս:

– Ուրեմն, ինչպե՞ս կարող եմ ես դադարել քեզ սիրելուց:

– Լավ, – ասացի:

Հայրս արդեն լաց էր լինում:

– Ուզում եմ, որ դուք ձեր կյանքն ունենաք, – ասացի: – Ես անհանգստանում եմ, որ դուք նորմալ կյանք չեք ունենա: Ամբողջ օրը կնստեք էստեղ, ու ես չեմ լինի, որ հոգ տանեք իմ մասին և, անընդհատ աչքերդ մի կետի հառած, կցանկանաք վերջ տալ ձեր կյանքին:

Մեկ րոպե հետո մայրս ասաց.

– Ես օնլայն դասընթացներ եմ անցնում Ինդիանայի համալսարանում: Պատրաստվում եմ սոցիալական աշխատանքի գծով մագիստրոսի կոչում ստանալ: Երբ դու մտար, ես հակաօքսիդանտ բաղադրատոմսեր չէի նայում, այլ ռեֆերատ էի գրում:

– Լո՞ւրջ:

– Չեմ ուզում, որ մտածես, թե արդեն պատկերացնում

https://1915.info

եմ աշխարհն առանց քեզ: Բայց եթե մագիստրոսի կոչում ստանամ, կկարողանամ խորհրդակցություն տրամադրել ճգնաժամային իրավիճակներում գտնվող ընտանիքներին, կամ խմբակներ վարել՝ օգնելով մարդկանց իրենց ընտանիքներում ունեցած հիվանդություններին դիմակայելու հարցում:

– Սպասիր, սպասիր, ուրեմն դու Փաթրիք ես դառնալու:

– Դե, անպայման չէ: Սոցիալական ոլորտում տարբեր աշխատանքներ կան:

– Մենք անհանգստանում էինք, որ դու քեզ լքված կզգաս: Շատ կարևոր է իմանաս, որ մենք միշտ էստեղ ենք լինելու՝ քո կողքին, Հեյզել: Մայրդ ոչ մի տեղ չի գնում:

– Ոչ, ոչ, շատ լավ է: Ուղղակի հիանալի է:

Ես անկեղծ ժպտում էի:

– Մայրիկը Փաթրիք է դառնալու: Նա ընտիր Փաթրիք կլինի: Փաթրիքից հազար անգամ լավը կլինի:

– Շնորհակալ եմ, Հեյզել: Քո խոսքերն ինձ համար ամեն ինչ են:

Գլխով արեցի: Լաց էի լինում: Ուրախությունս շատ մեծ էր: Սրանք երևի կյանքիս առաջին ու վերջին իրական երջանկության անկեղծ արցունքներ էին, որ թափվում էին Փաթրիքի դերում մայրիկիս պատկերացնելիս: Ու սա ինձ հիշեցրեց Աննայի մայրիկի մասին. նա նույնպես լավ սոցաշխատող կլիներ:

Որոշ ժամանակ անց միացրինք հեռուստացույցն ու սկսեցինք դիտել «Ամերիկայի հաջորդ թոփ մոդելը» հեռուստաշոուն: Բայց հինգերորդ վայրկյանի վրա ընդհատեցի հեռուստաշոուն, որովհետև մայրիկիս տալու շատ հարցեր ունեի:

– Ու ե՞րբ ես ավարտում:

– Եթե էս ամառ մի շաբաթով կարողանամ Բլումինգթոն գնալ, դեկտեմբերին կավարտեմ:

– Իսկ կոնկրետ ինչքա՞ն եք սա թաքցրել ինձանից:

– Մեկ տարի:

– Մա՜:

– Չէի ուզում քեզ ցավ պատճառել, Հեյզել:

Ապշելու բան է:

– Ուրեմն, քոլեջի կամ աջակցության խմբակի մոտ ինձ սպասելիս դու միշտ...

– Այո, դաս էի սովորում:

– Ինչ լավ է: Երբ մահացած լինեմ, իմացիր, որ ամեն անգամ, երբ ինչ-որ մեկին խնդրես կիսվել իր զգացմունքներով, ես երկնքից հոգոց եմ հանելու:

Հայրս ծիծաղեց:

– Ես էլ քեզ հետ, բալիկս, – վստահեցրեց:

Վերջապես դիտեցինք «Ամերիկայի հաջորդ թոփ մոդելը» հեռուստաշոուն: Հայրիկը մեծ ջանք էր թափում՝ ձանձրույթից չմահանալու համար ու, անընդհատ աղջիկներին խառնելով, հարցնում էր.

– Մենք սրա՞ կողմից ենք:

– Ոչ, ոչ: Մենք Անաստասիային չենք սիրում, մենք Անտոնիային ենք հավանում՝ մյուս շիկահերին, – բացատրում էր մայրս:

– Նրանք բոլորը բարձրահասակ են ու զզվելի, – պատասխանում էր հայրս, – ներեցեք, որ դրանց չեմ տարբերում:

Քիչ հետո հայրս, թևն ուսիս վրայով տանելով, բռնեց մորս ձեռքը:

– Ինչ եք կարծում, իմ մահից հետո միասի՞ն կմնաք, – հարցրի:

– Ինչ, Հեյզել, քաղցրիկս, – մայրս շոշափելով գտավ հեռակառավարման վահանակը և նորից ընդհատեց հեռուստաշոուն, – ինչո՞ւ ես դա հարցնում:

– Ուղղակի ասեք. այո՞, թե՞ ոչ:

– Իհարկե՝ այո: Իհարկե, – ասաց հայրս: – Ես ու մայրդ սիրում ենք իրար, ու եթե կորցնենք քեզ, մենք դրա միջով միասին կանցնենք:

– Երդվիր Աստծու անունով:

– Երդվում եմ, – ասաց հայրս:

https://1915.info

Սպասողական նայեցի մորս:

– Ես էլ եմ երդվում, – ասաց, – բայց ինչո՞ւ ես անհանգստանում դրա մասին:

– Ուղղակի չեմ ուզում կործանել ձեր կյանքը:

Մայրս, առաջ հակվելով, դեմքը հպեց իմ խառնակ մազերին ու համբուրեց գլխիս գագաթը:

– Չեմ ուզում, որ դու դառնաս թշվառ, գործազուրկ հարբեցող կամ նման մի բան, – դիմեցի հայրիկիս:

Մայրս ժպտալով ասաց.

– Քո հայրը Փիթեր վան Հաութենը չէ, Հեյզել: Դու բոլորից լավ գիտես, որ հնարավոր է ապրել ցավի հետ:

– Այո: Լավ, – ասացի:

Մայրս գրկեց ինձ: Ես թույլ տվեցի գրկել, թեև գրկվելու այնքան էլ մեծ ցանկություն չունեի:

– Լավ, հիմա արդեն կարող ես միացնել շոուն:

Անաստասիան դուրս մնաց: Նա սկանդալ սարքեց: Հիանալի էր:

Մի քիչ պեստո սոուսով[1] թիթեռնիկաձև մակարոն կերա ու հաջողացրի դա պահել ստամոքսումս:

---

1 Պանրով, ընկույզով, սխտորով և ռեհանով իտալական սոուս

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հաջորդ առավոտ տագնապած արթնացա: Երազումս տեսել էի, թե մի հսկայական լճում մենակ եմ ու առանց նավակի: Կայծակի պես վեր թռա՝ ձգելով ՕԵՍ-ի լարը, ու հանկարծ ուսիս վրա զգացի մորս ձեռքը:

– Բարի լույս: Ամեն ինչ կարգի՞ն է:

Սիրտս արագ խփում էր, բայց գլխով արեցի:

– Քեյթլինն է ուզում խոսել քեզ հետ, – ասաց՝ ինձ մեկնելով հեռախոսս:

Ես մատով ցույց տվեցի ՕԵՍ դիմակը: Նա օգնեց հանել այն, ինձ միացրեց «Ֆիլիպին»: Վերջապես մորս ձեռքից վերցրի բջջայինս ու ասացի.

– Բարև, Քեյթլին:

– Զանգել եմ՝ իմանամ ինչպես ես, – ասաց:

– Շնորհակալ եմ, լավ եմ, – ասացի:

– Քեզ ուղղակի շատ վատ բախտ է բաժին ընկել, սիրելիս: Շատ անարդար է:

– Հա, երևի, – ասացի:

Այսպես թե այնպես, արդեն վաղուց սկսել էի շատ քիչ մտածել բախտի մասին: Անկեղծ ասած, չէի ուզում խոսել Քեյթլինի հետ, բայց նա շարունակում էր մի կերպ առաջ տանել խոսակցությունը:

– Դե, ինչպե՞ս էր:

– Ի՞նչը, սիրած տղայի մահանա՞լը: Շատ անդուր բան է:

– Չէ, սիրահարված լինելը:

– Օ՜, դա, – ասացի, – օ, դա... շատ հաճելի էր ժամանակ անցկացնել էդքան հետաքրքիր մարդու հետ: Մենք շատ տարբեր էինք ու շատ հարցերի շուրջ տարբեր կարծիքներ ունեինք, բայց նա միշտ էնքան հետաքրքիր էր, դե, գիտես:

– Ավաղ, չգիտեմ: Իմ ճանաչած բոլոր տղաները չափազանց անհետաքրքիր են:

– Նա կատարյալ չէր կամ նման մի բան: Ոչ էլ հեքիաթային հիասքանչ արքայազն էր, չնայած մեկ-մեկ փորձում էր էդպիսին լինել: Բայց ինձ նա ամենաշատը դուր էր գալիս, երբ էդ ամեն ինչը մի կողմ էր նետում:

– Քեզ մոտ նրանից նկարներ կամ նամակներ մնացե՞լ են:

– Մի քանի նկար ունեմ, բայց նամակներ նա ինձ համարյա չի գրել: Բացի ... դե, նրա նոթատետրից մի քանի էջ պակասում է, որտեղ նա, հնարավոր է, ինչ-որ բան գրած լինի ինձ համար, բայց, երևի, դրանք դեն է նետել կամ կորցրել:

– Միգուցե էլ-փոստով է դրանք ուղարկել քեզ, – ենթադրեց:

– Չէ հա, էդ դեպքում արդեն ստացած կլինեի:

– Դե, ուրեմն, միգուցե դա քեզ համար չի գրել, – շարունակեց կռահումներ անել: – Միգուցե ... դե, այսինքն, չեմ ուզում քեզ տխրեցնել, բայց միգուցե նա ուրիշի համար է գրել դա և էլ. փոստով ուղարկել ...

– Վան Հաութենին, – ճչացի:

– Լավ ես: Հազո՞ւմ էիր:

– Քեյթլին, շատ եմ սիրում քեզ: Դու հանճար ես: Իսկ հիմա ներիր, պետք է գնամ:

Կախեցի հեռախոսը, այս կողմ, այն կողմ պտտվելով՝ գտա լեփթոփս, միացրի ու նամակ գրեցի Լիդուվեյ Վլիգենթարթին:

«Լիդուվեյ

Ինձ թվում է՝ Օգոստոս Ուոթերսը նոթատետրի մի քանի էջ է ուղարկել Փիթեր վան Հաութենին իր մահվանից մի քանի օր առաջ: Ինձ համար շատ կարևոր է, որ ինչ-որ մեկը կարդա

այդ էջերը: Իհարկե, կուզենայի ինքս կարդալ, բայց միգուցե նա ինձ համար չի գրել: Անկախ ամեն ինչից, դա պետք է կարդացվի: Անպայման պետք է կարդացվի:

Կարո՞ղ եք օգնել ինձ:

Ձեր ընկեր՝ Հեյզել Գրեյս Լանքասթեր»:

Երեկոյան պատասխանեց.

«Սիրելի Հեյզել

Չգիտեի, որ Օգոստոսը մահացել է: Շատ տխրեցի՝ այդ լուրը լսելով: Նա այնքան խարիզմատիկ երիտասարդ էր: Շատ եմ ցավում: Շատ ափսոս:

Այն օրվանից, երբ մեր հանդիպման ժամանակ դուրս եկա աշխատանքից, Փիթեր վան Հաութենի հետ ոչ մի անգամ չեմ խոսել: Հիմա այստեղ ուշ գիշեր է, բայց առավոտյան առաջին բանը, որ կանեմ, դա միանգամից նրա տուն գնալն է: Նամակը կգտնեմ ու նրան կստիպեմ կարդալ: Սովորաբար, առավոտները նա ամենալավ վիճակում է գտնվում:

Քո ընկեր՝ Լիդուվեյ Վլիգենթարթ

Հ.Գ. Հետս ընկերոջս կտանեմ, հնարավոր է Փիթերին ուժով կարդալ ստիպելու կարիք լինի»:

Հետաքրքիր է, ինչո՞ւ էր իր վերջին օրերին նամակ գրել վան Հաութենին և ոչ թե՝ ինձ: Խնդրել էր նրան ինձ համար գրքի շարունակությունը գրել և այդպես քավել իր մեղքը: Միգուցե, ուղղակի կրկնել էր իր խնդրանքը նոթատետրի էջերում: Դա խելքին մոտ էր թվում: Գասն օգտագործում է իր մահվան շեմին գտնվելու փաստը՝ իմ երազանքն իրականացնելու համար: Հանուն գրքի շարունակության մահանալը շատ փոքր, աննշան արարք էր, բայց նրա տրամադրության տակ ունեցած մեծագույն բանն էր, որ կարող էր անել:

Ամբողջ գիշեր շարունակ թարմացնում էի էլ. փոստս: Հետո մի քանի ժամ քնեցի ու, առավոտյան ժամը հինգի կողմերն արթնանալով, վերսկսեցի էջի թարմացման գործընթացը: Բայց ոչ մի նամակ չէր գալիս: Ցրվելու հա-

մար փորձեցի հեռուստացույց դիտել, բայց մտքերով անընդհատ Ամստերդամում էի՝ Լիդուվեյ Վլիգենթարթին պատկերացնելով մահացած տղայի վերջին նամակագրությունը գտնելու խելահեղ առաքելությամբ իր ընկերոջ հետ քաղաքով հեծանիվով սլանալիս: Ինչ զվարճալի կլիներ Լիդուվեյի հեծանիվի հետևի նստատեղին նստած, վեր-վեր թռչելով, ընթանալ սալարկված փողոցներով՝ քամին նրա շիկակարմիր գանգուրները փչելով դեմքիս, զգալով ջրանցքների ու ծխախոտների հոտը, նայելով բացօթյա սրճարաններում նստած մարդկանց գարեջուր խմելիս՝ «ր» և «գ» տառերն արտասանելով այնպես, ինչպես ես երբեք չեմ սովորի արտասանել:

Կարոտում էի ապագան: Պարզ է, որ նրա հիվանդության կրկնությունից առաջ էլ գիտեի՝ երբեք ծերության չեմ հասնի Օգոստոս Ուոթերսի հետ: Բայց Լիդուվեյի ու նրա ընկերոջ մասին մտածելով՝ ինձ մի տեսակ կողոպտված, զրկված էի զգում: Ես, երևի, էլ երբեք չէի տեսնի օվկիանոսը ինը հազար մետր բարձրությունից, այնքան բարձր, որ արդեն չես տարբերում ալիքներն ու նավակները, և օվկիանոսն, ասես, մի մեծ ու անսահման մոնոլիթ լինի: Կարող էի պատկերացնել դա: Կարող էի դա հիշել, բայց նորից տեսնել չէի կարող: Ու այդ պահին հասկացա, որ մարդու անկուշտ փառատենչությունը երբեք չի հագենում երազանքների իրականացումով, որովհետև միշտ լինում է միտքը, թե ամեն ինչ կարող էր ավելի լավ ու նորից արվեր:

Դա երևի ճիշտ է, նույնիսկ եթե ապրում ես մինչև ինսուն տարեկանը: Չնայած նախանձում եմ մարդկանց, ում հաջողվում է սեփական փորձով համոզվել դրանում: Բայց և այնպես, ես արդեն Փիթեր վան Հաութենի աղջկանից երկու անգամ ավելի էի ապրել: Նա ամեն ինչ կտար, միայն թե դուստրը գոնե տասնվեց տարեկանում մահանար:

Հանկարծ, ձեռքերը մեջքի հետևում պահած, մայրս հայտ-

https://1915.info

նվեց իմ և հեռուստացույցի միջև:

– Հեյզել, – ասաց շատ լուրջ ձայնով: Կարծեցի, թե ինչ-որ բան է պատահել:

– Այո՞, – հարցրի:

– Գիտե՞ս, թե էսօր ինչ օր է:

– Հո իմ ծնունդը չէ՞:

Նա ծիծաղեց:

– Դեռ ոչ: Էսօր հուլիսի տասնչորսն է, Հեյզել:

– Քո՞ ծնունդն է:

– Ոչ ...

– Հարրի Հուդինիի՞ ծնունդն է:

– Ոչ ...

– Լավ, արդեն հոգնեցի գուշակելուց:

– Բաստիլի գրավման օրն է:

Նա մեջքի հետևից դուրս պարզեց ձեռքերը, որոնց մեջ երկու փոքրիկ պլաստմասե ֆրանսիական դրոշ էր պահել ու ոգևորված թափահարեց:

– Դա շատ կեղծ է հնչում, ինչպես օրինակ՝ խոլերայի մասին մարդկանց իրազեկելու օրը:

– Հավատա, Հեյզել, Բաստիլի գրավման օրվա մեջ հաստատ ոչ մի կեղծ բան չկա: Գիտեի՞ր, որ երկու հարյուր քսաներեք տարի առաջ, հենց էս օրը, ֆրանսիացիները զինվելու նպատակով գրոհով նվաճել են Բաստիլի բանտ-ամրոցը, որպեսզի պայքարեն իրենց ազատության համար:

– Վա՛յ, – ասացի, – անպայման պետք է նշենք էդ նշանակալից տարեդարձը:

– Հենց նոր հայրիկիդ հետ մտածեցինք պիկնիկ կազմակերպել Հոլիդեյ զբոսայգում:

Օ՜, մայրիկ, նա երբեք չէր հոգնում փորձելուց: Ես հրվելով վեր կացա բազմոցից: Միասին մի քանի սենդվիչ պատրաստեցինք, հետո նախասրահի խորդանոցում պիկնիկի համար մի փոշոտ զամբյուղ գտանք:

Բավականին գեղեցիկ օր էր: Վերջապես Ինդիանապոլիսում իսկական ամառ էր՝ տաք ու խոնավ. եղանակի մի տեսակ, որ երկար ձմեռվանից հետո հիշեցնում է քեզ, որ թեև աշխարհը մարդկանց համար չի ստեղծված, մենք, սակայն, աշխարհի համար ենք ստեղծված: Հայրիկը, հագին դեղնաշագանակագույն կոստյում, արագ-արագ ինչ-որ բան տպելով ձեռքի համակարգչի վրա, սպասում էր մեզ հաշմանդամների ավտոկանգառում: Հենց կայանեցինք ավտոկանգառում, նա մեզ ձեռքով արեց, հետո գրկեց ինձ:

– Ինչ օր է, – ասաց, – եթե Կալիֆորնիայում ապրեինք, բոլոր օրերն էսպիսին կլինեին:

– Այո, բայց էդ դեպքում էլ էսքան հաճույք չէիր ստանա դրանցից, – ասաց մայրս:

Նա սխալվում էր, բայց չուզեցա հակառակվել:

Վերջիվերջո, որոշեցինք տեղավորվել «Ավերակների» մոտ՝ Ինդիանապոլիսի դաշտի մեջտեղում փռված Հռոմի տարօրինակ ուղղանկյունաձև ավերակների: Բայց դրանք իսկական ավերակներ չեն, այլ ութսուն տարի առաջվա ավերակների վերստեղծված քանդակներ: Բայց կեղծ ավերակներն այնքան բարձիթողի վիճակում են, որ, ակամայից իսկապես վերածվել են ավերակների: Վան Հաութենը կհավաներ ավերակները, Գասն էլ:

Նստեցինք «Ավերակների» ստվերում ու թեթև լանչ արեցինք:

– Արևապաշտպան քսուք ուզո՞ւմ ես, – հարցրեց մայրս:

– Չէ, պետք չէ:

Լսվում էր քամուց շարժվող տերևների ձայնը, և այդ քամու հետ օդում տարածվում էին քիչ հեռու գտնվող խաղահրապարակում խաղացող փոքրիկ երեխաների ձիչերը: Փոքրիկ երեխաներ, որ սկսում էին հասկանալ, թե ինչպես լինել կենդանի, ինչպես ապրել, ինչպես ընթանալ, ինչ ուղղություն բռնել մի աշխարհում, որ իրենց համար չէր ստեղծվել, ուղ-

ղորդվելով, սակայն, իրենց համար ստեղծված խաղահրապարակում:

Հայրս նկատեց, որ նայում եմ երեխաներին, ու հարցրեց.

– Կարոտո՞ւմ ես էսպես վազվզելուն:

– Մեկ-մեկ:

Բայց դրա մասին չէի մտածում: Ուղղակի փորձում էի ամեն ինչ նկատել. «ավերակների» վրա ընկած լույսը, երերալով հազիվ քայլող մի փոքրիկի՝ խաղահրապարակի անկյունում փայտիկ գտնելիս, իմ երբեք չհոգնող մայրիկին, որ մանանեխով զիգզագներ էր գծում հնդկահավով սենդվիչի վրա, հորս, որ անընդհատ թփթփացնում էր գրպանը դրած փոքրիկ համակարգչին՝ դիմադրելով աչքի անցկացնելու մեծ ցանկությանը, ֆրիզբի նետող տղային, որի շունն անընդհատ վազում էր դրա հետևից, օդում բռնում ու վերադարձնում տիրոջը:

Ո՞վ եմ ես, որ ասեմ, թե այս բաները հավերժական չեն: Ո՞վ է Փիթեր վան Հաութենը, որ իրավունք ունենա՝ որպես փաստ ներկայացնելու ենթադրությունը, թե մեր բոլոր գործերը ժամանակավոր են և անցողիկ: Ամենը, ինչ գիտեմ դրախտի ու նաև մահվան մասին, այս զբոսայգում է. էլեգանտ տիեզերքը՝ անդադար շարժման մեջ, ավերված ավերակներով և ճչացող երեխաներով լեցուն:

Հայրս թափահարում էր ձեռքը դեմքիս առջև:

– Միացիր, Հեյզել: Այդ ո՞ւր ես հասել մտքերով:

– Կներեք, ի՞նչ էիք ասում:

– Մայրդ առաջարկում է գնանք Գասին այցելելու:

– Ահ, ըհը, – ասացի:

Այսպիսով լանչից հետո, գնացինք Քրաուն Հիլ գերեզմանատուն՝ երեք փոխնախագահների, մեկ նախագահի և Օգոստոս Ուոթերսի վերջին հանգրվանը: Մեքենայով բարձրացանք բլուրն ի վեր ու կայանեցինք այնտեղ: Մեր հետևում՝ երեսունութերորդ փողոցով, ավտոմեքենաներ էին սլանում:

https://1915.info

Նրա գերեզմանը գտնելը շատ հեշտ էր. ամենաթարմն էր: Դագաղի վրա լցված հողակույտը դեռ չէր իջել, գերեզմանաքարն էլ դեռ դրված չէր:

Ընդհանրապես չէի զգում, թե նա այդտեղ է, մեզ հետ, այնուամենայնիվ վերցրի մայրիկիս հիմար փոքրիկ ֆրանսիական դրոշներից մեկը և խրեցի նրա գերեզմանի հողի մեջ: Միգուցե կողքով անցնողները կարծեին, թե նա ֆրանսիական օտարերկրյա լեգեոնի անդամ կամ ինչ-որ մի ուրիշ տեղ հերոս, վարձկան զինվոր է եղել:

•••

Երեկոյան ժամը վեցից քիչ հետո, երբ բազմոցին նստած համ հեռուստացույց էի դիտում, համ էլ լեփթոփով վիդեոներ նայում, Լիդուվեյը վերջապես նամակ գրեց: Միանգամից տեսա, որ նամակին չորս ֆայլ է կցված: Սկզբում ուզում էի դրանք բացել, բայց դիմացա գայթակղությանն ու կարդացի նամակը.

«Սիրելի Հեյզել

Փիթերը լավ հարբած էր, երբ այս առավոտ նրա տուն գնացի, բայց դա մեր գործն ավելի հեշտացրեց: Բասը՝ իմ ընկերը, սկսեց շեղել նրան, մինչ ես նրա աղբի տոպրակն էի քրքրում, որտեղ իր երկրպագուների նամակներն է պահում, բայց հետո հիշեցի, որ Օգոստոսը գիտեր Փիթերի հասցեն: Նրա ճաշասեղանին նամակների մի մեծ կույտ կար, որոնց միջից շատ արագ գտա Օգոստոսի նամակը: Բացեցի ու տեսա, որ այն հասցեագրված է Փիթերին: Խնդրեցի կարդալ:

Նա հրաժարվեց:

Այդ ժամանակ շատ բարկացա, Հեյզել, բայց նրա վրա չբղավեցի: Փոխարենն ասացի, որ նա պարտական է իր մահացած դստերը կարդալ մահացած տղայից ստացած այդ նամակը: Եվ երբ նրան հանձնեցի այն, նա ամբողջությամբ կարդաց ու ասաց, մեջբերում եմ. «Ուղարկիր սա այն աղջկան,

https://1915.info
ես ավելացնելու բան չունեմ»:

Ես չեմ կարդացել նամակը, չնայած, էջերը սկան անելիս աչքս ընկել է մի քանի բառի վրա: Հիմա կցում եմ դրանք էստեղ, իսկ հետո նաև փոստով կուղարկեմ ձեր տուն: Ձեր հացեն նույնն է մնացել, չէ՞:

Աստված օրինի և պահպանի քեզ, Հեյզել:

Քո ընկեր՝ Լիդուվեյ Վլիգենթարթ»:

Բացեցի կցված ֆայլերը: Նա գրել էր փնթի ձեռագրով՝ տողերից իջնելով, տառերի չափն ու գրիչների գույնն անընդհատ փոխվում էր: Գրել էր շատ օրերի ընթացքում, գիտակցության տարբեր աստիճաններում:

«Վան Հաութեն

Ես լավ մարդ եմ, բայց անշնորհք գրող: Դուք անշնորհք մարդ եք, բայց լավ գրող: Մենք լավ թիմ կլինեինք: Չեմ ուզում Ձեզնից լավություն խնդրել, բայց եթե ժամանակ ունեք, ու ըստ իմ տեսածի՝ կարող եմ ասել, որ դրանից լիքը ունեք, կուզենայի իմանալ, թե արդյոք Հեյզելի համար գերեզմանաձառ չէիք գրի: Ես մի քանի նշումներ ունեմ արած, ուղղակի ուզում եմ, որ էդ ամեն ինչը կարգի բերեք, մի ամբողջական, կապակցված միտք դարձնեք: Կամ գոնե ասեք, թե ինչը պետք է ուրիշ ձևով գրեմ:

Ահա թե ինչ եմ ուզում ասել Հեյզելի մասին.

Համարյա բոլորը տարված են աշխարհի վրա իրենց հետևից ինչ-որ մի հետք թողնելու մտքով՝ ժառանգություն, մեծ ավանդ, որ մահից հետո անունդ դեռ երկար ապրի երկրի երեսին: Բոլորն են ուզում հիշվել: Ես էլ եմ դա ուզում: Էս աշխարհում ամենից շատ վախենում եմ, որ ես էլ կդառնամ հիվանդության դեմ մղվող հին ու անփառունակ պատերազմում անհետ կորած անանուն զոհերից մեկը:

Ես ուզում եմ հետք թողնել էս աշխարհում:

Բայց, վան Հաութեն, մարդկանց թողած հետքերը շատ հաճախ սպիներ են: Դու մի սարսափելի մինի-մոլ ես կառու-

ցում, կառավարության հեղաշրջում ես կազմակերպում կամ էլ փորձում ես ռոք-աստղ դառնալ ու մտածում ես. «Ա՛յ, հիմա ինձ արդեն կհիշեն», բայց ...

ա) ոչ էլ հիշում են քեզ

և բ) դու քո հետևից միայն ավելի շատ սպիներ ես թողնում:

Քո հեղաշրջումը վերածվում է դիկտատուրայի: Իսկ մինիմոլդ վնասով է դուրս գալիս:

(Դե լավ, գուցե ես էնքան էլ ապաշնորհ գրող չեմ: Բայց մտքերս իրար գլուխ հավաքել չեմ կարողանում, վան Հաութեն: Իմ մտքերն աստղեր են, որոնք չեմ կարողանում համաստեղության մեջ միավորել):

Մենք, կարծես, հրդեհաշեջ ջրածորանների վրա միզող շների խումբ լինենք: Թունավորում ենք ստորգետնյա ջրերը մեր թունավոր մեզով՝ նշան դնելով ամեն տեղ, սեփականացնելով ամեն ինչ, մահից հետո ապրելու մեր ծիծաղելի փորձերով: Չեմ կարողանում դադարել ջրածորանների վրա միզելուց: Գիտեմ, իմ ներկա վիճակում դա հիմարություն է և էպիկականորեն անօգուտ, բայց ես էլ մյուսների նման կենդանի եմ:

Հեյզելն ուրիշ է: Նա էնքան թեթև է քայլում, ծերուկ: Շատ թեթև է քայլում երկրի վրայով: Հեյզելը գիտի ճշմարտությունը. ինչքան կարող ենք վնաս տալ տիեզերքին, էնքան էլ կարող ենք օգնել նրան. ոչ մեկը, ոչ էլ մյուսն անել չենք կարող:

Մարդիկ կասեն, թե շատ ցավալի է, որ նա փոքր սպի է թողնում իր հետևից, որ քչերն են հիշելու նրան, որ նրան սիրել են ուժգին, բայց ոչ՝ շատերը: Բայց դա ցավալի չէ, վան Հաութեն: Դա հաղթական է: Հերոսական: Միթե դա չէ իսկական հերոսությունը: Ինչպես բժիշկներն են ասում՝ առաջին հերթին, վնաս մի պատճառիր:

Իսկական հերոսները ինչ-որ բան անող մարդիկ չեն, իսկական հերոսները նկատողներն են, ամեն ինչին ուշադրություն դարձնողները: Ծաղիկ հիվանդության պատվաստա-

նյութ հայտնագործողն իրականում ոչ մի բան էլ չի հայտնագործել: Նա ուղղակի նկատել էր, որ հորթի ծաղիկով հիվանդները ծաղիկ հիվանդությամբ չէին հիվանդանում:

Տոմոգրաֆիա անցնելիս լուսավորվելուց հետո, սողոսկեցի վերակենդանացման բաժանմունք ու տեսա նրան, երբ անգիտակից վիճակում էր: Կրծքանշանով բուժքրոջ հետևից քայլելով՝ գաղտնի ներս մտա ու հասցրի մի տասը րոպե նստել նրա կողքին, մինչև ինձ բռնացրին: Արդեն մտածում էի, թե նա կմահանա, մինչև կհասցնեի ասել, թե ես էլ եմ մահանալու: Շատ դաժան տեսարան էր. անդադար գվվում էին ինտենսիվ թերապիայի սարքերը, նրա կրծքավանդակից դուրս էր ծորում քաղցկեղի էդ սև հեղուկը: Աչքերը փակ էին: Ինտուբացված էր[1], բայց նրա ձեռքը նույն ձեռքն էր, դեռ տաք, ու եղունգները ներկված էին նույն՝ համարյա սև՝ մուգ կապույտ գույնով: Եվ ես ուղղակի բռնել էի նրա ձեռքն ու փորձում էի պատկերացնել աշխարհն առանց մեզ, ու մեկ վայրկյանով բավականին լավ անձնավորություն էի՝ հուսալու, թե նա արդեն մահացել է, ուրեմն երբեք չի իմանա, որ ես էլ եմ մահանալու: Բայց հետո ավելի շատ ժամանակ ցանկացա, որպեսզի հասցնենք սիրահարվել: Կարծես թե երազանքս իրականացավ: Ես թողեցի իմ սպին:

Մի բուժաշխատող ներս մտավ ու պահանջեց, որ դուրս գամ սենյակից, որովհետև էդտեղ այցելուներ ընդունել չի թույլատրվում, և ես հարցրի, թե արդյո՞ք Հեյզելի մոտ ամեն ինչ կարգին է, իսկ նա պատասխանեց, թե նրա մոտ դեռ հեղուկ է հավաքվում: Անապատի օրհնանք, օվկիանոսի անեծք:

Ուրիշ էլ ի՞նչ ասեմ: Հա, նա էնքան գեղեցիկ է: Երբեք չես հոգնում նրան նայելուց: Ու քեզ չի մտահոգում, թե նա քեզնից խելացի է. դու գիտես, որ էդպես է: Նա կատակասեր է, բայց ոչ երբեք՝ ստոր: Ես սիրում եմ նրան: Բախտս շատ է բերել

---

1 Հատուկ պլաստմասե խողովակի անցկացում շնչափողով դեպի թոքեր՝ արհեստական շնչառություն ապահովելու համար:

https://1915.info

նրան սիրելու հարցում, վան Հաութեն: Դու չես որոշում՝ էս աշխարհում քեզ ցավ կպատճառեն, թե ոչ, ծերուկ, բայց կարող ես ընտրել, թե ով ցավ պատճառի քեզ: Ինձ դուր է գալիս իմ ընտրությունը: Հուսով եմ, նրան էլ իրենն է դուր գալիս»:

Այո, Օգոստոս:

Այո, ինձ էլ է դուր գալիս իմ ընտրությունը:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Հեղինակը հարկ է համարում նշել, որ այս վեպում հիվանդությունն ու դրա բուժումը մտացածին են: Օրինակ, ֆալանքսիֆոր դեղամիջոց գոյություն չունի, հեղինակն է հորինել դա, որովհետև շատ կցանկանար, որ նման դեղ լիներ: Եթե ինչ-որ մեկը քաղցկեղի մասին իրական պատմություն է փնտրում, խորհուրդ է տրվում կարդալ Սիդհարթա Մուքհարջիի «Բոլոր հիվանդությունների տիրակալը» գիրքը:

Հեղինակը երախտապարտ է Ռոբերտ Ա. Ուայնբերգի «Քաղցկեղի կենսաբանությանը», նաև Ջոշ Սանդքուիսթին, Մարշալ Յուրիսթին և Յոնեք Հոլլանդերսին՝ իրեն ժամանակ տրամադրելու և բժշկական հարցերի վերաբերյալ իրենց փորձով, գիտելիքներով իր հետ կիսվելու համար, որոնք, չնայած ուրախությամբ, անտեսել է՝ ըստ իր հարմարության:

Հեղինակը երախտապարտ է՝

Էսթեր Ըլլին, ում կյանքը նվեր էր իր և շատերի համար: Շնորհակալ է նաև Ըլլերի ընտանիքին՝ Լորիին, Ուեյնին, Էբբիին, Էնջիին, Գրեհեմին և Էյբին՝ մեծահոգության և ընկերության համար: Էսթերից ոգեշնչված՝ Ըլլերի ընտանիքը, նրա հիշատակին, հիմնադրել է «Այս աստղը երբեք չի մարի» շահույթ չհետապնդող կազմակերպությունը: Ավելի շատ տեղեկություն ստանալու համար այցելեք tswgo.org կայքը:

«Հոլանդական գրականագիտական հիմնադրամին»՝ իրեն երկու ամիս Ամստերդամում ստեղծագործելու հնարավորություն ընձեռելու համար: Առանձնահատուկ շնորհակալություն է հայտնում Ֆլոր վան Կոպենին, Ժան Քրիստոֆ Բուլե վան Հենսբրուքին, Ժանետա դե Վիսին, Քարլայն վան Ռավենստեյնին, Մարիյե Շիպսմային և հոլանդական «ներդֆայթերների» (աշխարհի գորշության դեմ պայքարողների) համայնքին:

Խմբագրին և հրատարակչին՝ Ջուլի Շտրաուս-Գեյբելին, որ «Պինգվինի» արտասովոր թիմի հետ միասին տարիներ շարունակ ջանասի-

ռաբար աշխատել է այս պատմության վրա՝ և՛ վերելքների, և՛ անկումների ժամանակ: Հատուկ շնորհակալություն Ռոզան Լաուերին, Դեբորա Կապլանին, Լիզա Կապլանին, Էլիզ Մարշալին, Սթիվ Մելցերին, Նովա Ռեն Սումային և Իռեն Վանդերվուրթին:

Իր ուսուցիչ, խորհրդատու և բարի փերի Այլին Կուպերին:

Իր գործակալ Ջոդի Ռիմերին, ում իմաստուն խորհուրդները փրկել են իրեն անհամար աղետներից:

Ներդֆայթերներին՝ այդքան հիասքանչ լինելու համար:

Քաթիթյուդին՝ աշխարհն ավելի լավը դարձնելու ցանկության համար:

Եղբորը՝ Հենքին, որ իր լավագույն ընկերն ու գործընկերն է:

Կնոջը՝ Սարային, որը ոչ միայն իր կյանքի մեծ սերն է, այլև առաջին ու ամենավստահելի ընթերցողը: Ու նրա լույս աշխարհ բերած բալիկին՝ Հենրիին: Նաև՝ իր ծնողներին՝ Մայքին ու Սիդնի Գրինին, աներոջն ու զոքանչին՝ Քոնիին և Մարշալ Յուրիսթին:

Ընկերներին՝ Քրիս և Մարինա Ուոթերսներին, Ջոէլլեն Հոսլերին, Շենոն Ջեյմսին, Վայ Հարթին, Վեննի դիագրամների գիտակ Քարեն Քավեթին, Վալերի Բարրին, Ռոսիանա Հոլս Ռոխասին և Ջոն Դարնիելին, ովքեր մեծ ներդրում են ունեցել այս պատմության ստեղծման մեջ:

https://1915.info

Ջոն Գրինը մրցանակակիր, #1 բեսթսելլերների հեղինակ է՝ «Փնտրելով Ալյասկան», «Բազում Քեթրիններ», «Թղթե քաղաքներ», «Վիլ Գրեյսոն», «Վիլ Գրեյսոն՝ Դեյվիդ Լևիթանի հետ» և «Աստղերն են մեղավոր»: Արժանացել է «Փրինց» մրցանակի և պատվո շքանշանի, «Էդգար» մրցանակի: Երկու անգամ հայտնվել է «Լոս Անջելեսի թայմզ գրքերի մրցանակաբաշխության» եզրափակիչ փուլում: Իր եղբոր՝ Հենքի հետ, Ջոնը աշխարհի ամենահայտնի, մեծ մասսայականություն վայելող վիդեո նախագծերից մեկի՝ «Վլոգբրադերս» վիդեո բլոգի (youtube.com/vlogbrothers) հիմնադիրն է: Դուք էլ կարող եք միանալ Ջոն Գրինին Թվիթերում (@realjohngreen) և Թամբլերում հետևող միլիոնավոր մարդկանց կամ օնլայն այցելել նրան՝ johngreenbooks.com կայքում:

Ջոնն իր ընտանիքով ապրում է Ինդիանապոլիսում, Ինդիանայում:

https://1915.info

https://1915.info

https://1915.info

Ասողներն են մեղավոր

Զոն Գրին

Անգլերենից թարգմանեց	Ալինա Միրզոյանը
Խմբագիր՝	Հովիկ Վարդումյան
Հրատարակչության խմբագիր՝	Գալյա Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝	Հեղինե Փիլոյանի
Կազմի հայերեն տարբերակը՝	Արաբո Սարգսյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

https://1915.info